

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

ԿԱՐԵՆ ՅՈՒՐԻԿԻ ԳԱՄՊԱՐՅԱՆ

**ՀԱՄԸՆԴՅԱՆՈՒՐ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀՂԱՑՔԸ ԵՎ ԿՈՒՂՐՈՎ
ՎԻԼՍՈՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Է.00.02 «Համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ պատմական
գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման համար

Գիտական ղեկավար՝
պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր ԱՐՄԱՆ ԶՈՆԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ԵՐԵՎԱՆ - 2015

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱՃՈՒԹՅՈՒՆ -----	3
ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ	
ՀԱՄԸՆԴՅԱՆՈՒՐ ԽԱԴԱՂՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈԼՈԿՈՒՅԹՈՒՄ (ՎԵՍՏՖԱԼԻ և ՎԻԵՆՆԱՅԻ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ) -----	18
1.1 ՀԱՄԸՆԴՅԱՆՈՒՐ ԽԱԴԱՂՈՒԹՅԱՆ ՎԵՍՏՖԱԼՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԸ -----	21
1.2 ՀԱՄԸՆԴՅԱՆՈՒՐ ԽԱԴԱՂՈՒԹՅԱՆ ՎԻԵՆՆԱՅԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԸ -----	29
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ	
ՀԱՄԸՆԴՅԱՆՈՒՐ ԽԱԴԱՂՈՒԹՅԱՆ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՁԵՎԱԶԱՓԸ. ՎՈՒԴՐՈ ՎԻԼՍՈՆ -----	41
2.1 ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ «ՉԵՉՈՔՈՒԹՅՈՒՆԸ» 1914-1917 ԹԹ.՝ ՈՐՊԵՍ «ԱՐԴԱՐԱՅԻ» ԽԱԴԱՂՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ -----	44
2.2 ԽԱԴԱՂՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՀԵՆՔԸ ՎՈՒԴՐՈ ՎԻԼՍՈՆԻ «14 ԿԵՏԵՐՈՒՄ» -----	71
ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ	
ՓԱՐԻՉԻ ԽԱԴԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ և ՆՈՐ ԱՃԽԱՐՀԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ -----	89
3.1 ԱԶԳԵՐԻ ԼԻԳԱՆ՝ ՈՐՊԵՍ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ԽԱԴԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՎԻԼՍՈՆՅԱՆ ՏԵՍԼԱԿԱՆ և ՆՈՐ ԱՃԽԱՐՀԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱՔԱՐ -----	89
3.2 ԱԶԳԵՐԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՈՐ ՁԵՎԱԶԱՓԻ՝ ԱԶԳԵՐԻ ԼԻԳԱՅԻ ՀԻՄՆՈՒՄԸ (ՓԱՐԻՉԻ ՀԱՄԱԺՈՂՈՎ) -----	109
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ -----	134
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՐՅՈՒՐՆԵՐԻ և ԳԻՏԱԿԱՆ ՈՒՄՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ -----	140
ՀԱՎԵԼՎԱԾ 1	
«ՎՈՒԴՐՈ ՎԻԼՍՈՆԻ ՀԱԿԻՐՃ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆԸ» -----	II
ՀԱՎԵԼՎԱԾ 2	
«ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ և ՀԱՃՏՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ» ԾՐԱԳԻՐԸ (ՎՈՒԴՐՈ ՎԻԼՍՈՆԻ «14 ԿԵՏԵՐԸ») -----	VI
ՀԱՎԵԼՎԱԾ 3	
ԴԵՎԻԴ ԼԼՈՅԴ ԶՈՐԶԻ, ԺՈՐԺ ՎԼԵՄԱՆՍՈՅԻ և ՎԻՏՏՈՐԻՈ ՕՈԼԱՆԴՈՅԻ ԼՈՆԴՈՆՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ -----	XI
ՀԱՎԵԼՎԱԾ 4	
«ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ և ՀԱՃՏՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ» ԾՐԱԳՐԻ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ -----	XII

ՆԵՐԱՆՈՒԹՅՈՒՆ

Համընդհանուր խաղաղության հիմնահարցը համաշխարհային պատմության կարևորագույն խնդիրներից է: Պատերազմ-խաղաղություն դարավոր հակամարտությունը մշտապես ուղեկցում է մարդկությանը՝ օր օրի արժևորելով խաղաղության հաստատման և պահպանման կարևորությունը: Ուստի ամենևին էլ պատահական չէ, որ խաղաղության հաստատման գաղափարը մշտապես եղել է (և կա) պատմական տարբեր ժամանակաշրջանների խոշոր մտածողների, քաղաքական գործիչների, պետական այրերի և քաղաքական գործընթացների ուշադրության կենտրոնում: Նման հրամայականով ինքնին բացատրվում է երևույթի ուսումնասիրության այժմեականությունը պատմական զարգացման յուրաքանչյուր ժամանակաշրջանում: Ժամանակաշրջանի առանձնահատկություններով պայմանավորված՝ գաղափարն անցել է զարգացման ուրույն ճանապարհ, ինչն արտահայտվել է համընդհանուր և հարատև խաղաղության վերաբերյալ գոյություն ունեցող զանազան ծրագրերում: Հեղինակները խնդրո առարկա հղացքն ապահովեցին ծարագրային հենքով, որի հիման վրա 17-րդ դարից գաղափարը թևակոխեց իրագործման համակարգային կարգավորման փուլ՝ հիմնադրությային նշանակություն ունենալով Վեստֆալի (1648 թ.), Վիեննայի (1815 թ.), Վերսալի(1919 թ.) համակարգերում:

Վեստֆալյան համակարգը միջազգային հարաբերությունները «համակարգելու» առաջին հարացույցն էր, որով եվրոպական պետությունները մայրցամաքն առաջին անգամ դիտարկեցին որպես մեկ ամբողջություն և պատրաստ էին կիսելու վերջինիս անվտանգության համատեղ պատասխանատվությունը: Վիեննայի վեհաժողովի արդյունքում միջպետական փոխհարաբերություններում հաստատված հավասարակշռության պահպանման ուժային քաղաքականությանը փոխարինեց բարոյական և իրավական զսպող գործոններով կարգավորվող միջազգային նոր համակարգ: Սակայն 19-րդ դարի վերջին եվրոպական հավասարակշռության համակարգը կրկին վերադարձավ կարգավորման ուժային մեթոդներին, ինչն էլ հանգեցրեց հերթական համակարգային ճգնաժամի: Այն իր դրսևորումը ստացավ Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում: Պատերազմի ավարտից հետո աշխարհը կանգնեց նոր աշխարհակարգ ստեղծելու և համընդհանուր խաղաղության վերահաստատման մարտահրավերի առաջ: Միացյալ Նահանգների 28-րդ նախագահ Վուդրո Վիլսոնը (Woodrow Wilson),* վերսալյան կարգավորման շրջանակներում հստակ

* Վուդրո Վիլսոնի հակիրճ կենսագրականը տե՛ս հավելված 1, էջ II-V:

կանոնակարգված փաստաթղթի՝ «14 կետեր» ծրագրի տեսքով ներկայացրեց նոր միջազգային կարգ հիմնելու գաղափարը: Այն ուրվագծում էր համաշխարհային անվտանգ ապագայի տեսլականը՝ ազգերի համընդհանուր ընկերակցության՝ Ազգերի լիգայի ստեղծման հարացույցով: Նախագահ Վիլսոնը դեռևս իր կառավարման սկզբում հայտարարեց միջազգային հարաբերությունների կարգավորման իր «դեղատոմսի» մասին: 1913 թ. դեկտեմբերի 2-ի Միացյալ Նահանգների Կոնգրեսին ուղղած իր ուղերձում նա հիմք դրեց «վիլսոնականությանը»^{*} համաձայն որի միջազգային հարաբերությունների հիմքում պետք է դրվեր ոչ թե ցանկացած գնով ազգային ինքնահաստատման հասնելու քաղաքականությունը, այլ ազգերի միջև փոխվստահությունը, որը, հանդիսանալով միջազգային հարաբերությունների հիմքը, պետք է դառնար համընդհանուր խաղաղության հաստատման և պահպանման գրավականը հետպատերազմյան աշխարհում:

Ներկա աշխատանքում՝ վերոշարադրյալի համատեքստում, փորձ է արվել ներկայացնել համընդհանուր խաղաղության պահպանման հղացքը և Վուդրո Վիլսոնի արտաքին քաղաքական հայեցակարգը:

Ատենախոսության ժամանակագրական շրջանակն ընդգրկումը է երեք տարբեր պատմական հարթություններ: Նախ փորձ է արվել ներկայացնել համընդհանուր խաղաղության գաղափարի զարգացումը 14-19-րդ դարերի հեղինակների աշխատանքներում և ծրագրային առաջարկներում: Ոսումնասիրվել են Վեստֆալի և Վիեննայի համակարգերի համընդհանուր խաղաղության հիմնադրույթները: Ապա ներկայացվել է Համընդհանուր խաղաղության ամերիկյան ձևաչափը՝ Վուդրո Վիլսոնի արտաքին քաղաքականության համաժիրում, մասնավորապես՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների «չեզոքությունը» 1914-1917 թթ. և «14 կետերի» հրապարակումը: Այնուհետև ուսումնասիրվել է Ազգերի լիգայի կազմավորման բուն գործընթացը Փարիզի համաժողովում և Ամերիկայի Միացյալ Նահանգների Կոնգրեսում:

Ըստ նշված շրջափուլերի՝ որոշարկվել է հետազոտության առարկան, որի շրջանակներում ուսումնասիրվել է Համընդհանուր խաղաղության հղացքը: Ներկայացվել է Վուդրո Վիլսոնի արտաքին քաղաքական հայեցակարգը, Ազգերի լիգայի՝ որպես համընդհանուր խաղաղության պահպանման երաշխավորի ստեղծման գործընթացը:

Ատենախոսության նպատակն է՝ համընդհանուր խաղաղության գաղափարի համակարգային կիրարկման Վեստֆալի և Վիեննայի փորձի համալիր վերլուծությամբ

^{*} Եզրը վերցված է Հենրի Քիսինձժերից, տե՛ս **Г. Киссинджер**, *Дипломатия*, Москва, "Ладомир", 1997, с. 200:

ներկայացնել գաղափարի զարգացումը, տալ վերջինիս ձևակերպումը Վուդրո Վիլսոնի արտաքին քաղաքական հայեցակարգում, ուսումնասիրել «վիլսոնականության» գաղափարական հենքը և դրա ազդեցությունը Ազգերի լիգայի ստեղծման վրա: Ըստ այդմ՝ աշխատանքում առաջ են քաշվել հետևյալ խնդիրները.

- ներկայացնել համընդհանուր խաղաղության հղացքը պատմական հոլովություն,
- տալ խաղաղության գաղափարի զարգացման տրամաբանությունը Եվրոպայի 14-19-րդ դարերի պատմագիտական մտքում,
- ուսումնասիրել համընդհանուր խաղաղության գաղափարի հիմնադրույթները Վեստֆալի և Վիեննայի համակարգերում,
- առանցքային այս հիմնախնդրի դիտանկյունից վերլուծել և ներկայացնել Վերսալյան համակարգի շրջանակներում հաստատվող նոր աշխարհակարգի եությունը,
- 20-րդ դարասկզբի քաղաքական ճգնաժամի համատեքստում արժևորել Վուդրո Վիլսոնի ներդրումը հետպատերազմյան խաղաղության և նոր աշխարհակարգի հաստատման գործում,
- ներկայացնել նախագահ Վիլսոնի աշխարհայացքի արժեհամակարգային բովանդակությունը, նրա քաղաքական փիլիսոփայությունը, ամերիկյան քաղաքական ավանդույթների նորարարական կիրարկումը,
- ներկայացնել համընդհանուր խաղաղության պահպանման հիմնախնդրի «վիլսոնյան մեկնաբանությունը» Ազգերի լիգայի համատեքստում,
- գնահատել Վիլսոնի գաղափարական ժառանգության դերը «հետվիլսոնյան» համաաշխարհային արտաքին քաղաքական ավանդույթում:

Վիլսոնի աշխարհակարգաստեղծ գործունեությունից անմասն չէր նաև Հայաստանը և հայ ժողովուրդը: Նրա նախագահության տարիները (1913-1921 թթ.) համընկան հայ ժողովրդի համար մի ճակատագրական ժամանակաշրջանի հետ, երբ արևմտահայությունը ենթարկվեց ցեղասպանության, երբ Առաջին համաշխարհային պատերազմում հաղթանակած տերությունների անհետևողական ու անտարբեր քաղաքականության հետևանքով հայ ժողովուրդը զրկվեց իր պատմական հայրենիքում ապրելու, համախմբվելու և անկախ պետականությունը պահպանելու հնարավորությունից: Վուդրո Վիլսոնը մտահոգություն էր հայտնում հայերի ճակատագրի վերաբերյալ: 1919 թ. Կանգաս Սիթիում ունեցած հանրային ելույթի ժամանակ Վիլսոնը հայտարարեց, որ Ամերիկյան պատասխանատվություն է կրում հայերին պաշտպանելու համար, որոնք «բնաջնջվել են իրենց հայրենիքում», իսկ Սուլթ Լեյկ Սիթիի սեպտեմբերի 23-ի ելույթում նա խստորեն քննադատեց թուրքական

կառավարությանը՝ Հայաստանի դեմ կատարած հանցագործությունների համար: 1920 թ. սկզբին Միացյալ Նահանգների հասարակական կարծիքը երկրի կառավարությունից և Կոնգրեսից պահանջում էր ընդունել Ազգերի լիգայի կողմից հաստատված Հայաստանի մանդատը: Սակայն Սենատը ձայների 52 դեմ, 23 կողմ հարաբերակցությամբ դեմ քվեարկեց նախաձեռնությանը: Այսպիսով՝ ԱՄՆ-ի Նախագահ Վուդրո Վիլսոնն անկարող եղավ Հայկական հարցի լուծման պարագայում կիրառելու իր նոր գաղափարախոսության սկզբունքները ¹ : Սակայն սա ուսումնասիրման միանգամայն այլ առարկա է և դուրս է սույն աշխատանքի նպատակային շրջանակներից:

Ատենախոսությունը գրվել է պատմաքննական և պատմահամադրական վերլուծության մեթոդների օգտագործմամբ՝ դրանց հաղորդելով մեկնաբանական բնույթ: Պատմաքննական մեթոդի տեսանկյունից ներկայացվում են խնդրո առարկայի վերաբերյալ գոյություն ունեցող մոտեցումները և մեկնաբանություններ, որոնք մեզ օգնել են տրամաբանական քննության ենթարկել խաղաղության ավանդույթի ձևավորման և կիրարկման գործընթացը, ինչպես նաև բազմավեկտոր քննության ենթարկել Վիլսոնի և նրա քաղաքական շրջապատի վարած արտաքին քաղաքականությունը: Իսկ գիտահամադրական մեթոդի դիտարկմամբ հնարավոր է դառնում ի մի բերել արծարծվող թեմայի պատմական մեկնաբանության ընդհանրական սկզբունքներն ու արդյունքները: Այս համատեքստում խնդրո առարկա հղացքների և հարացույցների լուսաբանումը կառուցվում է 14-19-րդ դարերի Եվրոպայի պատմական մտքի ներկայացուցիչների համընդհանուր և հարատև խաղաղության հաստատմանը նվիրված տրամախոսությունների (տրակտատների) և Վուդրո Վիլսոնի աշխարհակարգային հիմնարար գաղափարական ընմբռնումների վրա՝ «համընդհանուր խաղաղության պահպանում», «հավերժ խաղաղություն», «միասնական Եվրոպա», «ուժերի հավասարակշռություն», «հանրային պայմանագիր», «Մեծ նախագիծ», «Սրբազան դաշինք», «խաղաղություն առանց հաղթանակի», «հավաքական անվտանգություն», «Ազգերի լիգա», «ազգերի ազատ ինքնորոշման իրավունք», «հավաքական պատասխանատվության ստանձնում», «միջպետական փոխհարաբերությունների իրավական կարգավորում» և այլն:

Աշխատանքի ընթացքում որոշակիորեն կարևորվել է նաև միջգիտակարգային մոտեցումը, որի արդյունքում մի շարք երևույթներ դիտարկվել են նաև քաղաքագիտական, տնտեսագիտական և հոգեբանական հարթություններում:

¹ Մանրամասն տես՝ **Ա. Կիրակոսյան**, Վուդրո Վիլսոնը և Հայկական հարցը, ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 1-2 (83-84), Երևան, «Լիմուշ», 2015, էջ 62-76:

Ատենախոսությունը գրված է հայերեն, ռուսերեն, անգլերեն և ֆրանսերեն լեզուներով հրապարակված տարաբնույթ սկզբնաղբյուրների և գիտական հետազոտությունների հիման վրա: Համընդհանուր խաղաղության հղացքի ուսումնասիրման գործում որպես սկզբնաղբյուրներ ծառայել են 14-19-րդ դդ. եվրոպական հեղինակների՝ Պիեռ Դյուբուայի (Pierre Dubois), Էրազմ Ռոտերդամցու (Erasmus Roterodamus), Թոմաս Հոբսի (Thomas Hobbes), Ջոն Լոքի (John Locke), Ժան-ժակ Ռուսսոյի (Jean-Jacques Rousseau), Էմանուել Կանտի (Immanuel Kant) և այլոց աշխատությունները²: Հիշյալ հեղինակներն իրենց գործերում առաջ են քաշել համընդհանուր և հարատև խաղաղության հաստատման նպատակով համաեվրոպական կամ համաշխարհային խաղաղ միավորման, բարոյական փոխադարձ պատասխանատվության, միջազգային դատարանի և համաշխարհային խորհրդարանի ստեղծման գաղափարները, որոնց ուսումնասիրումը վեր է հանում խաղաղության գաղափարի զարգացման տրամաբանությունը՝ ծրագրային կարգավորումից դեպի գործնական համակարգային կարգավորում: Այս հատվածում կուզենայինք առանձնացնել միջազգային իրավունքի նախահայրեր Նիկոլո Մաքիավելիի (Niccolo Machiavelli), Հուգո Գրոցիուսի (Hugo Grotius), Էմեր դե Վատելի (Emer de Vattel) աշխատանքները³, որոնցում համընդհանուր խաղաղության գաղափարը «համենվեց» ազգերի ազատ ինքնորոշման, պետությունների ինքնիշխանության և միջազգային հարաբերությունների այլ սկզբունքների դիտարկմամբ: Այս հատվածում որպես կարևոր սկզբնաղբյուր կարևորել ենք նաև ռուս իրավաբան-միջազգայնագետ Ֆյոդոր Մարտենսի կազմած ժողովածուն⁴, ինչպես նաև Սրբազան դաշինքին վերաբերող արխիվային փաստաթղթերի ժողովածուն⁵, որոնցում զետեղված պայմանագրերի

² **P. Dubois**, De recuperatione Terre Sancte, Paris, "Alphonse Picard, Éditeur" 1891. **Э. Роттердамский**, Жалоба миру, пер. Ф.Л.Мендельсон, Москва, "Советская Россия", 1991. **Т. Гоббс**, Левиафан, или Материя, форма и власть государства церковного и гражданского. Томас Гоббс, сочинения, в 2 томах, т. 2, сост. ред., авт. примеч. В.В. Соколов, Москва, "Мысль", 1991. **Дж. Локк**, Два трактата о правлении. Джон Локк, Сочинения, в 3 томах, т. 3, сост. ред., авт. примеч. А.Л. Субботин, Москва, "Мысль", 1988. The Political Writings of Jean Jacques Rousseau, ed. from the original manuscripts and authentic editions, with introductions and notes by C.E. Vaughan. Vol. 1, Cambridge, "University Press", 1915. **И. Кант**, К Вечному Миру, Сочинения в шести томах, т. 6, под ред. Т. И. Ойзермана, Москва, "Мысль", 1966.

³ **Н. Макиавелли**, Государь, Минск, "Харвест", 2004. **Г. Гроциус**, О праве войны и мира, Три книги в которых обнимаются естественное право и право народов, а также принципы публичного права, пер. с лат. А.Л. Саккетти, под ред. С.Б. Крылов, Москва, "Государственное издательство юридической литературы", 1956. **Э. де Ваттель**, Права народов или принципы естественного права, применяемые к поведению и делам наций и суверенов, пер В.Н. Дурденовский, Ф.А. Кублицкий, Э.М. Фабриков, Москва, "Государственное издательство юридической литературы", 1960.

⁴ Собрание трактатов и конвенций, заключенных Россиею с иностранными державами, сост. **Ф. Мартенс**, тт. 1-15, Санкт-Петербург, "А. Бенке", 1874-1909.

⁵ Архив Историчесий и Политический 1816 года, Stanford University Library.

ամբողջական տեքստերը մեզ հնարավորություն են տալիս առավել մանրամասն տեղեկանալ քննարկվող նյութին և նորովի մեկնաբանել այն:

Վուդրո Վիլսոնի արտաքին քաղաքական հայեցակարգի ուումնասիրման համար, որպես սկզբնաղբյուրներ ծառայել են նրա հեղինակած աշխատանքները⁶, ինչպես նաև նրա ելույթների, պաշտոնական գրագրության, օրագրային գրառումների, հաղորդումների, ուղերձների, նամակների և այլ տեղեկատվության հրատարակումները⁷: Այս փաստաթղթերն ունեն կարևոր աղբյուրագիտական արժեք մեզ հետաքրքրող թեմայի ուսումնասիրության համար: Դրանց օգնությամբ հաջողվել է հետևել Վուդրո Վիլսոնի արտաքին քաղաքական հայացքների սկզբնավորման գործընթացին, դիտարկել խաղաղության գաղափարի և «վիլսոնականության» դոկտրինայի նրա սեփական մեկնաբանությունը:

Իրենց աղբյուրագիտական տեղեկատվությամբ մեծ կարևորություն ունեն Միացյալ Նահանգների գերատեսչությունների պաշտոնական փաստաթղթերը՝ մեր պարագայում Արտաքին հարաբերությունների փաստաթղթերը (Papers Relating to the Foreign Relations of The Unaited States) և Կոնգրեսի գրառումները (Congressional Records Containig the Proceedings and Debates of the Congress of the United States of America):

Թեմայի ուսումնասիրության մեջ իրենց աներկբա տեղն ունեն Վիլսոնի ժամանակակից պետական, հասարակական և քաղաքական գործիչների փաստաթղթերը, գիտական աշխատությունները, նամակագրությունը, հուշերը և

⁶ **W. Wilson**, A History of the American People, vol. 1-5, New York-London, "Harper & Brothers", 1908. Guarantees of Peace, New York-London, "Harper & Brothers", 1919. In Our First Year of War, New York-London, "Harper & Brothers", 1918. Mere Literature and ather Essays, Boston-New York, "Houghton Mifflin Company" 1896. On Being Human, New York-London, "Harper & Brothers", 1916. The Free Life, New York, "Thomas Y. Crowell & Co.", 1908. Congressional Government, Boston-New York, "Houghton Mifflin Company", 1885. The Hope of the World, New York-London, "Harper & Brothers", 1920. The New Freedom, New York-Garden City, "Doubleday, Page & Copmany", 1919. The State and Federal Governments of the United States, Boston, "D.C. Heath & Co." 1891. The State, Boston-New York-Chicago, "D.C. Heath & Co." 1918. When a Man Comes to Himself, New York-London, "Harper & Brothers", 1901.

⁷ Woodrow Wilson, War and Peace, Presidential Messages, Addresses and Other Papers (1917-1924), ed., by, **R. Baker** and **W. Dodd**, vv.1-2, New Vork, "Kraus Reprint Co.", 1970. America and the League of Nations, Woodrow Wilson's Addresses in Europe, comp. by **L.Powell** and **F. Hodgins**, Chicago, "Rand McNally & Company", 1919. War Addresses of Woodrow Wilson, Cop. by **A. Leonard**, Boston-New York, "Ginn & Company", 1918. The League of Nations, Addresses Delivered by The President of The United States at Boston, on February 24, 1919 on The Plan for The League of Nations, Pres. by **Mr. Pittman**, Washington, "Government Printing Office", 1919. President Wilson's Foreign Policy: Massages, Addresses, Papers, ed. by **J. Scott**, New York, "Oxford University Press", 1918. **O. GALE** Americanism, Woodrow Wilson's Speeches on the War, Why He Made Them and What They Have Done, Chicago, "The Baldwin Syndicate Publishers", 1918. President Wilson's State Papers and Addresses, ed. by **A. Shaw**, New York, "George H. Dorn Company", 1917. Addresses of President Wilson on First Trip to Europ, December 3, 1918 to February 24, 1919, Washington, 1919. Addresses of President Wilson on His Western Tour, September 4 to September 25, 1919, Washington, "Government Printing Office", 1919. President Wilson's Great Speeches and other History Making Documents, Chicago, "Station & Van Vliet Co.", 1917. The messages and papers of Woodrow Wilson, 1856-1924 (էլ. գիրք,) և այլն:

օրագրերը ⁸ : Այս գործերը պարունակում են փաստագրական հսկայական տեղեկատվություն, արժեքավոր դիտողություններ վիլսոնյան վարչակազմի արտաքին քաղաքական որոշումների ընդունման գործընթացի վերաբերյալ: Այս շարքից կուզենայինք առանձնացնել Վիլսոնի մտերիմ ընկեր գնդապետ Էդուարդ Յաուզի (Edward House)* «արխիվը»⁹, 1915-1920 թթ. Միացյալ Նահանգների պետքարտուղար Ռոբերտ Լանսինգի (Robert Lansing) «թղթերը»¹⁰, ամերիկյան հայտնի պատմաբան, կենսագիր, Փարիզի համաժողովում Վիլսոնի մամլո քարտուղար Ռեյ Բեյքերի (Ray Baker) և ամերիկյան հայտնի հետազոտող Չարլզ Սեյմուրի (Charles Seymour) աշխատանքները ¹¹, որոնցում ներկայացված է հարուստ փաստագրական տեղեկատվություն Միացյալ Նահանգների արտաքին քաղաքական իրողությունների և «վիլսոնականության» դոկտրինայի վերաբերյալ:

Ինչպես հայտնի է, Միացյալ Նահանգների Սենատը 1919-1920 թթ մերժեց ամերիկյան արտաքին քաղաքականության համաշխարհայնացման վիլսոնյան ծրագիրը՝ դրանով իսկ մերժելով և՛ հետպատերազմյան (վիլսոնյան) աշխարհակարգը, և՛ համընդհանուր խաղաղության հաստատման գործին Ամերիկայի անդամակցությունը: Յետևաբար շատ կարևոր է դիտարկել ընդդիմության առավել կարևոր ներկայացուցիչների ¹² տեսակետները և գաղափարները՝ հասկանալու համար

⁸ **E. Brooks**, Woodrow Wilson as President, Chicago-New York, "Row Peterson and Comp.", 1916. **H. Ford**, Woodrow Wilson: The Man and His Work, New York-London, "D. Appleton and Comp.", 1916. **T. Bailey**, Woodrow Wilson and The Lost Peace, New York, "Macmillan", 1944. **Նույնի**, Woodrow Wilson and the Great Betrayal, New York, "Macmillan", 1945. **J. Tumulty**, Woodrow Wilson: As I Know Him, Garden City- New York, "Doubleday, Page & Copmany", 1921. **G. Herron**, Woodrow Wilson and The World's Peace, New York, "Mitchell Kennerley", 1917. **S. Wise**, Abraham Lincoln, Lincoln and Wilson, Woodrow Wilson; Free Synagogue Pulpit, vol. VII, 1921-22, № 1, New York, "Free Synagogue House", 1922. **W. White**, Woodrow Wilson: The Man, His Time and His Task. Boston,-New York, "Houghton Mifflin Company", 1925. From White House to Log Cabin: Roosevelt, Taft and Wilson, Comp. by **L. Warren**, At The Birth Place of Abraham Lincoln, 1921. The Greatness of Woodrow Wilson 1856-1956, ed. by **E. Alsop**, New York-Toronto, "Rinehart & Company", 1956. **B. Hendrick**, The Life and Letters of Walter H. Page, Containing the Letters to Woodrow Wilson, vol. 1-3, Garden City-- New York, "Doubleday, Page & Copmany., 1923-1926.

* Էդուարդ Սամդել Յաուզ (Edward Mandell House) 1858-1938 թթ., ամերիկյան քաղաքական գործիչ, դիվանագետ, նախագահ Վուդրո Վիլսոնի խորհրդակցանք, առավել հայտնի է «գնդապետ Յաուզ» անվամբ: ⁹ Архив полковника Хауза, тт. 1-2, Москва, "Государственное социально-экономическое издательство", 1937, тт. 3-4, Москва, "Государственное издательство политической литературы", Москва, 1944.

¹⁰ **R. Lansing**, War Memoirs, Indianapolis- New York, "Bobs-Merrill Co.", 1935. The Big Four and Other of Peace Conference, Boston, "Hutchinson", 1921. Papers Relating to the Foreign Relations of the United States. The Lansing Papers 1914-1920, vol. 1-2, Washington, "Government Printing Office", 1939-1940.

¹¹ **R. Baker**, Woodrow Wilson: Life and Letters, vol. 1-8, New York, "Doubleday, Page & Copmany," 1927-1939. **Նույնի** Woodrow Wilson and World Settlement, vol. 1-3, New York, "Doubleday, Page & Copmany," 1923. **Նույնի**, Вудро Вильсон. Мировая война. Версальский мир, Москва, "Гос. Изд-во", 1923. **Ch. Seymour**, American Diplomacy during the World War. Baltimore, "The John Hopkins Press", 1934. **Նույնի**, Woodrow Wilson and the World War, Toronto, "Yale University Press", 1921.

¹² **H. Lodge**, The Senate and the League of Nations, New York, "Scribner", 1925. The Treaty of Versaille: American Opinion, Speeches of Henry Lodge, Philander Knox, Gilbert Hitchcock, Woodrow Wilson, Boston, Massachusetts, "Old Colony Trust Company", 1919. **D. Cohalan**, Senator Lodge: Past and Present, Washington, "All America National Council", (հրատարակության տարեթիվը նվաճ է). **W. Borah**, The League of Nations, Speech Delivered in the Senate of The United State, Indianapolis, "The Bobbs-Merrill Company", (հրատարակության տարեթիվը նվաճ է), 43 p. The Senate 1789-1989 Classic Speeches 1830-

վիլսոնյան արտաքին քաղաքականության տեսական և գործնական այն խնդիրները, որոնք չէին կարող կամ չէին ուզում նկատել նրա համախոհները:

Կարևոր են նաև եվրոպական քաղաքական գործիչների և դիվանագետների աշխատանքները¹³, որոնք հիմնականում գրված են ժամանակակիցների և գործընթացի մասնակիցների կողմից և պարունակում են հետաքրքիր դատողություններ ու վերլուծություններ, որոնք թույլ են տալիս համադրել ամերիկյան և եվրոպական քաղաքական միտքը հետպատերազմյան խաղաղ կարգավորման կարևոր խնդիրների վերաբերյալ:

Առանձին և կարևոր խումբ է կազմում ամերիկյան մամուլը: Ուսումնասիրվող թեման պահանջում էր ուշադրության արժանացնել և՛ իշխանական, և՛ ընդդիմադիր, և՛ չեզոք քաղաքական կողմնորոշում ունեցող մամուլի հրապարակումները: Դրանց մեջ նշենք քաղաքականապես չեզոք «The New York Times», ազատամիտ «The New Republic», «World's Work» և «International Conciliation», որոշ չափով ընդդիմադիր «The North American Review», «The Outlook» պարբերականները¹⁴:

Ուսումնասիրվող հիմնախնդրի վերաբերյալ օգտագործված նյութերի մյուս մասը կազմում են գիտական հետազոտությունները: Խաղաղության հիմնախնդրի, եվրոպական գաղափարի, Վեստֆալի և Վիեննայի համակարգերի ուսումնասիրման վերաբերյալ կան բազմաթիվ հետազոտություններ¹⁵: Դրանց շարքում կցանկանայինք առանձնացնել Ալեքսանդր Չուբարյանի, Ռայմոն Առոնի (Raymond Aron), Անատոլի

1993, William E. Borah, The League of Nations, November 19, 1919, vol. 3, ed. by **W. Wolff**, Washington, "Government Printing Office", 1919.

¹³ **J. Keynes**, The Economic Consequences of the Peace, New York, "Harcourt, Brace, and Howe", 1920. **Նույնի**, Пересмотр мирного договора, пер. с англ. Д. Кончаловского, Москва, "Государственное издательство", 1922. **Д.Ллойд Джордж**, Правда о мирных договорах, тт. 1-2, пер. с англ. А. Никонова, Москва, "Изд. Иностран. Лит.", 1957. **Նույնի**, Военные Мемуары, тт. 1-6, Москва, "Соцэкгиз", 1934-1937. **Նույնի**, Европейски хаос, пер. с англ. П. Константинова, Ленинград-Москва, "Петроград", 1924. **Г. Никольсон**, Как делался мир в 1919 г. Москва, "Госполитиздат", 1945. **А. Тардые**, Мир, Москва, "Госполитиздат", 1943. **У. Черчилль**, Мировой кризис, пер. с англ., с предисл. И. Минца, Москва-Ленинград, "Государственное военное издательство", 1932, **R. Cecil**, A Great Experiment, London, "Cape", 1941. The Intelligent Man's Way to Prevent War, by **N. Angell, C. Lloyd, G. Buxton, R. Cecil, W. Arnold-Foster, H. Laski**, London, "Victor Gollancz LTD", 1933.

¹⁴ "The New York Times", <http://spiderbites.nytimes.com/>.

"The New Republic", <http://catalog.hathitrust.org/Record/000502176>.

"World's Work", <http://catalog.hathitrust.org/Record/009676324>.

"International Conciliation", <http://catalog.hathitrust.org/Record/000533331>, <http://archive.org/>.

"The North American Review", <http://catalog.hathitrust.org/Record/000677725>, <http://archive.org/>.

"The Outlook", <http://catalog.hathitrust.org/Record/009676320>, <http://archive.org/>.

¹⁵ История Франции, отв. ред. **А. Манфред**, т. 1, Москва, "Наука", 1972. **Б. Поршнев**, Франция, Английская революция и Европейская политика в середине XVII в., Москва, "Наука", 1970. **Л. Зак**, Монархи против народов, дипломатическая борьба на развалинах наполеоновской империи, Москва, "Международные отношения" 1966. История внешней политики России. Первая половина XIX века, отв. ред. **О. Орлик**, Москва, "Международные отношения", 1999. **А. Дебидур**, Дипломатическая история Европы, от Венского до Берлинского конгресса (1814-1878) т-1, Священный Союз, Москва, "Гос. Изд. Иностранной литературы", 1947. **П. Черкасов**, Кардинал Ришелье, Москва, "Международные отношения", 1990. Талейран: Мемуары, под ред. **Е. Тарле**, Москва, 1959, с. 305. Москва, "Институт международных отношений", 1959, և այլն:

Տորկունովի, Ֆրենսիս Հինսլիի (Francis Hinsley) աշխատությունները¹⁶: Ալեքսանդր Չուբարյանը եվրոպական գաղափարի ուսումնասիրման համատեքստում որոշակի անդրադարձ է կատարում խաղաղության և պատերազմի հիմնախնդրին: Ֆրանսիացի փիլիսոփա և քաղաքագետ Ռայմոն Առոնը դիտարկում է Վեստֆալյան համակարգում կոալիցիաների համատեղ գործելու անհրաժեշտությունը, որը պետություններին տալիս էր նաև համագործակցության դաշտում մանևրելու և դաշնակիցներին փոխելու հնարավորություն: Ահա այս համագործակցելու հանգամանքն էլ, ըստ Անատոլի Տորկունովի, պետությունների միջև առաջացրեց որոշակի մրցակցություն, ինչը և հանդիսացավ Վեստֆալյան համակարգի հիմնական շարժիչ ուժը: Ֆրենսիս Հինսլին իր աշխատությունում ներկայացնում է միջազգային հարաբերությունների սկզբունքների ներդաշնակ գործունեությունը, որն ապահովում էր եվրոպական պետությունների կենսունակությունը համակարգի ներսում: Այս համատեքստում կարևորվում են նաև Մարինա Լեբեդևայի, Տատյանա Ջոնովայի, Կարլ Կայզերի (Karl Kaiser) գիտական հոդվածները¹⁷: Դրանցում հեղինակները հստակ վերլուծության են ենթարկել Վեստֆալի և Վիեննայի համակարգային իրողությունները:

Վիլսոնի արտաքին քաղաքական հայեցակարգի ուսումնասիրման հատվածում ընդգրկված են այսպես կոչված «հետվիլսոնյան» ժամանակաշրջանի հեղինակները, որոնց կարելի է բաժանել երկու խմբի: Առաջին խումբն¹⁸ առանձնանում է Վիլսոնի և նրա արտաքին քաղաքական հայացքների նկատմամբ ունեցած դրական

¹⁶ **А. Чубарьян**, Европейская идея в истории. Проблемы войны и мира, Москва, "Международные отношения", 1987. **Р. Арон**, Мир и война между народами, пер. с франц., под ред. В.И. Даниленко, Москва, "Nota Bene", 2000. **А. Торкунов**, Современные международные отношения, Москва, "Российская политическая энциклопедия", 1999. **F. Hinsley**, Power and the Pursuit of Peace, Cambridge, "Cambriggde University Press", 1963.

¹⁷ **М. Лебедева**, Что угрожает Вестфалю? "Международные процессы". Январь-апрель 2008, том 6, №1(16), с.117-121, <http://www.mgimo.ru/users/document1793.phtml>, <http://www.intertrends.ru/archiv.htm>. **Т. Зонова**, Вестфальская Система, "Вестник МГИМО", 2008 г., №1, с. 78-80, <http://www.mgimo.ru/zonova/>, **К. Kaiser**, Zeitenwende, "Internationale Politik", №5, Mai 2003, s.1-8, <https://zeitschrift-ip.dgap.org/de/ip-die-zeitschrift/archiv/jahrgang-2003/mai/zeitenwende>

¹⁸ **А. Шлезингер**, Циклы американской истории, пер. с англ. П. Развина и Е. Бухаровой, Москва, "Прогресс", 1992. **Р. Хофстедтер**, Американская политическая традиция и ее создатели, пер. с англ. Р. Хофстедтер, Москва, "Наука", 1992. **D. Perkins**, America and Two Wars. Boston, "Little Brown & Co.", 1944. **E. May**, The World War and American Isolation 1917-1917. Cambridge, "Harvard University Prtess", 1956. **L. Gardner**, Safe for Democracy: The Anglo-american Response to Revolution, 1913-1923. New York, "Holt", 1984. **N. Levin**, Woodrow Wilson and World Politics. New York, "Oxford University Press", 1968. **А. Mayer**, Politics and Diplomacy of Peacemaking. Containment and Counter-Revolution in Versailles. 1918-1919, New York, "Knopf", 1967. **А. Walworth**, Wilson and his Peacemakers. American Diplomacy at the Paris Pease Conference 1919, New York, "Norton & Company", 1986 p. **D. Miller**, The Drafting of the Covenant, vol. 1-2, New York, "Loud, Putnam", 1928. **T. Knock**, To End All Wars: Woodrow Wilson and the Qest for a New World Order. New York-Oxford, "Oxford University Press", 1992. **T. Smith**, America's Mission: The Unaited States abd Worldwide Struggle for Democracy in the Twentieth Century. Princeton, "Princeton University Press", 1994. **F. Ninkovich F**, The Wilsonian Century: US Foreign Policy Since 1900. Chicago, "University of Chicago Press", 1999. **L. Ambrosius**, Wilsonian Statecraft: Theory and Practice of Liberal Internationalism during the World War I. Wilmington, "SR Books", 1991. **Նույնի**, Woodrow Wilson and the American Diplomatic Traditions: The Ttreaty Fight in Perspective. Cambridge, "Cambridge University Press", 1987. **Նույնի**, Wilsonianism: Woodrow Wilson and His Legacy in American Foreign Relations. New York, "Palgrave Macmillan", 2002.

կողմնորոշմամբ: Այս շարքում առանձնակի նշանակություն ունեն հայտնի վիլսոնագետ Արթուր Լինքի (Arthur Link) աշխատությունները¹⁹: Արթուր Լինքի կարևորագույն ծառայությունը կարելի է համարել «Վուդրո Վիլսոնի թղթերի» հրատարակումը, որը խմբագրել և 69 հատորներով հրատարակել է Փրինսթոնի համալսարանը: Արթուր Լինքը Վիլսոնի արտաքին քաղաքական հայեցակարգի հիմքում տեսնում էր ամերիկյան ավանդական սկզբունքները՝ հիմնված կրոնի, ժողովրդավարության, ամերիկյան առաքելության, բարոյական պատասխանատվության, ինչպես նաև ժամանակի տնտեսական և քաղաքական իրողությունների վրա: Համանման մոտեցմամբ են նաև Ջոն Բուկոպերի (John Cooper) աշխատանքները²⁰: Հեղինակը, համեմատելով Թեոդոր Ռուզվելտի (Theodore Roosevelt) և Վուդրո Վիլսոնի արտաքին քաղաքական միտքը, փորձել է կոտրել առաջինին իրապաշտ (ռեալիստ), երկրորդին գաղափարապաշտ (իդեալիստ) համարելու կարծրատիպը:

Բավականին հետաքրքիր են նաև ամերիկյան պետական գործիչ, դիվանագետ, միջազգային հարաբերությունների մասնագետ, աշխարհաքաղաքականության ճանաչված տեսաբան Հենրի Բիսինջերի (Henry Kissinger) աշխատանքները²¹: Վերջինս, իր աշխատություններում հիմնվելով Վիլսոնի գաղափարների հարատևության վրա՝ նշում է, որ 20-րդ դարի դիվանագիտության մի շարք «առավել նուրբ» իրողություններ (Մարշալի պլան, ՄԱԿ և այլն) իրենց արմատներով գնում են դեպի վիլսոնյան գաղափարապաշտություն: «Ամերիկյան դիվանագիտությանը,- նշում է Հենրի Բիսինջերը,- անհրաժեշտ է վիլսոնյան բարոյականության որոշակի չափաբաժին, առանց որի այն ուղղակի հաջողակ լինել չի կարող»²²:

Ուսումնասիրողների մյուս խումբը Վիլսոնի արտաքին քաղաքական հայեցակարգի նկատմամբ քննադատական վերաբերմունք ունեցող հեղինակներն են²³: Այս

¹⁹ **A. Link**, Wilson, vol.1-5, Princeton, "Princeton University Press", 1947-1965. **Նույնի**, Woodrow Wilson and the Progressive Era. 1910-1917. New York, "Harper Collins Pub.", 1954. **Նույնի**, Wilson the Diplomatist. A. Look at His Major Foreign Policies. Baltimore, "The Johns Hopkins Press", 1957. **Նույնի**, Woodrow Wilson and a Revolutionary World, 1913-1921, Chapel Hill, "University of North Carolina Press", 1982. **Նույնի**, Woodrow Wilson: Revolution, War, and Peace, Arlington Heights, "AHM Cor.", 1979.

²⁰ **J. Cooper**, The Warrior and the Priest: Woodrow Wilson and Theodore Roosevelt. Cambridge, "Benlap Press of Harvard University", 1983. **Նույնի**, Breaking the Heart of the World: Woodrow Wilson and Fight for the League of Nations. Cambridge, "Cambridge University Press", 2001.

²¹ **Г. Киссинджер**, Дипломатия, Москва, "Ладомир", 1997. **Նույնի**, Нужна ли Америке внешняя политика? К дипломатии для XXI века. Москва, "Ладомир", 2002.

²² **Г. Киссинджер**, նշված աշխ., էջ 736,763.

²³ **С. Ниринг**, Американская империя, (Пер. С англ. Ю.А. Смолянина, под. Ред. Н.А. Лисовского) Москва-Ленинград, "Госиздат", 1926. **E. Buehrig**, Woodrow Wilson and the Balance of Power. Bloomington, "Indiana University Press", 1956. **R. Osgood**, Ideals and Self-Interest in America's Foreign Relation. Chicago, "University of Chicago Press", 1954. **Նույնի**, Woodrow Wilson, Collective Security, and the Lessons of History: The Philosophy and Policies of Woodrow Wilson, Chicago, "University of Chicago Press", 1957. **Ch. Beard**, A Foreign Policy for America. New York, "Knopf", 1940. **H. Barnes**, The Genesis of the World War, New York, "Knopf", 1926. **E. Borchard, Lage W.P.**, Neutrality for the Ynited States. New

տեսանկյունից առանձնանում է հայտնի լրագրող և քաղաքական մտածող Վոլթեր Լիփմանը (Walter Lippmann)²⁴, ով քննադատեց համաշխարհային քաղաքականությանը մասնակցելու վիլսոնյան հիմնավորումները: Նրա կարծիքով՝ նախագահը սխալվում էր՝ հայրենակիցներին կենտրոնացնելով «ժողովրդավարության համար աշխարհն անվտանգ դարձնելու» կարգախոսի, կամ Ազգերի լիգա ստեղծելու ծրագրի վրա: Քանի որ, ո՛չ բարոյական, ո՛չ իրավական և ո՛չ էլ գաղափարապաշտական փաստարկները չպետք է քողարկեն ազգային անվտանգության շահը: 10 տարի անց միջազգային հարաբերությունների հայտնի ամերիկյան տեսաբան Հանս Մորգենթաուն (Hans Morgenthau)²⁵ շարունակեց այդ միտքը՝ Միացյալ Նահանգների 28-րդ նախագահի անունը զուգորդելով ամերիկյան դիվանագիտության պատմության «բարոյական ժամանակաշրջանի» հետ:

Խոսելով Վիլսոնի արտաքին քաղաքական հայեցակարգի ձևավորման գործում նրա անձնական որակների դերակատարման մասին՝ չի կարելի շրջանցել հոգեբանական պատմության կողմնակիցներին: Հոգեբանական կենսագրության մեթոդոլոգիայի կիրառմամբ գրված աշխատանքները բացահայտում են կարևոր անձնական շերտեր, որոնք իրենց ուղղակի ազդեցությունն են ունեցել նախագահի աշխարհայացքի ձևավորման վրա: Այս շարքում կառանձնացնենք հոգեբան Զիգմունդ Ֆրոյդի (Sigmund Freud) և ամերիկյան պետական և քաղաքական գործիչ Ուիլյամ Բուլլիտի (William Bullitt)²⁶ համահեղինակած Վուդրո Վիլսոնի կենսագրականը՝ գրված հոգեվերլուծության մեթոդի հիման վրա:

Իր ուրույն տեսակետով խնդրո առարկայի վերաբերյալ առանձնանում է ռուսական պատմագրությունը, որտեղ կարելի է առանձնացնել մի քանի շրջափուլ, որոնցից յուրաքանչյուրում Վիլսոնի դիվանագիտական ուղղվածության և նրա արտաքին քաղաքական տեսության ու ազգերի համընդհանուր ընկերակցություն ստեղծելու նրա գաղափարների նկատմամբ հստակ դրսևորվում էր տարբեր վերաբերմունք: Պետերբուրգյան համալսարանի դոցենտ Բորիս Շացկին արդեն 1913 թ. բավականին դրական էր արատահայտվում Միացյալ Նահանգների նոր վարչակազմի մասին՝ անվանելով Վիլսոնին «խոշոր տրամաչափի և անկախ բնավորության գործիչ»²⁷ : Հետագա տարիներին, պայմանավորված խորհրդային գաղափարախոսությամբ,

Haven, "Yale University Press", 1937. **G. Kennan**, American Diplomacy, 190-1950. Chicago, "University of Chicago Press", 1951.

²⁴ **W. Lippmann**, US Foreign Policy: Shield of the Republic. New York, "Little Brown & Co.", 1943.

²⁵ **H. Morgenthau**, In Defense of National Interest. A Critical Examination of American Foreign Policy. New York, "Alfred A. Knopf", 1951.

²⁶ **З. Фрейд, У. Буллит**, Томас Вудро Вильсон 28-ой президент США: Психологическое исследование. Москва, "Прогресс", 1992.

²⁷ **Б. Шацкий**, Президент-профессор, "Русская мысль", Москва-Петербург, "Русская Мысль", 1913. № 10, с. 114-126.

աստիճանաբար փոխվեց վերաբերմունքը Վիլսոնի և Միացյալ Նահանգների արտաքին քաղաքական հավակնությունների հանդեպ: Վիլսոնի արտաքին քաղաքականությունը խորհրդային պատմաբանների²⁸ կողմից սկսվեց դիտարկվել բացառապես Միացյալ Նահանգների համաշխարհային գերակայության, կայսերապաշտական (իմպերիալիստական) և հակախորհրդային ուղղվածության դիտանկյունից: Այս համատեքստում առանձնանում են Ջինովիյ Գերշովի հետազոտությունները²⁹: Գերշովի ընդհանուր ենթադրությունները չեն առանձնանում յուրահատկությամբ: Վիլսոնի արտաքին քաղաքական հայեցակարգը նա բացատրում է ամերիկյան աշխարհատիրական ձգտումներով՝ քղարկված ազատության և ժողովրդավարության շղարշով: Սակայն նա իր աշխատանքներում շրջանառության մեջ է դնում հսկայական քանակությամբ արխիվային փաստագրական նյութ, ինչ էլ անփոխարինելի է դարձնում վերջինիս աշխատանքները թեմայի ուսումնասիրության գործում: Գրեթե նման դիրքորոշումից է գրվել նաև ռուս հայտնի պատմաբան, միջազգայնագետ Նիկոլայ Յակովլևի աշխատանքը³⁰, որտեղ նախագահ Վիլսոնը ներկայացվում է որպես «չհասկացված մարգարե», որը «հյուժվեց՝ փրկելով կապիտալիզմը»:

Պետք է նշենք, սակայն, որ խորհրդային շրջանում եղան հեղինակներ³¹, որոնք փորձեցին անդրադառնալ արժարժվող թեմային այլ տեսանկյունից՝ տալով Վիլսոնի արտաքին քաղաքական կողմնորոշմանը փոքրիշատե օբյեկտիվ և խորհրդային ավանդական գնահատականից տարբեր մեկնաբանություն: Հայտնի պատմաբան, քաղաքագետ, ամերիկագետ Անատոլի Ուտկինը այն հեղինակներից է, ով փորձեց հաղթահարել խորհրդային գաղափարական կաղապարները և տալ Վիլսոնի դիվանագիտության ամբողջական, հնարավորինս օբյեկտիվ վերլուծությունը³²: Պատմաբան Ռուզաննա Իլյուխինան, իր մեկնազրույցում³³ ներկայացնելով Ազգերի լիգայի ստեղծման և գործունեության պատմությունը, անդրադարձել է Վիլսոնի

²⁸ **Л. Зубок**, Новейшая история США (1917-1968), Москва, "Просвещение", 1972, 367 с. **А. Березкин**, США-активный организатор и участник военной интервенции против Советской России (1918-1920 гг.) Москва, "Госполитиздат" 1949. **Б. Штейн**, "Русский вопрос" на Парижской мирной конференции (1919-1920 гг.) Москва, "Госполитиздат", 1949. **А. Кунина**, Провал американских планов завоевания мирового господства в 1917-1920 гг., Москва, "Госполитиздат", 1954. **К. Виноградов, В. Сергеев**, Вудро Вильсон в дни войны и мира, Новая и новейшая история, 1975, №5, с. 122-134, №6, с. 100-113. **Э. Иванян**, Белый дом: президенты и политика, Москва, "Политиздат", 1979. **Н. Индукаева**, От войны к миру: Политика США в германском вопросе в 1918-1921 гг. Томск, "Изд. Томского Ун-та", 1977, և այլն:

²⁹ **З. Гершов**, "Нейтрлитет" США в годы Первой Мировой войны, Москва, "Соцэкгиз", 1962. **Նուլնի**, Вудро Вильсон, Москва, "Мысль", 1983.

³⁰ **Н. Яковлев**, Преступившие грань, Москва, "Международные отношения", 1970.

³¹ **В. Лан**, США: от Первой до Второй мировой войны. Москва, "Наука", 1947. **Е. Попова**, США: борьба по вопросам внешней политики. 1919-1922 гг. Москва, "Международные отношения", 1966, և այլն:

³² **А. Уткин**, Дипломатия Вудро Вилсона, Москва, "Международные отношения", 1989. **Նուլնի**, Американская империя, Москва, "ЭКМО", 2003. **Նուլնի**, Унжение России: Брест, Версаль, Мюнхен. Москва, "ЭКМО", 2004.

³³ **Р. Илюхина**, Лига Наций, 1919-1934, Москва, "Наука", 1982.

արտաքին քաղաքական հայեցակարգի առանձին դրվագներին և բավականին համակարգված շարադրել է նախագահի տեսակետը հետպատերազմյան աշխարհակարգի և Ազգերի լիգայի վերաբերյալ:

Հետխորհրդային ռուսական պատմագրության մեջ նկատվում է վիլսոնյան թեմայի մեկնաբանման կտրուկ շրջադարձ: Վիլսոնի արտաքին քաղաքական փիլիսոփայության ձևավորման հիմքում հեղինակները³⁴ սկսում են դիտարկել նաև գաղափարական բաղադրիչի առկայությունը: Հայտնի պատմաբան, ամերիկագետ Վիկտոր Մալկովը իր աշխատանքներում³⁵ դիտարկելով վիլսոնյան արտաքին քաղաքական փիլիսոփայության էական սահմանները՝ ընդգծում է, որ Վիլսոնի գաղափարների անմիջական ազդեցությամբ հաստատված Վերսալյան համակարգը դարձավ «նորարարական խոշոր» քայլ 20-րդ դարի իրողություններին ընդառաջ: Բորիս Կոզենկոն³⁶ և Վյաչիսլավ Շաքիլլոն³⁷, նորովի մեկնաբանելով Վուդրո Վիլսոնի վարչակազմի արտաքին քաղաքականության որոշ դրվագներ, ցույց տվեցին 1914-1917 թթ. պատերազմող երկրների միջև ամերիկյան միջնորդության փորձերի անկեղծությունը:

Դիտարկելով մեզ հետաքրքրող թեմայի պատմագրությունը՝ պետք է նշենք նաև միջազգային հարաբերությունների, Միացյալ Նահանգների և Եվրոպայի պատմության վերաբերյալ ընդհանրական բնույթի աշխատանքների³⁸ կարևորությունը, որոնք հնարավորություն են տալիս համաշխարհային հարթության մեջ դիտարկել խնդրո առարկան:

³⁴ **А. Поршакова**, Вудро Вильсон: либерал по велению времени, Либеральная традиция в США и ее творцы. Москва, "Изд. МГУ", 1997, сс. 156-188, **О. Малинова.**, Либеральный национализм (середина XIX-начало XX века) Москва, "РИК Русанова", 2000 և այլն:

³⁵ **В. Мальков**, Американская мечта как символ веры и внешнеполитическая стратегема. Протоистория "империи по приглашению", Американский ежегодник, 1999, Москва, "Наука", 2001, сс. 122-154. **Սուլցի**, Путь к имперству: Америка в первой половине XX века. Москва, "Наука", 2004. **Սուլցի**, Вудро Вильсон и новая Россия, Новая и новейшая история, 1999, №6, 110-128 с., 2000, №1, с. 123-133.

³⁶ **Б. Козенко**, "Новая демократия" и война: Внутренняя политика США (1914-1917 гг.) Саратов, "Изд. Саратовского ун-та", 1980.

³⁷ **В. Шаццлло**, Президент Вильсон: от посредничества к войне. 1914-1917 гг., Новая и новейшая история, 1993, №6, с. 69-87. **Սուլցի**, Расчет и безрассудство. Германо-Американские отношения в 1898-1917гг., Москва, "ИВИ РАН", 1998.

³⁸ **З. Бжезинский**, Великая шахматная доска. Господство Америки и его геостратегические императивы, Москва, "Международные отношения", 2006. **А. Дебидур**, Дипломатическая история Европы, от Венского до Берлинского конгресса (1814-1878) т-1, Священный Союз, Москва, "Гос. Изд. Иностранной литературы", 1947. **В. Согрин**, Идеология в американской истории: от отцов-основателей до конца XX века, Москва, "Наука", 1995. **Н. Болховитинов**, Доктрина Монро (происхождение и характер), Москва, "ИМО", 1959. Системная история международных отношений, 1918-2003, тт. 1-4, под ред. **А. Богатуров**, тт. 1-2, Москва, "Московский рабочий", 2000, тт. 3-4, Москва, "НОФМО", 2003, 2004. **Н. Дэвис**, История Европы, Москва, "Хранитель", 2006. **К. Гаджиев**, Введение в геополитику, Москва, "Логос", 2000. **G. Tindall, D. Shi**, America a Narrative History, New York, "Norton and Company", 1992. **D. Henneth**, Don't Know Much About History, Everything You Need to Know About American History But Never Learned, New York, "Avon Books" 1990.

Միացյալ Նահանգների դիվանագիտության հիմնախնդիրները, այդ թվում Վիլսոնի արտաքին քաղաքական հայեցակարգի և դրա մաս կազմող Ազգերի լիգայի առանցքային որոշ հիմնահարցեր, դուրս չեն մնացել նաև հայ պատմագիտության տեսադաշտից: Այս շարքում կառանձնացնենք Լևոն Շիրինյանի աշխատանքները³⁹, որոնցում հեղինակը անդրադառնում է վիլսոնյան նոր աշխարհակարգի հաստատման հիմնախնդրին: Վերջինս հստակ քաղաքագիտական, երկրաքաղաքական և քաղաքակրթական վերլուծության է ենթարկում Հայաստանի առնչությունը 20-րդ դարասկզբի աշխարհաքաղաքական զարգացումներին:

Կարևոր են նաև Գալուստ Գալոյանի, Ռիչարդ Յովհաննիսյանի, Արման Կիրակոսյանի, Արա Պապյանի, Սիմոն Պայասլյանի, Գայանե Սախնուրյանի, Տիգրան Սահակյանի, Հայկ Ղազարյանի և այլոց աշխատանքները⁴⁰: Ամենևին չթերագնահատելով հայ հեղինակների գիտական ձեռքբերումներն այս ասպարեզում՝ պետք է նկատենք, որ խնդրո առարկային արված վերջիններիս անդրադարձները հիմնականում դիտարկվում են այնքանով, որքանով դրանք առնչվում են Հայկական հարցին և Հայոց ցեղասպանությանը կամ լավագույն դեպքում Վերսալյան համակարգի շրջանակներում Վիլսոնի ծավալած գործունեությանը: Ինչն էլ վերջինիս կերպարին տալիս է և՛ «ռոմանտիկ», և՛ «գաղափարապաշտ», և՛ «ուտոպիստական» մեկնաբանում: Մինչդեռ միանգամայն այլ է պատկերվող իրողությունը, երբ Վիլսոնի կերպարը դուրս է հանվում տեղայնական տարածքից և դիտարկվում է համաշխարհային պատմության լայնակի հեռապատկերում: Այս պարագայում հստակ ընդգծվում է Վիլսոնի աշխարհակարգաստեղծ գործունեության շրջագիծը, որի եզրերը ձգվում են

³⁹ **Լ. Շիրինյան**, Արևմուտքի անկումը, Վուդրո Վիլսոնը և արդարացի աշխարհակարգի հաստատման ամերիկյան փորձի ձախողումը, Երևան, «Ամարաս», 2010: **Նույնի**, Վուդրո Թ. Վիլսոնը, Սենյուել Պ. Հանթինգտոնը և Հայաստանը փոխակերպվող աշխարհակարգում (երկրաքաղաքակրթական մոտեցում), Երևան, «Բավիղ», 2012: **Նույնի**, Նոր աշխարհակարգը և Հայաստանը (երկրաքաղաքական-քաղաքակրթական ակնարկ), Երևան, Ա.հ., 2006:

⁴⁰ **Գ. Գալոյան**, Հայաստանը և Մեծ Տերությունները 1917-1923 թթ., Երևան, «Գիտություն», 1999: **R.Hovhannisian**, The Republic of Armenis, vv.-1-4, 1971-1996, (առկա է նաև 1-ին հատորի հայերեն տարբերակը՝ Հայաստանի Հանրապետություն, Առաջին տարին 1918-1919, խմբ. Ա.Խառատյան, ՀՀ ԳԱԱ, Պատմ. ինստ., Երևան, «Տիգրան Մեծ», 2005): **Ա.Կիրակոսյան**, Բրիտանական դիվանագիտությունը և արևմտահայության խնդիրը (19-րդ դարի 30-ական թթ.-1914 թ.), Երևան, «Գիտություն», 1999: **Նույնի**, Ակնարկներ հայկական հարցի և եղեռնի միջազգային ճանաչման պատմության, Երևան, «Տիգրան Մեծ», 2006: **Նույնի**, ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը և արևմտահայությունը: 19-րդ դար-1914 թ., Երևան, «ԵՊՀ հրատ.», 2014: **Նույնի**, Վուդրո Վիլսոնը և Հայկական հարցը, ՀՀ ՊՆ Ղ. Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 1-2 (83-84), Երևան, «Լինուշ», 2015: **Նույնի**, The Armenian Massacres, 1894-1896: US Media Testimony, Detroit, "Wayne State Univ. Press", 2004. **A. Papian**, Arbitral Award of the President of the United States of America Woodrow Wilson: Full Report of the Committee upon the Arbitration of the Boundary between Turkey and Armenia, Washington, November 22nd, 1920, Yerevan, "Asoghik", 2011. **S. Payaslian**, United States Policy Toward The Armenian Question and The Armenian Genocide, New York, "Palgrave Macmillan", 2005. **Գ. Махмурян**, Лига Наций, Армянский вопрос и Республика Армения, Ереван, "Артагерс", 1999. **Նույնի**, Политика Великобритании в Армении и Закавказье в 1918-1920 гг. Бремя белого человека, Ереван, "Лусакн", 2002. **Տ. Սահակյան**, Վուդրո Վիլսոն, Մարդը և Քաղաքագետը, Երևան, «Լուսակն», 2006: **Հայկ Ղազարյան**, Սևրի պայմանագիրը և Վուդրո Վիլսոնի իրավարար վճիռը Հայաստան-Թուրքիա սահմանաբաժանման վերաբերյալ, 2 գ., Երևան, «Էդիթ Պրինտ», 2012:

վեստֆալյան գործընթացներից մինչև Մասստրիխտյան պայմանագրի* կնքումը, Սրբազան դաշինքից մինչև Միավորված ազգերի կազմակերպություն:

Ներկա ատենախոսությունը Համընդհանուր խաղաղության հղացքի ուսումնասիրման, այս համատեքստում Վիլսոնի արտաքին քաղաքական դոկտրինայի ընդհանրական բնութագրման և քսաներորդ դարասկզբի պատմական իրողությունների վրա նրա ունեցած ազդեցության չափման մի փորձ է: Ինչն էլ, մեր ներկայացմամբ, սույն ատենախոսության հիմնական նորութային խոսվածքն է:

Միանգամայն այլ է պատկերը ամերիկյան, եվրոպական և ռուսական պատմագրության մեջ: Ամերիկյան արտաքին քաղաքական հիմնախնդիրներին, Վուդրո Վիլսոնի դիվանագիտությանը, Ազգերի լիգայի ձևավորմանը և գործունեությանը վերաբերող աշատանքները բազմաթիվ են: Մեր տրամադրության տակ եղած տեսական, պատմագիտական հետազոտությունները, հուշագրական աշխատանքները և արխիվային փաստաթղթերը թույլ են տվել հավաքել բազմակողմանի և բավականին հիմնավոր նյութ խաղաղության գաղափարի, Վիլսոնի և հետպատերազմյան նոր աշխարհակարգի վիլսոնյան տեսլականի վերաբերյալ: Այնուամենայնիվ, սակավ են (կարելի է ասել բացակայում են) այն աշխատանքները, որոնք ներկայացնում են Վիլսոնի արտաքին քաղաքական հայեցակարգը՝ համընդհանուր խաղաղության հղացքի զարգացման և Ազգերի լիգայի ստեղծման գաղափարի հասունացման տեսանկյունից: Սույն աշխատանքով փորձ է արվել նաև նորովի մեկնաբանել և ուսումնասիրության մեկ տեքստով ներկայացնել խաղաղության գաղափարի զարգացման տրամաբանությունը, Վեստֆալի և Վիեննայի համակարգերում վերջինիս կիրարկման համեմատական վերլուծությունը: Այնուհետև, Միացյալ Նահանգների արտաքին քաղաքական «վիլսոնյան» ավանդույթների ձևավորումն ուսումնասիրմամբ, համընդհանուր խաղաղության պահպանման հայեցակարգի վիլսոնյան պատկերացումների և Ազգերի լիգայի գաղափարական հիմնավորումների դիտարկմամբ փորձ է արվել արդեն Վերսալյան համակարգում գտնել համակարգային այն մեկտեղումները, որոնք իրականացնում էր Վուդրո Վիլսոնը նոր աշխարհակարգի հաստատման, Ազգերի լիգայի ստեղծման և համընդհանուր խաղաղության հաստատման իր գաղափարներում:

* Պայմանագիրը կնքվել է 1992 թ. փետրվարի 7-ին Մասստրիխտ քաղաքում (Նիդերլանդներ): Պայմանագրի պաշտոնական անվանումն է «Պայմանագիր Եվրոպական միության վերաբերյալ», որով սկիզբ դրվեց Եվրոպական միությանը: Այն ուժի մեջ է մտել 1993 թ. նոյեմբերի 1-ին: Պայմանագրի տեքստը մանրամասն տես Եվրոմիության պաշտոնական կայքէջում՝ <http://europa.eu/> :

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀԱՄԸՆԴՅԱՆՈՒՐ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՆՎՈՒՅԹՈՒՄ (ՎԵՍՏՏՅԱԼԻ և ՎԻԵՆՆԱՅԻ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ)

Համընդհանուր խաղաղության պահպանումը, պատերազմի և խաղաղության խնդիրները համաշխարհային պատմության գլոբալ հիմնախնդիրներից են և միջազգային հարաբերությունների կարևոր բաղկացուցիչները: Մարդկության զարգացմանը համընթաց խաղաղության գաղափարը անցել է էվոլյուցիոն բարդ ճանապարհ, որն արտահայտվել է բազում մտածողների աշխատություններում՝ այս կամ այն պատմական ժամանակաշրջանի առանձնահատկություններին համապատասխան: Խաղաղության հայեցակարգերը և ծրագրերը իրենց ուղղակի ազդեցությունն են ունեցել համընդհանուր խաղաղության գաղափարի զարգացման գործընթացի վրա՝ այս կերպ միջպետական փոխհարաբերություններում ձևավորելով յուրատեսակ «խաղաղության» ավանդույթ: Խաղաղության գաղափարի զարգացման վեկտորի ուսումնասիրումը հնարավորություն է ընձեռում ամրագրել անցումը վերացական գծապատկերներից դեպի հստակ քաղաքական ծրագրերի և հետևել հասարակական-քաղաքական պրակտիկայում տեսական մշակումների կիրառման գործընթացին:

Համընդհանուր խաղաղության պահպանումն ի սկզբանե դիտվել է որպես Եվրոպայում խաղաղության պահպանման երևույթ և դրվել «միասնական Եվրոպայի» գաղափարի հիմքում՝ հաճախ նաև ենթադրելով «հավերժ խաղաղության», «ուժերի հավասարակշռման», զանազան համաեվրոպական կառույցների և միությունների («Մեծ նախագիծ», «Սրբազան դաշինք», «Ազգերի լիգա», «ՄԱԿ») որոշակի ծրագրեր, որոնց նպատակը մեկն էր՝ հավաքական ջանքերի միավորմամբ հասնել խաղաղության հաստատմանը և պահպանմանը:

14-15-րդ դդ. ստեղծվեցին եվրոպական պետությունների միավորման առաջին որոշակի ծրագրերը, որոնց հիմնական նպատակը Եվրոպայի միավորումն էր քրիստոնեական կարգախոսների ներքո համընդհանուր կամ մշտական խաղաղության հաստատման և պահպանման համար: Որպես այդպիսի ծրագրերի առաջին հեղինակներ կարելի է նշել ֆրանսիական թագավորական դատախազ Պիեռ Դյուբուային (Pierre Dubois), իտալացի խոշոր հումանիստ, քաղաքական գործիչ և մտածող Դանթե Ալիգիերիին (Dante Alighieri), ինչպես նաև չեխ թագավոր Իոժի Պոդեբրադցուն (Jiří z Kunštátu a Poděbrad), որոնց առաջարկած համաշխարհային կամ համաեվրոպական միավորման գաղափարը դարձավ Եվրոպայի համախմբման

զանազան ծրագրերի, համընդհանուր և հարատև խաղաղության որոնումների անբաժանելի ուղենիշը⁴¹:

16-18-րդ դարերը Եվրոպայի հասարակական-քաղաքական կյանքում նշանավորվեցին շրջադարձային կարևորություն ունեցող գործընթացներով (կապիտալիստական հարաբերությունների հաստատում, ազգային պետությունների ձևավորում, գաղութային ձեռքբերումներ), որոնք իրենց ազդեցությունն ունեցան Եվրոպայի միասնականացման և խաղաղության պահպանման գաղափարի տեսլականի ձևավորման վրա: Վերածննդի ժամանակաշրջանի գաղափարական զարգացումներով պայմանավորված՝ առաջադեմ մտածողների ուշադրության կենտրոնում դրվել էր մարդը: Անհատի ներդաշնակ զարգացման խնդիրը մարդկության կյանքից մեծագույն չարիքի՝ պատերազմի վերացման և համընդհանուր ու հարատև խաղաղության հաստատման գաղափարի անհրաժեշտություն առաջացրեց: Այն նպաստեց նաև միջպետական փոխհարաբերությունների խնդրի կարգավորման ուղիների որոնմանը:

Վաղ հումանիստներից խաղաղության առավել խանդավառ ջատագովներից էր Վերածննդի դարաշրջանի ականավոր ներկայացուցիչ Էրազմ Ռոտերդամցին (Erasmus Roterodamus): Վերջինս, իր «Բողոք աշխարհին» աշխատությամբ քննադատելով պատերազմները, կոչ էր անում հասնել համընդհանուր և կատարյալ խաղաղության ոչ թե լիզաների և համադաշնությունների միջոցով, այլ համագործակցության, բարոյական փոխադարձ պատասխանատվության, փոխադարձ բարյացակամության և բանականության միջոցով⁴²:

17-րդ դարում խաղաղության գաղափարի զարգացման հիմնական միտումները որոշեցին Հուգո Գրոցիուսի (Hugo Grotius), Էմերի(կ) Կրյուսեի (Émeric Crucé), Թոմաս Հոբսի (Thomas Hobbes), Ջոն Լոքի (John Locke), Ուիլյամ Փենի (William Penn), Յան Կոմենսկիի (Jan Komenský) և դարաշրջանի այլ խոշոր մտածողների տեսակետները: Հիշյալ հեղինակները խաղաղության հաստատման հիմքում դնում էին միջազգային դատարանի և համաշխարհային սենատի ստեղծման, հակամարտությունների բանակցային կարգավորումների և ազատ առևտրի խրախուսման, հանրային պայմանագրի կնքման դրույթները, ինչի արդյունքում խաղաղության հիմնահարցի

⁴¹ **P. Dubois**, De recuperatione Terre Sancte, Paris, "Alphonse Picard, Éditeur" 1891. **Д. Алигьери**, Монархия, пер. с итал. В. Зубова, комм. И. Голенищева-Кутузова, Москва, "КАНОН-пресс-Ц"-"Кучково поле", 1999 с. The universal peace organization of King George of Bohemia : a fifteenth century plan for world peace, 1462-1464, trans. from the original Latin by members of the Czechoslovak Academy, ed. by F. G. Heymann, New York, "Garland Pub.", 1972.

⁴² **Э. Роттердамский**, Жалоба миру, пер. Ф.Л.Мендельсон, Москва, "Советская Россия", 1991.

դիտարկումը ներկայացավ միանգամայն նոր որակով, երբ առաջարկներից զատ մշակվեցին նաև իրականացման մեխանիզմները⁴³:

Այս քայլը կարծես ապահովեց 18-րդ դարի խաղաղության տրամախոսությունների առանձնահատկությունները, որոնք աչքի էին ընկնում իրենց իրատեսականությամբ և միջնորդային կարգավորման գործընթացի հստակ մշակմամբ: Այս տեսանկյունից կարևորվում են 18-րդ դարի ականավոր գործիչներ Շառլ Իրինե Կաստել (աբբա) դե Սեն-Պիերի (Charles-Irénée Castel, abbé de Saint-Pierre), Ժան-ժակ Ռուսսոյի (Jean-Jacques Rousseau), Էմանուել Կանտի (Immanuel Kant), Յերեմիա Բենթամի (Jeremy Bentham), Կլոդ Անրի դե Սեն-Սիմոնի (Claude Henri de Saint-Simon) «եվրոպական հանրության ձևավորման մասին» գաղափարները: Հիշյալ հեղինակների մոտ խաղաղության գաղափարն ունեցավ զարգացման իրավաքաղաքական և փիլիսոփայական միտում: Իրենց մեջ ներառելով նախորդ դարաշրջանների մտածողների բոլոր մշակումները՝ դրանք ներկայացրին խաղաղության հաստատման առավել լիարժեք, համակարգային և կառուցվածքային առաջարկներ, որոնք հիմնվում էին պետությունների համադաշնային միության ձևավորման, միջազգային խաղաղարար կազմակերպության ստեղծման, պետական ներքին կառուցվածքի հեղափոխական փոփոխման, հանրության սոցիալական փոխակերպման, ժողովրդավարության հաստատման դրույթների վրա⁴⁴:

Ընդհանուր առմամբ, հետևելով խաղաղության գաղափարի զարգացմանը և վերլուծելով ծրագրերը այս կամ այն պատմական ժամանակաշրջանի համատեքստում՝

⁴³ Մանրամասն տե՛ս **Գ. Գրոցիուս**, О праве войны и мира, Три книги в которых обнищаются естественное право и право народов, а также принципы публичного права, пер. с лат. А.Л. Саккетти, под ред. С.Б. Крылов, Москва, "Государственное издательство юридической литературы", 1956. **Е. Cruce**, The New Cyneas, ed. and transl. from the original French text of 1623 by Thomas Willing Balch, Philadelphia, "Allen Lane and Scott", 1909. **Т. Гоббс**, Левиафан, или Материя, форма и власть государства церковного и гражданского. Томас Гоббс, сочинения, в 2 томах, т. 2, сост. ред., авт. примеч. В.В. Соколов, Москва, "Мысль", 1991. **Дж. Локк**, Два трактата о правлении. Джон Локк, Сочинения, в 3 томах, т. 3, сост. ред., авт. примеч. А.Л. Субботин, Москва, "Мысль", 1988. **W. Penn**, An Essay Towards the Present and Future Peace of Europe, First Published in 1693-94, Washington, D.C., "The American Peace Society", 1912. **Я. Коменский**, Всеобщий совет об исправлении человеческих дел, Трактаты о вечном мире, предисл. Ф. В. Константинова, вводная статья в прим. И. С. Андреевой, сост. сб. И. С. Андреева и А. В. Гулыга, Москва, "Соцэкгиз", 1963. **J. Comenius**, The Angel of Peace, English-Latin Edition, New York, 1945:

⁴⁴ Մանրամասն տե՛ս **L'abbé de S.Pierre**, Abrege du Projet de Paix perpetuelle, Rotterdam, "Jean Daniel Beman", M.DCC.XXIX (1729). The Political Writings of Jean Jacques Rousseau, ed. from the original manuscripts and authentic editions, with introductions and notes by C.E. Vaughan. Vol. 1, Cambridge, "University Press", 1915. **И. Кант**, К Вечному Миру, Сочинения в шести томах, т. 6, под ред. Т. И. Ойзермана, Москва, "Мысль", 1966. A Plan for an Universal and Perpetual Peace. The Works of Jeremy Bentham, published under the superintendence of his executor John Bowring, vol. 2, Edinburgh, "William Tait", London, "Simpkin, Marshal & Co.", MDCCCXLIII (1843). **Сен-Симон**, Избранные сочинения, в 2 томах, пер. с фр., под ред. Л.С. Цетлина, Москва-Ленинград, "Изд. Академии Наук СССР", MCMXLVIII (1948) с:

պետք է նշել, որ հեղինակները ունեին որոշ չափով ուտոպիկ պատկերացում խաղաղության հիմնահարցի վերաբերյալ: Սակայն նրանցում առկա էր մարդկության խաղաղ գոյակցության հեռանկարը, ինչն էլ, մեր համոզմամբ, նպաստեց, որ առաջ քաշած դրույթներից շատերը ունենան նաև գործնական կիրառում՝ հիմնադրութային նշանակություն ունենալով համընդհանուր խաղաղության պահպանման համակարգային կարգավորման գործընթացում:

1.1 ՀԱՄԸՆԴՅԱՆՈՒՐ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՎԵՍՏՖԱԼՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԸ

Վեստֆալյան հաշտությամբ, որը կնքվեց 1648 թ. հոկտեմբերի 24-ին, դիվանագիտության պատմության մեջ սկսվում է Եվրոպական վեհաժողովների գումարման շրջանը: Հաշտությունը կնքվեց երկար բանակցությունների արդյունքում, որոնք սկսվել էին 1645 թ. Վեստֆալիայի Օսնաբրյուք (Osnabrück) և Մյունստեր (Münster) քաղաքներում*: Այն վերջ դրեց 1618-1648 թթ. Երեսնամյա պատերազմին: Պատերազմը, որ բռնկվել էր «քրիստոնյա աշխարհին»* տիրելու նպատակով, սկզբնական շրջանում կրում էր ավելի շատ կրոնական պատերազմի բնույթ կաթոլիկների և բողոքականների միջև: Սակայն իրադարձությունների զարգացման ընթացքում այն աստիճանաբար կորցնում է իր նախնական բնույթը և բացահայտում իր բուն նպատակը՝ ազգային պետությունների կազմավորման նախաշեմին Եվրոպայում առաջատար պետության դերի ստանձնումը: Չանդրադառնալով պատերազմի մանրամասներին՝ նշենք, որ պատերազմի ընթացքում կողմերից որևէ մեկին չհաջողվեց հակառակորդին ծնկի բերել: Համեմատելով նախապատերազմական իրավիճակը հետպատերազմականի հետ, և, համադրելով մասնակից կողմերի նպատակները, ինչպես նաև հաշվի առնելով ձեռք բերված արդյունքները՝ հաղթող կարելի է համարել Ֆրանսիային և Շվեդիային, որոնք պատերազմի ավարտից հետո առաջատար դիրք զբաղեցրին 17-րդ դարի երկրորդ կեսի և 18-րդ դարասկզբի Եվրոպայի դիվանագիտական հարթակում: Պատերազմից հետո Եվրոպայում ձևավորվեցին ազգային մի շարք մեծ պետություններ, որոնց շուրջ համախմբվեցին ավելի թույլ

* Օսնաբրյուքյան վեհաժողով՝ 1645-1648 թթ., մի կողմից Սրբազան հռոմեական կայսրության ու նրա դաշնակիցների և մյուս կողմից Շվեդիայի և նրա դաշնակիցների մասնակցությամբ:

Մյունստերյան վեհաժողով՝ 1645-1648 թթ., մի կողմից Սրբազան հռոմեական կայսրության ու նրա դաշնակիցների և մյուս կողմից Ֆրանսիայի և նրա դաշնակիցների միջև:

* Մինչև 1530-ական թթ. «քրիստոնեական աշխարհը» բաժանվում էր երկու մասի՝ ուղղափառություն և կաթոլիկություն: 1530-ական թթ. այն արդեն բաժանվում էր երեք մասի՝ ուղղափառություն, կաթոլիկություն և բողոքականություն: Բողոքականները իրենք ևս իրենց մեջ ունեին մերթն ճյուղավորումներ: Այս աղմկահարույց բաժանումները բերեցին նրան, որ մարդիկ ընդհանրապես դադարեցին խոսել «քրիստոնեական աշխարհից», և դրա փոխարեն սկսեցին խոսել Եվրոպայի մասին: Տե՛ս **Н. Дэвис**, История Европы, Москва, "Хранитель", 2006, с. 362:

պետությունները: Սրանով Եվրոպայում հայտնվեցին առաջին համեմատաբար կայուն ուժային կենտրոններ, որոնց միջև, բնականաբար, առաջացավ իրավիճակին բնորոշ հակամարտություն, քանզի ցանկացած մեծ պետություն խանդով հետևում էր, որ մեկ այլ պետություն չդառնա ավելի զորեղ՝ փոքր պետություններին ներկալելու հաշվին: Այս հակամարտությունն էլ իր հերթին պահպանելու էր ուժերի հավասարակշռությունը և համընդհանուր խաղաղությունը՝ ապահովելով միջազգային կյանքի ընդհանուր առաջընթացը: Իմիջիայլոց, ըստ պատմաբան Վերոնիկա Վեջվուդի (Veronica Wedgwood)՝ Երեսնամյա պատերազմի ընթացքում հակամարտող կողմերը պայքարում էին խաղաղության հաստատման համար, և նրանց առաջնորդում էր ոչ թե նվաճումների մոլուցքը կամ կրոնական խանդը, այլ խաղաղության կորստի վախը: Երեսուն տարի նրանք կռվեցին խաղաղության պահպանման համար՝ չհասկանալով, որ պատերազմը միայն նոր պատերազմ է ծնում⁴⁵:

Ինչպես վերը նշվեց, Վեստֆալյան հաշտությունը ամրագրեց Երեսնամյա պատերազմի ավարտը, որի դրույթները վերաբերում էին Սրբազան հռոմեական կայսրության տարածքային փոփոխություններին, կրոնական հարաբերություններին և Եվրոպայի քաղաքական կառուցվածքին: Վեստֆալյան հաշտությամբ Եվրոպական պետությունները մայրցամաքն առաջին անգամ դիտարկեցին որպես մեկ ամբողջություն և պատրաստ էին կիսելու վերջինիս անվտանգության համատեղ պատասխանատվությունը: Մյունստերում և Օսնաբրյուքում տեղի ունեցածը հիշեցնում էր Եվրոպայի անվտանգության և համագործակցության խորհրդակցություն, որի ընթացքում, բացի միջպետական վարչատարածքային խնդիրների կարգավորումից, առաջ քաշվեցին նաև միջպետական հարաբերությունների կարգավորման միանգամայն նոր սկզբունքներ, որոնք ձևավորեցին Վեստֆալյան համակարգը: Վեստֆալյան համակարգը միջազգային հարաբերությունները «համակարգելու» առաջին հարացույցն էր, հարաբերություններ, որոնք միջպետական դրսևորումներում առանձնանում էին կայունությամբ և փոխկախվածությամբ և որոնց հիմքում ընկած էր կայուն նպատակների որոշակի գիտակցված համալիրի հասնելու ձգտումը: Վեստֆալյան հաշտությամբ առանձնացավ նաև միջազգային հարաբերությունների համակարգի հարացույցը, որը հիմնված է «ազգային շահի» («raison d'état») վրա⁴⁶: Այս սկզբունքի հիմնադիրը եղավ կարդինալ Ռիշելյոն (Richelieu)^{*}, որը մեկտեղեց «ազգային

⁴⁵ **В. Веджвуд**, Тридцатилетняя война, пер. с англ. И.В. Лобанов, Москва, "Астрел Полиграфиздат", 2012, с. 569.

⁴⁶ Становление и развитие системности в международных отношениях, программа специального курса, проф. **А. Маныкин**, лекция 1, Понятие системности в международных отношениях. Причины ее возникновения. <http://www.hist.msu.ru/Departments/ModernHist/node/47>

^{*} Արման-ժան դյու Պլեսսի դե Ռիշելյոն (Armand-Jean du Plessis de Richelieu, 1585-1642) Ֆրանսիայի կարդինալն էր 1622-1642 թթ., 1624-1642 թթ. Լուի XIII-ի առաջին նախարարը:

շահը» և ուժերի հավասարակշռությունը մեկ հայեցակարգում, որտեղ այդ երկու սկզբունքները գործում էին փոխկապակցված՝ ապահովելով համընդհանուր խաղաղությունը: Կարդինալ Ռիշելյոն իրականացնում էր այս հայեցակարգը հանուն իր երկրի՝ Ֆրանսիայի բարօրության: Հոգևորական լինելով հանդերձ՝ նա պետական շահը (նույնն է թե՛ ազգային շահը-Կ.Գ.) ամենից վեր էր դասում և հանուն այդ շահի պատրաստ էր համագործակցել յուրաքանչյուր հնարավոր դաշնակցի հետ, այդ թվում նաև՝ բողոքականների և մուսուլմանների: Սակայն նա համոզված էր, որ «ծառայելով կաթոլիկ հավատին ամենամովիրված տերության՝ Ֆրանսիայի շահերին՝ դրանով իսկ ծառայում է կաթոլիկ հավատքի շահերին»⁴⁷: Նման քաղաքականության արդյունքում նա, բնական է, լինելով կաթոլիկ երկրի հոգևոր առաջնորդ, պետք է առաջացներ Հռոմի պապի դժգոհությունը, և պատահական չէ, որ 1642 թ., իմանալով կարդինալի մահվան մասին՝ Հռոմի Ուրբանոս (Urbanus) VIII պապը ասել էր. «Եթե Աստված կա, ապա կարդինալ Ռիշելյոն պետք է շատ բաների համար նրան պատասխան տա: Եթե ոչ, ապա, ինչ արած, նա հաջողակ կյանք ապրեց...»⁴⁸:

Կարդինալ Ռիշելյոն փոխկախվածության մեջ դրեց այս երկու սկզբունքները՝ մեկտեղելով դրանք մեկ հայեցակարգում: Լինելով հեռատես քաղաքական գործիչ, նա լավ գիտակցում էր, որ առանձնացման պարագայում դրանք կսկսեն դիմակայել մեկը մյուսին: «Raison d'état»-ը, որպես այդպիսին, իր մեջ չէր պարունակում ինքնակառավարման և ինքնասահմանափակման տարրեր. ինչքա՞ն հեռուն պետք է գնալ, որ պետության շահերը բավարարված լինեն, որքա՞ն պատերազմ է հարկավոր՝ անվտանգության հասնելու համար: Եվ իրոք, նման դրսևորում եղավ Ֆրանսիայում Լուի XIV-ի (1643-1715) գահակալման ժամանակ: Վերջինս Կարդինալ Ռիշելյոց «ծառանգել» էր ուժեղ Ֆրանսիա, որը սահմանակից էր մասնատված Գերմանիային և անկում ապրող Իսպանիային⁴⁹: Սակայն Լուի XIV-ին միայն անվտանգությունը քիչ էր հոգեպես բավարարված լինելու համար. անհրաժեշտ էին նվաճումներ, և երկրի գերակշիռ ուժը, ըստ նրա, ստեղծում էր բոլոր անհրաժեշտ նախադրյալները: Չափից ավելի հետևելով իր պետության շահերի գերակայության սկզբունքին, նա, ի վերջո, «վախեցրեց» եվրոպական մյուս պետություններին՝ դրանով իսկ նպաստելով հակաֆրանսիական կոալիցիայի ձևավորմանը և ձախողելով սեփական ծրագրերի իրականացումը (մնացյալ պետությունները համախմբվեցին ընդդեմ Ֆրանսիայի հանուն ուժերի հավասարակշռության-Կ.Գ.)⁵⁰:

⁴⁷ **В. Ранцов**, Ришелье: его жизнь и политическая деятельность, Санкт-Петербург, "Общественная Польза", 1893, с. 45.

⁴⁸ Տե՛ս **Г. Киссинджер**, նշված աշխ., էջ 47:

⁴⁹ История Франции, отв. ред. **А. Манфред**, т. 1, Москва, "Наука", 1972, с. 239.

⁵⁰ **Г. Киссинджер**, նշված աշխ., էջ 54:

Սակայն սա չի նշանակում, որ պետության շահի դիտարկումը որպես երկրորդական երևույթ կարող էր, ի վերջո, լուծել համընդհանուր խաղաղության հաստատման հիմնախնդիրը: Ազգային շահի ի հայտ գալը հանդիսացավ երկարաժամկետ քաղաքական դաշինքների և ուժային կենտրոնների ձևավորման նախադրյալներից մեկը, որոնց միջև փոխհարաբերությունը նպաստում էր պահպանել ուժերի հավասարկշռությունը յուրատեսակ համակարգված մեխանիզմի շրջանակներում: Իսկ մեխանիզմը համակարգված է այն դեպքում, երբ կարողանում ես ճիշտ հաշվարկել ուժերի հարաբերակցությունը: Բավականին դժվար է վերլուծել ուժերի հարաբերակցությունը նույնիսկ այն ժամանակ, երբ դրա բաղկացուցիչները քիչ թե շատ կայուն են, իսկ եթե խախտվում է վերջիններիս հարաբերական կայունությունը, ապա խնդիրն ամբողջությամբ անհուսալիորեն խճճվում է՝ ձևավորված համակարգը կանգնեցնելով հերթական փակուղու առջև: Իհարկե, ուժերի հարաբերակցությունը տեսականորեն ենթարկվում է հաշվարկի, սակայն գործնականում այլ է պատկերը, քանզի սեփական հաշվարկները շատ դժվար է համապատասխանեցնել մյուս պետությունների հաշվարկներին: Ահա այս համապատասխանեցման ընթացքում 17-րդ դարի երկրորդ կեսին ձևավորված միջազգային հարաբերությունների համակարգի ներսում ձևավորվեց «համակարգանպաստ» և «համակարգախախտ» գործոնների փոխհարաբերության բարդ մեխանիզմ, ինչը և ապահովեց համակարգի գործունեության հարաշարժությունը՝ տանելով նրան դեպի կատարելություն⁵¹: Այս հարացույցն ուներ մի կարևոր առանձնահատկություն ևս. ստեղծման պահին նրա ազդեցության ոլորտը աշխարհագրորեն սահմանափակված էր. այն ուներ ընդգծված եվրոպակենտրոն բնույթ⁵²:

Վեստֆալյան համակարգով սկիզբ դրվեց մի նոր աշխարհաքաղաքական դարաշրջանի, երբ պետությունները սկսեցին դիտվել որպես առանձին տարածքային կազմավորումներ: Այն հաստատեց պետության ինքնիշխանությունը ներքին և արտաքին քաղաքականության բնագավառում և դրանով իսկ պետությունների՝ միմյանց ներքին գործերին չմիջամտելու սկզբունքը: Այն միմյանց ինքնիշխանությունը հարգող պետությունների համակարգ էր, որոնք իրենք էին կառուցում իրենց ներքին քաղաքականությունը և ազատ էին իրենց գործողություններում նաև արտաքին քաղաքականության բնագավառում: Յուրաքանչյուր պետություն բացարձակ

⁵¹ Становление и развитие системности в международных отношениях, программа специального курса, проф. **А. Маныкин**, лекция 3, Системообразующие и системоразрушающие факторы в международных отношениях. Механизм их взаимодействия. <http://www.hist.msu.ru/Departments/ModernHist/node/47>

⁵² Տե՛ս նույն տեղում, лекция 6. Вестфальская система. Ее характеристика. Особенности фазы консолидации:

իշխանություն ուներ իր տարածքի նկատմամբ⁵³: Այս տեսանկյունից՝ այն պետությունը, որը կկարողանար ճիշտ օգտագործել «խաղաթուղթը», կարող էր դառնալ Եվրոպայի գլխավոր ուժային կենտրոններից մեկը:

Վեստֆալյան համակարգը դիտարկում էր միմյանց գործերին չմիջամտելու դրույթը նաև որպես փոխօգնություն: Օրինակ՝ կարդինալ Ռիշելյոն իբրև օգնություն Մեծ Բրիտանիայից խնդրում էր ոչ թե փող կամ զինվոր, այլ չեզոքություն և չմիջամտում Ֆրանսիայի ներքին քաղաքականությանը⁵⁴:

Համագործակցելով միմյանց հետ՝ Վեստֆալյան հաշտությունից հետո ինքնիշխան պետությունները վերածվեցին միջազգային հարաբերությունների հիմնական սուբյեկտի՝ ձևավորելով պետականակենտրոն համակարգ: Պետությունների հավասար ինքնիշխանության սկզբունքը Վեստֆալից հետո դարձավ Եվրոպական քաղաքականության հիմքը: Նրանք ազատ էին իրենց հարաբերություններում այլ պետությունների հետ, ինչը սկիզբ դրեց ուժերի հավասարակշռության մեխանիզմի ձևավորմանը: Եթե մինչ Վեստֆալը Եվրոպական որևէ պետություն կարող էր ձգտել համաեվրոպական գերիշխանության, ապա այս հաշտությունից հետո դա հնարավոր չէր, քանզի նման փորձն անմիջապես կհանդիպեր մյուս պետությունների համագործակցությանն ընդդեմ տվյալ երկրի: Այս պարագայում աշխատում էր Կամալուդին Գաջիևի առաջ քաշած սկզբունքը, համաձայն որի՝ «գործողությունը ծնում է հակառակ գործողություն, իսկ ուժը՝ հակակշիռ ուժ»⁵⁵: Սա է, ըստ նրա, պետությունների փոխհարաբերությունների օրենքը, և միջազգային քաղաքականությունում ուժերի հավասարակշռության մեխանիզմը գործում է այս սկզբունքով: Նման իրավիճակում անհրաժեշտություն էր գոյանում համատեղ գործողությունների, քանզի կոալիցիայի միակողմանի օգտագործումը կհանգեցներ տեղական պատերազմների: Միջպետական դաշինքները դարձան ավելի ճկուն և հանգամանքային: Համատեղ գործելու անհրաժեշտությունը պետություններին տալիս էր նաև համագործակցության դաշտում մանևրելու և դաշնակիցներին փոխելու հնարավորություն: Եթե դաշինքի(ների) արդյունքում ակնկալվում էր ուժերի կուտակում մի որևէ պետության կամ կոալիցիայի ձեռքում, որի արդյունքում վերջիններս կարող էին հավակնել գերիշխանության, ապա այս պարագայում յուրաքանչյուր պետություն, ըստ ֆրանսիացի փիլիսոփա և քաղաքագետ Ռայմոն Առնի, ուժերի հավասարակշռությունը

⁵³ **K. Kaiser**, *Zeitenwende*, "Internationale Politik", №5, Mai 2003, s.1, <https://zeitschrift-ip.dgap.org/de/ip-die-zeitschrift/archiv/jahrgang-2003/mai/zeitenwende>

⁵⁴ **П. Черкасов**, Кардинал Ришелье, Москва, "Международные отношения", 1990, с. 277.

⁵⁵ **К. Гаджиев**, Введение в геополитику, Москва, "Логос", 2000, с. 416.

պահպանելու համար կարող էր հանդես գալ ընդդեմ տվյալ պետության կամ կոալիցիայի⁵⁶:

Պետությունների՝ միմյանց հետ ազատ համագործակցելու հանգամանքը նրանց միջև առաջացրեց որոշակի մրցակցություն, ինչը և հանդիսացավ Վեստֆալյան համակարգի հիմնական շարժիչ ուժը: Մեկը ձգտում էր ուժեղացնել իր ազդեցությունը, իսկ մյուսները փորձում էին թույլ չտալ: Այստեղ անխուսափելի էր բախումը պետությունների միջև, ինչը հիմնականում պայմանավորված էր պետությունների համար կենսական նշանակություն ունեցող ազգային շահերի միմյանց հակասելու գործոնով: Այս հակամարտության ելքը, որպես կանոն, ավարտվում էր պետությունների կամ դաշինքների միջև ուժերի փոխհարաբերությամբ, որի մեջ նրանք մտնում էին իրենց արտաքին քաղաքական նպատակների իրականացման համար: Եթե այդ փոխհարաբերությունները գտնվում էին խաղաղ և փոխհամաձայնեցված փուլում, ապա դա նշանակում էր ուժերի հավասարակշռության հաստատում, իսկ վերջինիս խախտումը ընդհանուր հաշվով բերում էր պատերազմի⁵⁷: Պատերազմը սակայն դեռ վերջը չէր: Այն կարծես մի օրգանիզմ էր, որն ապահովում էր անցումը համակարգերի միջև: Պատերազմը ազդարարում էր նախորդ համակարգի քայքայում, բայց ոչ վերացում, քանզի պատերազմի ավարտից հետո վերջինս կերպարանափոխված պետք է նորից հաստատվեր և ապահովեր միջպետական հարաբերությունների կարգավորումը և համընդհանուր խաղաղության պահպանումը: Այդպես է եղել բոլոր չորս համակարգերի ժամանակ. Վեստֆալյան համակարգը հաստատվեց Երեսնամյա պատերազմից, Վիեննայի համակարգը՝ Նապոլեոնյան պատերազմներից, Վերսալ-վաշինգտոնյան համակարգը՝ Առաջին աշխարհամարտից, Յալթա-պոտսդամյան համակարգը՝ Երկրորդ աշխարհամարտից հետո:

Ահա ուժերի նման փոխհարաբերությունը գործի դրեց մի մեխանիզմ, որի արդյունքում Եվրոպայում ինքնաբերաբար սկսեց ձևավորվել ուժերի հավասարակշռության կարգավորման համակարգ, ինչն էր վերջո դրվեց միջազգային հարաբերությունների համակարգի հիմքում: Ինչո՞ւ ինքնաբերաբար: Այս առիթով Ջեյմս Բիսինգերը նշում է, որ ուժերի հավասարակշռումը, որպես այդպիսին, հազվադեպ է ի հայտ եկել մտածված հաշվարկների արդյունքում: Սովորաբար այն հանդիսանում է մեկ պետության կողմից մյուսի վրա գերիշխելու փորձին դիմակայելու արդյունք. «Ուժեղը ձգտում է խլել այն, ինչ թույլերը փորձում են պահպանել՝ ձևավորելով կոալիցիաներ: Եթե կոալիցիան լինում է ուժեղ և կարողանում է դիմակայել ագրեսիային, ի հայտ է

⁵⁶ **Р. Арон**, Мир и война между народами, пер. с франц., под ред. В.И. Даниленко, Москва, "Nota Bene", 2000, с. 183.

⁵⁷ **А. Торкунов**, Современные международные отношения, Москва, "Российская политическая энциклопедия", 1999, с. 23.

գալիս ուժերի հավասարակշռությունը, եթե ոչ, ապա պետություններից մեկը գերիշխանություն է ձեռք բերում»⁵⁸: Հետևաբար Մյունստերյան և Օսնաբրյուքյան բանակցությունների մասնակիցները չէին էլ ենթադրում ստեղծել միջազգային հարաբերությունների մի հատուկ համակարգ, այլ միայն ժամանակի պահանջին համահունչ վերաբաշխում էին տարածքները և ազդեցության ոլորտները Երեսնամյա պատերազմի ավարտից հետո⁵⁹:

Հաշվի առնելով այն, որ հավասարակշռության համար անհրաժեշտ են իրար հակակշռող առնվազն երկու կողմեր, ապա այս պարագայում հետաքրքրական է այն, որ կարդինալ Մազարինիի (Maz(z)arino)* գնահատմամբ Վեստֆալի հաշտությունը ունեցավ նման նշանակություն: Այն ֆրանսիացիներին ստիպեց հրաժարվել Հաբսբուրգների դեմ վերջնական հաղթանակից, ինչը փրկեց գերմանական կայսրին անխուսափելի կործանումից: 1648 թ. հոկտեմբերի 23-ին՝ Մյունստերի նախօրեին, նա գրում էր. «Անկասկած ամենամեծ օգնությունը, որ կարող է հիմա ստանալ կայսրը, այն է, ինչ մենք այժմ նրան պարտադրում ենք, այլապես նրա կործանումը անխուսափելի է»: Վեստֆալյան հաշտությունը, ըստ կարդինալ Մազարինիի, «փրկության խարիսխ» էր կայսեր համար⁶⁰:

Վեստֆալյան համակարգի սկզբունքները վերջին հաշվով կոչված էին ապահովելու համընդհանուր խաղաղությունը, ինչն ամենևին էլ չէր նշանակում, որ այն միայն միջպետական հարաբերությունները կարգավորող սկզբունքների հավաքածու էր: Վեստֆալը առաջին հերթին համակարգ էր, որը կարգավորում էր բոլոր այդ տարրերը և կազմավորում էր մեկ ամբողջություն: Կարդինալ Ռիշելյոյի առաջ քաշած հայեցակարգը կարծես կարողացավ լուծել իր առջև դրված խնդիրը՝ համընդհանուր խաղաղության պահպանումը, քանզի Եվրոպան Վեստֆալյան համակարգի հաստատման արդյունքում կարողացավ թեկուզև կարճ ժամանակով ապրել որպես մեկ օրգանիզմ, որի գոյությունը պայմանավորված էր վերջինիս բաղկացուցիչների (այս պարագայում Եվրոպական պետությունների) կենսունակությամբ: Այս իրողությունն իր մտքերում ամրագրել է նաև Վոլտերը (Voltaire)՝ նշելով. «Քրիստոնյա Եվրոպան նման է մի մեծ հանրապետության՝ բաժանված մի շարք պետությունների, որոնց մի մասը միապետական է, մյուսը՝ խառը կարգ ունեցող, բայց նրանք բոլորը գտնվում են միմյանց հետ ներդաշնակ հարաբերություններում, բոլորը հետևում են միևնույն սկզբունքին՝ աջակցել միմյանց

⁵⁸ **Г. Киссинджер**, նշված աշխ., էջ 55:

⁵⁹ **Т. Зонва**, Вестфальская Система, "Вестник МГИМО", 2008 г., №1, с. 78. <http://www.mgimo.ru/zonova/>

* Ջուլիո Ռայմոնդո Մազարինի (Giulio Raimondo Maz(z)arino, 1601-1661), 1641 թ-ից ֆրանսիայի կարդինալ, 1643 թ.թազուհի Աննա Ավստրիացին նրան նշանակեց երկրի առաջին նախարար:

⁶⁰ Տե՛ս **Б. Поршнев**, Франция, Английская революция и Европейская политика в середине XVII в., Москва, "Наука", 1970, с. 102-103:

հանուն հավասարակշռության (հետևաբար՝ խաղաղության-Կ.Գ.) պահպանման»⁶¹ : Մոնտեսքյուն (Montesquieu), նույնպես անդրադառնալով այս երևույթին, նշում է. «Եվրոպայում իրերի դասավորվածությունը հանգեցրեց նրան, որ բոլոր պետությունները կախման մեջ ընկան միմյանցից... Եվրոպան սկսեց հանդես գալ, որպես մի մեծ միասնական պետություն՝ բաղկացած մի շարք նահանգներից, որոնց միջև փոխհարաբերությունը ապահովում էր վերջինիս կայունությունը»⁶² Միջազգային իրավունքի հիմնադիր հայրերից էներ դե Վաթելը, ընդգծելով եվրոպական պետությունների միջև հաստատված բանակցային փոխհարաբերությունների ինստիտուտի ստեղծումը, նշում էր. «Սկիզբ առած պարբերաբար բանակցությունների գործընթացը Եվրոպան դարձնում են մի յուրատեսակ հանրապետություն, որի բաղկացուցիչ մասերը առանձին վերցրած անկախ են, սակայն կապված են միմյանց խաղաղության և ազատության պահպանման համընդհանուր շահով: Այս երևույթը իր հերթին խթանեց ուժերի հավասարակշռության ի հայտ գալուն, որի օգնությամբ միջազգային հարաբերությունները այնպես են կարգավորվում, որ ոչ մի պետություն չի կարողանում հաստատել իր բացարձակ գերիշխանությունը «Եվրոպական հանրապետությունում»⁶³:

Վեստֆալյան համակարգը ստեղծողների հանճարն այն է, որ նրանք ոչ միայն լուծեցին խնդիրները, որոնց հետ առնչվել էր Եվրոպան 17-րդ դարի առաջին կեսին, այլ ինքնավարության սկզբունքով դրեցին նոր քաղաքական համակարգի հիմքերը՝ վերջինիս տալով հետագա զարգացման հնարավորություն⁶⁴: Սակայն այստեղ կա մեկ ակնառու բացթողում, ինչն ամենայն հավանականությամբ կապված էր միջազգային հարաբերությունների խաղաղ կարգավորման բնագավառում եվրոպական երկրների դեռևս անհրաժեշտ փորձի բացակայության հետ. չստեղծվեց այն մարմինը կամ կառույցը, որը պետք է ստանձներ այս սկզբունքների կիրառումը և հանդիսանար համընդհանուր խաղաղության պահպանման երաշխավորը: Ճիշտ է, համակարգը բոլոր պետություններին դիտարկում էր հավասար, սակայն մի քանիսը մյուսներից առավել «հավասար» էին և սկզբունքների կիրառումը աստիճանաբար դառնում էր դժվար, իսկ երբեմն՝ անհնաստ, քանզի անընդհատ առկա էր ուժային առավելության թելադրանքով հավասարակշռությունը և խաղաղությունը խախտելու վտանգը: Ահա

⁶¹ Տե՛ս **F. Hinsley**, Power and the Pursuit of Peace, Cambridge, "Cambridge University Press", 1963, p., 162-163:

⁶² Տե՛ս նույն տեղում:

⁶³ **Э. де Ваттель**, Права народов или принципы естественного права, применяемые к поведению и делам наций и суверенов, пер В.Н. Дурденовский, Ф.А. Кублицкий, Э.М. Фабриков, Москва, "Государственное издательство юридической литературы", 1960, с. 450.

⁶⁴ **М. Лебедева**, Что угрожает Вестфалю? "Международные процессы". Январь-апрель 2008, том 6, №1(16), с. 117, <http://www.mgimo.ru/users/document1793.phtml>, <http://www.intertrends.ru/archiv.htm>

«անկառավարելիության» այս մթնոլորտը Եվրոպան կանգնեցրեց նապոլեոնյան պատերազմների փաստի առջև: Պատերազմներ, որոնք ցնցեցին համընդհանուր խաղաղության պահպանման հայեցակարգի առանց այդ էլ խարխուլ հիմքերը և ստիպեցին, որ Եվրոպական պետությունների ներկայացուցիչները հերթական անգամ հավաքվեն այս անգամ արդեն Վիեննայում (1814-1815 թթ.)՝ վերանայելու Վեստֆալում հաստատված միջազգային հարաբերությունների դրույթները, բավարարելու հաղթողների տարածքային պահանջները հետնապոլեոնյան Եվրոպայում, հաստատելու նոր պետական սահմաններ Եվրոպայում և երաշխիքներ ձեռք բերելու Եվրոպան նվաճելու նոր փորձերի դեմ:

1.2 ՀԱՄԸՆԴՅԱՆՈՒՐ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՎԻԵՆՆԱՅԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԸ

14-19-րդ դարերի՝ խաղաղության գաղափարի զարգացման ուսումնասիրությունը ակնհայտ է դարձնում, որ գործ ունենք համաեվրոպական գործընթացի հետ: Հեղինակների գրեթե բոլոր տրամախոսությունները պարունակում են համաեվրոպական (երբեմն համաշխարհային, սակայն Եվրոպակենտրոն) մեխանիզմների կիրառման առաջարկներ: Համընդհանուր և հավերժ խաղաղության հաստատումը և պահպանումը մշակվում էր համաեվրոպական, վերպետական մարմինների ստեղծման, որոշ դեպքերում նաև սոցիալական վերակառուցումների շրջանակներում: Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ բոլոր հեղինակները անխտիր դատապարտում էին պատերազմը որպես չարյաց մեծագույնի և դրա վերացումը դիտում էին որպես հավերժ խաղաղության հաստատման հիմնական նախապայման: Այս դրույթի հիման վրա տրամախոսություններում կարևորվում էր սպառազինության կրճատման հարցը, և դիտարկվում էր Եվրոպայի միասնականացման խաղաղ տարբերակը:

Սակայն նապոլեոնյան դարաշրջանը բացեց Եվրոպական գաղափարի իրականացման և դրանից բխող խաղաղության հաստատման միանգամայն նոր փուլ: Միասնական Եվրոպայի նապոլեոնյան տեսլականը «փորձարարական» մարտահրավեր էր՝ Եվրոպական գաղափարին ուղղված. խոսքն այն մասին է, որ փորձ էր արվում ոչ միայն զենքի ուժով միավորել Եվրոպական երկրները, այլև միատեսակել (ունիֆիկացնել): Այս պարագայում Եվրոպայի միատեսակումը (ասել է թե՛ ֆրանսականացումը) պետք է դառնար այն վերջնարդյունքը, որ պետք է ապահովեր խաղաղություն: Միատեսակման գաղափարը, որի տակ ենթադրվում էր իրավական դաշտի, վարչական կառավարման կենտրոնացված համակարգի, չափի, կշռի և դրամական միասնական միավորի ձևավորում, ինքնին նոր չէր և տարբեր չափաբաժիններով առաջարկվել էր դեռևս 17-18-րդ դարերում միասնական Եվրոպայի՝

համընդհանուր և հարատև խաղաղության հաստատման գաղափարակիրների կողմից: Սակայն Նապոլեոնի նախաձեռնությունը, կարելի է ասել, այդ գաղափարների գործնական կիրառման առաջին փորձն էր, որի դեպքում խաղաղության հաստատումը ուղղակիորեն կապվեց Նապոլեոնի անձի հետ:

Խոսելով գաղափարի իրագործման մասին՝ Նապոլեոնը նշում էր. «Մեր նպատակն էր, ստեղծել ընդլայնված եվրոպական դաշնային համակարգ, որը, ինչպես մենք հավատում էինք, կհամապատասխաներ հարյուրամյակի ոգուն և կծառայեր քաղաքակրթության առաջընթացին: Այս համակարգը կատարելագործելու և տարածելու և կայունացնելու համար մենք ստեղծեցինք որոշ ներքաղաքական ինստիտուտներ հատկապես նրա համար, որ պաշտպանենք քաղաքացիների ազատությունը»⁶⁵: Նա համոզված էր, որ այդպիսով կծնավորվեր եվրոպական ժողովուրդ և յուրաքանչյուր եվրոպացի եվրոպայով ճանապարհորդելիս ամենուր կլիներ իր ընդհանուր հայրենիքում⁶⁶:

Սակայն եվրոպայի՝ ուժային տարբերակով միավորման նապոլեոնյան փորձը վերջնարդյունքում հանդիպեց համակարգային կարգավորման փորձաքարին: Եվրոպական հավասարակշռությունը, որն այդ ժամանակ գործում էր Վեստֆալյան կարգավորման շրջանկաներում, խախտվել էր (այս պարագայում հոգուտ Ֆրանսիայի), և համակարգային կարգավորման մեխանիզմը (հականապոլեոնյան կոալիցիաների տեսքով) ձեռնամուխ եղավ դրա վերականգնմանը: Այս փորձը համակարգի սուբյեկտներին (եվրոպական տերություններին), կարելի է ասել, մատնանշեց կարգավորման մեխանիզմի բացթողումները, և վերջիններս Վիեննայի վեհաժողովի կարգավորման շրջանակներում հիմք դրեցին միասնական եվրոպայի և համընդհանուր խաղաղության հիմնահարցի համակարգային կարգավորման միանգամայն նոր փուլի:

Նապոլեոնյան կայսրության տապալումից հետո (1814 թ. սեպտեմբեր - 1815 թ. հունիս), Վիեննայում գումարվեց եվրոպական տերությունների վեհաժողով, որին ներկա գտնվեցին եվրոպական տերությունների 216 ներկայացուցիչներ: Գլխավոր դերակատարումը այդ համաժողովում պատկանում էր Ռուսաստանին, Մեծ Բրիտանիային, Պրուսիային և Ավստրիային*:

⁶⁵ Տե՛ս **Ch. Debbasch, J. Pontier**, Les Constitutions de la France. Paris, "Daloz", 1996, p. 125:

⁶⁶ Տե՛ս **M. Dunan**, Napoléon et l'Europe, Paris, "Éditions Brepols", 1961, p. 151-152:

* Ռուսաստանը ներկայացնում էին կայսր Ալեքսանդր I-ը, արտաքին քաղաքական հարցերով խորհրդականներ Անդրեյ Ռազունովսկին և Կարլ Նեսսելրոդեն, Մեծ Բրիտանիան՝ արտաքին գործերի նախարար Ռոբերտ Ստյուարտ Քեյրին, որին հետագայում փոխարինեց Փարիզում անգլիայի դեսպան Արթուր Ուելսլի Վելինգտոնը, Պրուսիան՝ արտաքին գործերի նախարար Կարլ Ավգուստ Զարդենբերգը և քաղաքական գործիչ Վիլհելմ Զունբոլդտը, Ավստրիան՝ կայսր Ֆրանց I-ը և կանցլեր Կլեմենս Մետերնիխը:

Ինչպես Մյունստերյան և Օսնաբրյուքյան համաժողովներում, այնպես էլ Վիեննայում Եվրոպայի քաղաքական քարտեզի վերաձևավորումն անմիջական կապ ուներ համընդհանուր խաղաղության հաստատման և պահպանման գործընթացի հետ: Վերջինիս հասնելու համար էր, որ Շոմոնի դաշնագրով* Ռուսաստանը, Մեծ Բրիտանիան, Պրուսիան և Ավստրիան միավորեցին իրենց ուժերն ընդդեմ Նապոլեոնյան կայսրության: Վեհաժողովի աշխատանքների ընթացքում պարզ դարձավ, թե ինչպես էին մասնակիցները պատկերացնում համընդհանուր խաղաղության պահպանումը Եվրոպայում: Նրանք նպատակ ունեին «հին պահպանողական քաղաքական համակարգի վերականգնման», «փոխհատուցման», «օրինականության» (լեգիտիմության) և «ուժերի հավասարակշռության» սկզբունքների կիրառման միջոցով ստեղծել ընդհանուր անվտանգության համակարգ: Սակայն այս ճանապարհին վեհաժողովի մասնակիցներին լուրջ խոչընդոտներ էին սպասվում, որոնցից առաջնայինը վերջիններիս շահերի բախումն էր տարածքային բաժանումների հարցում, ինչն անմիջականորեն կապ ուներ «ուժերի հավասարակշռության» մեխանիզմի հետ: Չանդրադառնալով պատմական մանրամասներին՝ նշենք, որ այս հակասությունները լարված մթնոլորտ էին ստեղծել վեհաժողովում: Այս մասին վկայում էր Ֆրիդրիխ Գենցը (Friedrich Gentz)* գրելով, որ ստեղծված լարված մթնոլորտն այնքան ակնհայտ էր, որ ժամանելով Վիեննա՝ Ալեքսանդր I-ն արդեն ինչ-որ չափով գժտված էր Ավստրիայի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի հետ⁶⁷: Այստեղ հստակ կարող ենք ընդգծել, որ վեհաժողովի մասնակիցները պատրաստ էին ուժերի մեկտեղումից խուսափելու համար կիրառել Վեստֆալում հաստատված ուժերի հավասարակշռության մեխանիզմը, այն է՝ հանդես գալ համատեղ գործողություններով և անհրաժեշտության դեպքում փոխել դաշնակիցներին:

Դաշնակիցները իրենք էլ գիտակցում էին, որ Եվրոպայում կայուն քաղաքական իրավիճակի հաստատումը հիմնականում պայմանավորված է լինելու տարածքների բաժանումով և ամենևին էլ պատահական չէր, որ 1814 թ. մայիսի 18(30)-ին Ֆրանսիայի և Դաշնակիցների միջև Փարիզում ստորագրված խաղաղության պայմանագրի* առաջին

* Շոմոնի պայմանագիրը կնքվել է 1814 թ. մարտի 10-ին (սակայն թվագրվել է 1814 թ. մարտի 1-ով) Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի, Ավստրիայի և Պրուսիայի միջև՝ Ֆրանսիայի դեմ համատեղ գործողություններով հանդես գալու պարտավորվածությամբ: Մանրամասն տես *Собрание трактатов и конвенций, заключенных Россиею с иностранными державами. Сост. Ф. Мартенс, т. 3, Трактаты с Австриею 1808-1815, Петербург, "А. Бенке", 1876, с. 169-177:*

* Ֆրիդրիխ ֆոն Գենց (Friedrich von Gentz)- Ավստրիայի կանցլեր Կլեմենս Մետեռնիխի մտերիմ խորհրդականը և վստահված անձը, ինչպես նաև Վիեննայի կոնգրեսի քարտուղարը:

⁶⁷ Տես *История дипломатии, сост. А. Лактионов, Москва, "АСТ Москва", 2009, с. 420*

* Պայմանագիրը կնքվել է մի կողմից Ֆրանսիայի, մյուս կողմից հակաֆրանսիական վեցերորդ կոալիցիայի (Ռուսաստան, Մեծ Բրիտանիա, Ավստրիա և Պրուսիա) միջև: Արդյունքում պայմանագրին միացան Շվեդիան, Իսպանիան և Պորտուգալիան: Մանրամասն տես *Дипломатический словарь, под ред. А. Громыко, т. 2, Москва, "Наука", 1985, с. 343-344:*

հողվածուն ասվում էր, որ տարածքների բաժանումը Եվրոպայում պետք է ստեղծի իրական և կայուն հավասարակշռություն, ուստի այն պետք է քննարկվի վեհաժողովի ժամանակ և հաստատվի մասնակիցների կողմից: Իսկ 32-րդ հողվածով նախատեսվում էր, որ պայամանգրի ստորագրումից ոչ ուշ, քան երկու ամիս անց պատերազմին մասնակից բոլոր երկրները կուղարկեն իրենց ներկայացուցիչներին Վիեննա՝ մասնակցելու համընդհանուր խաղաղության վեհաժողովին⁶⁸:

1814 թ. սեպտեմբերի 23-ին Վիեննա ժամանեց ֆրանսիական պատվիրակությունը՝ Լուի XVIII-ի ներկայացուցիչ, Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար, իշխան Շառլ Մորիս դե Թալեյրանի* գլխավորությամբ: Վերջինս աչքի էր ընկնում իր դիվանագիտական փայլուն ունակություններով: Վիեննայում Թալեյրանի միակ խոցելի կողմն այն էր, որ նա ներկայացնում էր պարտված երկիր՝ ի դեմս Ֆրանսիայի: Սակայն այս հանգամանքը ստիպեց նրան ավելի ճկուն գործել դիվանագիտական դաշտում: Նա, հարվածը ճիշտ նշանակետին ուղղելով, կարողացավ հստակ խաղարկել դաշնակիցների միջև առկա տարածայնությունները և պարտված Ֆրանսիային որպես հավասարը հավասարի նստեցնել վեհաժողովի քննարկումների սեղանի շուրջ: Վերջինս իր հուշերում նշում էր, որ իր հույսը միայն այն էր, որ հաղթող տերությունների միջև տարածայնություններ կծագեն պատերազմի հետևանքով նրանց տրամադրության տակ անցած տարածքների բաշխման գործընթացում⁶⁹: Թալեյրանը դեռևս մինչև Վիեննա գալը գիտակցում էր, որ տվյալ պարագայում Ֆրանսիայի շահերը պաշտպանելու տեսանկյունից ամենից նպատակահարմարը «օրինականության» տեսության առաջ քաշելն էր, համաձայն որի՝ եվրոպական երկրներում իշխանությունը պետք է պատկանի օրինական (լեգիտիմ) միապետներին, և վերջիններիս երկրների սահմանները պետք է մնան անխախտ, ինչպես որ էին 1792 թ.՝ նախքան հեղափոխական պատերազմների սկսվելը⁷⁰: Ըստ նրա՝ «նվաճումն ինքնին ոչ մի իրավունք չէր տալիս, քանզի չի կարելի տնօրինել տարածքը, քանի դեռ օրինական տիրակալը չի հրաժարվել դրանից: Հետևաբար յուրաքանչյուր տիրակալ, ով չի հրաժարվել իր գահից կամ իր տիրույթներից, իրավունք ունի ներկայանալու վեհաժողովում: Նրա իրավունքները պետք է հարգվեն և նրանից վերցված տարածքները՝ վերադարձվեն»⁷¹: Ճիշտ է, սա

⁶⁸ **Л. Зак**, *Монархи против народов, дипломатическая борьба на развалинах наполеоновской империи*, Москва, "Международные отношения" 1966, с. 39.

* Շառլ Մորիս դե Թալեյրան-Պերիգոր (Charles Maurice de Talleyrand-Périgord, 1754-1838). Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար 1797-1799, 1799-1807, 1814-1815 թթ.: Եղել է ֆրանսիական պատվիրակության ղեկավարը 1814-1815 թթ. Վիեննայի կոնգրեսում: 1815 թ. միաժամանակ զբաղեցրել է նաև Ֆրանսիայի կառավարության ղեկավարի պաշտոնը:

⁶⁹ Талейран: Мемуары, под ред. **Е. Тарле**, Москва, 1959, с. 305. Москва, "Институт международных отношений", 1959, с.305.

⁷⁰ Всеобщая история дипломатии, под ред. **М. Приз**, Москва, "Эксмо", 2010, с. 352.

⁷¹ Ст'ю **А. Дебидур**, *Дипломатическая история Европы, от Венского до Берлинского конгресса (1814-1878)* т-1, Священный Союз, Москва, "Гос. Изд. Иностранной литературы", 1947, с. 55.

խոսում է միապետների, այլ ոչ թե ազգերի իրավունքների մասին, սակայն ինքնին հասկանալի է, որ եթե այս սկզբունքը ընդունվեր և իրականացվեր, ապա Ֆրանսիան կստանար տարածքային ամբողջականության երաշխիքներ, ինչն այդ ժամանակ զենքով ձեռք բերել չէր կարող: Թալեյրանը լավ գիտակցում էր, որ «ուժեղները» հանդես են գալու ուժի իրավունքի տեսանկյունից, իսկ իր առաջ քաշած սկզբունքով նա կարող էր իր շուրջը համախմբել այն բոլոր «մանր» միապետներին, որոնք ի վիճակի չէին իրենց իրավունքների համար պայքարել «ուժի լեզվով»: Արդյունքում կկազմավորվեր «թույլերի լիգա», որը մեկ ամբողջության մեջ արդեն ուժեղ էր և պայքարելու ունակ կլիներ: Այս սկզբունքի կիրառումը զսպող նշանակություն կունենար նաև Ռուսաստանի և Պրուսիայի համար՝ իրենց տարածքային ընդլայնման ձգտումներում: Այս հարցում Թալեյրանն ուներ իր դիվանագիտական համախոհները նաև «մեծերի» շրջանում՝ ի դեմս Կլեմենս Մետեռնիխի (Klemens Metternich)* և լորդ Ռոբերտ Բեսլրիի (Robert Castlereagh)*, որոնք ամեն գնով ցանկանում էին հակամիջոցներ կիրառել ընդդեմ Ռուսաստանի և Պրուսիայի տարածքային ընդլայնման⁷²: Փաստորեն Թալեյրանի դիվանագիտական նուրբ զգացողությունը նրան չդավաճանեց: Այդ տարածայնություններն իրոք ի հայտ եկան և նա, դրանք ճիշտ օգտագործելով, կարողացավ սեպ խրել դաշնակիցների միջև: Թալեյրանը դեմ արտահայտվեց նաև «դաշնակիցներ» բառին՝ նշելով, որ չորս տերություններն այլևս իրավունք չունեն դաշնակցային խմբավորում լինելու, քանզի խաղաղությունն արդեն կնքված է, և հավաքված երկրները, ճիշտ է, ուժի տեսանկյունից հավասար չեն, սակայն ունեն հավասար իրավունքներ «ուժեղների» շարքում: Այստեղ Թալեյրանը կարծես մեջբերում է 16-րդ դարի հայտնի հեղինակ էմեր դե Վաթելի խոսքերը. «Քանզի մարդիկ բնությունից հավասար են, հետևաբար ազգերը, որոնք բաղկացած են մարդկանցից, նույնպես հավասար են և ունեն նույն իրավունքները... Մեծ և փոքր ազգերը հավասարապես ինքնիշխան են և ունեն հավասար իրավունքներ: ...Ինքնիշխանությունն ու ազատության իրավունքը անօտարելի արժեքներ են»⁷³: Հետևաբար միայն վեհաժողովը, այսինքն՝ բոլոր եվրոպական պետությունների համագումարը կարող է ընդունել իրենց համար պարտադիր որոշումներ, և այդ որոշումները պետք է ընդունվեն ազատ, այլ ոչ թե բռնի կերպով: Այդ իսկ պատճառով անթույլատրելի է որոշ պետությունների միավորումը մեկ խմբավորման մեջ՝ վեհաժողովին կոնկրետ

* Կլեմենս Վենզել Լոտար Ֆոն Մետեռնիխ-Վիննենբուրգ-Բեյլստեյն (Klemens Wenzel Lothar von Metternich-Winneburg-Beilstein)- ավստրիական պետական գործիչ, դիվանագետ, 1809-1848 թթ. Ավստրիական կայսրության կանցլեր և արտաքին գործերի նախարար:

* Ռոբերտ Ստյուարտ Բեսլրի (Robert Stewart Castlereagh)-բրիտանական քաղաքական գործիչ, դիվանագետ, 1812-1822 թթ. Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար:

⁷² История дипломатии, сост. А. Лактионов, с. 422.

⁷³ Э. де Ваттель, նշված աշխ., էջ 32, 46, 80:

որոշումներ թելադրելու և ավելի թույլերին դրանց ընդունումը պարտադրելու համար⁷⁴: Նա պնդեց նաև, որ քննարկող հանձնաժողովները պարտադիր կազմվեն Փարիզի խաղաղության պայմանագիրը ստորագրած ութ երկրների ներկայացուցիչներից⁷⁵:

Ճիշտ է, վեհաժողովը գումարվեց, և մասնակից երկրները սկսեցին քննարկել իրենց հուզող հարցերը, սակայն միմյանցից տարբեր էին պատկերացումները վեհաժողովի վերաբերյալ: Դեռևս մայիսի վերջին Կլեմենս Մետեռնիխը հայտարարում էր, որ իր կարծիքով, կոնգրեսը գումարված է ոչ այնքան բանակցությունների, որքան վերջնական պայմանագրի ստորագրման համար: Գերմանացի պետական գործիչ, դիվանագետ Վիլհելմ Զոլմբոլդտի (Wilhelm Humboldt) կարծիքով, այն խաղաղության վեհաժողով չէր, քանզի խաղաղությունը արդեն իսկ հաստատվել էր Փարիզում, ոչ էլ խորհրդակցական հավաք, քանզի Եվրոպան սահմանադրական միություն չէր, որպեսզի խորհրդակցական որոշումներ կայացներ: Ըստ նրա, վեհաժողովն առանձին բանակցությունների համալիր էր: Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Ռոբերտ Քեսլրիի կարծիքով, վեհաժողովը իրավունք չուներ ձայների մեծամասնությամբ որոշումներ կայացնելու: Վեհաժողովի քարտուղար Ֆրիդրիխ Գեմցը, առանձնացնելով վեհաժողովի հիմնական նպատակը, նշում էր, որ այն կոչված էր հետպատերազմյան ավարը հաղթողների միջև բաժանելու համար: Ուստի այս նպատակի համար մեկտեղել «ողջ Եվրոպան» կարիք չկար⁷⁶: Միևնույնն է, վեհաժողովի իրական ղեկավարումն իրականացնում էին չորս դաշնակիցները (Ավստրիա, Մեծ Բրիտանիա, Ռուսաստան, Պրուսիա), նրանք նույնիսկ 1814 թ. սեպտեմբերի 22-ին ստորագրեցին արձանագրություն^{*}, համաձայն որի՝ վեհաժողովում տնօրինելու իրավունքը վերապահվում էր միայն իրենց և Ֆրանսիայի հետ վիճելի հարցերը քննարկվելու էին միայն միմյանց միջև համաձայնեցնելուց հետո: Սա փաստորեն նշանակում էր, որ միջազգային իրավունքն այսուհետ վերածվում էր «ուժեղի իրավունքի»: Սակայն թալեյրանը, ինչպես վերը նշեցինք, իր շուրջ համախմբելով մանր պետություններին և հենվելով միջազգային իրավունքի սկզբունքների վրա՝ հակադրվեց իրողությանը և ճիշտ խաղարկելով «խաղաթղթերը»՝ կարողացավ չորսի խորհուրդը դարձնել հինգի խորհուրդ և Ֆրանսիան հավասարը հավասարի ներկայացնել կոնգրեսում՝ քառյակի հետ քննարկելով բոլոր կարևոր հարցերը:

Արդյունքում, փաստացի վերացնելով Շոմոնի պայմանագիրը, 1815թ. հունվարի 3-ին Մեծ Բրիտանիայի, Ավստրիայի և Ֆրանսիայի ներկայացուցիչների միջև կնքվեց

⁷⁴ **А. Дебидур**, նշված աշխ., էջ 58:

⁷⁵ **Л. Зак**, նշված աշխ., էջ 55:

⁷⁶ Տե՛ս **Л. Зак**, նշված աշխ., էջ 59-60:

* Արձանագրության մասին մանրամասն տե՛ս Собрание трактатов и конвенций, заключенных Россией с иностранными державами. Т. 3, трактаты с Австриею 1808-1815, с. 169-177:

փոխօգնության գաղտնի պայմանագիր՝ ընդդեմ Ռուսաստանի և Պրուսիայի*։ Այս պայմանագիրը հանուն ուժերի հավասարակշռման դաշնակցին փոխելու սկզբունքի կիրառման դասական օրինակ է։ Նիկոլո Մաքիավելին այս քայլը որակում էր որպես «արդարացի խաբեություն»⁷⁷։ Սակայն կրքերն այս հարցի շուրջ շատ էին բորբոքվել, և ծավալվել էր դիվանագիտական թեժ պայքար։ Դժվար է ասել, թե ինչի կհանգեցնե՞ր այդ պայքարը (գուցե և նոր պատերազմի, որի մասին կարծես կանխագուշակել էր Կլեմենս Մետեռնիխը, երբ ստորագրվում էր Ֆոնտենբլոյի* պայմանագիրը. «Ես ստորագրում եմ մի պայմանագրի տակ,- նշում է նա,- որը մեզ (վեցերորդ կալիցիայի մասնակիցներին - Կ.Գ.) կտանի դեպի պատերազմ առնվազն երկու տարուց»⁷⁸), եթե չլինե՞ր Նապոլեոնի փախուստը*, ինչը սառը ցնցուղի դեր խաղաց վեհաժողովի մասնակիցների համար։

Նապոլեոնի փախուստի լուրն առաջինը ստացավ Կլեմենս Մետեռնիխը՝ մարտի 7-ին։ Նապոլեոնի վերադարձի կապակցությամբ առաջացած վտանգը ստիպեց մեծ տերություններին մի կողմ դնել իրենց տարածայնությունները։ Չորս տերությունների ներկայացուցիչները հավաքվեցին Կլեմենս Մետեռնիխի առանձնասենյակում, և լուրը ստանալուց մի քանի ժամ անց արդեն կայացվեց Նապոլեոնի դեմ պատերազմ սկսելու որոշումը⁷⁹ *։

Գալով Փարիզ, Նապոլեոնը Լուի XVIII-ի Թյուլիլրիի աշխատասենյակում գտավ հունվարի 3-ի գաղտնի պայմանագրի օրինակը, որը Թալեյրանը ուղարկել էր թագավորին։ Առանց հապաղելու Նապոլեոնը Փարիզում ռուսական գործերի հավատարմատար Պավել Բուտյազինի միջոցով այն ուղարկեց Վիեննա՝ Ալեքսանդր I-ին⁸⁰։ Սակայն Ալեքսանդրին կարծես չգարնացրեց այդ լուրը։ Կլեմենս Մետեռնիխի նման պահվածքը վերջինիս համար բացահայտում չէր, և մի առիթով, դեռևս նախքան այս միջադեպը, նա, արտահայտվելով Ավստրիայի կանցլերի մասին, նկատում էր, որ Կլեմենս Մետեռնիխը խաբեբա է և դավաճան, և Ավստրիան պատրաստի դաշնակից է

* Պայմանագրի մասին մանրամասն տե՛ս *Европейская дипломатия и международные процессы эпохи наполеоновских войн. Под ред. А.В. Торкунова, М.М. Наринского, Москва, "Аспект Пресс", 2012, 256 с. 232. Տե՛ս նաև Собрание трактатов и конвенций, заключенных Россией с иностранными державами. т. 3, трактаты с Австрией 1808-1815, с. 177:*

⁷⁷ **Н. Макиавелли**, *Государь*, Минск, "Харвест", 2004, с 81-85.

* Ֆոնտենբլոյի պայմանագիր՝ կնքվել է 1814 թ. մարտի 30-ին (ապրիլի 4), վեցերորդ հակաֆրանսիական կալիցիայի (Ռուսաստան, Մեծ Բրիտանիա, Պրուսիա, Շվեդիա, Ավստրիա) և Նապոլեոն I-ի միջև։ Մանրամասն տե՛ս *Дипломатический словарь, под ред. А. Громыко, т. 3, Москва, "Наука", 1986с. 517:*

⁷⁸ Տե՛ս **А. Дебидур**, *Гузавած աշխ.*, էջ 39:

* 1815 թ. մարտի 1-ին Նապոլեոնն ափ իջավ Ֆրանսիայում և երեք շաբաթից՝ մարտի 20-ին, մտավ Փարիզ։ Կայսրությունը վերականգնվեց ևս հարյուր օրով (1815 թ. մարտի 20-ից հունիսի 28-ը)։

⁷⁹ **Л. Зак**, *Гузавած աշխ.*, էջ 275:

* Ուշագրավ է Թալեյրանի ռեկցիան այս կապակցությամբ. Ֆրիդրիխ Վիլիելմ III-ի հետ զրուցելիս նա ասաց, որ իրեն քիչ է անհանգստացնում Նապոլեոնի փախուստը Էլբայից, քանզի դա միայն հնարավորություն է տալիս նրան կախելու, ինչին ի պատասխան Ֆրիդրիխը մտահոգաբար ասաց, որ դրա համար նախ անհրաժեշտ է Նապոլեոնին բռնել։ Տե՛ս **Л. Зак**, *Гузавած աշխ.*, էջ 278:

⁸⁰ **Л. Зак**, *Гузавած աշխ.*, էջ 429:

յուրաքանչյուր թշնամու համար, ով կցանկանա հանդես գալ ընդդեմ Ռուսաստանի⁸¹: Ինչևէ, այս պարագայում այնքան իրատեսական էր նապոլեոնյան վտանգը, որ Ալեքսանդր I-ը, տեղեկանալով դաշնակիցների դավաճանության մասին, անտեսեց դա և հանուն համընդհանուր խաղաղության հաստատման և պահպանման՝ ստանձնեց Նապոլեոնի դեմ ռազմաքաղաքական դաշինքը վերականգնելու նախաձեռնությունը: Նման նախաձեռնությամբ Ալեքսանդրը հանդես էր եկել դեռևս 1815 թ. փետրվարին, երբ առաջարկեց Ռոբերտ Քեսլրիին և Կլեմենս Մետեռնիխին հաստատել Շոմոնի պայմանագիրը: Ակնհայտ է, որ այդ առաջարկը գտնվում էր ուղիղ հակասության մեջ վերջիններիս ծրագրերի հետ, որոնք ձգտում էին միավորել իրենց ուժերը Ֆրանսիայի հետ և համատեղ հանդես գալ ընդդեմ Ռուսաստանի: Ընդհանուր առմամբ, սկզբունքորեն չառարկելով դաշինքի վերականգմանը, Ռոբերտ Քեսլրին գտնում էր, որ ցարի առաջարկը ուղղակի ժամանակավրեպ է, քանզի «ուժերի հավասարակշռության» տեսանկյունից այս պարագայում ավելի նպատակահարմար էր դաշինքը «զսպված» Ֆրանսիայի հետ ընդդեմ ուժեղացող Ռուսաստանի, քան հակառակը⁸²:

Սակայն շուտով Նապոլեոնի փախուստի լուրը փոխեց դեպքերի զարգացման ուղղությունը: Մարտի 12-ին Ռոբերտ Քեսլրին գրեց Արթուր Վելինգտոնին (Arthur Wellington), որ դաշնակից տերությունները պետք է ընդհանուր հռչակագիր հրապարակեն ընդդեմ Նապոլեոնի և վերականգնեն Շոմոնի դաշնագիրը⁸³:

Ստանալով Նապոլեոնի վերադարձի լուրը եվրոպական տերությունները մարտի 13 (25)-ին ստորագրեցին համաձայնագիր, որով Նապոլեոնը՝ որպես համընդհանուր խաղաղության խաթարող, բոլոր ազգերի թշնամի, հայտարարվեց օրենքից դուրս⁸⁴: Նոր համաձայնագիրը հիմնականում կրկնում էր Շոմոնի դաշնագիրը: Սակայն երրորդ հոդվածում ասվում էր, որ մասնակիցներից ոչ մեկը զենքը վայր չի դնի, քանի դեռ Նապոլեոնը վերջնականապես չի զրկվել Ֆրանսիայում իշխանությունը գրավելու և ապագայում նոր անհանգստություն պատճառելու հնարավորությունից⁸⁵ : Տերությունները կոչ էին անում բոլոր եվրոպական երկրներին միանալ համաձայնագրին և հայտնում էին, որ պատրաստ են համատեղ հանդես գալ և ընդհանուր ուժերով դիմակայել Եվրոպան անիշխանության մատնելու ցանկացած փորձին: Մարտի 27-ին համաձայնագրին միացավ նաև Բուրբոնյան Ֆրանսիան* : Այս պայմանագիրն

⁸¹ История дипломатии, сост. **А. Лактионов**, с. 429.

⁸² Տե՛ս **Л. Зак**, նշված աշխ., էջ 275:

⁸³ **Л. Зак**, նշված աշխ., էջ 276:

⁸⁴ Собрание трактатов и конвенций, заключенных Россией с иностранными державами, т. 3, с. 177-187

⁸⁵ Նույն տեղում, էջ 84-185:

* Այս հանգամանքի վրա հիմնվելով՝ Թալեյրանը կարծում էր, որ դաշնակիցները իրավունք չունեն Ֆրանսիայի «օրինական տիրակալի» տիրույթներից որևէ մաս պահանջել, քանզի վերջինս Նապոլեոնի դեմ վերջնական հաղթանակ տանելիս եղել է կռալիցիայի դաշնակիցը: Տե՛ս **А. Дебидур**, նշված աշխ., էջ 115:

ամբողջությամբ բխում էր Լուի XVIII-ի շահերից, քանզի տերությունները խոստանում էին օգնել ֆրանսիական թագավորին՝ ընդդեմ Նապոլեոնի, ինչպես նաև հռչակագրում շեշտվում էր, որ ողջ Ֆրանսիան կհամախմբվի իր օրինական տիրակալի շուրջ⁸⁶:

1815 թ. հունիսի 18-ին Վաթեռլոոյի ճակատամարտով վերջ դրվեց Նապոլեոնյան տիրապետությանը: Իր եզրափակումն ունեցավ նաև Վիեննայի վեհաժողովը, որի վերջնական ակտը կնքվեց 1815 թ. հունիսի 9-ին*⁸⁷: Մասնակիցները հեռացան Վիեննայից այն գիտակցմամբ, որ թեպետ Եվրոպայում հաշվվում էր հինգ «մեծ տերություն», սակայն միջազգային քաղաքականության հիմնական լծակները գտնվում էին Ռուսաստանի, Ավստրիայի և Մեծ Բրիտանիայի ձեռքին: Պրուսիան և Ֆրանսիան դեռևս պետք է ջանքեր թափեին ինքնուրույն դիրք զբաղեցնելու համար⁸⁸: Արդյունքում ստեղծվեց միջազգային հարաբերությունների Վիեննայի համակարգը: Այն հիմնված էր Թալեյրանի առաջ քաշած «օրինականության» սկզբունքի վրա, սկզբունք, որ տեսնում էր համընդհանուր խաղաղության պահպանումը միապետների օրինական իշխանության պահպանման մեջ: Ի տարբերություն նախորդ համակարգի, որը պետությունը դիտարկում էր որպես միջազգային փոխհարաբերությունների կողմ, Վիեննայի համակարգն այդ փոխհարաբերությունը դիտարկում էր միապետների մակարդակով: Այս տեսանկյունից, եթե հիմնվենք Նիկոլո Մաքիավելիի տեսության վրա, ապա նման փոխհարաբերությունների վրա հաստատված դաշինքը պետք է հուսալի չլիներ, քանզի. «Դաշինքը պետությունների միջև ավելի հուսալի է, քան միապետների միջև: Ծայրահեղ վտանգավոր իրավիճակներում պետությունը ավելի հավատարիմ կգտնվի քան միապետը: Անշուշտ, նման պարագայում պետությունը ձգտում է նրան, ինչ միապետը: Սակայն, պետությունը՝ որպես կազմակերպություն, դանդաղում է որոշումների կայացման հարցում, և վերջինիս համար դժվար է հրաժարվել իր պարտավորություններից: Դաշինքների քանդման հիմնական դրդապատճառը շահն է, և այդ առումով պետությունները միապետներից հուսալի դաշնակիցներ են»⁸⁹: Եթե փորձենք Նիկոլո Մաքիավելիի դրույթը դիտարկել Վեստֆալյան և Վերսալյան համակարգերի հոլովություն, ապա կտեսնենք, որ այն չի կարելի միանշանակ ընդունել: Այս երկու համակարգերն էլ՝ որպես միջազգային հարաբերությունների սուբյեկտ,

⁸⁶ **А. Дебидур**, նշված աշխ., էջ 75:

* Մինչև 1815թ. վերջը եզրափակիչ ակտը ստորագրեցին Փարիզի պայմանագրի մասնակից բոլոր երկրների միապետները՝ բացառությամբ Պորտուգալիայի ռեգենտ-արքայազնի, որն իր օրինակը ստացավ միայն 1816 թ. մարտին: Իսպանիան միացավ Վիեննայի դաշնագրին 1817 թ. հունիսին: 5 տարիների ընթացքում դաշնագրին միացավ ևս 33 պետություն: Վերջինը միացավ Բավարիան 1820 թ. մայիսին: Տե՛ս **Л. Зак**, նշված աշխ., էջ 301:

⁸⁷ Վիեննայի վեհաժողովի վերջնական ակտի հոդվածները մանրամասն տե՛ս Собрание трактатов и конвенций, заключенных Россией с иностранными державами, т. 3, с. 207-315:

⁸⁸ История дипломатии, сост. **А. Лактионов**, с. 429.

⁸⁹ **Н. Макиавелли**, նշված աշխ., էջ 331:

դիտարկում էին պետությունը: Վեստֆալյան համակարգի պարագայում միանշանակ փոխհարաբերություններն ավելի կայուն գտնվեցին, և համակարգը ավելի ուշ հայտնվեց ճգնաժամի առաջ, քան Վիեննայինը: Սակայն այլ է պատկերը Վերսալյան համակարգի դեպքում, որը կանգնեց փակուղու առաջ պայմանագրի ստորագրումից ընդամենը 20 տարի անց:

Եիշտ է, Վիեննայի համակարգն արգելեց սևամորթների առևտուրը, հաստատեց դիվանագիտական ներկայացուցիչների հստակ աստիճանավորում, որոնք անհերքելի ձեռքբերումներ էին նարդու իրավունքների պաշտպանության և դիվանագիտական ինստիտուտների կայացման գործում, սակայն միջազգային իրավունքի տեսակետից Վիեննայի համակարգն ավելի պահպանողական էր, քան Վեստֆալյանը: Վեստֆալյան համակարգը համընդհանուր խաղաղության պահպանման հիմքում դնում էր ազգային շահերի առաջնության, ուժերի հավասարակշռության, ազգային պետությունների առաջնության, պետական ինքնիշխանության սկզբունքների կիրառումը: Վիեննայի համակարգն այս ամենի հիմքում տեսնում էր միապետների օրինական իշխանության պահպանումը և անհրաժեշտության դեպքում միմյանց, այլ ոչ թե պետությունը պետությանը օգնելու պարտավորվածությունը: Սակայն Վիեննայի համակարգի ստեղծողներն իրենց քաղաքական մտածելակերպով մեկ քայլ առաջ են անցնում նախորդներից և հստակ պատկերացնում, որ մի բան է համընդհանուր խաղաղություն հաստատելը, մեկ այլ բան՝ այն պահպանելը: Ահա նման նախաձեռնությամբ հանդես եկավ կայսր Ալեքսանդր I-ը, և ստեղծվեց Սրբազան դաշինքը*, որպես երաշխիք նոր կազմավորված քաղաքական համակարգի: Ալեքսանդրը վստահ չէր Վիեննայի լուծումների ամրությանը: Նա լավ գիտակցում էր, որ եթե վեհաժողովի վերջում նրանք եկան որոշակի ընդհանուր հայտարարի, ապա դա զուտ նրա համար, որ համատեղ դիմակայեն Նապոլեոնին: Իսկ սա չէր կարելի համարել համամտություն վիճելի հարցերի շուրջ, ուստի վեհաժողովից հետո նա սկսեց փնտրել մշտական շփման և համագործակցության ձև միապետական կարգերի կազմակերպված պաշտպանության նպատակով⁹⁰: Հարկ է նշել, որ Ավստրիական կողմը նույնպես թերահավատորեն էր վերաբերում վեհաժողովի եզրափակիչ ակտին: Գենցի կարծիքով՝ այն միայն ժամանակավոր համաձայնագիր էր, որը լի է բազմաթիվ թերացումներով ու

* «Սրբազան դաշինքը կազմավորվեց 1815 թ. սեպտեմբերի 26-ին: Ակտի հեղինակը Ալեքսանդր I կայսրն էր, նրան միացան և փաստաթուղթը ստորագրեցին Ավստրիան (Ֆրանց I) և Պրուսիան (Ֆրիդրիխ Վիլհելմ III): Դաշինքին աստիճանաբար միացան բոլոր միապետները, բացառությամբ Թուրքիայի սուլթանի և Հռոմի պապի: Մեծ Բրիտանիան պաշտոնապես չընդգրկվեց Սրբազան դաշինքի կազմի մեջ, բայց վերջինս գործնականում հաճախ էր իր քաղաքականությունը համաձայնեցնում Սրբազան դաշինքի քաղաքականությանը»: Տե՛ս **Կ. Գասպարյան**, Սրբազան դաշինքը և Ազգերի լիգան (համեմատական վերլուծություն), «Հանրապետական երիտասարդական գիտաժողովի նյութեր», Վանաձոր, «Սին տպագրատուն», 2009թ, էջ 90:

⁹⁰ **А. Дебидур**, նշված աշխ., էջ 95:

բացթողումներով: Սակայն բազմաթիվ վիճահարույց հարցեր գտան իրենց լուծումը Վիեննայի վեհաժողովի վերջնական ակտի շնորհիվ, և ոչինչ չի խանգարում եվրոպացիներին ապագայում այս հիմքի վրա կառուցել ավելի կայուն կառույց⁹¹:

Նապոլեոնյան պատերազմներից հետո Եվրոպան իր պատմության ընթացքում առաջին անգամ պատրաստակամություն դրսևորեց մշակել որևէ միջազգային կարգ, որը կվերականգներ ուժերի հավասարակշռությունը և կապահովեր համընդհանուր խաղաղությունը: Պատերազմները ցույց տվեցին, որ ուժերի հավասարակշռությունը, միայն պետությունների միջև ընդհարումները կանխելով, չի կարող լիարժեք գոյատևել, քանզի պետությունները հզորանում են համապատասխան իրենց ներուժի և ժամանակի ընթացքում համակարգի մաս կազմող պետություններից ոմանք ուղղակի ավելի են հզորանում, քան մյուսները: Միևնույն ժամանակ սեփական իրավունքների պաշտպանության անհրաժեշտություն ունի յուրաքանչյուր պետություն՝ անկախ հզորությունից և քաղաքական իրավիճակից: Տրամաբանական է, որ նման պարագայում, եթե չկա «ուժեղի» և «թուլի» հարաբերակցությունը կարգավորող որևէ «ձեռք», ապա համակարգը աշխատեցնող մեխանիզմը սկսում է կաղալ, և այն կանգնում է փակուղու առաջ: Ուժերի հավասարակշռման մեխանիզմը լիարժեք աշխատում է այն դեպքում, երբ ամրագրված է համընդհանուր արժեքներին վերաբերող որևէ համաձայնությամբ, որը կկանխի միջազգային կարգի խախտման փորձերը: Ահա այս երկու տարրերի զուգակցումն իրականացրեց Վիեննայի վեհաժողովը, որի ավարտից հետո՝ գրեթե մեկ հարյուրամյակ, թվում էր, թե գտնվել է միջազգային հարաբերությունների կարգավորման բոլորի համար ընդունելի մի տարբերակ: Եվրոպական առաջնորդները կարողացան վերականգնել խախտված ուժերի հավասարակշռությունը: Հանձին Սրբազան դաշինքի՝ ուժի կիրառմանը փոխարինելու եկավ բարոյական փոխադարձ պատասխանատվության գործոնը, որը, դրսևորվելով պետությունների (այս պարագայում միապետների) արտաքին քաղաքական վարքագծում, պետք է կարգավորեր միջազգային հարաբերությունները՝ ապահովելով համընդհանուր խաղաղությունը: Սակայն XIX դ-ի վերջին եվրոպական հավասարակշռության համակարգը կրկին վերադարձավ ուժային քաղաքականության սկզբունքին և, ի վերջո, 1914 թ. հանգեցրեց ճգնաժամի:

Սրբազան դաշինքն, ըստ էության, տերությունների միջև ձևակերպված համաձայնագիր չէր, որը նրանց վրա որոշակի քաղաքական և իրավական պարտավորվածություններ էր դնում: Այն ավելի շատ նման էր միապետների միմյանց օգնելու գրավոր պայմանավորվածության, քան քաղաքական հատուկ

⁹¹ **А. Дебидур**, նշված աշխ., էջ 97:

ձևակերպումներով փաստաթղթի: Չամաձայն այդ պայմանավորվածության, միապետները ստեղծել էին փոխօգնության վրա հիմնված յուրատեսակ դաշինք, որը, նրանց կարծիքով, պետք է հաստատեր համընդհանուր խաղաղության պահպանման համար անհրաժեշտ գաղափարական հավասարակշռությունը⁹²: Այնուամենայնիվ, նման կառույցի գոյությունը՝ անկախ վերջինիս բովանդակության քաղաքական ձևակերպումների մակարդակից, արդեն իսկ ապացույց է մեծ տերությունների միասնական քաղաքականության, ինչը բացակայում է Վեստֆալում: Մի քաղաքականություն, որն անկախ իրականացման մեխանիզմներից հետևում էր մեկ նպատակի՝ համընդհանուր խաղաղության պահպանմանը: Սրբազան դաշինքի կազմավորումն այս ճանապարհին խոսում է այն մասին, որ այդ քաղաքականության կազմակերպիչներն արդեն գիտակցում էին նման կենտրոնացված կառույցի գոյության անհրաժեշտությունը: Իսկ այդ կառույցի քաղաքական կայացումը ժամանակի խնդիր էր, քանզի Վեստֆալյան համակարգի ձևավորման ժամանակ նման կառույցի մասին խոսվում էր միայն խաղաղության վերաբերյալ տրակտկատների մակարդակով, իսկ Վիեննայից հետո այն դրվեց գործնական հիմքերի վրա և, ինչպես ցույց է տալիս պատմությունը, ունեցավ իր զարգացումն ի դեմս Ազգերի լիգայի, որը նույնպես պետք է կյանքի կոչվեր հանուն մեկ նպատակի՝ համընդհանուր խաղաղության պահպանման:

⁹² **А. Дебидур**, նշված աշխ., էջ 26:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՄԸՆԴՅԱԼՈՒՐ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՁԵՎԱԶԱՓԸ. ՎՈՒՐՈ ՎԻՍՈՆ

Վիեննայի վեհաժողովով հաստատված միջպետական փոխհարաբերություններում հավասարակշռության պահպանման ուժային մեխանիզմին փոխարինելու եկավ բարոյական և իրավական զսպող գործոններով կարգավորվող միջազգային համակարգը, որի շրջանակներում համաշխարհային դերակատարներին հաջողվեց պահպանել խաղաղությունը գրեթե մեկ հարյուրամյակ: Սակայն 19-րդ դարի վերջին եվրոպական հավասարակշռության համակարգը կրկին վերադարձավ կարգավորման ուժային մեթոդներին, ինչն էլ հանգեցրեց համակարգային հերթական ճգնաժամի, որի դրսևումը եղավ Առաջին աշխարհամարտը:

1914 թ. ամռանը Սարաևոյում տեղի ունեցած սպանության հետևանքով շարժման մեջ դրվեց դաշինքների եվրոպական համակարգը: Ավստրո-Հունգարիայի թագաժառանգ Ֆրանց Ֆերդինանդի (Franz Ferdinand) սպանությունից* արդեն մեկ ամիս անց եվրոպայում բռնկվեց կործանարար և աննախադեպ պատերազմ: Իր բնույթով այն միանգամայն այլ պատերազմ էր՝ արմատապես տարբերվող նախորդներից: Երկու խմբավորումների՝ Անտանտի և Եռյակ դաշինքի մասնակցումն այս պատերազմին վկայում էր վերջինիս համընդգրկուն լինելու մասին:

Առաջին աշխարհամարտի առանձնահատկությունն այն էր, որ այն ի սկզբանե չէր կարող լինել միայն եվրոպական տերությունների պատերազմ: Քանզի շոշափում էր գրեթե բոլոր պետությունների շահերը: Սա վերաբերում էր նաև Ամերիկայի Միացյալ Նահանգներին, որն արդեն հասցրել էր վերածվել տնտեսապես գերիզոր տերության և ձգտում էր առաջատար դիրքեր գրավել նաև համաշխարհային քաղաքական ասպարեզում: Պատերազմը կարծես պատեհ առիթ հանդիսացավ Միացյալ Նահանգների համար՝ դրսևորվելու որպես քաղաքական համաշխարհային դերակատար: Ամերիկայի Միացյալ Նահանգներին այլևս չէր գոհացնում միջազգային հարաբերություններում հաստատված եվրոպակենտրոն համակարգը: Նա ձգտում էր վերանայել ուժերի դասավորումն այդ հարաբերություններում և հավասար իրավունքով հանդես գալ առաջատար տերությունների շարքում: Այս հանգամանքով պայմանավորված հետպատերազմյան կարգավորման գործընթացը տարբերվում էր նախորդներից: Որպես կարգավորման գործընթացի գլխավոր դրակատար՝ եվրոպական տերությունների կողքին այս անգամ հանդես էր գալիս նաև Ամերիկայի Միացյալ

* 1914 թ. հունիսի 28-ին թագաժառանգին սպանեցին սերբական «Մլադա Բոսնա» կազմակերպության անդամներ Գավրիլո Պրինցիպը և Նեդելկո Գաբրիևովիչը:

Նահանգները, որը հետպատերազմյան նոր աշխարհակարգի ձևավորման գործընթացին մասնակցելու իր հավակնությունների և խաղաղության հաստատման իր ձևաչափի մասին հայտնել էր արդեն պատերազմի ընթացքում:

Ամերիկայի Միացյալ Նահանգների 28-րդ նախագահ Թոմաս Վուդրո Վիլսոնը (1856-1924) իր կառավարման ընթացքում (1913-1921) արմատապես փոխել էր երկրի արտաքին քաղաքական հայեցակարգը: Միացյալ Նահանգների արտաքին քաղաքական ավանդույթները՝ համակարգված, նպատակաուղղված և տեսականորեն հիմնավորված ձևավորվել էին 19-րդ դարի 20-ական թթ.: Այս իրողության մեջ իր հիմնարար դերակատարումն էր ունեցել «Մոնրոյի դոկտրինան»*, որն ընկած էր Միացյալ Նահանգների արտաքին քաղաքականության հիմքում ընդհուպ մինչև 20-րդ դարի սկիզբը: Միացյալ Նահանգների այս քաղաքականությունը ստացավ «մեկուսացման քաղաքականություն» անվանումը: Միացյալ Նահանգները գնաց գիտակցված ինքնամեկուսացման եվրոպական, ասել է թե՛ համաշխարհային քաղաքականությունից, ստանձնելով Արևմտյան կիսագնդի անվտանգության պահապանի դերը⁹³: Պանամայի ջրանցքի կառուցմամբ (1879-1914) հաստատվեց ամերիկյան ռազմա-ծովային գերակայությունը ինչպես Ատլանտյան, այնպես էլ Խաղաղ օվկիանոսներում: 1898 թ. իսպանա-ամերիկյան պատերազմը, 1899-ին պետքարտուղար Ջոն Հեյի (John Hay)*, կողմից առաջ քաշված «բաց դռների» դոկտրինան և 19-րդ դարի վերջին երեսնամյակում իրականացվող ակտիվ միսիոներական գործունեությունը* Միացյալ Նահանգներին դուրս բերեցին, ինչպես Վուդրո Վիլսոնն է նշում. «համաշխարհային թատերաբեմ», և սկսվեց նոր դարաշրջան, որում Ամերիկան պետք է «կառավարեր աշխարհը», զբաղեցնելով իր արժանի տեղը «Ազգերի վեհաժողովում»⁹⁴:

* «Մոնրոյի դոկտրինա». Միացյալ Նահանգների կառավարության արտաքին քաղաքական հայեցակարգի հիմնական դրույթները, որոնք հռչակվել են 1823թ. դեկտեմբերի 2-ին Միացյալ Նահանգների (1817-1825 թթ.) նախագահ Ջեյմս Մոնրոյի (1758-1831 թթ.) կողմից (այստեղից էլ անվանումը) կոնգրեսին հղած ուղերձում: Այն առաջ էր քաշում աշխարհն ամերիկյան և եվրոպական համակարգերի բաժանելու և փոխադարձաբար միմյանց ներքին գործերին չմիջամտելու սկզբունքերը: Հանուն արդարության պետք է նշել, որ Մոնրոն միայն կարդացել է այն, բոլոր դրույթները մշակել և ձևակերպել է այն ժամանակի պետքարտուղար Ջոն Զուլինսի Ադամսը (1767-1848 թթ.), Միացյալ Նահանգների ապագա նախագահը (1825-1829 թթ.), որն հաջորդեց Մոնրոյին: Մանրամասն տե՛ս Истотия дипломатии, под ред. **В. Зорина** и др., том 1, Москва, "Гос. изд. Политической литературы", 1959, с. 521. Տե՛ս նաև **Н. Болховитинов**, Доктрина Монро (происхождение и характер), Москва, "ИМО", 1959. Տե՛ս նաև **D. Perkins**, A History of the Monroe Doctrine, Boston, "Little Brown and Co.", 1941:

⁹³ **B. Bailin, D. Davis, D. Donald, J.Thomas, R. Wiebe, G. Wood.** A History of the American People, The Great Republic, Boston-Toronto, «Little, Brown and Company», 1977, p. 979 .(այսուհետև A History of the American People, The Great Republic,):

* Ջոն Միլթոն Հեյ (John Milton Hay), 1898-1905 թթ. Ամերիկայի Միացյալ Նահանգների պետքարտուղար: 1899 թ. առաջ քաշեց «բաց դռների» դոկտրինան, որի նպատակը Միացյալ Նահանգների չինական շուկա ներթափանցելն էր:

* Մանրամասն տե՛ս՝ **A. Kirakossian**, The Armenian Massacres, 1894-1896: US Media Testimony, Detroit, "Wayne State Univ. Press", 2004:

⁹⁴ American Foreign Relations Reconsidered, 1890-1993, ed. by **G. Martel**, London and New York, 1994. "Routledge", 1994, p. 7. Տե՛ս նաև The Diplomacy of World Power: The United States, 1889-1920, ed., by **A. Link and W. Leary**, New York, "St. Martin's Press", 1970, p. 4-5. Տե՛ս նաև Princeton for the Nation's

«Մոնրոյի դոկտրինայի» համաձայն Միացյալ Նահանգներն «արգելեց» աշխարհի մյուս երկրներին միջամտել իր ներքին և ներմայրցամաքային գործերին: Իրողություն է այն, որ նման քաղաքականության արդյունքում Միացյալ Նահանգները կարողացավ շատ արագ զարգանալ՝ իր ազդեցությունը տարածելով ողջ ամերիկյան մայրցամաքում, և, դառնալով տարածաշրջանային տերություն, համաշխարհային գերտերության հայտ ներկայացրեց: Նման պարագայում Եվրոպայի հետ շփումը դառնում էր քաղաքական անհրաժեշտություն⁹⁵:

Գալով իշխանության նախագահ Վիլսոնն իր արտաքին քաղաքականությամբ և միջազգային խնդիրների հանդեպ մոտեցումներով բեկում մտցրեց Միացյալ Նահանգների քաղաքական ավանդույթների մեջ: Նա տեսնում էր Միացյալ Նահանգների ավանդական արտաքին քաղաքական հայեցակարգի՝ մեկուսացվածության վերանայման անհրաժեշտությունը: Նրա առաջ քաշած գաղափարները նոր աշխարհակարգի վերաբերյալ կտրուկ տարբերվում էին «Մոնրոյի դոկտրինայի», «Մեծ Մահակի» և «Ռուսարային դիվանագիտության» սկզբունքներից: Նա քաջ գիտակցում էր, որ նախագահ Մոնրոյից հետո իրավիճակն աշխարհում արմատապես փոխվել է, և դա առանձնապես ակնառու դրսևորվեց 20-րդ դարասկզբին. «Մեր ժամանակները անպատկերացնելի են առանց միջազգային ջանքերի,- նշում էր Վուդրո Վիլսոնը,- ոչ մի ազգ այլևս չի կարող ապրել առանձին»⁹⁶: Կոչ անելով հրաժարվել մեկուսացումից, Վուդրո Վիլսոնն ամենևին էլ չէր հրաժարվում «Մոնրոյի դոկտրինայից», այլ փորձում էր վերամեկնաբանել այն, կախված ժամանակի հրամայականից և ամերիկյան հնարավորությունների մակարդակից: Վուդրո Վիլսոնը համարում էր, որ Միացյալ Նահանգների նոր տնտեսական մակարդակը հակասում էր ոչ միայն նրա հնացած քաղաքական ձևերին, այլև այդ երկրի համաշխարհային դիրքին: Միացյալ Նահանգների քաղաքական մեկուսացվածությունը համաշխարհային գործերից, խոչընդոտում էր երկրի հետագա զարգացմանը: Միացյալ Նահանգները համաձայն «իրեն ի վերուստ կանխորոշված առաքելության»⁹⁷, ամերիկյան աշխարհամասից բացի պետք է ստանձներ նաև ողջ աշխարհում անվտանգության հաստատման ու պահպանման պատասխանատվությունը: Եվ, որպես այդ անվտանգության պահպանման երաշխիք, նախատեսվում էր ամերիկյան ժողովրդավարության սկզբունքները տարածել ողջ աշխարհում. «... բոլորը պետք է իմանան, որ Միացյալ Նահանգների դրոշմ ոչ միայն

Service, An Address Delivered on The Occasion of His Inaguration as President of Princeton University on Oct., 25, 1902, Princeton, "Princeton University Press", 1903, p. 40.

⁹⁵ American Foreign Relations Reconsidered, 1890-1993, p. 4.

⁹⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 5: Տե՛ս նաև The Diplomacy of World Power: The United States, 1889-1920, p. 4:

⁹⁷ «Մենք՝ ամերիկացիներս, յուրահատուկ և ընտրյալ ժողովուրդ ենք, մեր ժամանակների Իսրայել: Մենք մեզ վրա ենք կրում աշխարհի ազատության ծանրությունը»։ Տե՛ս **H. Melville**, White Jacket, The Project Gutenberg EBook, e-p. 117:

Ամերիկայի, այլև մարդասիրության դրոշն է»⁹⁸: Ըստ նախագահ Վիլսոնի, ամերիկյան մայրցամաքն արդեն «նեղ» էր ամերիկյան սկզբունքների տարածման համար և անհրաժեշտ էր այդ սկզբունքները տարածել համայն աշխարհով և աշխարհը պետք էր դարձնել «անվտանգ ժողովրդավարության համար»⁹⁹:

Ինչ խոսք, Միացյալ Նահանգներն ու նախագահ Վիլսոնը հետապնդում էին որոշակի նպատակ՝ հասնելու առաջատար դիրքի աշխարհում, տարածել ամերիկյան ազդեցությունն ու հասարակական համակարգը հնարավորինս շատ ազգերի վրա: Սակայն դրան հասնելն առաջարկվում էր ոչ թե ավանդական մեթոդով (ագրեսիա, ռազմական միջամտություն, սպառնալիցության մրցավազք), այլ միջազգային հարաբերությունների ժողովրդավարացման, աշխարհի ազգերին ինքնահաստատվելու հավասար պայմանների և հնարավորությունների տրամադրման միջոցով: Այս ճանապարհին Առաջին աշխարհամարտը փայլուն հնարավորություն էր Միացյալ Նահանգների «քաղաքական և ռազմական ինքնադրսևորման» համար: Եվ Միացյալ Նահանգները, օգտվելով պատերազմի ընձեռած հնարավորությունից, կարողացավ դեպի Եվրոպա տեղափոխել ամերիկյան ռազմական ուժն ու ժողովրդավարական կառավարման ողջ արժեհամակարգը, դրանով իսկ ձեռք բերելով անհրաժեշտ հենահարթակ այն աշխարհով մեկ տարածելու համար:

2.1 ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ «ՉԵՉՈՔՈՒԹՅՈՒՆԸ» 1914-1917 ԹԹ.՝ ՈՐՊԵՍ «ԱՐԴԱՐԱՑԻ» ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ

«Ես գտնում եմ, որ մենք աստիճանաբար կներքաշվենք Գերմանիայի դեմ պատերազմի մեջ... Պատերազմը արագ կվերջանա և կուժեղանան մեր դիրքերը աշխարհում ժողովրդավարության տարածման և հաստատման գործում, ինչը կնպաստի աշխարհի զարգացմանը ճիշտ ուղիով»¹⁰⁰: Նման կարծիք է հայտնել գնդապետ Էդուարդ Յաուզը Միացյալ Նահանգների նախագահ Վուդրո Վիլսոնին պատերազմի սկզբում: Մարդ, ով նախագահ Վիլսոնի խորհրդականն էր և ուն կարծիքը կարևոր էր նախագահի համար: Սակայն դժվար է ասել, թե պատերազմի սկզբնական հատվածում Վուդրո Վիլսոնն արդյո՞ք կիսում էր իր խորհրդականի կանխագուշակումը, թե՛ ոչ: Այնուամենայնիվ, նախագահ Վիլսոնը պատերազմի հենց սկզբից հայտարարեց Միացյալ Նահանգների չեզոք դիրքորոշման մասին:

⁹⁸ A History of the American People, The Great Republic, p., 1003.

⁹⁹ **Р. Хофстедтер**, Американская политическая традиция и ее создатели, пер. с англ. Р. Хофстедтер, Москва, "Наука", 1992, с. 252, Տե՛ս նաև **A. Link**, Woodrow Wilson and the Progressive Era. 1910-1917. New York, "Harper Collins Pub.", 1954, p., 82.

¹⁰⁰ Տե՛ս **А. Уткин**, Дипломатия Вудро Вилсона, Москва, "Международные отношения", 1989, с. 31:

Եվրոպայում բռնկված պատերազմը յուրատեսակ ցնցում առաջացրեց Միացյալ Նահանգներում: Ամերիկյան կառավարությունը պետք է հստակ կողմնորոշվեր. անհրաժեշտ էր ձևակերպել Միացյալ Նահանգների դերն այս հակամարտությունում: Նախագահ Վիլսոնը և ամերիկյան քաղաքական վերնախավը հանդուժված էին, որ այս պատերազմը երկար չի տևի, ընդ որում ամերիկյան մանուլում ևս շրջանառվում էր այդ տեսակետը,^{*} ուստի ուղղակի միջամտել այդ կարճատև ընդհարմանը կարելի է ասել «անիմաստ էր»: 1914 թ. օգոստոսի 4-ին նախագահ Վիլսոնը հայտարարեց Միացյալ Նահանգների չեզոքության մասին: Նա հանդես եկավ կոչով՝ ուղղված եվրոպական երկրներին՝ պատրաստակամություն հայտնելով միջնորդական առաքելությամբ աջակցել նրանց վեճի խաղաղ լուծմանը և պատերազմական գործողությունների դադարեցմանը. «Մենք աշխարհի բոլոր ազգերի իսկական ընկերներն ենք, քանի որ մենք չենք սպառնում ոչ մեկին, չենք ձգտում իշխել, որևէ մեկի նկատմամբ, առավել ևս չենք ցանկանում որևէ մեկի տապալումը: Մեր բարեկամությունը յուրաքանչյուրը կարող է ընդունել առանց վերապահության, որովհետև այն առաջարկվում է ամենայն սրտացավությամբ՝ առանց որևէ կասկածի և ենթադրության: Ահա սրանում է մեր մեծությունը: Մենք կողմանակից ենք համաձայնեցման և խաղաղության...»¹⁰¹:

Արդյոք այս հայտարարությունը Միացյալ Նահանգների արտաքին քաղաքականության «խաղաղասեր կեցվածքի» դրսևորումն էր, թե այն կարող էր ունենալ ավելի հեռուն գնացող աշխարհաքաղաքական նկրտումներ: Իհարկե, Միացյալ Նահանգները առնչություն չունեին պատերազմի բռնկման նախապայմանների հետ: Այն, այսպես ասած, «ոչ ամերիկյան» էր: 1914 թ. նոյեմբերին ամերիկյան հեղինակավոր թերթերի խմբագիրների շրջանակում անցկացված հարցման տվյալներով 327 հարցվողներից 242-ը հայտարարել են իրենց չեզոք հայացքների մասին¹⁰²: Այս տրամադրվածությունն արտահայտվեց նաև «դա մեր պատերազմը չէ» կարգախոսի տարածմամբ: Այս պարագայում Միացյալ Նահանգների կտրուկ դիրքորոշումը պատերազմող կողմերից մեկին աջակցելու կապակցությամբ կարող էր ներքին հասարակական լուրջ խռովությունների առիթ հանդիսանալ, ինչն անցանկալի էր նախագահ Վիլսոնին՝ միջազգային լարումի պայմաններում¹⁰³: 1914 թ. օգոստոսի 19-ին

* «The Dallas Morning News» օրաթերթը 1914թ. օգոստոսին գրում էր, «Այն (պատերազմը-Կ.Գ.) կավարտվի ավելի շուտ, քան բամբակի սեզոնը կսկսվի...»: «The Detroit News» օրաթերթը կարծում էր. «Պատերազմը պետք է լինի կարճատև, որովհետև Եվրոպայի չի կարող շարունակ ընդլայնել պատերազմի կործանարար մասշտաբները...», տե՛ս **J. Daniels**, *The Wilson Era Years of Peace 1910-1917*, Chapel Hill, "The University of North Carolina Press", 1944, p. 565:

¹⁰¹ Տե՛ս **G. Tindall, D. Shi**, *America a Narrative History*, New York, "Norton and Company", 1992, p., 985: Տե՛ս նաև **J. Daniels**, *The life of Woodrow Wilson 1856-1924*, Chicago, "The John C. Winston Company", 1924, p. 243:

¹⁰² **E. May**, *The World War and American Isolation 1917-1917*. Cambridge, "Harvard University Prtes", 1956, p., 35-36.

¹⁰³ **E. May**, նշված աշխ., էջ 34:

ամերիկյան ժողովրդին ուղղված իր ելույթում նախագահ Վիլսոնը հաստատեց իր որդեգրած չեզոքության և չմիջամտելու քաղաքականությունը: Ելույթում ասվում էր. «Ես մտածում եմ Ամերիկայի մասին: Մեր մեծ ազգը պետք է ցույց տա, որ ինքը, ավելի քան մյուսները, ընդունակ է անկողմնակալության, ինքնատիրապետման և խելամիտ գործողությունների... Ես կոչ եմ անում ձեզ մտածել և գործել անաչառ»¹⁰⁴:

Սակայն պատերազմի մեքենան նոր էր սկսել թափ հավաքել: Կողմերը ձգտում էին որքան հնարավոր է արագ հասնել վճռական արդյունքների: Բրիտանական կողմը վստահ էր, որ պատերազմը մոտակա ամիսներին կավարտվի Անտանտի հաղթանակով: Այդ մասին սեպտեմբերի 15-ին գնդապետ Չաուզին հայտնել էր Լոնդոնում Վաշինգտոնի դեսպան Վոլթեր Փեյջը (Walter Page)¹⁰⁵:

Բեռլինում ամերիկյան դեսպան Ջեյմս Ջերարդը (James Gerard) նույնպես հայտնեց պաշտոնական Վաշինգտոնին պատերազմը շարունակելու գերմանական կողմի վճռականության մասին: Նոյեմբերին նա գրում էր Էդուարդ Չաուզին. «...Ես ունեցա տևական զրույց կանցլերի հետ... Նա ասում է, որ ներկայումս խաղաղության հաստատման ոչ մի հնարավորություն չկա»¹⁰⁶:

Նախագահ Վիլսոնը լավ գիտակցում էր, որ պատերազմի ընթացքն ու արդյունքներն ուղղակիորեն առնչություն են ունենալու Միացյալ Նահանգների ազգային շահերի հետ: Այս առումով Միացյալ Նահանգներին ձեռնտու չէր հակամարտող որևէ կողմի լիակատար հաղթանակը: Այն կարող էր հանգեցնել ուժերի հավասարակշռության ամերիկյան մեխանիզմի խախտմանը: Եթե հաղթանակ տանի գերմանական կողմը, ապա Եվրոպայում կհաստատվի գերմանական գերիշխանություն, իսկ Ամերիկան կունենա իրական և ուժեղ հակառակորդ, որն ի վիճակի կլինի ձեռնոց նետել Միացյալ Նահանգներին նույնիսկ այն տարածաշրջանում, որն ավանդաբար գտնվում է ամերիկյան ազդեցության ներքո: Ամերիկյան կողմի այս մտավախությանն անդրադարձել էր նաև Միացյալ Նահանգներում 1908-1917 թթ. գերմանիայի դեսպան կոմս Յոհան Բերնսթորֆը (Johann Bernstorff): Իր հուշերում նա գրում էր. «Գերմանական համաշխարհային կայսրության ուրվականը վախեցնում էր ամերիկացիներին նույնիսկ պատերազմից առաջ: Միացյալ Նահանգները վախենում էր, որ նրա մոտակա քայլը կլինի «Մոնրոյի դոկտրինայի» խախտումը և Չարավային Ամերիկայում գաղութների հիմնումը»¹⁰⁷:

¹⁰⁴ Wilson's Appeal to the American People for Neutrality, August 19, 1914, President Wilson's State Papers and Addresses, ed. by **A. Shaw**, New York, "George H. Dorn Company", 1917, p. 219.

¹⁰⁵ **B. Hendrick**, The Life and Letters of Walter H. Page, vol. 1, Garden City- New York, "Doubleday, Page & Company", 1922, p. 410-411. Տե՛ս նաև Архив полковника Хауза, т. 1, Москва, "Государственное социально-экономическое издательство", 1937, с. 120:

¹⁰⁶ Архив полковника Хауза, т. 1, с. 121.

¹⁰⁷ **J. Bernsdorff**, My Three Years in America, New York, "Charles Scribner's Sons", 1920, p., 17.

Մեկ այլ կողմից Անտանտի հաղթանակը Միացյալ Նահանգների համար կարող էր դիտվել նույնքան անցանկալի, քանզի այն կարող էր ամրապնդել Մեծ Բրիտանիայի տիրապետող դիրքերը ծովերում և Ֆրանսիայի ու Ռուսաստանի գերակայությունը եվրոպական մայրցամաքում:

Այս ամենը կսահմանափակեր Միացյալ Նահանգների դիրքերը համաշխարհային շուկայում, ինչի կարիքն ուներ երկրի բուռն զարգացում ապրող տնտեսությունը: Աշխարհաքաղաքական տեսանկյունից Միացյալ Նահանգները գերադասում էր տեսնել եվրոպան երկփեղկված երկու հակամարտող ճամբարների: Ընդհանուր հաշվարկով հենց այս հակամարտության առկայությունը թույլ կտար Միացյալ Նահանգներին ավելացնել իր հզորությունը՝ չվախենալով եվրոպական հակամարտությունից: Այս պարագայում նախագահ Վիլսոնին կհաջողվեր հանդես գալ որպես «համաշխարհային խաղաղարար» և դուրս բերել իր երկիրը համաշխարհային քաղաքական ասպարեզ ոչ թե որպես շարքային, այլ այդ քաղաքականության մեջ առաջատար, թելադրող դիրք ունեցող երկիր¹⁰⁸:

Նման աշխարհաքաղաքական դատողությունները սկսվող պատերազմի պայմաններում կարելի է գնահատել որպես Միացյալ Նահանգների ազգային անվտանգության տեսանկյունից արվող հավասարակշռված վերլուծություններ :

Միացյալ Նահանգների դիրքորոշման հարցում առաջնային դեր ուներ նաև տնտեսական գործոնը: Նախագահ Վիլսոնը լավ գիտակցում էր, որ իր վարած չեզոքության քաղաքականությունը երկրին կբերեր նաև տնտեսական գերշահույթներ: Գաղտնիք չէ, որ պատերազմը պահանջում է հսկայական ֆինանսական, նյութական և ռազմական միջոցներ: Պատերազմի սկզբից շատ չանցած՝ հակամարտող կողմերն արդեն սկսեցին զգալ ֆինանսական օժանդակության կարիք¹⁰⁹: Ակնհայտ էր, որ նրանք վաղ թե ուշ կգտնեին մի երկիր, որը պատրաստ կլիներ նրանց մատակարարել ռազմավարական նշանակության ապրանքներ: Ինչո՞ւ Միացյալ Նահանգները չդառնար այդ երկիրը: Ավելին, եթե պատերազմող երկրները չկարողանան կանխիկ վճարել այդ ապրանքների դիմաց, ապա Միացյալ Նահանգների կառավարությունը պատրաստ էր նրանց տրամադրել երկարաժամկետ վարկեր¹¹⁰ : Եվ ինչպես նշում է Միացյալ Նահանգների ֆինանսների նախարար Ուիլյամ Մաքադուն (William McAdoo). «Սկսվում է մեծ ծաղկում: Այն կլինի շատ անգամ ավելի ուժեղ, եթե մենք կարողանանք խելամիտ չափերով վարկեր տրամադրել մեր գնորդներին...»¹¹¹:

¹⁰⁸ **А. Уткин**, *Дипломатия Вудро Вилсона*, с. 31.

¹⁰⁹ **C. Kendrick**, *Woodrow Wilson: World Statesman*, Boston, "Twayne Publishers", 1987, p. 154.

¹¹⁰ **G. Tindall, D. Shi**, *Նշված աշխ.*, էջ, 983:

¹¹¹ Տես **Է. Իվանյան**, *Սպիտակ տուն. Պրեզիդենտներ և քաղաքականություն*, Ելրևան, «Հայաստան», 1979, էջ 101:

Պատերազմող կողմերի հետ ունեցած ակտիվ առևտրական փոխհարաբերությունների արդյունքում եվրոպայում շրջանառվող ոսկու զգալի մասն աստիճանաբար կուտակվեց Միացյալ Նահանգների ձեռքում: Միացյալ Նահանգները պարտապանից արագորեն վերածվեց պարտատուի: Եթե 1914 թ. դրությամբ երկիրը եվրոպական տերություններին ուներ 3.7 մլդ դոլար պարտք, ապա պատերազմի ավարտին ամերիկյան ներդրողների տրամադրած վարկերն այլ պետություններին կազմում էին շուրջ 3.8 մլդ դոլար¹¹²: 1914 թ. օգոստոսի 18-ին նախագահ Վիլսոնը ստորագրեց օրենք, որի համաձայն Միացյալ Նահանգների կառավարությունը սկսեց գնել արտասահմանյան, հիմնականում գերմանական ներկալված նավերը: Այս կապակցությամբ ամերիկյան առևտրական նավատորմի տոննաժն ավելացավ (այն 1914 թ. դրությամբ 1.076.152 տոննա էր, 1915 թ.-ին հասավ 1.871.543 տոննայի, իսկ արդեն պատերազմի ավարտին այն 3 մլն տոննա էր)¹¹³:

Հստակ է, որ Միացյալ Նահանգները հետապնդում էր կարճ ժամանակամիջոցում տնտեսապես գերիզոր տերություն դառնալու քաղաքականություն, որին պատերազմի ավարտին պարտք էր լինելու գրեթե ողջ պատերազմող աշխարհը և որն, անկասկած ունենալու էր իր թելադրող դիրքը հետպատերազմյան աշխարհակարգի հաստատման գործում: Այս ամենը բնականաբար իր ազդեցությունն ունեցավ Միացյալ Նահանգների դիրքորոշման վրա, և վերջինիս «չեզոքությունն» աստիճանաբար սկսեց վերածվել «միջնորդության»: Նախագահ Վիլսոնն իր ելույթներում արդեն սկսեց շեշտադրումներ անել հետպատերազմյան աշխարհի կառուցվածքի վերաբերյալ: 1916 թ. մայիսի 27-ի իր ելույթում նախագահը փորձեց հիմնավորել Միացյալ Նահանգների նոր դերակատարությունը միջազգային հարաբերությունների համակարգում: Նրա կարծիքով, Միացյալ Նահանգները ստացել էր ձայնի իրավունք պատերազմի և խաղաղության հարցերի վճռման մեջ¹¹⁴: Իսկ հուլիսի 10-ին Դետրոյտում ունեցած ելույթում նախագահն արտահայտեց իր մտորումների տրամաբանական եզրահանգումը. «Մենք դադարել ենք պարտապան լինելուց և վերածվել ենք վարկատուի: Մենք զգալի չափով ֆինանսավորում ենք աշխարհը, իսկ ով ֆինանսավորում է աշխարհը, պետք է նաև կառավարի այն»¹¹⁵: Աշխարհի «կառավարման» նման հայտարարությունը գուցե և համահունչ չէր ամերիկյան

¹¹² **W. LaFeber**, *The American Age: US Foreign Policy at Home and Abroad, Since 1750*, New York, "Norton", 1989, p. 547. Տես նաև **R. Billington**, *American history after 1865*, New Jersey, "Adams and Co.", 1974, p. 145:

¹¹³ **C. Kendrick**, *Աշխարհը*, էջ, 155-156:

¹¹⁴ Wilson's Address Before the League to Enforce Peace, Washington, May 27, 1916, *President Wilson's State Papers and Addresses*, ed. by **A. Shaw**, p. 271-272.

¹¹⁵ *Addresses of President Wilson at Detroit, Mich. and Toledo, Ohio, July 10, 1916*, Washington, "Government Printing Office", 1916, p., 4.

քաղաքական հնարավորություններին, բայց օր օրի Վուդրո Վիլսոնի պատկերացումներում այն ընդունում էր ավելի իրական բնույթ¹¹⁶:

Այսպիսով՝ Ամերիկայի ինքնահաստատումը համընդհանուր հակամարտության պայմաններում ավարտվեց այն եզրահանգմամբ, որ Ամերիկան, չմասնակցելով հակամարտությանը, անխուսափելիորեն պետք է ստանձներ համաշխարհային առաջատարի դերը, քանի որ Եվրոպան, սանձազերծելով պատերազմը, կորցրել է առաջատարի ինչպես բարոյական իրավունքը, այնպես էլ ֆինանսատնտեսական հիմքը: Ինչպես տեսնում ենք, ամերիկյան արտաքին քաղաքական միտքը կենտրոնանում էր Հին և Նոր աշխարհների հակադրման վրա: Պատերազմի Եվրոպական մասնակիցները ամերիկացիների գիտակցության մեջ հանդես էին գալիս որպես մեկ ամբողջություն, որոնք բոլորն էլ ունեին կայսերապաշտական ձգտումներ և պայքարում էին իրենց զավթողական նկրտումների իրականացման համար: Իսկ ամերիկյան չեզոքությունն ու դրա շարունակությունը հանդիսացող Ազգերի Լիգան, ինչպես նշում է պատմաբան Լլոյդ Ամբրոզիուսը (Lloyd Ambrosius), արտացոլում էին նախագահ Վիլսոնի երկակի ցանկությունը. ոչ միայն մեկուսացնել Միացյալ Նահանգները «անարդար պատերազմից», այլ նաև փրկել «մեղսավոր» Հին աշխարհը¹¹⁷:

Զնայած իր չեզոք դիրքորոշմանը՝ ամերիկյան կողմը ժամանակ առ ժամանակ հանդես էր գալիս հակամարտությունը կարգավորելու միջնորդական հայտարարություններով, ինչը վկայում էր ամերիկյան չեզոքության ռազմավարության մասին:

Պատերազմի սկզբին Միացյալ Նահանգների արտաքին քաղաքական գործողությունների մյուս վեկտորը ուղղված էր «ծովերի ազատության» ավանդույթի և չեզոք երկրների իրավունքների պահպանմանը: 1914 թ. օգոստոսի 6-ին Միացյալ Նահանգների պետդեպարտամենտը դիմեց պատերազմող կողմերին՝ ընդունելու 1909 թ. Լոնդոնի հռչակագիրը*, որը սահմանում էր ծովային պատերազմի կանոնները¹¹⁸: Ինչպես հայտնի է, այս հռչակագիրը պարունակում էր չեզոք նավագնացությանը վերաբերող դրույթ:

¹¹⁶ **В. Горюхов**, История международных отношений 1918-1939, Москва, "Изд. МГУ", 2004, с. 15-17.

¹¹⁷ **L. Ambrosius**, Woodrow Wilson and the American Diplomatic Traditions: The Treaty Fight in Perspective. Cambridge, "Cambridge University Press", 1987, p. 15.

* 1909 թ. Լոնդոնի վեհաժողովում Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Ռուսաստանը, Գերմանիան, Ավստրո-Յունգարիան, Իտալիան, Ամերիկայի Միացյալ Նահանգները, Ճապոնիան, Հոլանդիան և Իսպանիան ստորագրեցին «Հռչակագիր ծովային պատերազմի իրավունքի մասին»: Այն հաստատում էր պատերազմի ժամանակ չեզոք երկրների իրավունքները ծովային առևտրում:

¹¹⁸ Papers Relating to the Foreign Relations of The United States (այսուհետև FRUS), 1914, Supplement, The World War, Washington, "Government Printing Office", 1928, p. 216. Տես նաև **G. Tindall, D. Shi**, նշված աշխ., էջ 984:

Մեծ Բրիտանիան ի սկզբանե դեմ էր Լոնդոնյան հռչակագրի կիրառմանը և 1911 թ. վերջին Լորդերի պալատը հրաժարվեց վավերացնել այն: Ակնհայտ էր, որ հռչակագիրը Մեծ Բրիտանիային կզրկեր իր ծովային առավելությունից և շրջափակումը որպես զենք օգտագործելու հնարավորությունից: Ավելին, այն չվավերացրեցին նաև Միացյալ Նահանգները և մյուս տերությունները: Արդյունքում Լոնդոնի հռչակագիրը ստորագրվեց, բայց ուժի մեջ չմտավ¹¹⁹:

Սակայն, Մեծ Բրիտանիայի պատերազմի մեջ մտնելու հաջորդ իսկ օրը, Միացյալ Նահանգները կոչ արեց պատերազմող կողմերին պահպանելու Լոնդոնի հռչակագրի դրույթները: Մեծ Բրիտանիան, ինչպես արդեն նշվեց, դեմ արտահայտվեց այս նախաձեռնությանը՝ գործի դնելով իր ծովային առավելությունը: Սեպտեմբերի 2-ին Յուլիսային ծովը հայտարարվեց «ռազմական գոտի» և առաջարկվեց բոլոր չեզոք նավերին անցնել Լա Մանչի և Դուվրյան (Պա դե Կալե) նեղուցներով, որտեղ նրանք պետք է ենթարկվեին պարտադիր մաքսային խուզարկման¹²⁰: Միացյալ Նահանգները դատապարտեց Մեծ Բրիտանիայի այս քայլը: Ի պատասխան ուղարկվեց հայտագիր, որով պահանջվեց Մեծ Բրիտանիայից անվերապահորեն ընդունել և կատարել հռչակագրի պայմանները: Հայտագրում կար նաև նախազգուշացում, համաձայն որի բրիտանական կողմի բացասական պատասխանը կարող էր թարմացնել Միացյալ Նահանգների և Մեծ Բրիտանիայի միջև եղած վաղեմի վեճը (խոսքը վերաբերում էր 1812 թ. անգլո-ամերիկյան պատերազմին, որի հիմնական պատճառներից մեկը Մեծ Բրիտանիայի կողմից Միացյալ Նահանգների չեզոք իրավունքների խախտումն էր)¹²¹: Հատկանշելով ամերիկյան հայտագրի կտրուկ երանգը՝ 1912-1918 թթ. Վաշինգտոնում Մեծ Բրիտանիայի դեսպան Սեսիլ Սպրինգ-Ռայզը (Cecil Spring-Rice) գնդապետ Հաուզի հետ առանձնազրույցի ժամանակ նկատում է, որ այն գրեթե հավասարազոր էր պատերազմի հայտարարության¹²²:

Չնայած Միացյալ Նահանգների պահանջներին՝ բրիտանական կառավարությունը չէր ցանկանում ընդունել Լոնդոնի հռչակագիրը: Մեծ Բրիտանիայի նման դիրքորոշումը կարելի է բացատրել նրանով, որ հռչակագրի անվերապահ ընդունումը կարող էր խոչընդոտ հանդիսանալ Գերմանիային տնտեսապես շնչահեղձ անելու անգլիական ծրագրերին: Ինչպես նշում էր Մեծ Բրիտանիայի վարչապետ Դևիդ Լլոյդ Ջորջը (David Lloyd George). «...Բարեբախտաբար հռչակագիրը մերժվեց, այլապես, գործելով

¹¹⁹ **З. Гершов**, “Нейтрлитет” США в годы Первой Мировой войны, Москва, “Соцэкгиз”, 1962, с. 51.

¹²⁰ **G. Tindall, D. Shi**, նշված աշխ., էջ, 984:

¹²¹ **З. Гершов**, “Нейтрлитет” США в годы Первой Мировой войны, с. 52.

¹²² Архив полковника Хауза, т. 1, с. 100.

պատերազմի ժամանակ, այն մեզ կզրկեր Գերմանիայի դեմ ունեցած մեր ամենահզոր զենքից (ծովային շրջափակումից – Կ.Գ.)»¹²³:

Գերմանական կողմն այլ վերաբերմունք ուներ հռչակագրի կիրառման հարցում: Այն կանխատեսում էր կայծակնային հաղթանակ պատերազմում և պատերազմի արագ ավարտ, քանի որ երկիրը տնտեսապես պատրաստ չէր երկարատև պատերազմի: Չեռևաբար, պատերազմի երկարաձգման հետ մեկտեղ Գերմանիան հայտնվեց տնտեսական ծանր կացության մեջ: Գերմանիան կարիք ուներ ռազմավարական հումքի, որը հնարավոր էր ձեռք բերել միայն չեզոք երկրներից: Բրիտանական շրջափակման պայմաններում Գերմանիան զրկվում էր այդ հնարավորությունից: Այս ամենը լավ գիտակցում էր նաև Մեծ Բրիտանիան¹²⁴:

Բրիտանական կառավարությունը, շարունակելով իր շրջափակման քաղաքականությունը, ընդլայնեց նաև այն ապրանքների ցանկը, որոնք ենթակա էին բռնագրավման՝ հակառակորդի կողմից օգտագործվելու փոքր իսկ հնարավորության դեպքում: Նման պայմաններում ամերիկյան կողմն իրեն իրավունք վերապահեց բողոքարկելու Միացյալ Նահանգների առևտրական շահերի ոտնահարման յուրաքանչյուր քայլի դեմ: Սա հանգեցրեց Անգլո-ամերիկյան դիվանագիտական հարաբերությունների ծայրաստիճան սրացման: Այս առնչությամբ Լոնդոնում Միացյալ Նահանգների դեսպան Վոլթեր Փեյջը 1915 թ. օգոստոսին Վուդրո Վիլսոնին հղած իր նամակում կատակում է, որ նույնիսկ մարսաբնակը, կարդալով վերջին երկու ամիսներին ստացված հեռագրերը, չէր կարող բացատրել, թե ինչպես են ամերիկյան և անգլիական կառավարությունները պահպանում խաղաղություն միմյանց միջև¹²⁵:

Միացյալ Նահանգների Կոնգրեսում լուրջ քննարկման ենթարկվեց նաև բրիտանական ռազմական մատակարարումների վրա օրենսդրական սահմանափակումներ դնելու հարցը: Ամերիկյան կողմի այս գործողությունների վերաբերյալ Մեծ Բրիտանիայի արտգործնախարարը գնդապետ Չաուզին հայտնել էր, որ նման կերպով Միացյալ Նահանգները ձգտում է հաղթանակ ապահովել գերմանացիների համար¹²⁶: Արդյո՞ք դա այդպես էր, ամերիկյան կառավարությանը ձեռնտո՞ւ էր գերմանական կողմի հաղթանակը: Գնահատելով այս իրավիճակը և Միացյալ Նահանգների նման քայլերի դրդապատճառները՝ ռուս պատմաբան,

¹²³ **Դ. Լլոյդ Ժորժ**, Военные Мемуары, тт. 1-2, пер. с англ. И. Звавича, Москва, "Соцэкгиз", 1934, с. 90.

¹²⁴ **Ա. Դիքս**, Война и народное хозяйство по опыту Германии в мировую войну, 1914 - 1919 гг., пер. с нем. М. Заммеля, Москва, "Воениздат", 1926, с. 8.

¹²⁵ Վուդրո Վիլսոնի և Վոլթեր Փեյջի հեռագրակապի մասին մանրամասն տե՛ս **В. Hendrick**, The Life and Letters of Walter H. Page, vol. 3, Garden City- New York, "Doubleday, Page & Company", 1926, p. 233-272:

¹²⁶ Архив полковника Хауза, т. 2, Москва, "Государственное социально-экономическое издательство", 1937, с. 62-63.

վիլսոնագետ Ջինովիյ Գերշովը նշում էր, որ ամերիկյան կառավարությունն իր գործողություններով փորձում էր օգնել Գերմանիային Անտանտի դեմ պայքարում¹²⁷: Սակայն չի բացառվում նաև, որ բոլոր ամերիկյան հայտագրերը՝ ուղղված բրիտանական շրջափակման և չեզոք երկրների իրավունքների ոտնահարման դեմ, ծառայում էին սուկ հանրային լարվածություն չստեղծելու օգտին: Իսկ իրականում Միացյալ Նահանգները արդեն այդ ժամանակ ուներ անտանտամետ կողմնորոշում, որով և պայմանավորված էր այն, որ նախագահ Վիլսոնը չէր դիմում կտրուկ գործողությունների՝ վերացնելու համար չեզոք առևտրի սահմանափակման բրիտանական սահմանափակումները¹²⁸:

Սակայն մեր կարծիքով, առավել իրատեսական է ամերիկյան պատմաբան Արթուր Լինքի տեսակետը, ըստ որի՝ բրիտանական շրջափակման ճեղքումը կդիտվեր որպես ոչ թե չեզոքության, այլ հակառակը՝ «ոչ չեզոքության» դրսևորում, քանզի պատերազմի պայմաններում յուրաքանչյուր գործողություն ընդդեմ պատերազմող կողմերից որևէ մեկի, անմիջապես կունենար դրական ազդեցություն հակառակորդ կողմի համար¹²⁹: Եվ նման իրավիճակում ըստ էմեր դե Վաթելի և Ջուզեպե Գրոցիուսի տուժող կողմը իրավունք ուներ երրորդ կողմին դիտարկել որպես հակառակորդ¹³⁰: Իսկ նման կարգավիճակը դեռևս չէր մտնում Միացյալ Նահանգների քաղաքական ծրագրերի մեջ:

Ամերիկյան դիրքորոշման հարցում էական էր նաև այն, որ Միացյալ Նահանգների կառավարությունում դեռևս չկար միասնական կողմնորոշում: Միացյալ Նահանգների լիակատար չեզոքության կողմնակից էր պետքարտուղար, դեմոկրատների առաջնորդներից Ուիլյամ Բրայանը (William Bryan): Վերջինս կողմ էր չեզոքությանը, բայց՝ ոչ մեկուսացմանը: Նա հանդես էր գալիս նախագահ Վիլսոնի վարած խուսանավման քաղաքականության դեմ՝ խրախուսելով բաց հարաբերությունների հաստատումը և՛ Գերմանիայի, և՛ Մեծ Բրիտանիայի, և՛ Ֆրանսիայի հետ: Այդուհանդերձ Ուիլյամ Բրայանն իր արտաքին քաղաքական հայացքներում, վերջին հաշվով, հարազատ էր «Մոնրոյի դոկտրինային» և առաջնային տեղ էր տալիս ամերիկյան մայրցամաքի խնդիրներին:

Շատ կարևոր է նաև գնդապետ Ջաուզի մոտեցումն ամերիկյան դիրքորոշման խնդրին: Վերջինս կողմնակից էր Միացյալ Նահանգների Անտանտի կողմից հանդես գալուն: Գնդապետ Ջաուզն առաջիններից էր, որ Միացյալ Նահանգների հնարավոր մասնակցությունը պատերազմին ներկայացրեց գաղափարական հենքով. «Դա պետք է

¹²⁷ **З. Гершов**, “Нейтрлитет” США в годы Первой Мировой войны, с. 56.

¹²⁸ **А. Уткин**, Дипломатия Вудро Вилсона, с. 127.

¹²⁹ **A. Link**, Woodrow Wilson and the Progressive Era. 1910-1917, p. 156.

¹³⁰ **Э. де Ваттель**, նշված աշխ., էջ, 485: Տե՛ս նաև **Г. Гроциус**, նշված աշխ., էջ, 580:

լիներ պայքար ժողովրդավարության համար ընդդեմ բռնապետության, որը մարմնավորում էր Գերմանիան»¹³¹:

Հարկ է նշել, որ գնդապետ Հաուզը վայելում էր նախագահ Վիլսոնի բացառիկ վստահությունը: Եվրոպական տերությունների հետ ունեցած բոլոր գաղտնի բանակցությունները նախագահ Վիլսոնը վստահել էր նրան: Գնդապետը նախագահի ներկայացուցիչն էր Եվրոպայում 1913-1914 թթ., այդ իսկ պատճառով բոլորից լավ էր գիտակցում բռնկվող պատերազմի ողջ լրջությունը, ավելի կոնկրետ՝ հասկանում էր վերջինիս բնույթը:

Կարծում ենք, որ այստեղ իր դերակատարումն ունեցավ նաև ամերիկյան դիվանագիտության շփոթվածությունն անակնկալ պատերազմից: Կարելի է ասել՝ բացակայում էր հետագա գործողությունների քիչ թե շատ մտածված ծրագիրը: Ինչո՞ւ ոչ, նաև այս հանգամանքներով էր պայմանավորված նախագահ Վիլսոնի 1914 թ. օգոստոսի 19-ի ելույթում արված հայտարարությունը, որով նա կոչ արեց ամերիկյան ազգին հանդես գալ «անաչառ մտքով և գործով»: Միացյալ Նահանգներն իր արտաքին քաղաքական մոտակա ծրագրերում պատրաստ չէր դեպքերի նման կտրուկ զարգացմանը, ինչը հանկարծակիի բերեց նախագահ Վիլսոնին: Այս կապակցությամբ հայտնի է վերջինիս արտահայտությունը՝ արված մերձավորների շրջանակում. լսելով պատերազմի բռնկման լուրը՝ նախագահ Վիլսոնը ակամայից բացականչել է. «Անհնար է, դա անհնար է»¹³²: Ակնհայտ է, որ անհրաժեշտ էր նոր ճանապարհների որոնում համաշխարհային գերտերությունն դառնալու վիլսոնյան ծրագրերի իրականացման համար, քանի որ պատերազմը փոխեց խաղի բոլոր կանոնները, իսկ դրա համար բնականաբար ժամանակ էր անհրաժեշտ: Իսկ ժամանակ չահելու և ճիշտ կողմնորոշվելու լավագույն տարբերակն այս պարագայում, կարծում ենք, չեզոքության դրսևորումն էր, ինչը և արեց նախագահ Վիլսոնը 1914 թ. օգոստոսի 4-ի իր հայտարարությամբ:

1914 թ. օգոստոսից դեկտեմբեր ընկած հատվածը կարելի է բնութագրել որպես ամերիկյան կառավարության շփոթվածության փուլ, երբ բացակայում էր որևէ հստակ արտաքին քաղաքական հայեցակարգ նոր կտրուկ փոփոխվող պայմաններում: Միայն 1914 թ. վերջին կառավարության անդամների մոտ սկսեցին ձևավորվել տեսակետներ այս հարցի կապակցությամբ, և հստակ դարձավ Միացյալ Նահանգների հակվածությունը դեպի ամերիկյան միջնորդական խաղաղարար առաքելության գաղափարը:

¹³¹ Архив полковника Хауза, т. 2, с. 235.

¹³² **А. Уткин**, Дипломатия Вудро Вилсона, с. 40.

Ամերիկային իր դիրքորոշման հարցում որոշ չափով «օգնեց» նաև ստորջրյա պատերազմը, որը գերմանական կողմի պատասխանն էր Մեծ Բրիտանիայի շրջափակման քաղաքականությանը: Ստորջրյա պատերազմը հանդիսանում էր փրկարար օղակ Գերմանիայի համար: Այն վերջինիս հնարավորություն էր տալիս լուծելու երեք առաջնային կարևորություն ունեցող խնդիրներ՝ ռազմածովային ուժերի հավասարեցում հակառակորդի հետ, Անտանտի և Միացյալ Նահանգների միջև գոյություն ունեցող առևտրի դադարեցում և դաշնակցային բլոկի զգալի թուլացում¹³³:

Գերմանական կառավարող շրջանակները քաջ գիտակցում էին, որ ստորջրյա պատերազմը խիստ կարի գերմանա-ամերիկյան հարաբերությունները, սակայն ռազմածովային ուժերի անհավասարության դեպքում, երբ բացառվում էր ուժերի ուղիղ առճակատումը, նպատակին հասնելու ամենափրատեսական ճանապարհը դա էր:

1915 թ. փետրվարի 4-ին Գերմանիան հայտարարեց ստորջրյա պատերազմ: Մեծբրիտանական և իռլանդական շրջակա ջրային տարածքները հայտարարվեցին ռազմական գոտիներ: Ռազմական գոտում հայտնված յուրաքանչյուր նավ ենթակա էր ռմբակոծման: Չեզոք նավերը նույնպես վտանգված էին ռազմական գոտում հայտնվելու դեպքում¹³⁴: Ստորջրյա պատերազմն իրականում նպաստեց գերմանա-ամերիկյան հարաբերությունների վատթարացմանը: Նախ վտանգ առաջացավ բրիտանական ծովային տիրապետման համար, ինչն իր հերթին կարող էր վատթարացնել դաշնակիցների ընդհանուր դրությունը: Այն բացասաբար կանդրադառնար նաև Անտանտի երկրների հետ ունեցած Միացյալ Նահանգների առևտրական կապերին, իսկ սա արդեն լուրջ վնաս էր ամերիկյան տնտեսության համար: Այդ իսկ պատճառով ամերիկյան կողմը դատապարտեց Գերմանիայի նման քաղաքականությունը, որպես «չեզոք իրավունքների (indefensible) ոտնահարում» և զգուշացրեց, որ Գերմանիան կենթարկվի խիստ պատասխանատվության (strict accountability) ամերիկյան կյանքի կամ ունեցվածքի կորստի դեպքում¹³⁵:

Սակայն այս նախազգուշացումը չկանգնեցրեց Գերմանիային: Փետրվարի 18-ին վերջինս ձեռնամուխ եղավ ստորջրյա պատերազմի գործնական իրականացմանը¹³⁶:

Ստորջրյա պատերազմը կանխելու ամերիկյան ջանքերն անցան ապարդյուն:

Ամերիկյան կողմը փորձեց հարցին լուծում տալ դիվանագիտական ճանապարհով: Պետքարտուղար Ուիլյամ Բրայանը նախագահ Վիլսոնի քննարկմանը ներկայացրեց մի նախագիծ, ըստ որի՝ Մեծ Բրիտանիային առաջարկվում էր թուլացնել շրջափակումը և

¹³³ **J. Garraty**, A short history of the American nation, San Francisco, "Harper Collins", 1992, p. 394.

¹³⁴ **Р. Гибсон, М. Прендергаст**, Германская подводная война 1914-1918 гг., Москва, "Воениздат", 1938, с. 41.

¹³⁵ **G. Tindall, D. Shi**, նշված աշխ., էջ, 985: Տե՛ս նաև **C. Kendrick**, նշված աշխ., էջ, 156-157:

¹³⁶ **T. Paterson**, American foreign policy: A history 1900 to present, Toronto, "Health and Company", 1991, p. 26.

թույլատրել պարենային ապրանքների մուտքը Գերմանիա, իսկ Գերմանիային՝ սահմանափակել սուզանավերի գործողությունները՝ ավարի իրավունքի սկզբունքով (նավերի խուզարկում, մաքսանենգ ապրանքի բռնագրավում, անձնակազմի և ուղևորների անվտանգության ապահովում)¹³⁷ : Ինչպես նաև Մեծ Բրիտանիան և Գերմանիան պետք է դադարեցնեին ականների տեղադրումը բաց ծովում¹³⁸:

Պետդեպարտամենտի ղեկավարությունը հուսով էր, որ եթե Ամերիկյան կարողանա հասնել այս փոխզիջումային ծրագրի ընդունմանը, ապա լարվածությունը զգալիորեն կթուլանա և որպես պատճառահետևանքային կապի դրսևորում կվերանան նաև ամերիկյան առևտրի խոչընդոտները:

Այս նախագիծն արժանացավ նախագահ Վիլսոնի հավանությանը և 1915 թ. փետրվարի 20-ին ուղարկվեց Լոնդոն և Բեռլին¹³⁹:

Գերմանական կողմի պատասխանը դրական էր: Վերջինս պահանջում էր ռազմավարական հումքի անխոչընդոտ ներմուծում, ինչը փաստացի նշանակում էր շրջափակման վերացում: Սակայն բրիտանական կողմը չէր ուզում հրաժարվել շրջափակման քաղաքականությունից, այդ իսկ պատճառով դեմ արտահայտվեց ամերիկյան փոխզիջումային ծրագրին¹⁴⁰:

Փաստորեն Միացյալ Նահանգներին հերթական անգամ չհաջողվեց իրականացնել իր փոխզիջումային ծրագիրը: Սակայն սա չհիասթափեցրեց ամերիկացիներին, և Ուիլյամ Բրայանի նախագծի փոխարեն առաջարկվեց Էդուարդ Չաուզի նախագիծը, որը նախատեսում էր «ծովերի ազատության» կարգի կիրառում: Համաձայն այս նախագծի՝ Գերմանիան պետք է դադարեցներ ստորջրյա պատերազմը, իսկ Մեծ Բրիտանիան նվազագույնի պետք է հասցներ մաքսանենգ համարվող ապրանքների ցուցակը՝ այդ շարքում թողնելով միայն բացառապես ռազմական կարիքների համար օգտագործվողները:

Գնդապետ Չաուզի առաջարկած ծրագիրը նույնպես գերմանական կողմի համար չահեկան էր, քանի որ «ծովերի ազատությունը» կնպաստեր գերմանա-ամերիկյան առևտրի վերականգնմանը, և Գերմանիան դուրս կգար բրիտանական շրջափակումից:

Այլ էր դրությունը Մեծ Բրիտանիայում: Լոնդոնում գնդապետ Չաուզը բազմիցս փորձեց համոզել Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Էդուարդ Գրեյին (Edward Grey), որ ունենալով ամենաուժեղ նավատորմը՝ Մեծ Բրիտանիան կունենա ամենամեծ

¹³⁷ FRUS 1915, Supplement, The World War, Washington, "Government Printing Office", 1928, p. 96-100.

¹³⁸ **З. Гершов**, "Нейтралитет" США в годы Первой Мировой войны, с. 86.

¹³⁹ FRUS 1915, Supplement, The World War, p. 119-120.

¹⁴⁰ Խույն տեղում, էջ 121-123:

շահույթները «ծովերի ազատությունից»: Սակայն բրիտանական կողմն անկոտրում էր և չէր պատրաստվում հրաժարվել շրջափակման քաղաքականությունից¹⁴¹:

Ընդհանուր առմամբ Գերմանիայի վարած ստորջրյա պատերազմն ուղղված էր Անտանտի նավերի դեմ: Սակայն, ինչպես վերը նշվեց, գերմանական կողմը հայտարարել էր, որ չեզոք նավերը նույնպես վտանգված են և հայտնվելով ռազմական գոտում, կարող են ենթարկվել ռմբակոծման: Միջադեպերն իրենց սպասեցնել չտվեցին. 1915-1917 թթ. ընթացքում գերմանական սուզանավերը խորտակեցին երկու տասնյակից ավել ռազմական և առևտրական նավեր*¹⁴²: Ամերիկյան մամուլը այդ գործողությունները որակեց որպես «բարբարոսություն, որը հասել է խելագարության աստիճանի», և նշեց, որ «քաղաքակիրթ աշխարհը այս դաժանությունների դեմ պետք է միաձայն բողոքի»¹⁴³: Նախագահ Վիլսոնը նույնպես չցանկանալով անպատասխան թողնել ամերիկյան նավերի ռմբակոծման հանգամանքը 1915 թ. մարտի 29-ի իր ելույթում նշեց. «Պատերազմները երբեք չեն ավարտվի մինչև մարդիկ չդադարեն կասկածանքով վերաբերվել միմյանց, ձեռք չբերեն եղբայրասիրության գաղափարների իրական զգացում, որը միակ զսպող ուժն է, որ կարող է հնարավորություն տալ մեզ միմյանց մասին մտածել և գործել արդարացիորեն»: Շարունակելով իր միտքը Նախագահ Վիլսոնը նշում է. «Ես հետաքրքրված եմ չեզոքությամբ ոչ թե իմ երկիրը անհանգստությունից զերծ պահելու համար, այլ, որովհետև զինված պայքարի փոխարեն շատ ավելի մեծ գործեր կան անելու: Շատ մեծ սպասելիքներ կան այս ազգից, որոնցից են ինքնակառավարման և ինքնիշխանության սկզբունքների տարածումն ու հաստատումը ողջ աշխարհում»¹⁴³:

Ստեղծված իրավիճակում, իր կամքից անկախ, Ամերիկյան կանգնեց պատերազմի մեջ ներքաշվելու վտանգի եզրին: Սկսեց ակտիվ քննարկվել Գերմանիային պատերազմ հայտարարելու հարցը¹⁴⁴: Սակայն ամերիկյան հասարակությունը դեռևս պատրաստ չէր պատերազմի: Ըստ հարցումի, որն անցկացվել էր ամերիկյան հեղինակավոր թերթերի խմբագիրների միջև «Լուզիտանիայի» միջադեպից անմիջապես հետո, հասարակության

¹⁴¹ Архив полковника Хауза, т. 1, с. 186.

* 1915 թ. մարտի 28-ին գերմանական սուզանավը տորպեդահարեց «Ֆալաբա» բրիտանական նավը, ապրիլի 29-ին ամերիկյան «Բուշինգ» նավը վնասվեց գերմանական ռմբահարման հետևանքով, մայիսի 1-ին հարձակման ենթարկվեց «Գալֆլայթ» ամերիկյան լցանավը (տանկեր), 1915 թ. մայիսի 7-ին գերմանական «Ս-20» սուզանավը Իռլանդական ծովում խորտակեց բրիտանական «Լուզիտանիա» մարդատար նավը և այլն: Այս դեպքերի մասին մանրամասն տես **C. Kendrick**, նշված աշխ., **R. Billington**, նշված աշխ., **В. Шаццлло**, Расчет и безрассудство. Германо-Американские отношения в 1898-1917гг., Москва, "ИВИ РАН", 1998, **З. Гершов**, "Нейтритет" США в годы Первой Мировой войны, 100 Key Documents in American Democracy, ed. by **P. Levy**, London, "Greenwood Press", 1994 և այլն:

¹⁴² **A. Walworth**, Wilson and His Peacemakers. American Diplomacy at the Paris Peace Conference 1919, New York, "Norton & Company", 1986, p. 13.

¹⁴³ Տես **C. Kendrick**, նշված աշխ., էջ. 148:

¹⁴⁴ **J. Daniels**, The Wilson Era, p., 253.

մեջ գերիշխող էր չեզոքության պահպանման տրամադրությունը: Հարցված 1000 հոգուց միայն 6-ն էին արտահայտվել Գերմանիային անմիջապես պատերազմ հայտարարելու օգտին¹⁴⁵:

Նախագահ Վիլսոնը նույնպես կանգնած էր բարդ ընտրության առջև: Նա գտնվում էր լուրջ «ներքին հակամարտության» մեջ. մի կողմից վտանգվում էր Ամերիկայի միջազգային հեղինակությունը, և Գերմանիային պատերազմ հայտարարելն ուղղակի անհրաժեշտություն էր, մյուս կողմից կարևոր էր նաև չեզոքության պահպանումը, քանզի վերջինս չէր ցանկանում դեմ գնալ ամերիկյան հասարակության կարծիքին: Նախագահ Վիլսոնը որոշեց չդիմել կտրուկ քայլերի: Նա հայտարարեց, որ ամերիկյան հասարակությունը «խիստ հպարտ է կռվելու համար»¹⁴⁶, և որ Միացյալ Նահանգները դեռ պատրաստ չէ նման քայլի: Պատերազմի համար բանակը չէ, որ հարկավոր է կոփել, այլ՝ ազգը¹⁴⁷:

Նախագահ Վիլսոնի համար՝ որպես բարոյական գաղափարներ կրողի և քարոզողի, գլխավոր փաստն այն էր, որ Գերմանիայի կողմից հրահրված ստորջրյա պատերազմը, բացի չեզոք նավերի կործանումից՝ հանգեցնում էր նաև խաղաղ բնակչության զոհերի: Այս հանգամանքը, իհարկե, մարդասիրական տեսանկյունից չէր արդարացվում: Ամերիկյան կառավարությունը, ճիշտ է, չգնաց ուղղակի առճակատման Գերմանիայի հետ, սակայն ձեռնամուխ եղավ գերմանական գործողությունների սահմանափակմանը ստորջրյա պատերազմում: 1915 թ. մայիսի 13-ին Միացյալ Նահանգները գերմանական կառավարությանը «Լուզիտանիայի գործով» հայտագիր ներկայացրեց, որով պահանջեց դադարեցնել հարձակումը ուղևորատար նավերի վրա և ապահովել բոլոր չեզոք նավերի անվտանգությունը¹⁴⁸: Միաժամանակ 1915 թ. մայիսին գտնվելով Լոնդոնում՝ գնդապետ Հաուզը կրկին հանդես եկավ շրջափակումը վերացնելու և ստորջրյա պատերազմը դադարեցնելու առաջարկով: Բրիտանական կողմը դժվարանում էր հստակ պատասխան տալ. կարծես թե սպասում էր գերմանական կողմի արձագանքին: Գերմանիան տվեց բացասական պատասխան, (Էդուարդ Հաուզի առաջարկը մերժվեց) որից հետո միայն Էդուարդ Գրեյը հայտարարեց, որ եթե Գերմանիան ընդուներ Էդուարդ Հաուզի առաջարկը, կնշանակեր, որ իրոք ունի պարենի կարիք, ուստի դեռևս կարիք չկա, որ Մեծ Բրիտանիան թուլացնի իր ճնշումը¹⁴⁹:

¹⁴⁵ "The Literary Digest", New York, "Funk & Wagnalls Company", vol. L, (50), № 20, May 15, 1915, p. 1139, <http://catalog.hathitrust.org/Record/000051914>. Տե՛ս նաև **J. Cooper**, The Warrior and the Priest: Woodrow Wilson and Theodor Roosevelt, Cambridge, "Benlap Press of Harvard University", 1983, p. 288.

¹⁴⁶ Wilson's Address to Several Thousand Foreign-Born Citizens, After Naturalization Ceremonies, at Philadelphia, May 10, 1915. President Wilson's State Papers and Addresses, ed. by **A. Shaw**, p. 114-118. Տե՛ս նաև **A. Walworth**, նշված աշխ., էջ 16:

¹⁴⁷ Տե՛ս **J. Daniels**, The life of Woodrow Wilson, p., 277.

¹⁴⁸ FRUS 1915, Supplement, The World War, p. 393-396.

¹⁴⁹ Архив полковника Хауза, т. 1, с. 186.

Արդյունքում ձախողվեց ամերիկյան խաղաղարար միջնորդության ևս մեկ փորձ, և կարծես թե անհիմաստ էր դառնում անդադար հայտագրերի հղումը: Թվում էր, թե Ուիլյամ Բրայանի առաջարկի մերժումից և «Լուզիտանիայի» կործանումից հետո հասունացել էր պատերազմ հայտարարելու պահը: Սակայն, ինչպես նշում էր գնդապետ Յաուզը. «Իմ նպատակն էր Միացյալ Նահանգներին և նախագահ Վիլսոնին կանգնեցնել այն փաստի առաջ, որ երբ գա պահը, և ծագեն անախորժություններ Գերմանիայի և Միացյալ Նահանգների միջև, բոլորի համար ակնհայտ լինի, որ նախագահ Վիլսոնն արեց ամեն ինչ պատերազմից խուսափելու և այն դադարեցնելու համար: Այդ ժամանակ միայն նա կարող է մաքուր խղճով և ամերիկյան ժողովրդի լիակատար հավանությամբ կտրուկ քայլերի դիմել ընդդեմ Գերմանիայի»¹⁵⁰:

Գնդապետ Յաուզի այս մտքում հստակ նկատվում է վիլսոնյան՝ «ազգը պատերազմին նախապատրաստելու» գծի շարունակությունը: Ակնհայտ է դառնում նաև այն, որ նման դիվանագիտական հնարքները կիրառվում էին նախագահ Վիլսոնի և նրա շրջապատի կողմից ոչ այնքան ստուգելու համար պատերազմող կողմերի՝ հարցը խաղաղ ճանապարհով լուծելու պատրաստակամությունը, որքան ամերիկյան հասարակության արձագանքը: Սա կարծես թե միջոց էր ձեռքը մշտապես հասարակության զարկերակին պահելու համար, ինչն անհրաժեշտ էր նախագահ Վիլսոնին հապճեպ որոշում չկայացնելու և իրավիճակը ճիշտ գնահատելու հարցում:

«Լուզիտանիայի» հայտագրի մերժումը կարծես թե վերջնականապես սրեց գերմանա-ամերիկյան հարաբերությունները: Սակայն այս հարցում կային տարածայնություններ ամերիկյան կառավարող շրջաններում: Օրինակ՝ գնդապետ Յաուզը և պետքարտուղար Ռոբերտ Լանսինգը կողմ էին Գերմանիայի հետ հարաբերությունների խզմանը: Նրանց կարծիքով անհրաժեշտ էր անհապաղ վերջնագիր ներկայացնել Գերմանիային ստորջրյա պատերազմը դադարեցնելու պահանջով: Իսկ Ուիլյամ Բրայանի կարծիքով այդ քայլը հակասում էր չեզոքության իրական սկզբունքներին¹⁵¹: Ըստ նրա՝ Միացյալ Նահանգների համար Մեծ Բրիտանիայի վարած քաղաքականությունն իր մեջ ավելի քիչ վտանգ չէր պարունակում, քան Գերմանիայինը, ուստի անհրաժեշտ էր ոչ թե վերջնագիր ներկայացնել, այլ հանդես գալ միաժամանակ երկու հայտագրերով. մեկը պետք է ուղղված լիներ Մեծ Բրիտանիային՝

* Լլոյդ Ջորջի կարծիքով եթե Մեծ Բրիտանիան համաձայնեի նախաձագժի հետ, ապա դա կլինեի բրիտանական կառավարության վատագույն սխալը, տե՛ս **Д.Ллойд Джордж**, Военные Мемуары, тт. 1-2, с. 449:

¹⁵⁰ Архив полковника Хауза, т. 1, с. 204.

¹⁵¹ **G. Tindall, D. Shi**, նշված աշխ., էջ 985:

շրջափակումը դադարեցնելու, մյուսը՝ Գերմանիային՝ ստորջրյա պատերազմը դադարեցնելու պահանջներով¹⁵²:

Ուիլյամ Բրայանի այս տեսակետին դեմ արտահայտվեց նախագահ Վիլսոնը: Նա գտնում էր, որ առաջին հերթին պետք է ստիպել Գերմանիային դադարեցնել ստորջրյա պատերազմը և հետո միայն բրիտանական կողմի հետ պայմանավորվել շրջափակումը վերացնելու հարցում¹⁵³:

1915 թ. հունիսի 9-ին ամերիկյան կառավարությունը Գերմանիային ներկայացրեց «Լուզիտանիայի» գործով երկրորդ հայտագիրը՝ պահանջելով դադարեցնել հարձակումը քաղաքացիական նավերի վրա¹⁵⁴: Ուիլյամ Բրայանը հրաժարվեց ստորագրել այս հայտագիրը, շեշտելով. «Ես վստահ եմ, որ այս հայտագիրը կվերջանա պատերազմով»¹⁵⁵: Այս քայլի արդյունքում վերջինս ստիպված եղավ հրաժարվել նաև իր զբաղեցրած պաշտոնից¹⁵⁶: Նրան փոխարինելու եկավ Ռոբերտ Լանսինգը, որը, ինչպես վերը նշվեց, հակված էր Գերմանիայի հետ հարաբերությունների անմիջապես խզմանը: Գալով իշխանության վերջինս հանդես եկավ Գերմանիայի դեմ պատերազմի ուղիղ սպառնալիքով, եթե նա չդադարեցնի հարձակումը ոչ ռազմական նավերի վրա¹⁵⁷:

Փաստորեն, արդեն իսկ 1915 թ. մայիսի դրությամբ չեզոքության մասին խոսելը, կարելի է ասել, ավելորդ էր: Ճիշտ է, Միացյալ Նահանգները ակտիվ պատերազմի մեջ չէր, բայց հստակ երևում էր վերջինիս անտանտամետ ուղղվածությունը: Ինչո՞ւ: Աշխարհաքաղաքական տեսանկյունից այս ուղղվածությունը հնարավորություն էր տալիս Միացյալ Նահանգներին ապագայում հանդես գալ Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի հետ հավասար պայմաններով, ավելին՝ պատերազմից հետո վերջիններս կլինեին Միացյալ Նահանգներից ֆինանսական կախման մեջ: Մյուս գործոնը դա էթնիկական գործոնն էր¹⁵⁸: Ամերիկյան ժողովրդի մեծ մասը անգլալեզու էր: Իսկ լեզվի և մշակույթի ընդհանրությունը այլընտրանք չէր թողնում ամերիկյան կառավարության համար: Կարևոր էր նաև գաղափարական գործոնը: Ժողովրդավարական երկրներին աջակցելն ավելի համահունչ էր ամերիկյան կառավարման ավանդույթներին: Ամերիկացիների մեջ կար այն գիտակցումը, որ օգնելով ժողովրդավարական երկրների՝ նրանք նպաստում են աշխարհում ժողովրդավարության տարածմանը:

Նախագահ Վիլսոնի անտանտամետ դիրքորոշմանը կողմ արտահայտվեցին նաև Միացյալ Նահանգների կառավարող շրջանները: Երկրում սկսեց թափ հավաքել

¹⁵² **E. May**, նշված աշխ., էջ 123:

¹⁵³ **З. Гершов**, "Нейтралитет" США в годы Первой Мировой войны, с. 91.

¹⁵⁴ FRUS 1915, Supplement, The World War, p. 436-438.

¹⁵⁵ **J. Daniels**, The Wilson Era, p. 518.

¹⁵⁶ **E. May**, նշված աշխ., էջ 154-155:

¹⁵⁷ **R. Lansing**, War Memoirs, Indianapolis- New York, "Bobs-Merrill Co.", 1935, p. 47.

¹⁵⁸ Մանրամասն տես **J. Garraty**, նշված աշխ., էջ 365:

ռազմական առևտուրը: Ամերիկյան տնտեսությունն աստիճանաբար սկսեց ռազմականացվել: Եթե նախկինում ամերիկյան բանկերին չէր թույլատրվում պատերազմող կողմերին փոխառություններ տրամադրել, քանի որ դա հակասում էր իրական չեզոքության ոգուն, ապա այժմ այն խրախուսվում էր, քանի որ ամերիկյան արտահանումների կրճատումը վերջին հաշվով կնպաստեր երկրի տնտեսական դրության վատթարացմանը: Վարկավորման արգելումը կհանգեցներ պատվիրատուների գնողունակության անկման, ինչն իր հերթին կբերեր պատվերների դադարեցման: Այսպիսով՝ Եվրոպական երկրների վարկավորման հարցը անմիջականորեն կապվեց երկրի տնտեսական վիճակի բարելավման հետ:

Նախագահ Վիլսոնը վերանայեց իր դիրքորոշումը վարկավորման հարցում և Լանսինգի հետ զրույցի ժամանակ հայտարարեց, որ առևտուրը պատերազմող կողմերի հետ միանգամայն օրինական է, և դրան խոչընդոտող բոլոր հանգամանքներն անհրաժեշտ է վերացնել: Սակայն տրամադրված վարկերի ողջ գումարը պետք է ծախսվեր Միացյալ Նահանգների սահմաններում¹⁵⁹:

Անտանտի երկրներին առատորեն վարկեր տրամադրելու հետ մեկտեղ նախագահ Վիլսոնը քաջ գիտակցում էր, որ Միացյալ Նահանգներին անհրաժեշտ էր ոչ թե Գերմանիայի լիակատար կործանումը, այլև նրա քաղաքական ռեժիմի փոփոխումը և Եվրոպայում ուժերի հավասարակշռության պահպանումը: Իսկ սրա համար Միացյալ Նահանգներին հարկավոր էր այդ գործընթացում ունենալ անմիջական մասնակցություն: Դեռևս 1914 թ. «The New York Times» օրաթերթին տված հարցազրույցում նախագահ Վիլսոնը հայտարարել էր. «Ես գտնում եմ, որ արդար և անաչառ խաղաղություն հնարավոր է միայն այն դեպքում, երբ պատերազմող կողմերից և ոչ մեկը չհասնի հաղթանակի զենքի օգնությամբ»¹⁶⁰: Սրա հետ մեկտեղ նախագահը մշտապես շեշտում էր, եթե Եվրոպան կանգնի մեկ ռազմական գերտերության ներքո հայտնվելու վտանգի առաջ, ապա ինքը կանդի Միացյալ Նահանգների մասնակցությամբ պատերազմին»¹⁶¹:

1915 թ. աշնան դրությամբ դեռևս ամերիկյան ժողովրդի ճնշող մեծամասնությունը դեմ էր Միացյալ Նահանգների մասնակցությանը պատերազմին¹⁶²: Այդ իսկ պատճառով Միացյալ Նահանգներում սկսվեց «ռազմական պատրաստվածության» միջոցառումը*:

¹⁵⁹ FRUS, The Lansing Papers 1914-1920, vol. 1, Washington, "Government Printing Office", 1939, p. 131-150.

¹⁶⁰ A. Link, Wilson: vol. 3, The Struggle for Neutrality, 1914-1915. Princeton, New Jersey, "Princeton University Press", 1960, p. 53.

¹⁶¹ Նույն տեղում, էջ 659:

¹⁶² Архив полковника Хауза, т. 2, с. 41.

* Նշենք, որ այս գաղափարը շրջանառվում էր դեռևս 1914 թ. և այն աջակցություն էր գտնում այնպիսի հեղինակավոր գործիչների կողմից, ինչպիսիք են Ռոբերտ Լանսինգը, Թեոդոր Ռուզվելտը, Յենրի Լոջը և այլք: 1914 թ. դեկտեմբերի 1-ին ստեղծվեց «Ազգային անվտանգության լիգան», որը Թեոդոր Ռուզվելտի և

Հայտարարվեց նախագահ Վիլսոնի կառավարության ռազմական ծրագիրը, որով նախատեսվում էր կանոնավոր բանակի թվաքանակի աճ*, առանձնացվում էր շուրջ կես միլիարդ դոլար ռազմածովային նավատորմը հզորացնելու համար*: Նախատեսվում էր նաև մայրցամաքային պահեստային բանակի ստեղծում (թվով 400.000 մարդ)¹⁶³: «Մենք ստիպված ենք դիմել ուժային քաղաքականության երկրի ներսում, որպեսզի կարողանանք բարենպաստ հնարավորություն ստանալ դադարեցնելու ուժային քաղաքականությունն ամբողջ աշխարհում», – հայտարարեց նախագահ Վիլսոնը կառավարության ռազմական ծրագրի հաստատման ժամանակ¹⁶⁴: Այլ խոսքերով ասած՝ անհրաժեշտ էր Միացյալ Նահանգները նախապատրաստել պատերազմի՝ իր «առաքելությունն» արժանապատվորեն կրելու և տրամաբանական ավարտին հասցնելու համար:

Անվիճելի է, որ նման հայրենասիրական ազդակները Վուդրո Վիլսոնի օգտին պետք է ուղղեին հասարակական կարծիքի վեկտորները, ինչն այդ ժամանակ, առավել քան երբևէ, անհրաժեշտ էր նրան: 1916 թ. Միացյալ Նահանգներում նախագահական ընտրություններ էին: Նախագահ Վիլսոնի մրցակիցը հանրապետական թեկնածու, գերագույն դատարանի անդամ Չարլզ Հյուզն (Charles Hughes) էր: Դեմոկրատ թեկնածուն պայքարի մեջ մտավ «նախագահ Վիլսոնը ամերիկյան ազգին հեռու պահեց պատերազմից*» կարգախոսով: Վիլսոնն այս ընտրություններում հաղթանակ տարավ ձայների քիչ առավելությամբ՝ 277 ընտրական միավոր 254-ի դեմ¹⁶⁵:

Եթե փորձենք տրամաբանորեն դիտարկել այն, որ յուրաքանչյուր նախագահ իր վարած քաղաքականությամբ ձգտում է արժանանալ ընտրողների բարյացակամ վերաբերմունքին և վստահության քվեին, ապա կհանդգվենք, որ նախագահ Վիլսոնի վարած չեզոքության քաղաքականությունը միանգամայն արդարացրեց վերջինիս սպասելիքները:

գեներալ Լեոնարդ Վուդի (Leonard Wood) գլխավորությամբ պետք է զբաղվեր երկրի ռազմական արդյունաբերության ֆինանսավորմամբ և սպառազինության մակարդակի բարձրացմամբ: Տե՛ս **R. Billington**, նշված աշխ., էջ, 148:

* 1916 թ. հունիսի 3-ին Կոնգրեսը անցկացրեց Ազգային անվտանգության մասին օրենք, որով կանոնավոր բանակի թիվը 90 հազարից հասցվելու էր 175 հազարի՝ մինչև 200 հազար մեծացնելու թույլտվությամբ: Տե՛ս **T. Paterson**, նշված աշխ., էջ 274:

* Ռազմածովային նավատորմի հզորացման վերաբերյալ օրենքը Կոնգրեսը ընդունեց 1916 թ. օգոստոսի 15-ին՝ ծրագրի իրականացման համար հատկացնելով 500-600 մլն. դոլար: Տե՛ս **R. Billington**, նշված աշխ., էջ 148:

¹⁶³ **R. Baker**, Woodrow Wilson: Life and Letters, vol. 6, New York, "Doubleday, Page & Company," 1927, p. 3. Տե՛ս նաև **T. Paterson**, նշված աշխ., էջ, 274: **G. Tindall, D. Shi**, նշված աշխ., էջ, 988:

¹⁶⁴ Տե՛ս **C. Kendrick**, նշված աշխ., էջ, 160:

* Թամսիթի հավաստմամբ Վիլսոնը իր նախընտրական ճառերում երբեք չի օգտագործել այս կարգախոսը. տե՛ս **J. Tumulty**, Woodrow Wilson: As I Know Him, Garden City- New York, "Doubleday, Page & Company," 1921, p. 185:

¹⁶⁵ **Է. Իվանյան**, նշված աշխ., էջ, 106-107: Տե՛ս նաև **G. Tindall, D. Shi**, նշված աշխ., էջ, 989:

Մեր կարծիքով՝ նախագահ Վիլսոնի քայլերը հիմնավորել միայն քաղաքական և աշխարհաքաղաքական դրդապատճառներով, արդարացի չէ: Նախագահ Վիլսոնը, լինելով հոգևորականի ընտանիքից (նրա հայրը պրեսբիտերական քահանա էր), ուներ բարոյական խոր համոզմունքներ և իր քայլերում առաջնորդվում էր նաև այդ համոզմունքներով: Այդ իսկ պատճառով, իր հայտարարած չեզոքության քաղաքականության համաձայն՝ ձգտելու էր մինչև վերջին պահը խուսափել հակամարտությանն անմիջական մասնակցությունից: Նախագահին իր քարտուղար Ջոզեֆ Թամսլիին (Joseph Tumulty)* ասել էր. «Եթե իմ վերընտրումը կախված է Միացյալ Նահանգների պատերազմին մասնակցելու իմ որոշումից, ապա ես չեմ ուզում նախագահ լինել»¹⁶⁶: Բարոյական համոզմունքների առկայությունը նպաստում էր նրան, որ վիլսոնյան դիվանագիտությունը հաճախ հակվում էր հակամարտող կողմերից հավասարապես «հեռավորություն» պահելու դիրքորոշմանը: Այս առիթով Լլոյդ Ջորջը նշում էր, որ Միացյալ Նահանգների նախագահի պահվածքը պատերազմող կողմերի հանդեպ այն աստիճան դիտավորյալ «ոչ սիրալիր» է, որ նրանցից յուրաքանչյուրը կասկածում էր նրան թշնամանքի մեջ¹⁶⁷:

Դրա հետ մեկտեղ օր օրի ակնհայտ էր դառնում մեկ այլ հանգամանք ևս. Միացյալ Նահանգները, ի դեմս նախագահ Վիլսոնի, այլևս չէր կարող պահպանել իր չեզոքությունը: Հասկանալով, որ այլևս անհնար է միջնորդական դիվանագիտությամբ կանգնեցնել պատերազմը, 1916 թ. վերջին նախագահ Վիլսոնը որոշեց փոխել ամերիկյան չեզոքության քաղաքականության շեշտադրումը: Նա անցավ «հրապարակային դիվանագիտության»: Վիլսոնի հերթական նախաձեռնության հիմնական արտահայտումը եղավ 1916 թ. դեկտեմբերի 18-ի հայտագիրը՝ ներկայացված հակամարտող կողմերին, որով նա պահանջում էր նրանցից հայտարարել իրենց ռազմական նպատակները. «Աշխարհը կարող էր միայն գուշակել, թե ինչպիսի՞ վերջնական արդյունքները կամ ինչպիսի՞ երաշխիքների առկայությունը, կամ էլ քաղաքական ինչպիսի՞ փոփոխությունները և ռազմական հաջողությունների ո՞ր մակարդակը կարող են հանգեցնել պատերազմի ավարտին»¹⁶⁸: Այսու՝ նախագահ Վիլսոնը փորձում էր հասկացնել, որ ինքը մտադիր է շարունակելու պատերազմի դադարեցման և հետպատերազմյան խաղաղության կարգավորման ամերիկյան ծրագիրը:

* Ջոզեֆ Պատրիկ Թամսլի (Joseph Patrick Tumulty). Վուդրո Վիլսոնի անձնական քարտուղարը, երբ վերջինիս Նյու Ջերսիի նահանգապետ էր և երկրի նախագահ (1911-1921 թթ.):

¹⁶⁶ J. Tumulty, նշված աշխ., էջ 249:

¹⁶⁷ Д. Ллойд Джордж, Военные Мемуары, тт. 1-2, с. 444.

¹⁶⁸ FRUS 1916, Supplement, The World War, "Government Printing Office", 1929, p. 97-99. Տե՛ս նաև C. Kendrick, նշված աշխ., էջ, 164:

Ամերիկյան ծրագիրը դեռևս 1915 թ. աշնանը մշակվել էր գնդապետ Ջաուզի կողմից և արժանացել էր նախագահ Վիլսոնի հավանությանը: Այն կոչվում էր «խաղաղության նախագիծ»: Նպատակն էր վերջ դնել Աշխարհամարտին և հաստատել կայուն խաղաղություն: Ըստ ծրագրի՝ Միացյալ Նահանգները Անտանտի հետ նախնական բանակցություններից հետո պետք է հանդես գար խաղաղության համաժողովի հրավիրման նախաձեռնությամբ: Եթե Գերմանիան հրաժարվեր համաժողովին մասնակցելուց կամ էլ մերժեր խաղաղության առաջարկը, ապա Միացյալ Նահանգները կմտներ պատերազմի մեջ հոգուտ դաշնակիցների¹⁶⁹:

Անտանտի հետ բանակցություններում Միացյալ Նահանգները նախատեսում էր.

- «Ծովերի ազատության» սկզբունքի հաստատում: Այն պետք է երաշխավորվեր հատուկ համաձայնագրով, որը կնախատեսեր սկզբունքը խախտող երկրի նկատմամբ պատժամիջոցների կիրառում:
- «Սարինիզմի» (ռազմածովային նկրտումների) դադարեցում: Սա ենթադրում էր Մեծ Բրիտանիայի ռազմածովային հզորության թուլացում:
- Գերմանիան պետք է հրաժարվեր բռնազավթած (անեքսիայի ենթարկած) տարածքներից, որի դիմաց կստանար փոխհատուցում Եվրոպայից դուրս՝ Փոքր Ասիայում և Աֆրիկայում, այսինքն՝ ի հաշիվ բրիտանական, ֆրանսիական և ռուսական տիրույթների¹⁷⁰:

Սա նշանակում էր ուժեղ Գերմանիայի պահպանում, որին Միացյալ Նահանգները մտադրված էր օգտագործել պատերազմից հետո ի հակակշիռ Անտանտի: Ամերիկյան նախագծի իրագործումը փաստորեն պետք է պահպաներ ուժերի հավասարակշռությունը Եվրոպայում, ինչը կամրապնդեր Միացյալ Նահանգների դիրքերը հետպատերազմյան խաղաղության հաստատման ճանապարհին:

1915 թ. դեկտեմբերին գնդապետ Ջաուզն ուղևորվեց Եվրոպա՝ հակամարտող կողմերի հետ քննարկելու խաղաղության հաստատման ամերիկյան նախագիծը: Լոնդոնում Էդուարդ Ջաուզը հանդիպեց բրիտանական կողմի թերահավատ վերաբերմունքին ամերիկյան նախագծի հանդեպ: Դա թերևս կարելի է բացատրել նրանով, որ Մեծ Բրիտանիան այդ ժամանակ վստահ էր, որ Անտանտի ուժերն ի վիճակի են առանց Միացյալ Նահանգների օգնության ջախջախելու Գերմանիային: Լոնդոնում կար նաև այն գիտակցումը, որ Միացյալ Նահանգների մասնակցության դեպքում նրանք

¹⁶⁹ Архив полковника Хауза, т. 2, с. 67-68.

¹⁷⁰ **З. Гершов**, "Нейтралитет" США в годы Первой Мировой войны, с. 121. Տե՛ս նաև Архив полковника Хауза, т. 2, с. 66.

ստիպված կլինեն հոգուտ ամերիկյան գործընկերոջ հրաժարվել հետպատերազմյան ձեռքբերումների զգալի մասից¹⁷¹:

Արժանանալով Մեծ Բրիտանիայի թերահավատ վերաբերմունքին՝ 1916 թ. հունվարի 20-ին Էդուարդ Յաուզը մեկնեց Գերմանիա: Այնտեղ նա հանդիպում ունեցավ գերմանական քաղաքական վերնախավի հետ և հանդգնեց, որ Գերմանիան նույնպես չի պատրաստվում ընդունել ամերիկյան նախագծում առաջարկված պայմանները: Գերմանիան այդ ժամանակ ևս վստահ էր, որ կարող է պարտության մատնել Անտանտին¹⁷²:

Բեռլինից գնդապետ Յաուզն ուղևորվեց Փարիզ: Այնտեղ նրան հաջողվեց հասնել որոշակի հաջողությունների: Ֆրանսիական կողմը տվեց իր հավանությունը ամերիկյան նախագծին և դրական արտահայտվեց խաղաղության համաժողովի հրավիրման գաղափարի վերաբերյալ: Ֆրանսիայի նման դիրքորոշումը թերևս կարելի է բացատրել վերջինիս ծանր կացությամբ. Ֆրանսիան իր վրա էր կրում Արևմտյան ճակատի ողջ ծանրությունը, և դա նրան ավելի հանդուրժող էր դարձրել: Ֆրանսիական կողմը համաձայնեց ամերիկյան նախագծին, սակայն որոշակի նախապայմաններով. Միացյալ Նահանգները պետք է հանդես գար խաղաղության համաժողովի հրավիրման առաջարկով միայն այն ժամանակ, երբ դաշնակից երկրներն իրենք կտեսնեին դրա անհրաժեշտությունը¹⁷³:

Ավարտելով բանակցությունները Ֆրանսիայում՝ Էդուարդ Յաուզը վերադառնում է Լոնդոն, որտեղ մթնոլորտն արդեն փոխված էր՝ Գերմանիայի մերժման և Ֆրանսիայի առաջ քաշած նախապայմանների հետևանքով: Բրիտանական կողմը լավ գիտակցում էր, որ այս պարագայում ոչինչ չի կորցնում. Գերմանիան հրաժարվել էր ընդունել ամերիկյան նախագիծը, իսկ նախապայմանների առկայության դեպքում Անտանտի երկրներն իրենք էին որոշելու, թե երբ օգտվեն ամերիկյան «ծառայություններից»:

1916 թ. փետրվարի 17-ին Էդուարդ Յաուզը և Էդուարդ Գրեյը մշակեցին համաձայնագրի տեքստը, ըստ որի՝ Անտանտի համար բարենպաստ պահ լինելու դեպքում Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի կառավարությունները կդիմեն Միացյալ Նահանգների կառավարությանը՝ խաղաղության համաժողով հրավիրելու առաջարկով: Միայն այն դեպքում, եթե Գերմանիան հրաժարվի մասնակցել այդ համաժողովին, Միացյալ Նահանգները կմտնի պատերազմի մեջ: Համաժողովի կայացման դեպքում այն պետք է ապահովեր բարենպաստ պայմաններ դաշնակիցների համար: Եթե Գերմանիայի մեղքով համաժողովը հաջողություն չունենար, Միացյալ Նահանգները պետք է լքեր

¹⁷¹ **З. Гершов**, "Нейтрлитет" США в годы Первой Мировой войны, с. 121.

¹⁷² Архив полковника Хауза, т. 2, с. 100.

¹⁷³ Նույն տեղում, էջ 125:

համաժողովը և պատերազմ հայտարարելու Գերմանիային: Համաժողովի հրավիրման ժամանակը պետք է համատեղ որոշելին Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան¹⁷⁴:

Այս համաձայնագրին վիճակված չէր իրականանալ: 1916 թ. գարնանը, երբ ռազմաճակատում իրավիճակը դասավորվել էր հոգուտ Անտանտի, գնդապետ Հաուզը Էդուարդ Գրեյին ուղարկած հեռագրով փորձեց հիշեցնել, որ ժամանակն է դիմել Միացյալ Նահանգներին համաժողովի հրավիրման առաջարկով: Բրիտանական կողմը մերժեց Էդուարդ Հաուզի առաջարկը՝ պատճառաբանելով, որ այն դեռևս վաղաժամ է և, բացի այդ, Մեծ Բրիտանիան չի կարող գործել առանց Ֆրանսիայի համաձայնության: Ինչ վերաբերում է ֆրանսիական կառավարությանը, ապա այն մերժել էր Էդուարդ Հաուզի առաջարկը¹⁷⁵: Ֆրանսիան հայտարարել էր, որ Անտանտի երկրները շահագրգռված չեն Միացյալ Նահանգների և Գերմանիայի միջև պատերազմի բռնկումով: Իրենց բավարար էր միայն ամերիկյան համակրանքը, և իրենք այն արդեն ունեն¹⁷⁶:

Էդուարդ Հաուզն ըմբռնեց, որ Անտանտի երկրները դեմ էին խաղաղության համաժողով հրավիրվելուն և չէին ցանկանում, որ Միացյալ Նահանգները միանա պատերազմին: Այսպիսով՝ 1916 թ. գարնան «Հաուզ-Գրեյ» համաձայնագիրը չիրականացավ: Այս դեպքերից 9 տարի անց Էդուարդ Հաուզը գրում էր. «Դաշնակիցները ստանում էին մեզանից փող, պարենամթերք, զենք, զինամթերք և միևնույն ժամանակ խանգարում էին մեր նավերին մուտք գործել չեզոք նավահանգիստներ... Նրանք հավանաբար կարծում էին, որ մտնելով պատերազմի մեջ՝ մենք չենք կարող տալ ավելին, քան մինչ այդ: Բացի դրանից՝ նրանք ենթադրում էին նաև, որ ավելի լավ է պահպանել գոյություն ունեցող կարգավիճակը, քան թույլատրել մեր մասնակցությունը պատերազմին և ընդունել մեր առաջարկած խաղաղության պայմանները»¹⁷⁷:

Ինչևէ, վերադառնալով «Հաուզ-Գրեյ» համաձայնագրին՝ նշենք, որ այս համաձայնագիրն արժանացավ նախագահ Վիլսոնի հավանությանը: Միակ շտկումը, որ նա արեց, դա «հնարավոր է» բառի ավելացումն էր պայմանագրի տեքստի այն հատվածներում, որտեղ խոսվում էր Միացյալ Նահանգների պատերազմի մեջ մտնելու մասին¹⁷⁸:

¹⁷⁴ **T. Paterson**, նշված աշխ., էջ 269:

¹⁷⁵ **Д.Ллойд Джордж**, Военные Мемуары, тт. 1-2, с. 465-466. Տե՛ս նաև Архив полковника Хауза, т. 2, с. 218-219:

¹⁷⁶ "Le Temps" 26 Février, 1916. Տե՛ս **З. Гершов**, "Нейтрлитет" США в годы Первой Мировой войны, с. 143.

¹⁷⁷ Архив полковника Хауза, т. 2, с. 220.

¹⁷⁸ Նույն տեղում, էջ 154:

Նույնիսկ այս պարագայում, երբ դեռևս քննարկման փուլում էր Միացյալ Նահանգների մասնակցությունը պատերազմին, նախագահ Վիլսոնը շարունակում էր դրսևորել իրեն հատուկ զգուշավորություն: Նման պահվածքը թերևս ուներ իր հիմնավորումները: Դիվանագիտական և արտաքին քաղաքական տեսանկյունից նախագահ Վիլսոնը չէր ցանկանում իրեն պարտավորեցնել և սահմանափակումների մեջ դնել իր գործողությունները որևէ փաստաթղթի ստորագրումով: Իհարկե, ակնառու էր Միացյալ Նահանգների բարյացակամ վերաբերմունքը Անտանտի նկատմամբ, սակայն քանի դեռ այնքան էլ հստակ չէր, թե հակամարտող ո՞ր խմբավորման օգտին կընթանան ռազմական գործողությունները, Միացյալ Նահանգների հետագա ռազմավարական նպատակների իրականացման համար ցանկալի չէր պարտավորվել որևէ պայմանագրի ստորագրումով: Այն կարող էր հավելյալ խոչընդոտներ ստեղծել արտաքին քաղաքական դաշտում ազատ մանևրելու համար:

Ներքաղաքական դաշտում նախագահ Վիլսոնը նույնպես ստիպված էր ցուցաբերել զգոնություն: Առջևում նախագահական ընտրություններն էին, և նրան անհրաժեշտ էր ամերիկյան ազգի վստահության քվեն: Այս փուլում ամերիկյան հասարակական կարծիքը, ինչպես վերը նշվեց, դեռևս պատրաստ չէր պատերազմի մասնակցությանը, իսկ դրան առնչվող յուրաքանչյուր կտրուկ որոշում կամ հայտարարություն կարող էր կործանարար հետևանքներ ունենալ նախագահ Վիլսոնի քաղաքական կարիերայի համար:

Նախագահ Վիլսոնի այս զգուշավորությունը պայմանավորված էր նաև նրա բարոյական սկզբունքներով: Նա լավ գիտակցում էր, որ Միացյալ Նահանգների մասնակցությունը պատերազմին, էական չէ թե ում կողմից, կհանգեցնի տվյալ խմբավորման զգալի ուժեղացմանը: Մարդասիրական և խաղաղասիրական մղումներից ելնելով՝ նախագահ Վիլսոնը ձգտում էր հասնել հարատև խաղաղության հաստատմանը եվրոպայում: Սա, ըստ նրա, հնարավոր էր միայն ուժերի հավասարակշռության պարագայում: Պատերազմը եթե ավարտվեր որևէ կողմի ակնառու առավելությամբ, կարող էր խախտել այդ հավասարակշռությունը: Ամերիկայի ուղղակի միջամտումը կողմերից մեկին կտար այդ առավելությունը և Վուդրո Վիլսոնի պատկերացրած հարատև խաղաղությունն այլևս ի չիք կդառնար: Ահա այս հանգամանքի գիտակցումը ևս ստիպում էր նախագահ Վիլսոնին զգուշանալ պատերազմին ուղղակի մասնակցություն ցուցաբերելու հարցում:

Իհարկե մոտեցումներից որևէ մեկին առաջնություն տալը կպարզեցներ հարցի էությունը: Սակայն «առաջնորդի» կողմից վարվող քաղաքականությունը հիմնականում պայմանավորված է լինում թե՛ ներքաղաքական, թե՛ արտաքին քաղաքական, և թե՛

անձնական որոշակի հանգամանքներով: Նախագահ Վիլսոնը, այս պարագայում, բացառություն չէր, ուստի կոնկրետացնել, թե նրա ցուցաբերած զգուշավորությունն ինչ հանգամանքներով էր պայմանավորված, կարծում ենք, սխալ կլինի: Մեր կարծիքով դա ուղղակի ներքին և արտաքին քաղաքական իրավիճակների սթափ գնահատման դրսևորում էր, որը լրացվում էր նախագահ Վիլսոնի անձնական որակներով:

Նախագահական ընտրություններից հետո, ինչպես վերը նշվեց, նախագահ Վիլսոնը փոխեց ամերիկյան չեզոքության քաղաքականության շեշտադրումը՝ անցնելով «հրապարակային դիվանագիտության»: 1917 թ. հունվարի 22-ին նախագահ Վիլսոնը հանդես եկավ Միացյալ Նահանգների Կոնգրեսի պալատների միավորված նիստում: Իր ելույթում նա շարադրեց «ամերիկյան խաղաղության» գլխավոր պայմանը՝ «խաղաղություն առանց հաղթանակի»¹⁷⁹: Ըստ էության՝ Կոնգրեսի ամբիոնից նախագահ Վիլսոնը հայտարարեց Յին աշխարհի «ժողովրդավարական» այլընտրանքը ղեկավարելու ձգտման մասին, կամ էլ, ինչպես Էդուարդ Յաուզն է արտահայտվել. «Նա (Վուդրո Վիլսոնը- Կ.Գ) ցանկանում էր իր ձեռքը վերցնել մարդկության բարոյական կառավարումը»¹⁸⁰: Վուդրո Վիլսոնի ելույթը ենթադրում էր «Ամերիկանիզմ ողջ աշխարհի համար»: Ելույթի բովանդակությունը ցույց էր տալիս, որ նախագահը փորձել էր ներկայացնել իր պատկերացումները միջազգային հարաբերությունների ցանկալի սկզբունքների վերաբերյալ՝ շեշտելով ազգերի ինքնորոշման, բռնությունից հրաժարման և այլ նման սկզբունքների կիրառման անհրաժեշտությունը: Վուդրո Վիլսոնը հստակ ընդգծում էր, որ ինքը կողմ է արդար աշխարհակարգին՝ հիմնված ամերիկյան պետական համակարգի կառավարման սկզբունքների, ամերիկյան ազգի քաղաքական հայացքների և կենսակարգի վրա¹⁸¹: Ավելի ուշ հարցազրույցի ժամանակ նախագահն իր արտահայտած առաջարկները համադրեց «Մոնրոյի դոկտրինայի» ուղղակի ընդլայնման հետ¹⁸²:

Ինչպես տեսնում ենք, վիլսոնյան ելույթի ակնառու բարոյականությունը, որը կոչ էր անում հրաժարվել հաղթանակից հանուն խաղաղության և Նոր աշխարհի կառուցման, ուղեկցվում էր նաև այդ աշխարհի կառուցվածքային ծրագրով: Սակայն չի կարելի նաև չնկատել տվյալ ծրագրի ամերիկյան ուղղվածությունը՝ աշխարհի վրա տարածելու

¹⁷⁹ President Wilson's Address to the US Senate, on Essential Terms of Peace in Europe, Delivered on January 22, 1917, President Wilson's State Papers and Addresses, ed. by **A. Shaw**, p. 352. Տե՛ս նաև **D. Smith**, Robert Lansing and American Neutrality 1914-1917, Los Angeles, "University of Carolina Press", 1958, p. 151-152:

¹⁸⁰ Архив полковника Хауза, т. 2, с. 224.

¹⁸¹ President Wilson's Address to the US Senate, on Essential Terms of Peace in Europe, Delivered on January 22, 1917, President Wilson's State Papers and Addresses, ed. by **A. Shaw**, p. 352. Տե՛ս նաև **A. Link**, Wilson, vol. 5, Campaigns for Progressivism and Peace, 1916-1917. Princeton, "Princeton University Press", 1965, p. 265-268:

¹⁸² President's Own Comment On His Speech to Senate, "The New York Times", January 23, 1917, <http://spiderbites.nytimes.com/>

ինքնիշխան հասարակության ամերիկյան հարացույցը (մոդել): Ինչը և ըստ գնդապետ Յաուզի՝ պետք է արտահայտեր դաշնակիցների դժգոհությունը¹⁸³: Այդպես էլ եղավ: Մեկնաբանելով նախագահ Վիլսոնի խաղաղարար նախաձեռնությունը՝ Վաշինգտոնում Ռուսաստանի դեսպան Գեորգի Բախմետևը հեզմանքով այն որակում է որպես եվրոպայի խաղաղարարի փայլուն տիտղոսով պատմության մեջ մտնելու փորձ: Անդրադառնալով նախագահ Վիլսոնի անձին՝ նույն Բախմետևը նշում էր, որ նա չափազանց փառանդ, սնապարծ և հիշաչար անձնավորություն է: Շարունակելով իր հեզմական երանգը՝ նրան անվանում էր նաև «համայն մարդկության ինքնահռչակ նախագահ» և «Նոր ժամանակների Դոն Զիշոտ»¹⁸⁴:

Նախագահի ելույթի վերաբերյալ բացասաբար արտահայտվեց նաև բրիտանական կողմը: Մեծ Բրիտանիայի վարչապետ Լլոյդ Ջորջի կարծիքով, առանց դաշնակիցների հաղթանակի ոչ մի հույս չէր կարող լինել նախագահ Վիլսոնի առաջարկած գաղափարների իրականացման համար: Իսկ «խաղաղություն առանց հաղթանակի» կարգախոսը դաշնակիցների համար վիրավորական էր, իսկ Գերմանիայի համար՝ ուղղակի ծիծաղելի¹⁸⁵:

Ինչպես տեսնում ենք, գնդապետ Յաուզը չսխալվեց իր ենթադրություններում, և նախագահ Վիլսոնի արտաքին քաղաքական ակտիվությունը 1917 թ. հունվարի 22-ի ելույթով հանդերձ առաջացրեց Անտանտի երկրների ծայրահեղ բացասական վերաբերմունքը: Նրանք չէին ցանկանում տեսնել Վուդրո Վիլսոնին հետպատերազմյան աշխարհակարգի սկզբունքները սահմանողի դերում, ուստի և ձգտում էին, որպեսզի Միացյալ Նահանգները խաղաղության պայմանների հաստատմանը մասնակցություն չունենան:

Նախագահ Վիլսոնը, զարգացնելով իր չեզոքության հայեցակարգը, բացահայտ արտահայտեց «անաչառ խաղաղության» հաստատման գործը ղեկավարելու իր հավակնությունների մասին: Սակայն հնարավոր էր արդյոք նման պայմաններում այդ առաջարկները կյանքի կոչել: Ամենայն հավանականությամբ ոչ, քանի որ միջազգային հարաբերություններում եվրոպական գլխավոր դերակատարները դեռևս հանդգլած էին, որ «անաչառ խաղաղության» կարելի է հասնել միայն թշնամու նկատմամբ հաղթանակ տանելով¹⁸⁶:

¹⁸³ Архив полковника Хауза, т. 2, с. 300-301.

¹⁸⁴ Ст'ю Россия и США: Дипломатические отношения 1900-1917, под ред. А.Н. Яковлева, Москва, "МФД", 1999, с. 639, 644.

¹⁸⁵ **S. Kerneck**, Distractions of Peace During the War and Peace: The Lloyd George Government's Reaction to Woodrow Wilson (December, 1916-November, 1918), Philadelphia, "The American Philos. Soc.", 1975, p. 31-32. Տե՛ս նաև **Д.Ллойд Джордж**, Военные Мемуары, т-3, Москва, "Соцэкгиз", 1935, с. 400:

¹⁸⁶ **D. Smith**, նշված աշխ., էջ 151-152:

Այս պարագայում թվում է, թե նախագահ Վիլսոնը կվերանայի իր որդեգրած քաղաքական ուղղվածությունը՝ դաշնակիցների վերաբերմունքն իր առաջարկների հանդեպ փոքր-ինչ մեղմացնելու համար: Սակայն նա ցուցաբերեց քաղաքական համառություն և չիրաժարվեց իր բռնած ուղուց: Վուդրո Վիլսոնն անդրդվելի մնաց նույնիսկ այն ժամանակ, երբ Միացյալ Նահանգները, խզելով դիվանագիտական հարաբերությունները Գերմանիայի հետ, հայտնվեց վերջինիս պատերազմ հայտարարելու իրողության առջև¹⁸⁷:

1917 թ. հունվարի 9-ին Գերմանիան հայտարարեց ստորջրյա անսահմանափակ պատերազմ՝ հուսալով, որ կստիպի Անտանտին հանձնվել, նախքան Միացյալ Նահանգները կմտնի պատերազմի մեջ¹⁸⁸:

1917 թ. հունվարի 31-ին Վաշինգտոնում Գերմանիայի դեսպան Յոհան Բերնսթորֆը պետդեպարտամենտին տեղեկացրեց Գերմանիայի հայտարարության մասին¹⁸⁹ : Ամերիկյան կողմի պատասխանն իրեն սպասեցնել չտվեց. փետրվարի 3-ին Միացյալ Նահանգները խզեց դիվանագիտական հարաբերությունները Գերմանիայի հետ¹⁹⁰ : Պետքարտուղար Ռոբերտ Լանսինգը հայտարարեց, որ այս գործողությունները հավասարավել են «պատերազմի հայտարարման իրավիճակի», իսկ գնդապետ Յաուզը եզրակացրեց, որ «մենք արդեն պատերազմի մեջ ենք և մենք նույնպես պետք է գործի դնենք մեր բոլոր միջոցները Գերմանիայի դեմ»¹⁹¹:

Թվում էր, թե Միացյալ Նահանգները այլևս դանդաղելու պատճառ չունի, սակայն նախագահ Վիլսոնը արեց չեզոքությունը պահպանելու վերջին քայլը. 1917 թ. մարտի 5-ին երդման արարողության իր խոսքում հստակ արտահայտեց Միացյալ Նահանգների դիրքորոշումը, նշելով. «Ծովերում մեզ լուրջ վնասներ են հասցրել, սակայն մենք չենք ցանկացել պատասխան վնաս կամ ցավ հասցնել՝ միշտ գիտակցելով, որ պահպանում ենք չեզոքություն՝ պաշտպանելով մեր շահերը, որոնք վեր են պատերազմի անցողիկ խնդիրներից»¹⁹²: Նախագահը չբացառեց նաև, որ հանգամանքների բերումով Միացյալ Նահանգները իր շահերը պաշտպանելու համար կարող է ներգրավվել պատերազմի մեջ: Սակայն ոչինչ, ըստ նախագահի, չէր կարող ստիպել Միացյալ Նահանգներին հրաժարվելու իր նպատակներից և ձգտումներից¹⁹³: Այլ խոսքով ասած՝ Միացյալ

¹⁸⁷ Գերմանա-ամերիկյան հարաբերությունների զարգացման և Վիլսոնի 1917 թ. գործողությունների մասին մանրամասն տե՛ս **В. Шацлло**, Расчет и безрассудство, с. 275-289: Տե՛ս նաև, **A. Link**, Woodrow Wilson: Revolution, War, and Peace, Arlington Heights, "AHM Cor.", 1979, p. 64-71:

¹⁸⁸ **Э. Людендорф**, Мои воспоминания о войне 1914—1918 гг., пер. с 5-го немецкого издания, под ред. А. Свечина, т. 1, Москва, "Гос. Изд.", 1923, эл. с. 249.

¹⁸⁹ **R. Billington**, նշված աշխ., էջ 149:

¹⁹⁰ The Presidency A to Z, ed. by **M. Nelson**, Washington, "Congressional Quarterly Inc.", 1998, p. 523.

¹⁹¹ **C. Kendrick**, նշված աշխ., էջ 168:

¹⁹² The Second Inaugural Address of President Wilson, President Wilson's Great Speeches and other History Making Documents, Chicago, "Station & Van Vliet Co.", 1917, p. 166.

¹⁹³ Եւոյն տեղում էջ 177:

Նահանգների ներգրավումը պատերազմին նախագահ Վիլսոնը բացատրում էր միայն հանգամանքների դասավորումով, որոնք իր պատկերացմամբ չեն առնչվելու ռազմավարական նկրտումների հետ:

Հանգամանքները չուշացան: Դրանում իր նշանակալի դերն ունեցավ հայտնի «Ցիմմերմանի հայտագիրը»^{*}, որը բացահայտեց Գերմանիայի ագրեսիվ տրամադրվածությունը Միացյալ Նահանգների նկատմամբ¹⁹⁴:

Միացյալ Նահանգների կառավարությունը այլևս այլընտրանք չուներ և հարկադրված էր կտրուկ երանգ հաղորդել իր գործողություններին: Ապրիլի 2-ին տեղի ունեցավ կոնգրեսի համատեղ արտակարգ նիստ, որի արդյունքում Միացյալ Նահանգները պատերազմ հայտարարեց Գերմանիային: «Մենք մտնում ենք պատերազմի մեջ,- հայտարարեց նախագահ Վիլսոնը,- որտեղ արդեն մղվել ենք ոչ մեր կամքով, քանզի չկան այլ միջոցներ մեր իրավունքները պաշտպանելու... Գերմանիայի կողմից տարվող այժմյան ստորջրյա պատերազմը, պատերազմ է մարդկության դեմ, բոլոր երկրների դեմ: Մարտահրավեր է նետված ողջ մարդկությանը: Յուրաքանչյուր ազգ ազատ է որոշելու՝ ինչպես ընդունել այդ մարտահրավերը: Մեր գործողությունների հիմքը պետք է հանդիսանա ոչ թե վրեժը կամ մեր ազգի ուժի դրսևորումը, այլ մարդու իրավունքների պաշտպանությունը: Այսօր, երբ խոսքը ողջ աշխարհում խաղաղության հաստատման և ազգերի ազատության մասին է, չեզոքությունը այլևս հնարավոր և ցանկալի չէ... Միացյալ Նահանգները կպայքարի ժողովրդավարության հաստատման և բոլոր նրանց իրավունքների պաշտպանության համար, ովքեր գտնվում են իրենց իշխանությունների ճնշման տակ: Ազատության կարիք ունի նաև գերմանական ազգը, որը ներքաշվել է պատերազմի մեջ իր իսկ իշխանության աշխարհանված նկրտումների արդյունքում... Մենք կպայքարենք նաև ազատ ազգերի այնպիսի դաշինք ստեղծելու համար, որը կապահովի բոլոր ազգերի խաղաղությունը և անվտանգությունը և ի վերջո ողջ աշխարհը կդարձնի ազատ... Մենք պատրաստ ենք ընդունելու այդ մարտահրավերը աշխարհում ժողովրդավարության և քաղաքական ազատության հաստատման համար: Ամերիկյան այլ ճանապարհ չունի, և մեզ հետ է Աստված»¹⁹⁵:

* 1917 թ. հունվարի 16-ին Գերմանիայի արտաքին գործերի նախարար Արթուր Ցիմմերմանը (Arthur Zimmermann) Մեքսիկայում գերմանական դեսպանորդին ուղարկեց գաղտնի հրահանգ, որով նախատեսվում էր բանակցություններ սկսել Մեքսիկայի կառավարության հետ Միացյալ Նահանգների դեմ Գերմանիայի հետ ռազմական դաշինք կնքելու համար: Նախատեսվում էր այդ դաշինքին մասնակից դարձնել նաև ճապոնիային: «Ցիմմերմանի հայտարարագիրը» որսաց անգլիական հետախուզությունը և փոխանցեց Միացյալ Նահանգների կառավարությանը: Տե՛ս *Дипломатический словарь, под ред. А. Громыко, т. 3, с. 557*:

¹⁹⁴ **A. Brinkley**, *American history: a survey*, vol. 2, New York, "McGraw-Hill", 1995, 962 p. Տե՛ս նաև *The Presidency A to Z*, p. 523:

¹⁹⁵ *Address to Congress recommending declaration of a state of war with Germany, April 2, 1917, President Wilson's Foreign policy, Messages, Addresses, Papers*, ed. by **J. Scott**, New York, "Oxford University Press", 1918, p. 274-287. (այսուհետև *President Wilson's Foreign policy*). Տե՛ս նաև **D. Henneth**, *Don't Know Much*

Ապրիլի 6-ին նախագահ Վիլսոնը ստորագրեց Գերմանիային պատերազմ հայտարարելու հռչակագիրը^{196*}:

2.2 ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՅԵՆՔԸ ՎՈՒԴՐՈ ՎԻՍՈՆԻ «14 ԿԵՏԵՐՈՒՄ»

Միացյալ Նահանգները մասնակցեց Առաջին աշխարհամարտին դրա բռնկվելուց 32 ամիս անց: Նախագահ Վիլսոնի այս որոշմամբ «Մոնրոյի դոկտրինան» իր ուժը կորցրեց կամ ավելի ճիշտ կլինի ասել վերամեկնաբանվեց՝ կախված ժամանակի հրամայականից և Միացյալ Նահանգների հնարավորությունների աստիճանից: Միացյալ Նահանգները, համաձայն «իրեն ի վերուստ կամխորոշված առաքելության», ամերիկյան աշխարհամասից բացի ստանձնեց նաև ողջ աշխարհում անվտանգության հաստատման ու պահպանման պատասխանատվությունը և ամերիկյան ժողովրդավարության տարածման խնդիրը: «Միացյալ Նահանգների դերը ոչ թե մեր եսասիրության, այլ մեր մեծության ապացույցն է», պնդում էր նախագահ Վիլսոնը, «Իսկ եթե դա այդպես է, ապա Ամերիկան իրավունք չունի պահելու իր արժեքները միայն իր համար»¹⁹⁷: Ամերիկյան անվտանգությունն այլևս անբաժան էր դառնում մարդկության անվտանգությունից, հետևաբար Միացյալ Նահանգներն իր պարտքն էր համարում հակադրվել բռնության դրսևորմանը աշխարհի ցանկացած վայրում¹⁹⁸: Այս կապակցությամբ 1917 թ. հունվարին նախագահ Վիլսոնը հայտարարեց, որ ամերիկյան սկզբունքները ողջ մարդկության սկզբունքներն են: Նա առաջարկեց նաև աշխարհի բոլոր ազգերին ընդունել նախագահ Մոնրոյի «Դոկտրինան»՝ որպես համայն մարդկության հայեցակարգ¹⁹⁹:

Միացյալ Նահանգների մուտքն Առաջին աշխարհամարտ հնարավոր և մոտալուստ դարձրեց դաշնակիցների հաղթանակը: Այս քայլով նախագահ Վիլսոնը փորձեց շտկել գոյություն ունեցող նախորդ մինչպատերազմյան աշխարհակարգը, որի համապատկերում անդրովկիանոսյան պետությանը վերապահված էր լոկ երկրորդական դերակատարություն: Ըստ այդմ՝ նախագահ Վիլսոնը փորձեց Միացյալ Նահանգների

About History, Everything You Need to Know About American History But Never Learned, New York, "Avon Books" 1990, p. 245. Տե՛ս նաև **C. Kendrick**, նշված աշխ., էջ, 169:

¹⁹⁶ **W. LaFeber**, նշված աշխ., էջ 98. Տե՛ս նաև **R. Billington**, նշված աշխ., էջ 150:

* Հռչակագրի տեքստը տե՛ս The Declaration of War with Germany, President Wilson's Great Speeches and other History Making Documents, p. 23:

¹⁹⁷ President Wilson's Address to Confederate Veterans, Washington, June 5, 1917, President Wilson's State Papers and Addresses, ed. by **A. Shaw**, p. 408-411.

¹⁹⁸ **Г. Киссинджер**, նշված աշխ., էջ 36:

¹⁹⁹ President Wilson's Address to the US Senate, on Essential Terms of Peace in Europe, January 22, 1917, President Wilson's State Papers and Addresses, ed. by **A. Shaw**, p. 355-356. Տե՛ս նաև **А. Уткин**, Американская империя, Москва, "ЭКМО", 2003, с. 17:

դերակատարությանը հետպատերազմյան աշխարհակարգի հաստատման գործին նոր որակ հաղորդել՝ ուժերի հավասարակշռության եվրոպական մեխանիզմները համադրելով ուժերի միավորման սկզբունքին²⁰⁰։ Նախագահ Վիլսոնը կարողացավ մեկտեղել իր բարոյական հիմնավորումները, «ամերիկյան առաքելության» և ազգային անվտանգության իրողությունները։ Հատկանշական է, որ ներգրավվելով պատերազմի մեջ՝ Միացյալ Նահանգները միացավ հակազերմանական միավորմանը ընկերակցող (ասոցիատիվ^{*}) անդամի կարգավիճակով։ Այն թույլ էր տալիս վերջինիս առանց փոքրինչ վտանգելու «ազգային արժանապատվությունը» պահպանել գործողությունների լիիրավ ազատություն համաշխարհային թատերաբեմում։ Միացյալ Նահանգներն իրավաբանորեն ազատ էր մնում միջդաշնային փոխադարձ պարտականություններից²⁰¹։ Ջինված ուժեր ուղարկելով եվրոպա՝ Միացյալ Նահանգների նախագահը հրահանգեց ամերիկյան ռազմական միավորումների հրամանատար Ջոն Պերշինգին (John Pershing) պահպանել ամերիկյան զորամասերի լիակատար ինքնուրույնությունը։ Լոնդոն մեկնելուց առաջ ամերիկյան ռազմածովային շտաբի ղեկավար ծովակալ Ուիլյամ Բենսոնը (William Benson) ասել է ռազմածովային ուժերի ներկայացուցիչ ծովակալ Ուիլյամ Սիմսին (William Sims). «Թույլ չտաք անգլիացիներին ձեր աչքերին թոզ փչել։ Մենք բնավ մտադրված չենք նրանց համար կրակից շագանակներ հանել։ Մենք նույնքան պատրաստակամությամբ կպատերազմեինք նաև նրանց դեմ, ինչպես դա անելու ենք գերմանացիների դեմ»²⁰²։ Այս միտքը գալիս է ապացուցելու այն իր, որ Միացյալ Նահանգները մասնակցում էր պատերազմին ոչ թե համակիր կողմին դաշնակցելու նպատակով, այլ հետպատերազմյան աշխարհակարգի ձևավորման ամերիկյան սկզբունքները հաստատելու ակնկալիքով։ Այդ ճանապարհին (դա ակնհայտ դրսևորվեց «չեզոքության» տարիներին) առավել կարևոր էր աջակցել հակամարտող այն ուժին, որի հետ համագործակցությունը նպաստավոր կլիներ Միացյալ Նահանգների աշխարհաքաղաքական նկրտումների իրագործման համար։

²⁰⁰ **А. Шлезингер**, Циклы американской истории. Москва, "Прогресс", 1992, с. 79.

^{*} Ասոցիատիվ՝ ասոցացում, ассоциирование (լատ. associare միացնել, ընկերակցել), անհատների, խմբերի, կազմակերպությունների կամ պետությունների կամավոր ընդգրկումը որևէ միավորմանը կամ կառույցին՝ ընդհանուր նպատակներին հասնելու ակնկալիքով։ Միջազգային քաղաքականությունում պետության նման միացումը որևէ խմբավորմանը կամ կառույցին որպես լիիրավ անդամ՝ առանց իրավունքների կամ պարտավորվածությունների փաստացի ամրագրման։ Տե՛ս **В. Даниленко**, Современный политологический словарь, М., "Nota Bene", 2000, с. 63:

²⁰¹ Системная история международных отношений, 1918-2003, под ред. **А. Богатуров**, т. 1, Москва, "Московский рабочий", 2000, с. 35.

²⁰² **J. Pershing**, My Experiences in the World War, v. 1, New York, "Frederick A. Stokes Co", 1931, v. 1, p. 38-39. Տե՛ս նաև **Д.Ллойд Джордж**, Военные Мемуары, т. 3, с. 415:

Միացյալ Նահանգները, ըստ նախագահ Վիլսոնի, ի տարբերություն եվրոպական տերությունների՝ պատերազմում է հանուն ազատության, մարդու իրավունքների, ապագա աշխարհի և բոլոր ազգերի անվտանգության²⁰³:

Այս մոտեցումը բնականաբար չէր կարող աննկատ մնալ եվրոպական դաշնակիցներին: Դեռևս 1917 թ. փետրվարին Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության խորհրդի անդամ Իվան Կորոստովեցը, գնահատելով Միացյալ Նահանգների պատերազմին միանալու հեռանկարները, նկատում էր ամերիկյան և եվրոպական պատկերացումներում առկա տարածայնությունները ապագա խաղաղության պայմանների վերաբերյալ: Նա գտնում էր, որ Ամերիկյան կլինի պատերազմի «որոշ չափով եսասեր մասնակից»: Ավելին, ամերիկյան մասնակցությունը, ըստ նրա, կարող էր նաև ձեռնադրել Վերմանիային՝ վերջինիս պարտության պարագայում²⁰⁴:

Ամերիկյան մասնակցությանը նմանատիպ գնահատական է տվել նաև բրիտանացի դիվանագետ Ուիլյամ Վայզմանը (William Wiseman) բրիտանական կառավարությանն ուղարկած իր հուշագրերից մեկում: Նա նշում էր, որ ամերիկացիները տվյալ պարագայում իրենց զգում են ավելի շատ որպես միջնորդ դատավոր, քան՝ դաշնակից²⁰⁵:

Ինչևէ, պատերազմին մասնակցելու հետ մեկտեղ նախագահ Վիլսոնը լավ հասկանում էր, որ այն չի կարող անվերջ ձգվել: Անհրաժեշտ էր մտածել ապագա խաղաղության մասին, քանզի Միացյալ Նահանգները ներգրավվել էր այդ առաջին հայացքից բացառապես եվրոպական հակամարտության մեջ միջազգային ասպարեզում իր դերի բարձրացման, նոր աշխարհակարգի (որում պետք է զբաղեցներ առաջատար դիրք) ստեղծման նպատակով:

Այդ նպատակով նախագահ Վիլսոնը 1917 թ. ամռանը ստեղծեց Հետազոտական մարմին՝ «The Inquiry», որում ընդգրկվեցին հայտնի տնտեսագետներ, իրավաբաններ, պատմաբաններ: Մարմնի ղեկավար նշանակվեց գնդապետ Հաուզը, տնօրեն՝ Նյու Յորքի քաղաքային քոլեջի ղեկավար Սիդնեյ Մեզեսը (Sidney Mezes), քարտուղար՝ հայտնի լրագրող Վոլթեր Լիփմանը²⁰⁶: Հատկանշականն այն է, որ նախագահ Վիլսոնն այդ աշխատանքը չհանձնարարեց պետդեպարտամենտին, այլ ստեղծեց մտավոր մի կենտրոն, որը բաղկացած էր վստահելի և հուսալի մարդկանցից:

²⁰³ Letter from Pr. Wilson, May 22, 1917, on the Causes of the War, President Wilson's Great Speeches and other History Making Documents, p. 153.

²⁰⁴ Россия и США: Дипломатические отношения 1900-1917, с. 648.

²⁰⁵ **W. Fowler**, British-American Relations, 1917-1918, The Role of Sir William Wiseman, Princeton, "Princeton University Press", 1969, p. 249.

²⁰⁶ **R. Baker**, Woodrow Wilson: Life and Letters, vol. 7, War Leader, 1917-1918, New York, "Doubleday, Page & Company," 1927, p. 254. Տե՛ս նաև **З. Гершов**, Вудро Вильсон, Москва, "Мысль", 1983, с. 146:

1917 թ. սեպտեմբերի 2-ին նախագահ Վիլսոնը գնդապետ Ջաուզին ուղղված նամակում հրահանգում էր պարզել ինչպես դաշնակիցների, այնպես էլ հակառակորդի դիրքորոշումները և այդ հիմքի վրա պատրաստել սեփական նախագիծը²⁰⁷ : Չետագոտական մարմինը, սկսեց իր աշխատանքը Կենտրոնական Եվրոպայում և Մերձավոր Արևելքում՝ պատերազմի ավարտից հետո խաղաղության պահպանման և համաշխարհային գործընթացների նկատմամբ համընդհանուր հասարակական հսկողություն սահմանելու նապատակով նոր միջազգային կազմակերպություն ստեղծելու հնարավորության ուղղությամբ²⁰⁸:

1918 թ. հունվարի 3-ին Սիդնեյ Մեզսեր և Վոլթեր Լիփմանը նախագահ Վիլսոնին ներկայացրին «Առաջարկներ խաղաղ նպատակների վերաբերյալ» վերնագրով հուշագիրը, որի հիման վրա վերջինս պետք է պատրաստեր իր հայտարարության տեքստը: 1918 թ. հունվարի 8-ին նախագահ Վիլսոնը ուղերձով դիմեց Միացյալ Նահանգների Կոնգրեսին: Իր խոսքում նախագահը նախ ողջունեց Ռուսաստանի ներկայացուցիչների որոշումը Բրեստ-Լիտովսկում ընթացող խաղաղ բանակցությունները Գերմանիայի հետ խզելու վերաբերյալ, քանի որ վերջինս չէր կարող համաձայնել գերմանական կողմի առաջարկած տարածքային լուծումների հետ* : Կոնգրեսին ուղղված իր ուղերձում նախագահ Վիլսոնը ներկայացրեց նաև «Պատերազմի նպատակները և հաշտության պայմանները» ծրագիրը²⁰⁹ : 14 սկզբունքներից բաղկացած այս «խաղաղության ծրագիրը» առավել հայտնի դարձավ «Վուդրո Վիլսոնի 14 կետեր» անվանմամբ* :

Այս կետերի օգնությամբ նախագահ Վիլսոնը շարադրեց իր պատկերացումները հետպատերազմյան աշխարհակարգի վերաբերյալ: Այն կտրուկ տարբերվում էր «Մոնրոյի դոկտրինայի» և Թեոդոր Ռուզվելտի «Մեծ Մահակի» քաղաքականությունից: Նա քաջ գիտակցում էր, որ նախագահ Մոնրոյի կառավարումից (1817-1825 թթ.) հետո իրավիճակն աշխարհում արմատապես փոխվել է, և դա առանձնապես ակնառու դրսևորվեց 20-րդ դարասկզբին: Միացյալ Նահանգները վերածվեց տնտեսապես հզոր և զարգացած երկրի, որը պատերազմի տարիներին դարձավ եվրոպական ազդեցիկ

²⁰⁷ **R. Baker**, Woodrow Wilson: Life and Letters, vol. 7, p. 254. Տե՛ս նաև Архив полковника Хауза, т. 3, Москва, "Государственное издательство политической литературы", 1944 с.231, **З. Гершов**, Вудро Вильсон, с. 146:

²⁰⁸ **З. Гершов**, Вудро Вильсон, с. 147.

* Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագիրը կնքվել է 1918 թ. մարտի 3-ին մի կողմից՝ Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչների և մյուս կողմից՝ Քառյակ դաշինքի (Գերմանիա, Ավստրո-Չոնգարիա, Բուլղարիա և Թուրքիա) ներկայացուցիչների միջև: Պայմանագրի մասին մանրամասն տե՛ս Дипломатический словарь, под ред. **А. Громыко**, т. 1, Москва, "Наука", 1984, с. 155:

²⁰⁹ **W. Wilson**, In Our First Year of War, New York-London, "Harper & Brothers", 1918, p. 156-160. Տե՛ս նաև War Addresses of Woodrow Wilson, The Program of Peace, Address to Congress, January 8, 1918, Cop. by **A. Leonard**, Boston-New York..., "Ginn & Company", 1918, p. 92-102:

* Ուղերձի ամբողջական տեքստը տե՛ս հավելված 2, էջ VI-X:

տերությունների հիմնական վարկատուն: Հասունացել էր պահը, և Միացյալ Նահանգները պետք է աշխարհին ներկայացներ «աշխարհի կառուցման» իր հարացույցը և այդ պայքարի առաջնորդությունը ստանձնեց նախագահ Վիլսոնը՝ ներկայացնելով իր «14 կետերը» որպես «նոր աշխարհի» կառուցման կաղապար:

«14 կետերի» հրապարակումը, մեր կարծիքով, Միացյալ Նահանգների կառավարության դիվանագիտության փայլուն դրսևորումներից էր: Այն իր մեջ ներառում էր Միացյալ Նահանգների արտաքին քաղաքական նպատակների մեկտեղում: Նախ՝ Միացյալ Նահանգները հայտարարում էր համաշխարհային խաղաղության հաստատման իր պատրաստակամության մասին, երկրորդ՝ նա առաջարկում էր այդ խաղաղության իր ծրագիրը և հայտարարում, որ դա «միակ հնարավոր ծրագիրն է»²¹⁰: Առաջարկելով իր ծրագիրը՝ Միացյալ Նահանգները մեխանիկորեն ստանձնում էր խաղաղության հաստատման գործընթացում առաջատարի դերը: Սա վերջինիս կապահովեր թելադրողի կարգավիճակ նաև հետպատերազմյան «նոր աշխարհակարգի» հաստատման գործում: Բացի այդ՝ «14 կետերի» հրապարակումով Միացյալ Նահանգները փորձում էր Գերմանիային հասկացնել, որ ինքը պատրաստ է խաղաղության, և վերջինս ընդունելով իր ծրագիրը՝ «14 կետերի» տեսքով, կարող է դիմել Ամերիկային խաղաղության խնդրանքով:

Այն, որ Միացյալ Նահանգները պատրաստ էր խաղաղության՝ միայն համաձայն «14 կետերում» առաջ քաշած իր սկզբունքների, արտահայտվում էր նաև նախագահ Վիլսոնի ելույթում՝ ի պատասխան Հռոմի Բենեդիկտոս (Benedictus) XV պապի խաղաղության կոչի: 1917 թ. օգոստոսին 27-ին Հռոմի պապն իր ելույթում կոչ արեց պատերազմող երկու կողմերին փոխադարձ զիջումների հիման վրա դադարեցնել պատերազմը: Ըստ այդ առաջարկի՝ խաղաղության հիմք պետք է հանդիսանար երկկողմ փոխհատուցման պահանջների փոխզիջումային բավարարումը և բռնագրավված տարածքների խաղաղ վերադարձը²¹¹: Այս առաջարկը բնականաբար առաջացրեց դաշնակիցների, ինչպես նաև Միացյալ Նահանգների դժգոհությունը, քանզի վերադարձնել Գերմանիային նրա գաղութները և ազատել պատերազմի արհավիրքների պատասխանատվությունից կնշանակեր վերջինիս թողնել նախապատերազմյան կարգավիճակում՝ դրան ավելացնելով գերմանական ռազմատենչության արդյունքում հալածված և կեղեքված ազգաբնակչություն և տարածքներ²¹²:

²¹⁰ Address to Congress, Stating the War Aims and Peace Terms of the United States, Delivered in Joint Session, January 8, 1918, President Wilson's State Papers and Addresses, ed. by **A. Shaw**, p. 468.

²¹¹ The Great Events of The Great War, editor in chief **Ch. Horne**, vol. VI, New York, "The National Alumni", 1920, p. 1.

²¹² Նույն տեղում, էջ 1:

Նախագահ Վիլսոնն արձագանքեց Պապի օգոստոսյան ելույթին՝ արտահայտելով դաշնակից երկրների կարծիքը նույնպես, քանզի վերջիններս հայտարարեցին, որ իրենք համաձայն են նախագահի պատասխանի հետ: «Այս պատերազմի խնդիրն է,- նշում էր նախագահ Վիլսոնն իր ելույթում,- աշխարհի ժողովուրդներին ազատել անպատասխանատու կառավարության կողմից կառավարվող ահռելի ռազմական կազմավորման գործող ուժից, որն աշխարհը տիրելու գաղտնի նպատակ է հետապնդում՝ առանց հարգելու դաշնագրերից բխող սրբազան պարտավորվածությունները, միջազգային հարաբերությունների հարյուրամյակներով հաստատված փորձը, համընդհանուր սկզբունքներն ու պատվավոր պայմանները: Կառավարություն, որը պատերազմի համար ընտրում է իրեն հարմար ցանկացած ժամանակ և մեթոդ... Համաձայնության գալ այս ուժի հետ ըստ Նորին Սրբազնություն Պապի առաջարկի՝ կնշանակի կայսերապաշտական Գերմանիայի հզորության և քաղաքականության վերականգնում... Առաջարկվող խաղաղության յուրաքանչյուր ծրագիր պետք է հիմնված լինի երկկողմանի ժողովրդական վստահության վրա:

Մենք չենք կարող իբրև երաշխիք ընդունել Գերմանիայի ներկայիս կառավարության խոսքը և պատրաստ ենք սպասելու այնքան, մինչև գերմանական ժողովուրդը արտահայտի իր սեփական կամքը ինչպես աշխարհի մյուս ազատ ժողովուրդները: Առանց ապառազմականացման, միջնորդ դատարանի հիմնման, տարածքային հարցերի խաղաղ կարգավորման և փոքր ազգերի վերակազմավորման երաշխիքների՝ ոչ ոք և ոչ մի պետություն Գերմանիայի հետ համաձայնության չի գա»²¹³:

Իր ելույթում, շարադրելով «14 կետերում» առաջարկվող սկզբունքներից մի քանիսը՝ նախագահ Վիլսոնն այս անգամ արդեն ուղղակի հայտարարեց Գերմանիային, որ վերջինս խաղաղության հաստատման համար այլընտրանք չունի, քան ընդունելու ամերիկյան ծրագիրը և սկզբունքները:

Շարունակելով իր միտքը՝ նախագահ Վիլսոնը նշում էր. «...Այդ սկզբունքները պատահական շարադրված բառեր չեն և դրանք կարող են նախնական խաղաղության հաստատման հիմք ծառայել: Միացյալ Նահանգները չի լքի պատերազմն այնքան ժամանակ, քանի դեռ իրականացված չէ այն առաքելությունը, հանուն որի մենք ներգրավվել ենք պատերազմի մեջ, իսկ Բրիտանիան և Ֆրանսիան իրենց հաստատականությամբ պատրաստ են օգնել մեզ ...»²¹⁴:

Արդյո՞ք Ֆրանսիան և Մեծ Բրիտանիան պատրաստ էին օգնելու Ամերիկային վերջինիս «առաքելության» իրականացման գործում: Արդյո՞ք նույնն էին հետպատերազմյան խաղաղության վերաբերյալ վերջիններիս պատկերացումները:

²¹³ The Great Events of The Great War, vol. VI, p. 2

²¹⁴ Նույն տեղում, էջ 2:

Խոսելով հետպատերազմյան խաղաղության հաստատման մասին՝ պետք է նշել, որ նախքան Միացյալ Նահանգների պատերազմի մեջ մտնելը այդ հարցն արդեն շոշափվում էր դաշնակից երկրների առաջնորդների կողմից: Հետպատերազմյան խաղաղ կարգավորման իրավական հիմքի մշակումը օրակարգային քննարկման առարկա էր ապագա հաղթող երկրների կառավարություններում: Այդ կապակցությամբ վերջիններս սկսեցին մշակել իրենց առաջարկները:

Դեռևս 1916 թ. դեկտեմբերին Անտանտի երկրների առաջնորդները (Մեծ Բրիտանիայի վարչապետ Դևիդ Լլոյդ Ջորջ, Ֆրանսիայի վարչապետ Ժորժ Կլեմանսո (Georges Clemenceau) և Իտալիայի վարչապետ Վիտտորիո Օռլանդո (Vittorio Orlando)) հավաքվեցին Լոնդոնում քննարկելու համար պատերազմը դադարեցնելու հնարավոր պայմանները: 1917 թ. հունվարին դրանք հրապարակվեցին և տրամադրվեցին ինչպես հակառակորդին, այնպես էլ ամերիկյան կողմին*:

Միաժամանակ հանդիպման մասնակիցները Միացյալ Նահանգների նախագահին ներկայացրեցին հայտագիր, որում նշվում էր, որ ապագա խաղաղությունը «պետք է հիմնված լինի առաջին հերթին միջազգային վիճելի հարցերի կարգավորման վրա, որոնք կարող են հանգեցնել պատերազմի, երկրորդ հերթին՝ Կենտրոնական տերությունների ռազմական կայսերապաշտության ամբողջովին մերկացման և ոչնչացման վրա: Անհրաժեշտ է, որ միջազգային իրավունքը և թշնամական միջոցառումների կանխարգելման ու սահմանափակման պայմանագրերով հաստատվող կարգն այս կամ այն չափով հիմնված լինեն որոշ միջազգային պատժամիջոցների վրա, որոնք կստիպեն խորհել նույնիսկ ամենավճռական ագրեսորին»²¹⁵:

Ակնհայտ է, որ այս վերջինը հնարավոր էր իրականացնել միայն բավականին լայն հնարավորություններով օժտված միջազգային կազմակերպության հիմնումով, որն ի վիճակի կլինի զսպելու հնարավոր ագրեսորներին:

Այսպիսով՝ արդեն 1917 թ. դաշնակիցներին պարզ էր, որ ապագայում հաղթող և խաղաղության նոր պայմանագրի շուրջ համախմբված երկրները պետք է պարտավորվածություն ստանձնեն իրենց իսկ կողմից սահմանված միջազգային իրավունքի և արդարության նորմերի պահպանման համար: Սակայն այդ երկրների ներկայացուցիչների առաջարկներում առաջնային էին ոչ թե պետությունների փոխհարաբերությունների բարեփոխման և դրանք իրավական հիմքի վրա տեղափոխելու ծրագրերը, այլ Եվրոպայի վերակազմավորումը, Կենտրոնական

* Փաստաթղթի ամբողջական տեքստը տե՛ս հավելված 3, էջ XI:

²¹⁵ Տե՛ս **Դ.Լլոյդ Ջորջ**, *Правда о мирных договорах*, т. 1, пер. с англ. А. Никонова, Москва, "Изд. Иностран. Лит.", 1957, с. 59.

տերությունների կողմից բռնագրավված տարածքների վերադարձը, ագրեսորի սանձահարումը և թուրքերի վտարումը: Եվրոպական երկրների նման դիրքորոշումը նպաստեց նրան, որ նախաձեռնությունն այդ հարցում ստանձնեց Միացյալ Նահանգների նախագահ Վուդրո Վիլսոնը, որը և այդ ամենը շարադրեց իր հայտնի հունվարյան ելույթում:

Նշենք, որ Վուդրո Վիլսոնի ելույթից երեք օր առաջ՝ 1918 թ. հունվարի 5-ին, Լլոյդ Ջորջը հանդես եկավ ապագա խաղաղության պայմանագրի բովանդակության վերաբերյալ իր առաջարկով: Մեծ Բրիտանիայի վարչապետի ելույթն իր մեջ որևիցե նոր առաջարկ չէր պարունակում, այն ուղղակի մանրամասն ներկայացնում էր Անտանտի նպատակները՝ ձևակերպված Լոնդոնում 1916 թ. դեկտեմբերին: Նա ևս մեկ անգամ փաստեց ապագա միջազգային կազմակերպության իրավական հիմքի ստեղծման անհրաժեշտությունը՝ դրա հետ մեկտեղ ընդգծելով, որ նախատեսվող Լիգան ոչ մի կերպ չպետք է սահմանափակի իր անդամների ինքնավարությունը²¹⁶: Նման մոտեցումը միանգամայն հասկանալի է: Ակնհայտ էր, որ եվրոպական տերությունները չէին ցանկանում փոխել հաստատված ավանդույթները և պատերազմի ժամանակ ունեցած իրենց նվաճումները կիսել ինչ-որ մեկի հետ: Բացի դրանից Մեծ Բրիտանիան վախենում էր, որ ռազմականապես և քաղաքականապես օր օրի հզորացող Միացյալ Նահանգները կարող է հարցականի տակ դնել իր ծովային գերիշխանությունը: Փաստորեն այդ մտավախությունը 3 օր անց իրականացավ, երբ նախագահ Վիլսոնը առաջ քաշեց ծովերի ազատության իր դրույթը, որից որ նա ոչ մի կերպ չէր ցանկանում հրաժարվել խաղաղ կարգավորման բանակցությունների ողջ ընթացքում:

Միացյալ Նահանգների նախագահի խորհրդական, գնդապետ Յաուզի կարծիքով՝ «14 կետերի» հրապարակումով Վուդրո Վիլսոնը երեք հիմնական նպատակ էր հետապնդում: Առաջին հերթին նա ցանկանում էր պատասխան տալ բոլշևիկներին, որոնք նոր և շատ լուրջ մարտահրավեր էին ազատական աշխարհի համար: Նա ցանկանում էր համոզել Ռուսաստանին մնալ դաշնակիցների կողքին՝ ժողովրդավարական և ազատամիտ սկզբունքների պաշտպանության համար մղվող պայքարում: Այնուհետև նախագահ Վիլսոնը ցանկանում էր աջակցել գերմանական սոցիալիստներին, որոնք սկսել էին գիտակցել, որ իրենց կառավարությունը վարում է ոչ թե պաշտպանողական, այլ նվաճողական պատերազմ: Երրորդ հերթին Վուդրո Վիլսոնը փորձում էր հասկացնել Անտանտի երկրներին իրենց ռազմական նպատակների վերանայման անհրաժեշտության մասին²¹⁷:

²¹⁶ **Д.Ллойд Джордж**, Военные Мемуары, т. 4, пер. с англ. Л. Борового, Москва, "Соцэкгиз", 1935, с. 64.

²¹⁷ Архив полковника Хауза, т. 3, с. 226.

«14 կետերից» շատերը ոչ միայն կոնկրետացնում էին տվյալ նպատակային ձևակերպումները, այլ նաև դրսևորում էին դրանց գաղափարական ուղղվածությունը: Օրինակ՝ Վուդրո Վիլսոնի բաց դիվանագիտության կոչն ուղղված էր Անտանտի երկրների բոլոր գաղտնի համաձայնագրերից հրաժարվելուն: «Ազգերի ինքնորոշման» սկզբունքի փաստացի հռչակումը հարցականի տակ էր դնում մի շարք նոր տարածքներ իրենց վերահսկողության տակ անցկացնելու դաշնակիցների ձգտումները: Կոչ անելով պահպանել արդարություն բոլոր ազգերի և երկրների հանդեպ՝ նախագահ Վիլսոնը հաստատում էր իր ծրագիրը, որը նախատեսում էր խաղաղության հաստատում առանց որևէ բռնազավթման, ռազմատուգանքի և պատժիչ փոխհատուցումների: Դրանով իսկ նա նախազգուշացնում էր անտանտյան առաջնորդներին, որոնք ձգտում էին «կարթագենյան հաշտության» Գերմանիայի հետ: Բոլոր նշված դրույթներն ուղեկցվում էին այն համոզումով, որ ամերիկացիների առաջ քաշած ծրագիրը կրում է համընդհանուր քաղաքակրթական նշանակություն, քանզի Միացյալ Նահանգների գործողությունները, նախագահի գնահատմամբ, իրականացվում էին «ի շահ և հանուն ողջ մարդկության»²¹⁸:

Դիտարկելով «14 կետերը»՝ ռուս գիտնական Անատոլի Ուտկինը այն անվանել է ապագա Փարիզի համաժողովի «գաղափարական հիմնավորում»: Նա նշել է նաև այն հանգամանքը, որ միլիոնավոր մարդիկ բոլոր երկրներից կիսում էին Միացյալ Նահանգների նախագահի հավատը՝ աշխարհը վերակառուցելու իր հայտարարած ծրագրի համաձայն²¹⁹:

Խոսելով առաջարկված ծրագրի 14-րդ կետի մասին՝ պետք է նշել, որ դեռևս 1915 թ. օգոստոսի 10-ին Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար Էդուարդ Գրեյը, փորձելով առաջ քաշել այնպիսի նպատակներ, որոնք կշահագրգռեն Միացյալ Նահանգներին մտնել պատերազմի մեջ, Վաշինգտոն ուղարկած իր նամակում գրում էր. «Գերագույն նպատակի «մարգարիտը» կլիներ մի ինչ-որ Լիգայի ստեղծումը, որին կարելի էր վստահել ցանկացած երկու պետության միջև վեճերը կարգավորելու ժամանակ: Միջազգային իրավունքը մինչ այսօր չի ապահովել որոշումների իրականացումը: Այս պատերազմի դասն այն է, որ մեծ տերությունները պետք է իրենք ապահովեն այդ գործառույթը»²²⁰: Հետամուտ լինելով իր նպատակին՝ 1915 թ. սեպտեմբերի 22-ին Էդուարդ Գրեյը հարցնում էր գնդապետ Հաուզին. «Արդյո՞ք նախագահ Վիլսոնը չի ենթադրում Ազգերի լիգայի ստեղծում, որը կստանձնի կնքված համաձայնագրերը, ծովային ու ցամաքային պատերազմի վարման սահմանված

²¹⁸ Address Opening the Campaign in New York for the Second Red Cross Fund, May 18, 1918, The messages and papers of Woodrow Wilson, 1856-1924, (Էլ. գիրք, բնագիր էջադրմամբ), p. 486-492.

²¹⁹ **А. Уткин**, Унжение России: Брест, Версаль, Мюнхен. Москва, "ЭКМО", 2004, с. 259.

²²⁰ Տե՛ս **А. Уткин**, Дипломатия Вудро Вилсона, с. 82:

կանոնները խախտած պետության դեմ գործածելու պատասխանատվություն, ինչպես նաև հանդես կգա ընդդեմ այն պետությունների, որոնք միջպետական վեճերի կարգավորման համար որպես միակ հնարավոր միջոց կընտրեն պատերազմը: Ես չգիտեմ, թե ո՞ր երկրի կառավարությունը կընդունի այդ գաղափարը, սակայն վստահ եմ, որ Միացյալ Նահանգների կառավարությունը միակ կառավարությունն է, որն ի վիճակի է այդ գաղափարն արդյունավետ առաջ քաշել»²²¹:

Այսպիսով, Էդուարդ Գրեյի մեկնաբանմամբ, քաղաքական շրջանառության մեջ մտավ «Ազգերի լիգա» եզրը՝ արդյունքում նախագահ Վիլսոնի համար դառնալով «նոր աշխարհակարգի» ստեղծման հիմնաքար:

Ակնհայտ է, որ այդ գաղափարին հանգեցնող օբյեկտիվ գործոնը համընդհանուր հակամարտության ներքո աշխարհում հաստատված քաղաքական իրավիճակն էր: Սթոքթոն Էքսոնը (Stockton Axson)՝ նախագահ Վիլսոնի առաջին կնոջ եղբայրը, նշում էր, որ դեռևս 1914 թ. Վուդրո Վիլսոնը նկարագրել է իր «նոր աշխարհակարգի» ուրվագծերը: Սթոքթոն Էքսոնի հետ ունեցած իր զրույցում նա ընդգծել էր, որ հավասարակշռման չի կարելի հասնել զենքի ուժով: Հետպատերազմյան միջազգային հարաբերությունների առաջարկվող սկզբունքների մեջ նախագահ Վիլսոնը թվարկել էր մի շարք գաղափարներ, որոնք հետագայում պաշտոնապես ընդգրկվեցին համաշխարհային խաղաղության ամերիկյան ծրագրում: Դրանք են՝ մեծ և փոքր ազգերի հավասարություն, ցանկացած տեսակի տարածքային բռնազավթման բացառում, սպառազինության վերահսկում կառավարությունների կողմից, ազգերի ընկերակցության ստեղծում, որն ի վիճակի կլինի երաշխավորել յուրաքանչյուր պետության տարածքային ամբողջականությունը²²²:

Ինչպես տեսնում ենք, կարգավորող գործառույթ ունեցող միջազգային կազմակերպության գաղափարը կարևոր դեր էր զբաղեցնում նախագահ Վիլսոնի արտաքին քաղաքական ռազմավարության մեջ դեռևս պատերազմի սկզբին: Սակայն նման կազմակերպություն ստեղծելու համար նախ անհրաժեշտ էր դադարեցնել Եվրոպական ընդհարումը: Ահա այս խնդրի լուծմանն էլ ձեռնամուխ եղավ նախագահին իր «14 կետերի» հրապարակումով: Նրա նպատակն էր կասեցնել Գերմանիայի նվաճողական հարաշարժությունը (դինամիկան) և թուլացած Եվրոպայում այնպիսի պայմաններով խաղաղություն հաստատել, որ Անտանտն ու Կենտրոնական տերությունները հավասարակշռեին միմյանց: Ընդ որում՝ երկու միավորումներն էլ

²²¹ Տե՛ս **А. Уткин**, *Дипломатия Вудро Вилсона*, с. 82: Տե՛ս նաև *Архив полковника Хауза*, т. 2, с. 69-71:
²²² **S. Axson**, "Brother Woodrow": A Memoir of Woodrow Wilson, Princeton, "Princeton University Press", 1993, p.194.

կախված էին լինելու Միացյալ Նահանգների բարյացկամությունից, որը պատերազմի ելքի փաստացի որոշողն էր:

Այս ճանապարհին միմյանց ուղիղ հակադրվեցին ամերիկյան և եվրոպական արտաքին քաղաքական հայեցակարգերը, որի արդյունքում Միացյալ Նահանգները հրաժարվեց Անտանտի ռազմական նպատակներից և մշակեց աշխարհում ամերիկյան «կարգ ու կանոն» հաստատելու իր սեփական առաջարկը, որը մարմնավորվեց Ազգերի լիգայի ստեղծման գաղափարով: Այդ նոր միջազգային կազմակերպությունը, նախագահ Վիլսոնի մտահղացմամբ, պետք է ապահովեր հետպատերազմյան խաղաղությունն ու համընդհանուր անվտանգությունը: Ինչպես նկատել է ամերիկյան պատմաբան Ուիլյամ Ուիլյամսը (William Williams). «14 կետերը և Ազգերի լիգայի վիլսոնյան նախագիծը կոչված էին վերակառուցելու միջազգային հարաբերությունների համակարգն ամերիկյան սկզբունքներին համապատասխան՝ արդյունքում հնարավոր դարձնելով Միացյալ Նահանգների գերիշխումն աշխարհի քաղաքական և տնտեսական կյանքում՝ խուսափելով մեծ պատերազմներից»²²³: Իսկ ամերիկյան սկզբունքներն ու քաղաքականությունը, ըստ նախագահ Վիլսոնի, միաժամանակ հանդիսանում էին ժամանակակից բոլոր ազգերի և յուրաքանչյուր կրթված հասարակության սկզբունքներն ու քաղաքականությունը: Դրանք մարդկության սկզբունքներն են և պետք է հաղթանակ տանեն²²⁴:

Կասկած չկար, որ նախագահ Վիլսոնը հասկանում էր իր քայլի համարձակությունը: Նա միանշանակ կանխատեսում էր ընդդիմադիր դիրքորոշում և՛ հակառակորդի, և՛ դաշնակիցների կողմից: Նրա առաջ քաշած սկզբունքները դրական արձագանքի արժանացան եվրոպական հասարակության կողմից, որն իր վրա էր կրում պատերազմի հետևանքների ողջ ծանրությունը: Դրա վառ ապացույցն էր այն դրական ընդունելությունը, որին արժանացավ նախագահ Վիլսոնը Ֆրանսիայում և Իտալիայում 1918 թ. վերջին:

Սակայն այլ էր վերաբերմունքը եվրոպական կառավարող շրջանների մոտ: Այստեղ մոտեցումը երկակի էր: Առաջին հայացքից նախագահ Վիլսոնի «14 կետերում» փաստացի ոչինչ չէր ասվում Միացյալ Նահանգների համաշխարհային առաջատարության մասին: Նրանք նաև հասկանում էին, որ Միացյալ Նահանգների նախագահի նախաձեռնությունը հանգեցնում է պատերազմի հաղթական ավարտին: Իսկ մյուս կողմից նրանց անհանգստացնում էր այն գաղափարը, որ ամերիկյան ծրագիրը նախագահ Վիլսոնը դիտարկում էր որպես «հնարավոր միակ ծրագիր»: Նման

²²³ **W. Williams**, Some Presidents. From Wilson to Nixon, New York, "New York Review", 1972, p. 31.

²²⁴ Տե՛ս **O. GALE** Americanism, Woodrow Wilson's Speeches on the War, Why He Made Them and What They Have Done, Chicago, "The Baldwin Syndicate Publishers", 1918, p. 28:

հայտարարությամբ Միացյալ Նահանգները կարծես մերժում էր դաշնակիցների առաջարկները և հորդորում պատերազմող երկրներին հետևել Ամերիկային, որպես «համընդհանուր խաղաղության հաստատման» միակ ջատագովի: Սակայն դաշնակից երկրների կառավարության ներկայացուցիչներն ամերիկյան ծրագրի միայն գաղափարական կողմը չէ, որ դիտարկում էին: Քաղաքական տեսանկյունից նայելով՝ նրանք չէին կարող չնկատել տարածայնություններն իրենց նպատակների և Վուդրո Վիլսոնի առաջարկած «ապոկալիպսիսի»^{*} (այսպես է անվանել «14 կետերը» բրիտանական դիվանագետ Հարոլդ Նիքոլսոնը (Harold Nicolson)) միջև:²²⁵ Այս երկրների առաջնորդների պատկերացումները հետպատերազմյան խաղաղության հաստատման պայմանների վերաբերյալ միանգամայն տարբերվում էին միմյանցից: Դա պայմանավորված էր և՛ նրանց մարդկային որակներով, և՛ նրանց քաղաքական կենսագրությամբ, և՛ պատերազմի ընթացքում նրանց պետությունների ունեցած դերակատարմամբ, և՛ դիվանագիտական ավանդույթների տարբերությամբ:

Ֆրանսիան համարվում էր պատերազմական գործողություններից տնտեսապես և նյութապես առավել շատ վնասներ կրած երկիր, քանի որ պատերազմը գերազանցապես ընթանում էր նրա տարածքում: Կառավարող շրջանակները միաձայն էին այն հարցում, որ երկիրը պետք է առավելագույնս օգտվի ծանր հաղթանակի արդյունքներից: Վարչապետ ժորժ Կլեմանսոյի մոտ, որը պատկանում էր Ֆրանսիայի քաղաքական գործիչների ավագ սերնդին, դեռևս թարմ էին 1870-1871 թթ. ֆրանս-պրուսական պատերազմի հիշողությունները: Ֆրանսիական հասարակության զգալի մասը նույնպես համակված էր փոխհատուցման գաղափարով, և դա չէր կարող իր ազդեցությունը չունենալ կառավարության դիրքորոշման վրա: Այդ իսկ պատճառով Ֆրանսիայի ծրագրերի մեջ չէր մտնում միջազգային իրավահարաբերությունների արմատական բարեփոխումը, նոր նորմերի ստեղծումը, որոնք ապագայում կարող էին կանխարգելել լայնածավալ համաշխարհային ընդհարումները: Նրա պահանջները շատ հստակ էին և իրատեսական՝ վերադարձնել այն ամենը, ինչ Գերմանիան վերցրել էր պատերազմի արդյունքում, հասնել ռազմատուգանքների վճարմանը, չեզոքացնել գերմանական ռազմական մեքենան և մեկընդմիջտ բացառել վերջինիս վերականգնումը: Ուշագրավ է Ֆրանսիայի վարչապետ ժորժ Կլեմանսոյի դիրքորոշումը «14 կետերի» վերաբերյալ. նա շնորհավորեց Լլոյդ Ջորջին հունվարյան ելույթի կապակցությամբ՝ հայտարարելով, որ ամբողջովին կիսում է նրա տեսակետը: Վերջինս ուշադրության չարժանացրեց Վիլսոնի

^{*} Ապոկալիպսիս (հուն. Apocalypsis)՝ հայտնություն, Նոր Կտակարանի գրքերից մեկը, քրիստոնեության մեզ հասած հնագույն գրական ստեղծագործությունը, որը պարունակում է անեղծվածային պատմություններ մարդու և երկրի ճակատագրի մասին, աշխարհի վերջի կանխագուշակումներ: Տե՛ս՝ **Ա. Մարգարյան, Ա. Հայրապետյան**, Օտար բառերի բացատրական բառարան, Երևան, «Երևանի Համալսարանի Հրատարակչություն», 2004, էջ 37:

²²⁵ **Գ. Никольсон**, Как делался мир в 1919 г. Москва, "Госполитиздат", 1945, с. 159.

հայտարարությունը: Եվրոպական կառավարող շրջանակներին չէին գոհացնում ամերիկյան նախագահի հեղափոխական առաջարկները, քանզի նրանք կարող էին խանգարել իրենց ծրագրերին²²⁶:

Իտալիայում դժգոհության առիթ հանդիսացան 9, 10 կետերը, որոնք չէին համապատասխանում իրենց տարածքային նկրտումներին:

Գերմանիան հանդես եկավ պատասխանով, որն ընդգրկվեց կանցլեր Գեորգ ֆոն Հերթլինգի (Georg von Hertling) Ռայխստագի հունվարի 24-ի ելույթում*։ Այն հանդիսանում էր «14 կետերի» գերմանական մեկնաբանությունը, որով Գերմանիայի կանցլերը հստակ արտահայտեց գերմանական դիրքորոշումը խաղաղության հաստատման վերաբերյալ, որը լուրջ հակասություններ չունեին վիլսոնյան կետերի հետ: Կանցլերի ելույթից հստակ երևում էր, որ գերմանական կողմը փորձում է խուսափել նախնական խաղաղ կարգավորման հարցերում ուղիղ առճակատումից՝ առաջարկելով որոշ վիճելի հարցեր քննարկել բանակցությունների ժամանակ:

Մեծ Բրիտանիային, ինչպես վերը նշվեց, ավելի անհանգստացնում էր ծովերում իր տիրապետության պահպանումը, ինչին վտանգում էր բավականին հզորացած ամերիկյան նավատորմը, ինչպես նաև Միացյալ Նահանգների պահանջն ազատ նավագնացության վերաբերյալ ինչպես խաղաղ, այնպես էլ պատերազմական ժամանակ: Մայրցամաքային խնդիրները Բրիտանիայի համար երկրորդական էին: Չնայած վերջինս նույնպես շահագրգռված չէր ուժեղ Գերմանիայի պահպանումով, ինչը կարող էր սպառնալ իր անվտանգությանը: Այդ հարցում նրանք համակարծիք էին Ֆրանսիայի հետ: Միևնույն ժամանակ Բրիտանիայի վարչապետը լավ հասկանում էր միջազգային հարաբերություններն իրավական հարթություն տեղափոխելու անհրաժեշտությունը: Սակայն բրիտանական կառավարող շրջանակները անհանգստացած էին իրենց գաղութային կայսրության հնարավոր փլուզմամբ և պատրաստ չէին ամբողջությամբ հրաժարվել գաղտնի դիվանագիտությունից: Շատ դեպքերում սրանով է բացատրվում որոշ հարցերում Բրիտանիայի տատանողական դիրքորոշումը: Արտահայտվելով «14 կետերի» մասին՝ վարչապետ Լլոյդ Ջորջը նշում էր, որ բացառությամբ ծովերի ազատության սկզբունքից այդ կետերում չկա ոչինչ, որ չհամատեղվի այն ռազմական նպատակների հետ, որոնք արդեն հայտարարվել էին բրիտանական և ֆրանսիական կառավարությունների կողմից. Գերմանիայի կողմից բռնազավթած բոլոր տարածքների էվակուացիա, Էլզասի և Լոթարինգիայի վերադարձ Ֆրանսիային, գերմանական, ավստրիական և թուրքական կայսրությունների ճնշված

²²⁶ **Р. Мардалиев**, Правовые предпосылки Версальского мира, (էջադրումը բացակայում է) www.yurclub.ru/docs/international/article6.html

* Ելույթի ամբողջական շարադրանքը տես հավելված 4, էջ XII-XIII:

ազգերի ազատագրում, Ազգերի լիգայի կազմավորում, սպառազինության կրճատում, պատճառված վնասների փոխհատուցում²²⁷ : Սակայն նա գտնում էր, որ նպատակահարմար չէր նախապես որոշել հաշտության բոլոր պայմանները, դրանք պետք է մշակվեին համաժողովի ժամանակ, որտեղ ներկա կլինեին բոլոր դաշնակից և միավորված պետությունները²²⁸:

Սակայն Նախագահ Վիլսոնը վճռական էր տրամադրված ամերիկյան ծրագրի կիրառման գործում. «Միացյալ Նահանգները, - նշում էր նախագահ Վիլսոնը,- պայքարում է նոր միջազգային կարգի ստեղծման համար՝ հիմնված արդարության և իրավունքի լայն և համընդհանուր սկզբունքների վրա, այլ ոչ թե խղճուկ խաղաղության պատառիկների և վճարումների»²²⁹: Ավելին՝ սեպտեմբերի 27-ին նա ելույթ ունեցավ Նյու-Յորքի «Մետրոպոլիտեն» օպերային թատրոնում, որտեղ սահմանեց խաղաղ կարգավորման 5 սկզբունքներ* : Այդ սկզբունքները հանդիսանում էին հավելում «14 կետերին»: Ելույթի վերջում նախագահ Վիլսոնը կոչ արեց դաշնակից երկրներին մոտ ապագայում հստակ շարադրել իրենց պատկերացումները խաղաղության հաստատման գործում և արտահայտել իրենց կարծիքն ամերիկյան պայմանների վերաբերյալ: Նախագահն ընդգծեց նաև նպատակների և դատողությունների միասնականության կարևորությունը պատերազմում հաղթանակելու գործում²³⁰:

Նախագահի մետրոպոլիտենյան ելույթն առանձնանում էր իր կտրուկ երանգով, որով նախագահ Վիլսոնը փորձում էր հասկացնել թե՛ դաշնակիցներին, թե՛ հակառակորդ կողմին, որ չկա խաղաղության հաստատման առավել իրատեսական տարբերակ, քան «14 կետերը», և ավելորդ են այդ հարցի շուրջ բոլոր տեսակի տատանումներն ու ձգձգումները:

Անտանտի երկրների ղեկավարները, կարծես այդ շեշտադրումը հասկանալով, չարձագանքեցին Միացյալ Նահանգների նախագահի կոչին՝ դրանով իսկ հրաժարվելով խաղաղ կարգավորման իրենց ծրագրերը փոփոխելուց:

Թվում էր, թե նախագահ Վիլսոնը կանգնել էր փակուղու առջև ամերիկյան սկզբունքների կիրառման հարցում: Սակայն դա այդպես չէր, և անկախ դաշնակիցների որոշումներից և պահվածքից՝ անհերքելի էր, որ Միացյալ Նահանգները հետպատերազմյան խաղաղ կարգավորման գործում տիրապետում էր իրավիճակին: Ի հաստատում վերը նշվածի՝ եղավ գերմանական կառավարության հոկտեմբերյան

²²⁷ **Դ. Լլոյդ Ժորժ**, *Правда о мирных договорах*, т. 1, с. 71.

²²⁸ **Դ. Լլոյդ Ժորժ**, *Правда о мирных договорах*, т. 1, с. 72-73.

²²⁹ **Ա. Մտկին**, *Дипломатия Вудро Вилсона*, с. 180.

* Նախագահ Վիլսոնի ելույթի և սկզբունքների մասին մանրամասն տե՛ս՝ *President Wilson's Address Opening the New York Campaign for the Fourth Liberty Loan, September 27, 1918, The Messages and Papers of Woodrow Wilson, 1856-1924*, p. 520-528:

²³⁰ Ելույթ տեղում, էջ 520-528:

հայտագիրը: Յոկտեմբերի 3-ին գերմանական կառավարությունը հայտագիր ներկայացրեց Միացյալ Նահանգներին, որով պատրաստականություն հայտնեց դադարեցնել ռազմական գործողությունները և սկսել խաղաղ բանակցություններ՝ համաձայն «14 կետերի»²³¹ : Ինչո՞ւ Գերմանիան խաղաղության հաստատման առաջարկով դիմեց Վաշինգտոնին, ոչ թե Փարիզին կամ Լոնդոնին: Այս կապակցությամբ ուշագրավ է գերմանական գեներալ-գնդապետ Էրիխ Լյուդենդորֆի (Erich Ludendorff) հայտարարությունը. «Որքանով ես գիտեմ Կլեմանսոյին և Լլոյդ Ջորջին, պետք է պատրաստվել ավելի վատին: Իսկ Վիլսոնը Անգլիայի և Ֆրանսիայի առջև կարող է պնդել իր պայմանները»²³²:

Միացյալ Նահանգներում միատեսակ չէր մոտեցումը Գերմանիայի ճակատագրին: Այն, որ Գերմանիան պետք է ծնկի բերվի, դա անվիճելի էր: «Իմ կարծիքով,- գրել էր Նախագահ Վիլսոնը գնդապետ Յաուզին 1918 թ. հոկտեմբերի 29-ին,- անհրաժեշտ է, որ մեր ճնշման ուժը մենք օգտագործենք այնպիսի զինադադարի հաստատման օգտին, որը թույլ չի տա Գերմանիային վերսկսել իր ռազմական գործողությունները: Սակայն շատ կարևոր է, որ այն լինի հնարավորինս չափավոր և խելամիտ, ստեղծված իրավիճակին համապատասխան, քանի որ վերջին ժամանակներս ես համոզվեցի, որ դաշնակիցների կողմից դրսևորվող չափազանց խստությունը ձախողելու աստիճան կղժվարացնի իրական խաղաղ համաձայնության ստորագրումը»²³³ : Միացյալ Նահանգները կարևորում էր նաև իր մասնակցությունը Գերմանիային ծնկի բերելու հարցում, քանզի միայն այդ դեպքում կստանար որոշիչ ձայնի իրավունք հետպատերազմյան խաղաղ կարգավորման գործընթացում: Նախագահ Վիլսոնը դեմ էր Գերմանիայի լրիվ թուլացմանը, քանի որ այն պետք է ունենար բավարար ուժ՝ դիմակայելու Եվրոպայում աստիճանաբար տարածվող հեղափոխական շարժմանը: Ռուսական հեղափոխության հետ Եվրոպայում արդեն նկատվում էր հեղափոխական շարժման վերելք, և հեղափոխական պայթյունը հատկապես Գերմանիայում անխուսափելի կդարձներ Եվրոպական հեղափոխության միացումը ռուսականին: Իս սա իրենից լուրջ վտանգ էր ներկայացնում թե՛ Միացյալ Նահանգների, թե՛ Եվրոպական դաշնակիցների համար իրենց նպատակների իրագործման ճանապարհին:

Ստանալով գերմանական հայտագիրը՝ Նախագահ Վիլսոնն անմիջապես ձեռնամուխ եղավ պատասխանի պատրաստմանը: Գերմանական կառավարության ցուցաբերած պատրաստականությունը հարմար առիթ էր զինադադարի հաստատման բանակցություններում, հետևաբար նաև խաղաղության համաժողովում

²³¹ **3. Гершов**, Вудро Вильсон, с. 157.

²³² **Э. Людендорф**, Мои воспоминания о войне 1914—1918 гг., пер. с 5-го немецкого издания, под ред. А. Свечина, т. 2, Москва, "Гос. Изд.", 1924, эл. с. 237.

²³³ Архив полковника Хауза, т. 4, с. 85.

ճախածեռնությանը տիրելու և դրանով իսկ ստիպելու Անտանտին համաձայնել ամերիկյան պայմանների հետ:

Ամերիկյան կողմի պատասխանը, ըստ գնդապետ Ջաուզի, իր երանգով մեղմ էր²³⁴: Այնտեղ ասվում էր, որ Միացյալ Նահանգները ցանկանում է, որ Գերմանիան ևս մեկ անգամ հաստատի խաղաղություն հաստատելու իր պատրաստակամությունը՝ համաձայն «14 կետերի»: Պատասխան հայտագրում կար նաև բռնագրավված տարածքներն ազատելու մասին պահանջ:

Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի կառավարություններն անհանգստացած էին ճախագահ Վիլսոնի նման պահվածքով: Նրանք մտավախություն ունեին, որ Վիլսոնը կարող էր ընկնել Գերմանիայի պատրաստած ծուղակը, ինչի արդյունքում իրենք կզրկվեն հաղթանակի պտուղներից օգտվելու հնարավորությունից²³⁵: Սակայն ճախագահ Վիլսոնի քայլերը լավ հաշվարկված էին Միացյալ Նահանգների շահերի տեսանկյունից: Այս դեպքերից տասը տարի անց Ուինսթոն Չերչիլը (Winston Churchill) գրում էր. «Վիլսոնը տիրեց ճախածեռնությանը բանակցությունների վարման առաջին՝ ամենակարևոր փուլում: Խնդրի ողջ պատասխանատվությունն իր ձեռքը վերցնելու նպատակով նա ակտիվորեն օգտագործեց իր դիրքի առավելությունն ընդդեմ թշնամու և դաշնակիցների»²³⁶:

Հայտնվելով զինադադարի հաստատման գերմանա-ամերիկյան առանձին քննարկումների փաստի առջև՝ Անտանտի երկրները փորձեցին Միացյալ Նահանգներին զրկել ճախածեռնությունից հետագա բանակցություններում: Հոկտեմբերի 9-ին նրանք հայտարարեցին, որ զինադադարի պայմանները կարող են որոշվել միայն համաժողովի ժամանակ, որտեղ ներկա կլինեն բոլոր դաշնակից և միավորված պետությունները:

Համաժողովը կայացավ 1918 թ. հոկտեմբերի 29-ին Փարիզում: Միացյալ Նահանգներն այդ համաժողովում ներկայացրեց գնդապետ Ջաուզը: Ջաուզի խնդիրն էր համոզել Անտանտի առաջնորդներին ընդունել «14 կետերը» որպես հիմք ապագա խաղաղության համար: Վերջինս ենթադրելով, որ «14 կետերը» նման ձևակերպմամբ կարող են լինել չափազանց խոցելի, լրագրող Վոլթեր Լիփմանի օգնությամբ կազմեց դրանց մեկնաբանությունը*: Նախագահ Վիլսոնը հավանության արժանացրեց այդ մեկնաբանումը՝ հավելելով սակայն, որ այդ մանրամասները չեն հանդիսանում վերջնական և դրանք պետք է քննարկվեն միայն խաղաղության համաժողովի

²³⁴ Архив полковника Хауза, т. 4, с. 60

²³⁵ T. Bailey, Woodrow Wilson and The Lost Peace, New York, "Macmillan", 1944, p. 40.

²³⁶ У. Черчилль, Мировой кризис, пер. с англ., с предисл. И. Минца, Москва-Ленинград, "Государственное военное издательство", 1932, с. 61.

* «14 կետերի» պաշտոնական մեկնաբանությունը մանրամասն տես FRUS, 1918, Supplement 1, The World War, vol. 1, Washington, "Government Printing Office", 1933, p. 405-413:

ժամանակ: Նախագահ Վիլսոնը, մտադիր լինելով մասնակցել այդ համաժողովին, չէր ցանկանում իրեն նախօրոք պարտավորեցնել մեկնաբանություններով:

Հատկանշական է, որ դաշնակիցները նույնպես ունեին պարտավորվելու մտավախություն: Քննարկումների ժամանակ Լլոյդ Ջորջը հարցրեց գնդապետ Հաուզին. «Ընդունելով «14 կետերը» որպես զինադադարի հիմք՝ արդյո՞ք մենք չենք պարտավորվում այդ պայմանների կատարմամբ... Այդ իսկ պատճառով նախքան պայմանների հետ համաձայնվելը մենք պետք է հստակ որոշենք մեր դիրքորոշումը խաղաղության պայմանների հարցում»²³⁷:

Փարիզյան համաժողովի քննարկումներն ընթանում էին բավականին թեժ մթնոլորտում, քանզի դաշնակիցներն ամեն կերպ փորձում էին տալ «սրբազան գրվածքի» (այսպես է անվանել Լլոյդ Ջորջը նախագահ Վիլսոնի «14 կետերը») իրենց մեկնաբանումը²³⁸: Գնդապետ Հաուզը նույնիսկ դաշնակիցներին սթափեցնելու նպատակով հայտարարեց, որ նման իրավիճակում Միացյալ Նահանգները ստիպված կլինի անջատ բանակցելու գերմանական կողմի հետ: Ի պատասխան Էդուարդ Հաուզի այս հայտարարության հնչեց Լլոյդ Ջորջի խոսքը. «Եթե Միացյալ Նահանգները կնքի առանձին հաշտություն հակառակորդի հետ, ապա մենք պատրաստ ենք շարունակելու պայքարը» (այդ պահին ժորժ Կլեմանսոն բացականչեց՝ «Այո՞») ²³⁹:

Ի վերջո երկար բանակցություններից հետո հանձնաժողովը նոյեմբերի 4-ին եկավ ընդհանուր հայտարարի և համաձայնեց ընդունել «14 կետերը»՝ որպես նախնական հաշտության հիմք, սակայն երկու կարևոր վերապահումներով, դրանք են՝ ծովերի ազատության հարցը քննարկելու իրավունքը և ռազմատուգանքների սահմանումը՝ պատերազմի ավերածությունները վերականգնելու համար: Հայտագիրը ներկայացվեց նախագահ Վիլսոնին²⁴⁰: Վերջինս այն արժանացրեց հավանության և ներկայացրեց գերմանական կողմին, որի հիման վրա Կոմպիենյան անտառում կնքվեց զինադադար*:

Ավարտվեց Առաջին աշխարհամարտը, սակայն նախագահ Վիլսոնի համար սկսվեց մի նոր պայքար՝ հարատև խաղաղության հաստատման համար: Այս առթիվ նա հետագայում կասի գնդապետ Հաուզին. «Իմ համոզմամբ այս կյանքում չի կարելի որևէ արժեքավոր բանի հասնել առանց պայքարի»²⁴¹:

²³⁷ **Դ. Լլոյդ Ջորջ**, Правда о мирных договорах, т. 1, с. 74.

²³⁸ **Դ. Լլոյդ Ջորջ**, Военные Мемуары, т. 6, пер. с англ. И. Звавича, Москва, "Соцэкгиз", 1937, с. 151с.

²³⁹ **Դ. Լլոյդ Ջորջ**, Правда о мирных договорах, т. 1, с. 75.

²⁴⁰ Հայտագրի տեքստը մանրամասն տես **Դ. Լլոյդ Ջորջ**, Правда о мирных договорах, т. 1, с. 80-81:

* Կոմպիենյան զինադադար՝ կնքվել է 1918 թ. նոյեմբերի 11-ին Կոմպիենյան անտառում Միացյալ Նահանգների, Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի և Անտանտի մյուս երկրների մի կողմից և Առաջին համաշխարհային պատերազմում պարտված Գերմանիայի մյուս կողմից միջև: Ձինադադարի մասին մանրամասն տես՝ Дипломатический словарь, под ред. **А. Громыко**, т., 2, с. 67:

²⁴¹ Архив полковника Хауза, т. 4, с. 378.

Այդ պայքարի մեջ նախագահ Վիլսոնը մտավ ոգևորված իր «14 կետերով»: Ինչո՞ւ ոգևորված, քանի որ համայն մարդկության այդքան բաղձալի խաղաղությունը հաստատվում էր իր ծրագրի համաձայն: Եվ Վուդրո Վիլսոնը ներկայանում էր յուրատեսակ «փրկչի» կարգավիճակով, ով հայտարարում էր, որ Միացյալ Նահանգները պատրաստ է պայքարել ցանկացած տիպի բռնության դեմ և պաշտպանել ողջ մարդկությունը ռազմամոլության ցանկացած դրսևորումից:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՓԱՐԻԶԻ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ և ՆՈՐ ԱՇԽԱՐՀԱԿԱՐԳԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Առաջին աշխարհամարտը ապացույցն էր այն իրողության, որ միջպետական հարաբերությունների վեստֆալյան և Վիեննայի սկզբունքները կարիք ունեին վերանայման և «խմբագրման»: Անհրաժեշտություն կար ազգերի միջև գոյություն ունեցող հարաբերությունների նոր ձևաչափերի մշակման, որն ի վիճակի կլիներ ապահովելու նաև հաստատվող հետպատերազմյան խաղաղությունը: Վուդրո Վիլսոնը իր «14 կետերի» հրապարակմամբ փաստացի հայտարարեց «խմբագրի» դերի ստանձման պատրաստակամության մասին: Որպես խաղաղության հիմնահարցի լուծման մեխանիզմ նախատեսվեց Ազգերի Լիգայի ստեղծումը, որին հատկացվում էր առանցքային դերակատարում հետպատերազմյան խաղաղ կարգավորման գործընթացում:

3.1 ԱԶԳԵՐԻ ԼԻԳԱՆ՝ ՈՐՊԵՍ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՎԻՍՈՆՅԱՆ ՏԵՍԼԱԿԱՆ և ՆՈՐ ԱՇԽԱՐՀԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱՔԱՐ

Միացյալ Նահանգների հաջողությունները հասարակական և տնտեսական կյանքի գրեթե բոլոր ոլորտներում, մասնավորապես արտաքին քաղաքական բնագավառի ձեռքբերումները, ուժեղացրին ամերիկյան հասարակայնության համոզմունքն Ամերիկայի «յուրահատուկ ճակատագրի», համաշխարհային տերության կարգավիճակ ունենալու վերաբերյալ, որը տարբերվում է մյուս ազգերից և պետություններից: Ամերիկացիների մոտ սկսեց ձևավորվել իրենց երկրի «հատուկ առաքելության», «կանխորոշված ճակատագրի» գաղափարը, որի հիմնական բովանդակությունը աշխարհում ամերիկյան ժողովրդավարական արժեքների տարածման մեջ էր ²⁴² : Նախագահ Վիլսոնը ընդունեց այս գաղափարը՝ կիրառելով ամերիկյան արժեքների տարածման իր ուրույն մեթոդները: Նրա որդեգրած «բաց դռների» քաղաքականությունը Միացյալ Նահանգներ գերտերության ազդեցության տարածման հիմնական մեխանիզմներից մեկն էր, որը հիմնված էր «ազատ առևտրի» սկզբունքի վրա: Ինչպես նշել է գերմանացի աշխարհաքաղաքագետ Օտտո Մաուլը՝ (Otto Maull) բնութագրելով

²⁴² «Ամերիկյան չի հետապնդում որևէ այլ շահ, քան սեփական սկզբունքների հաղթանակը». Տե՛ս **Г. Киссинджер**, նշված աշխ., էջ 34:

«բաց դռների» քաղաքականությունը, «ամբողջական տնտեսական ներխուժումը համարժեք է տարածքային բռնազավթմանը»²⁴³:

Ըստ նախագահ Վիլսոնի՝ ամերիկյան մայրցամաքն արդեն «նեղ» էր ամերիկյան սկզբունքների տարածման համար, և անհրաժեշտ էր այդ սկզբունքները տարածել համայն աշխարհով: Ահա այս ճանապարհին Առաջին աշխարհամարտը կարծես պատեհ առիթ հանդիսացավ: «Պատերազմը,- նշում էր գնդապետ Յաուզը,- չուներ իրեն հավասարը... Խաղաղությունը, իր հերթին, պետք է բացեր նոր ճանապարհ... Դա բարենպաստ հնարավորություն էր զոհողությունների գնալու, որոնք արդյունքում կբերեին հարուստ պտուղներ բոլորի համար»²⁴⁴: Միացյալ Նահանգներն, ի դեմս նախագահ Վիլսոնի, դրսևորեց փայլուն դիվանագիտություն՝ հայտարարելով չեզոքություն այդ, առաջին հայացքից, ոչ ամերիկյան հակամարտությունում: Սա, կարելի է ասել, նախագահ Վիլսոնի առաջին գործնական քայլն էր համաշխարհային գերտերություն դառնալու և ամերիկյան սկզբունքներն ու արժեքները տարածելու ճանապարհին: Այն պսակվեց հաջողությամբ, քանզի Միացյալ Նահանգները վերածվեց համաշխարհային վարկատուի և դարձավ պատերազմի հիմնական ֆինանսավորողը: Նախագահ Վիլսոնը նշանակալի ուշադրություն էր դարձնում Միացյալ Նահանգների դերակատարությանը ենթադրվող աշխարհակարգի համակարգում և հայտարարելով չեզոքություն՝ փաստացի հրաժարվում է մեկուսացման ժառանգությունից՝ սկսելով ակտիվորեն մասնակցել նոր աշխարհակարգի ձևավորման գործին: Արդեն 1915 թ. դրությամբ նա չէր բացառում Միացյալ Նահանգների մասնակցությունը հետպատերազմյան խաղաղության համաժողովին: Գնդապետ Յաուզի այն հարցին, թե արդյո՞ք կարող է նա (Վուդրո Վիլսոնը - Կ.Գ.) գալ Եվրոպա այն դեպքում, եթե հաջողվի գումարել խաղաղության համաժողով և նրան հրավիրել նախագահելու այդ համաժողովում, նախագահ Վիլսոնը պատասխանել է. «Դա լավ կլինի, և ամերիկյան ազգը հավանաբար հավանություն կտա այդ քայլին...»²⁴⁵:

Ակնհայտ է, որ Միացյալ Նահանգներում նման տրամադրության ձևավորման համար օբյեկտիվ գործոն հանդիսացավ հանընդհանուր պատերազմի պայմաններում աշխարհում ձևավորված քաղաքական իրադրությունը: Պատերազմի աննախադեպ դաժանությունն ու ընդգրկունությունը ցույց տվեցին, որ շատ դժվար է լիարժեք գերծմնալ տեղի ունեցող իրադարձություններից: Աստիճանաբար հասունացավ միջամտելու պահը, քանզի և՛ նախագահ Վիլսոնը, և՛ Միացյալ Նահանգների կառավարող շրջանակները լավ գիտակցում էին, որ առանց անմիջական միջամտության հնարավոր

²⁴³ Տե՛ս **Э. Поздняков**, Геополитика, Москва, "Прогресс", 1995, с. 36:

²⁴⁴ Архив полковника Хауза, т. 4, տիտղոսաթերթ:

²⁴⁵ Архив полковника Хауза, т. 1, с. 136.

չէր ապագա խաղաղության հաստատման գործում ունենալ վճռական դերակատարում, ինչն այդքան անհրաժեշտ էր նման ուղի որդեգրած տերության համար: Միացյալ Նահանգները, գտնվելով հարաբերական չեզոքության մեջ, նախագահ Վիլսոնի 1917 թ. ապրիլի 6-ի որոշումից հետո շտապեց հսկայական քանակությամբ զորք տեղափոխել Եվրոպա: Այս քայլն իր ծավալով նման էր աննախադեպ անդրօվկիանոսյան ռազմական մեծ արշավի, ինչը վկայում էր միջազգային թատերաբեմում նոր դերակատարի ի հայտ գալու մասին²⁴⁶:

1917 թ. ապրիլի դրությամբ Միացյալ Նահանգներն արդեն հանդիսանում էր լիարժեք պատերազմող կողմ՝ ընդդեմ Գերմանիայի և նրա դաշնակիցների: Կարևոր էր նաև այն հանգամանքը, որ պատերազմը առիթ ընձեռեց Միացյալ Նահանգներին Եվրոպական խնդիրների լուծման համար գործնականում կիրառելու ամերիկյան սկզբունքների տարածման դիվանագիտությունը: Սա, փաստորեն, նախագահ Վիլսոնի թվով երկրորդ գործնական քայլն էր վերը նշված ճանապարհին: Այն ամրապնդեց «հատուկ առաքելության» մասին ամերիկյան պատկերացումները: «Ամեն ինչ պատրաստ է, - նշում էր նախագահ Վիլսոնը, - բախտի նախասահմանումը ցույց է տալիս մեզ ճանապարհը... մեզ ղեկավարում է Աստված... Ամերիկային վճռված է ցույց տալ ճշմարիտ ուղին»²⁴⁷: Միացյալ Նահանգները «պատերազմի մեջ մտավ ոչ իր ցանկությամբ, այլ հարկադրաբար՝ ազատելու համար աշխարհի ժողովուրդներին բռնատիրությունից»²⁴⁸: Դա պատերազմ էր ի շահ բոլոր ազգերի, «խաչակրաց արշավանք»՝ հոգուտ մարդկության²⁴⁹:

Միացյալ Նահանգները, փաստորեն, հանդես եկավ «փրկչի» կարգավիճակով: Այդ երևույթը նկատում է նաև խորհրդային պատմաբան, ամերիկագետ Էդուարդ Իվանյանը նշելով, որ նախագահ Վիլսոնն իրեն համարում էր «ինչ-որ բանական ուժի կամակատար», որը գոյություն ունի ոչ իր մեջ*, և Առաջին աշխարհամարտի ավարտական փուլում ավելի ու ավելի էր շեշտում «փրկչի» իր դերի մասին, որը պետք է աշխարհին բերեր խաղաղություն և բարեկեցություն՝ վերջ դնելով Եվրոպական ազգերի միջև ընթացող հյուժիչ պատերազմին²⁵⁰: Աշխարհի ազգերը այդքան սպասված

²⁴⁶ **3. Бжезинский**, Великая шахматная доска. Господство Америки и его геостратегические императивы, Москва, "Международные отношения", 2006, с. 14.

²⁴⁷ Տե՛ս **Լ. Շիրինյան**, Արևմուտքի անկումը, Վուդրո Վիլսոնը և արդարացի աշխարհակարգի հաստատման ամերիկյան փորձի ծախսողունը, Երևան, «Ամարաս», 2010, էջ 3, (այսուհետև **Լ. Շիրինյան**, Արևմուտքի անկումը):

²⁴⁸ **D. Henneth**, Don't Know Much About History, p. 245.

²⁴⁹ **Ch. Seymour**, American Diplomacy during the World War. Baltimore, "The John Hopkins Press", 1934, p. 24.

* Այս հատվածը Իվանյանը մեջբերում է Վոլթեր Լիփմանի խոսքից, ով մտերիմ հարաբերությունների մեջ էր նախագահ Վիլսոնի հետ:

²⁵⁰ **Է. Իվանյան**, Սափտակ տուն. Պրեզիդենտներ և քաղաքականություն, էջ 92:

խաղաղության հաստատումը սկսեցին կապել Միացյալ Նահանգների, նույնիսկ նախագահ Վիլսոնի անձի հետ:

Միացյալ Նահանգները, մտնելով եվրոպական հակամարտության մեջ, դարձավ այն երկիրը, որի հետ կապվեց խաղաղության հաստատման հույսը²⁵¹: Ահա այստեղ նախագահ Վիլսոնը կատարեց իր թվով երրորդ գործնական քայլը՝ հանդես գալով խաղաղության հաստատման իրատեսական ծրագրով՝ «14 կետերով»:

«14 կետերի» հրապարակմամբ նախագահ Վիլսոնն աշխարհին հասկացրեց, որ բացի նրանից, որ Միացյալ Նահանգները ունի համընդհանուր խաղաղության հաստատման ամբողջական ծրագիր, այն նաև «միակ հնարավոր ծրագիրն է»²⁵²:

Միացյալ Նահանգները իր հետագա ծրագրերում չէր տեսնում որևէ ուժի գերակայության տակ գտնվող եվրոպա: Նրա կարծիքով հետպատերազմյան աշխարհը չպետք է ձևավորվի երկու խմբավորումներից որևէ մեկի հաղթանակի հիման վրա՝ «խաղաղություն առանց հաղթանակի»: Խաղաղությունը կլինի տևական, ամուր, եթե կնքվի հավասարների միջև և ամբողջությամբ հիմնված լինի հավասարության և համընդհանուր բարօրությանը հավասար մասնակցություն բերելու սկզբունքի վրա²⁵³: Ի հաստատումն այս գաղափարի նախագահ Վիլսոնը նշում էր, որ Միացյալ Նահանգները կմտնի պատերազմի մեջ միայն այն ժամանակ, երբ եվրոպան կկանգնի որևէ ուժի կամ խմբավորման ազդեցության տակ ընկնելու վտանգի առաջ²⁵⁴:

«14 կետերը» եկան շարունակելու նախագահ Վիլսոնի այս գաղափարները: Այդ փաստաթուղթը վերջին հաշվով նույնպես ուղղված էր պահպանելու ուժերի հավասարակշռությունը եվրոպական տերությունների շրջանում: Այն չէր նախատեսում Գերմանիայի չափազանց թուլացում, ինչպես նաև կանխում էր Ֆրանսիայի մայրցամաքային գերտերություն դառնալու ձգտումները և Մեծ Բրիտանիայի ծովային գերտերության ավանդույթի պահպանումը: «14 կետերը» նախատեսում էին նաև ստեղծվող ուժային հավասարակշռության և համընդհանուր խաղաղության հետագա պահպանում: Համաձայն վերջին՝ տասնչորսերորդ կետի, հատուկ համաձայնագրով պետք է ստեղծվեր ազգերի համընդհանուր ընկերակցություն՝ «Ազգերի լիգա», ինչպես մեծ, այնպես էլ փոքր պետություններին քաղաքական անկախության և տարածքային ամբողջականության փոխադարձ երաշխիքներ տրամադրելու նպատակով:

²⁵¹ The Greatness of Woodrow Wilson 1856-1956, ed. by **E. Alsop**, New York-Toronto, "Rinehart & Company", 1956, p.174.

²⁵² The Great Events of The Great War, vol. VI, p. 3.

²⁵³ Last Hope of Peace, President Wilson's Address to the Senate of United States, January 22, 1917, Great Speeches and Other History Making Documents, p. 147-148. Տե՛ս նաև **Լ. Շիրինյան**, Արևմուտքի անկումը, էջ 5:

²⁵⁴ **А. Уткин**, Дипломатия Вудро Вилсона, с. 115.

Կասկած չի հարուցում այն, որ նախագահ Վիլսոնի՝ Ազգերի լիգա ստեղծելու առաջարկը հանդիսանում էր շատ կարևոր ներդրում նոր աշխարհակարգի ստեղծման գործում: Ըստ ամերիկյան հետազոտող Ռոբերտ Օսգուդի (Robert Osgood)՝ նախագահ Վիլսոնն իր այդ քայլով փաստացի կանխագուշակեց «գաղափարական ներգրավումների» և «բազմաբնույթ պարտավորությունների» սկզբունքի վրա հիմնված միջպետական էականորեն նոր փոխհարաբերությունների ձևավորումը²⁵⁵: Այն կոչված էր արմատապես փոխելու պետությունների փոխհարաբերությունները, ստեղծելու միանգամայն նոր մակարդակի և արդեն իրավական հարթության վրա գործող միջպետական փոխհարաբերությունների կարգավորման համակարգ, որտեղ ազգերի հավասարությունը, որի առկայության դեպքում է միայն հնարավոր կառուցել կայուն խաղաղություն, պետք է արտահայտվի նրանց իրավահավասարության մեջ: Իրավունքը պետք է հենվի բոլոր ազգերի ընդհանուր հզորության վրա, ինչը կախված է ոչ թե մեկի գերակայությունից, այլ անվտանգության հանդեպ պատասխանատվության զգացումի հավաքական գիտակցումից²⁵⁶:

Առաջին աշխարհամարտի բռնկվելուց հետո հավաքական անվտանգության գաղափարի մշակումը Վաշինգտոնում ստացավ ավելի ցայտուն ընթացք: Ի սկզբանե նախագահ Վիլսոնը ձեռնպահ էր մնում Ամերիկայի ուղղակի մասնակցությունից անվտանգության իրականացման գործին: Սակայն 1917 թ. հունվարից նա սկսեց ակտիվորեն պաշտպանել ամերիկյան մասնակցությունը՝ հենվելով «Մոնրոյի դոկտրինայի» վրա²⁵⁷: Վուդրո Վիլսոնի հավատը հավաքական անվտանգության նկատմամբ ենթադրում էր երկրների միավորումն ընդդեմ ագրեսիայի և անարդարության: Ըստ նրա՝ անկախ առանձին երկրների հզորությունից, պետությունների միջև իրավահավասարության հաստատումը կհանդիսանար հավաքական անվտանգության միջոցով խաղաղության ապահովման նախադրյալ: «Իրավունքը պետք է հիմնվի միավորված ուժի, այլ ոչ թե ազգի առանձին հզորության վրա... Ինքնին ենթադրվում է, որ անհնար է տարածքների կամ ռեսուրսների, ինչպես նաև, զարգացվածության մակարդակի հավասարություն: Սակայն ոչ ոք չի պահանջում ավելին, քան իրավահավասարություն: Մարդկությունը ցանկանում է ապրել ազատ, այլ ոչ թե զբաղվել միմյանց հզորության հավասարակշռմամբ»²⁵⁸: Նախագահը նորովի մեկնաբանեց Միացյալ Նահանգների դերը համաշխարհային թատերաբեմում, որը պատրաստակամ էր միջազգային կազմակերպության շրջանակներում դառնալ

²⁵⁵ **R. Osgood**, Woodrow Wilson, Collective Security, and the Lessons of History: The Philosophy and Policies of Woodrow Wilson, Chicago, "University of Chicago Press", 1957, p. 188-189.

²⁵⁶ **Լ. Շիրինյան**, Արևմուտքի անկումը, էջ 5:

²⁵⁷ **Г. Киссинджер**, Եզված աշխ., էջ 198:

²⁵⁸ President Wilson's Address to the US Senate, on Essential Terms of Peace in Europe, Delivered on January 22, 1917, President Wilson's State Papers and Addresses, ed. by **A. Shaw**, p. 352.

հավաքական անվտանգության համակարգի ակտիվ անդամ: Նոր աշխարհակարգը, որի պահպանման երաշխիքը պետք է դառնար Ազգերի լիգան, կոչված էր պահպանելու ուժերի հավասարակշռումը ինչպես եվրոպայում, այնպես էլ ողջ աշխարհում: Սակայն այդ հավասարակշռման հիմքում պետք է դրվեին ամերիկյան արժեքները և սկզբունքները, համաձայն որոնց՝ հնարավոր չէր հասնել հաստատուն խաղաղության և անվտանգության առանց ուժերի հավասարակշռության «ամերիկյան տարբերակի»: Այստեղ Միացյալ Նահանգները առաջարկում էր իր մեխանիզմը: Ըստ նախագահ Վիլսոնի՝ Ամերիկյան այլևս իրավունք չունեն պահելու իր արժեքները միայն իր համար: Ամերիկյան անվտանգությունն հետայսու անբաժան էր դառնում մնացյալ մարդկության անվտանգությունից. «Մենք՝ ամերիկացիներս, ստեղծվել ենք որպես ազատ ազգ և նպատակների ու հայեցակարգերի տեսանկյունից չենք սահմանափակվում միայն Ամերիկայով: Այժմ մեր խնդիրն է՝ ազատ ապրելու հնարավորություն ընձեռել համայն մարդկությանը, իսկ եթե դա մեզ չհաջողվի, ապա Միացյալ Նահանգների փառքն ու հեղինակությունը կդառնան առ ոչինչ»²⁵⁹: Այս կապակցությամբ 1917 թ. հունվարին նախագահ Վիլսոնը հայտարարեց, որ ամերիկյան սկզբունքները ողջ մարդկության սկզբունքներն են: Նա առաջարկեց նաև աշխարհի բոլոր ազգերին ընդունել համայն մարդկությանը՝ որպես համայն մարդկության դոկտրինա²⁶⁰: Քանզի Ազգերի լիգան պետք է ողջ աշխարհին տար այն, ինչ «Մոնրոյի դոկտրինան» տվեց արևմտյան կիսագնդին, և ինչպես վերջինս կյանքի կոչվեց ճիշտ ժամանակին՝ տեղի ունեցող փոփոխություններին համապատասխան ձևակերպում տալու նպատակով, այնպես էլ ի հայտ կգա և կզարգանա Ազգերի լիգան²⁶¹:

Մտածելով համաշխարհային ինտեգրացիայի հեռանկարների մասին՝ նախագահ Վիլսոնը հաշվի էր առնում նաև տարբեր միտումները, որոնք կային այդ ուղղությամբ: Օրինակ, պատերազմի առաջին ամիսներին որևէ «արդարության պահպանման համաշխարհային լիգա» ստեղծելու նպատակահարմարության մասին խոսում էր Թեոդոր Ռուզվելտը*։ Գիշտ է, ի սկզբանե Թեոդոր Ռուզվելտը չէր տեսնում Ամերիկայի միջամտելու անհրաժեշտությունը ուժերի հավասարակշռության եվրոպական գործերին, քանզի համարում էր, որ այդ խնդիրը ինքնակառավարվող է, սակայն նա գրեթե չէր

²⁵⁹ The League of Nations, Addresses Delivered by The President of The United States at Boston, on February 24, 1919 on The Plan for The League of Nations, Pres. by **Mr. Pittman**, Washington, "Government Printing Office", 1919, p. 7.

²⁶⁰ President Wilson's Address to the US Senate, on Essential Terms of Peace in Europe, January 22, 1917, President Wilson's State Papers and Addresses, ed. by **A. Shaw**, p. 352.

²⁶¹ Архив полковника Хауза, т. 4, с. 219.

* Թեոդոր Ռուզվելտի դիրքորոշման մասին մանրմասն տես՝ **J. Cooper**, The Warrior and the Priest: Woodrow Wilson and Theodor Roosevelt, p. 278-281:

կասկածում, որ եթե այդ դատողությունը սխալ լինի, ապա Միացյալ Նահանգները ստիպված կլինի վերականգնել հավասարակշռությունը: Թեոդոր Ռուզվելտը, աստիճանաբար նույնացնելով Միացյալ Նահանգների, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի ազգային շահերը, եկավ եզրահանգման, որ հենց Գերմանիան է հանդիսանում եվրոպական հավասարակշռության հիմնական սպառնալիքը²⁶²: 1914 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին նա հրատարակեց մի քանի հոդված, որոնցում Գերմանական գործողությունները բացառապես սանձարձակ անվանելով՝ Թեոդոր Ռուզվելտը կոչ էր անում Վուդրո Վիլսոնի կառավարությանը հանդես գալ գերմանական գործողությունների վճռական բողոքարկմամբ՝ մտավախություն հայտնելով գերմանական հետագա հավակնությունների վերաբերյալ. «Չե՞ք կարծում, որ եթե Գերմանիան հաղթի պատերազմում, նա կհավակնի գերակա դիրքի Զարավային և Կենտրոնական Ամերիկաներում...»: Միաժամանակ նա հանդես եկավ միջազգային նոր համաձայնություն կնքելու առաջարկով, որով կամրագրվեր միջազգային կարգը խախտելու ցանկացած փորձին «միջազգային ոստիկանության» ուժերի օգնությամբ դիմակայելու հնարավորությունը²⁶³:

Ժամանակի ընթացքում, ի վերջո, Միացյալ Նահանգները ստանձնեց Թեոդոր Ռուզվելտի կանխատեսած «հավասարակշռությունը վերականգնողի դերը», ընդ որում վերջինիս կենդանության օրոք: Սակայն դա տեղի ունեցավ համաձայն այն սկզբունքների, որոնք նա մերժում էր և այն նախագահի առաջնորդությամբ, որին նա, մեղմ ասած, «չէր սիրում»²⁶⁴: Թեոդոր Ռուզվելտը ծաղրում էր Վուդրո Վիլսոնի առաջ քաշած գաղափարները և մեղադրում այն բանում, թե վերջինս քարոզում էր մեկուսական տրամադրություններ՝ 1916 թ. նախագահական ընտրություններում իր հաջողությունը ապահովելու համար: Սակայն Զեմրի Քիսինջերը հերքում է Թեոդոր Ռուզվելտի այս ենթադրությունը (որի հետ մենք մասամբ համակարծիք ենք)՝ նշելով, որ իրականում Վուդրո Վիլսոնի քաղաքականության էությունը լրիվ հակառակ էր մեկուսակացմանը. Վուդրո Վիլսոնը հայտարարում էր ոչ թե Միացյալ Նահանգների համաշխարհային գործերից հեռանալու, այլ ամերիկյան արժեքների կիրառման ընդհանրականության և ճիշտ ժամանակին դրանց տարածման մասին: Նախագահ Վիլսոնը ընդգծում էր այն, որ «ամերիկյան հատուկ առաքելությունը վեր է առօրյա դիվանագիտությունից և պարտավորեցնում է նրան փարոս լինել մնացյալ մարդկության համար... Ժողովրդավարական երկրների արտաքին քաղաքականությունը բարոյապես բարձր է մյուս պետությունների քաղաքականությունից, քանզի այդ երկրների

²⁶² **Г. Киссинджер**, նշված աշխ., էջ 31:

²⁶³ "The New York Times", Oct. 4, 1914, Belgian Tragedy.

²⁶⁴ **Г. Киссинджер**, նշված աշխ., էջ 33:

ժողովուրդները բնությունից խաղաղասեր են...»²⁶⁵: Ըստ Թեոդոր Ռուզվելտի՝ միայն «երազկոտ» մարդը կարող է հավատալ, որ խաղաղությունը մարդկության բնական վիճակ է և որ այն կարելի է պահպանել անշահագրգիռ կողմերի փոխհամաձայնության միջոցով: Խաղաղությունը նրա համար ի սկզբանե փխրուն էր և պահպանել այն հնարավոր էր միայն «անդուլ զգոնությամբ և ուժեղ համախոհների դաշինքով»²⁶⁶: Թեոդոր Ռուզվելտը չէր կարողանում պատկերացնել այնպիսի միջազգային կազմակերպություն, որի մեջ միաժամանակ բարեհաջող ընդգրկվեին և՛ «ագրեսորը», և՛ «զոհը»: 1918 թ. նա գրում էր. «Ես դեմ չեմ նման լիգայի ստեղծմանը, պայմանով, որ մենք նրանից չափից ավելին չենք պահանջի... Ես չեմ ցանկանում հայտնվել այնպիսի դրության մեջ, որը ծաղրում էր դեռևս Եզովպոսը գայլերի և ոչխարների մասին առակում*»²⁶⁷:

1914 թ. դեկտեմբերին «The Atlantic Monthly» ամսագրում հոդվածով հանդես եկավ նաև բրիտանացի գիտնական Գոլդսուորթի Դիքինսոնը (Goldsworthy Dickinson), որտեղ նա նշում էր, որ անհրաժեշտ է ուժեղացնել ժողովրդավարական «հսկողությունը» (ընդգծումը՝ Կ.Գ) Եվրոպայի արտաքին քաղաքականության վրա: Ըստ նրա՝ այդ խնդիրը կարելի էր լուծել փոքր ազգերի իրավունքների ընդլայնմամբ, ազգերի ազատ ինքնորոշման իրավունքի հետևողական կիրառմամբ, միջազգային միջնորդ դատարանի արդյունավետ գործող մեխանիզմի և հատկապես սպառազինության նկատմամբ վերահսկողություն սահմանող համաշխարհային օրգանի ստեղծմամբ²⁶⁸:

Հատկանշական է նաև այն, որ նախքան այս Միացյալ Նահանգների կառավարությունն արևմտյան կիսագնդում արդեն փորձել էր կիրառել հավաքական անվտանգության նմանօրինակը մայրցամաքային մակարդակով: 1914 թ. նախագահ Վիլսոնը մեծ խանդավառությամբ պաշտպանեց գնդապետ Հաուզի նախաձեռնությունը համաամերիկյան համաձայնագիր կնքելու վերաբերյալ, որը կհանդիսանար Հարավային և Հյուսիսային Ամերիկաների որակապես նոր հարաբերությունների սկիզբը: Այդ համաձայնագիրը ոչ միայն կերաշխավորեր տարածաշրջանի երկրների անվտանգությունը, այլև կհաստատեր վեճերի խաղաղ կարգավորման հատուկ մեխանիզմ: Էդուարդ Հաուզը իր առաջարկում նշում էր նաև, որ այդ երևույթը կարող է

²⁶⁵ Annual Address (Message) to Congress, december 8, 1914, President Wilson's Great Speeches and other History Making Documents, p. 50-64.

²⁶⁶ Տե՛ս **Գ. Киссинджер**, նշված աշխ., էջ 43:

* Առակում խոսքն այն մասին է, թե ինչպես գայլերը և ոչխարները համաձայնեցին բարեկամանալ, և ոչխարները հեռացրեցին պահապան շներից՝ որպես վստահության և բարի կամքի երաշխիք, որից հետո գայլերը կերան նրանց: Մանրամասն տե՛ս Եզովպոսի առակները, թարգ. Վարդգես Բաբայանի, Երևան, «Հայստան», 1972, էջ 135:

²⁶⁷ Տե՛ս **Գ. Киссинджер**, նշված աշխ., էջ 42-43:

²⁶⁸ **Т. Кноок**, To End All Wars: Woodrow Wilson and the Quest for a New World Order. New York-Oxford, "Oxford University Press", 1992, p. 36-38.

օրինակելի լինել եվրոպական երկրների համար, երբ այնտեղ ի վերջո կհաստատվի խաղաղություն²⁶⁹:

Յենվելով իր խորհրդականի առաջարկի վրա՝ 1914 թ. դեկտեմբերին Վուդրո Վիլսոնը անձամբ կազմեց համաամերիկյան համաձայնագրի առաջին նախագիծը: Այդ փաստաթղթի կարևորագույն դրույթներից էին հանրապետական կառավարման հարացույցուն քաղաքական անկախության, տարածքային ամբողջականության փոխադարձ երաշխիքների առկայությունը, ինչպես նաև սպառնալիքային և առևտրի վրա պետական վերահսկողություն սահմանող բազմակողմ համաձայնագրի ստորագրումը²⁷⁰:

Սակայն Վուդրո Վիլսոնի կառավարությանը չհաջողվեց իրագործել այս գաղափարը: Եթե սկզբում լատինամերիկյան երկրները դրսևորեցին զգուշավոր դիրքորոշում համաամերիկյան համաձայնագրի նկատմամբ, ապա ավելի ուշ Միացյալ Նահանգների տարածաշրջանային քաղաքականության հետևանքով (մուտքը Մեքսիկա, Հայիթի, Դոմինիկյան հանրապետություն և այլն) նրանք բացասաբար տրամադրվեցին վերջինիս նկատմամբ: Բացի այդ՝ շարունակվող Համաշխարհային պատերազմը և Միացյալ Նահանգների հարաբերությունների զարգացումը եվրոպական երկրների հետ անհրաժեշտություն առաջացրին արդեն համաշխարհային մի կառույցի ստեղծման, որի մեջ անկասկած պետք է ընդգրկվեին նաև ամերիկյան մայրցամաքի երկրները:²⁷¹

Նախագահ Վիլսոնի հետագա մտորումները Ազգերի լիգայի մասին՝ որպես համընդհանուր խաղաղ կարգավորման բաղկացուցիչ տարրի, ընդլայնեցին նրա պատկերացումները հավաքական անվտանգության հայեցակարգի բնույթի մասին: Պետք է նշել, որ պատերազմը սկսելուց հետո Միացյալ Նահանգներում սկսվեցին միջազգային ընդհանրական (ունիվերսալ) խաղաղարար կազմակերպություն ստեղծելու քննարկումները: 1915 թ խաղաղության պարտադրման լիգան՝* որպես նոր աշխարհակարգի հիմնարար գաղափար, առաջարկեց ստեղծել համաշխարհային կազմակերպություն՝ օժտված ոչ միայն իրավարար (արբիտրաժ) գործառույթներով,

²⁶⁹ Архив полковника Хауза, т. 1, с. 29-30.

²⁷⁰ Նույն տեղում, էջ 30:

²⁷¹ **M. Gilderhus**, Pan-American Initiatives: The Wilson Presidency and "Regional Integration", 1914-1917, "Diplomatic History", vol. 4, №4, October 1980, p. 410, [http://onlinelibrary.wiley.com/journal/10.1111/\(ISSN\)1467-7709/issues](http://onlinelibrary.wiley.com/journal/10.1111/(ISSN)1467-7709/issues)

* Խաղաղության պարտադրման լիգա (The League to Enforce Peace-LEP)՝ Հիմնվել է Նյու Յորքում 1914 թ.: Այս կառույցի նպատակն էր աջակցել խաղաղության պահպանման միջազգային կառույցի ստեղծմանը: Լիգայի նախագահն էր, Միացյալ Նահանգների նախկին նախագահ Ուիլյամ Թաֆտը, քարտուղարն էր Ուիլյամ Շորթը: Ազգերի լիգայի ստեղծումից հետո Լիգան ստանձնեց Միացյալ Նահանգների Ազգերի լիգային անդամակցելու խնդրին աջակցելու պատրաստակամությունը: Լիգան իր գործունեությունը դադարեցրեց 1923 թ.: Կազմակերպության մասին մանրամասն տես Enforced Peace. Proceeding of the First Annual National Assemblage of the League to Enforce Peace, Published by The League to Enforce Peace, New York, 1916. Տես նաև **R. Bartlett**, The League to Enforce Peace, Chapel Hill, The University of North Carolina Press, 1944:

այլև քաղաքական, տնտեսական և ռազմական պատժամիջոցներ կիրառելու իրավունքով՝ հարձակողական պատերազմի ցանկացած փորձ կանխելու համար²⁷²:

Այս առաջարկը լուրջ քննարկումների առիթ դարձավ ամերիկյան հասարակության շրջանում: Միացյալ Նահանգների արտաքին քաղաքական մտքի երկու հակադիր բևեռներից հնչեցին երկու տարբեր կարծիքներ. մի կողմից՝ ավելի արմատական խաղաղարարները (պացիֆիստները) (օր.՝ հայտնի ամերիկյան գրող, հասարակական-քաղաքական գործիչ, խաղաղարար, 1919 թ. խաղաղության և ազատության կանանց միջազգային լիգայի նախագահ Ջեյն Ադամսը (Jane Addams), Պետքարտուղար Ուիլյամ Բրայանը) հանդես եկան ընդդեմ լիգայի ծրագրային դրույթների փիլիսոփայության՝ հայտարարելով խաղաղության համար մղվող պայքարում «ուժային մեթոդների» կիրառման ծայրահեղ վտանգավորության մասին: Մյուս կողմից՝ ազգայնականների կողմնակիցները (օր.՝ Միացյալ Նահանգների նախկին նախագահ Թեոդոր Ռուզվելտը, սենատոր Ջեյնի Լոջը (Henry Lodge)) պնդում էին, որ երկիրը դեռևս պատրաստ չէ խաղաղության պահպանման համար իր վրա վերցնել որևէ միջազգային պարտավորվածություն²⁷³:

Համաշխարհային կազմակերպության կազմավորման վերաբերյալ հետաքրքիր դատողություն է կատարել «The New Republic» շաբաթաթերթը: Խմբագրական մի հոդվածում՝ տպագրված 1915 թ. մարտի 20-ի համարում, շոշափվել են ենթադրվող լիգայի բնույթին վերաբերող հարցեր. «կարո՞ղ է արդյոք Լիգան դառնալ փոխադարձ երաշխիքների ընկերակցություն», «արդյոք Լիգան չի՞ դառնա հին կայսերական դաշինքների կրկնությունը», «կհամաձայնե՞ն արդյոք Մեծ տերությունները, հոգուտ այդ կառույցի, հրաժարվել իրենց ազգային ինքնիշխանության մի մասից»: Այնուհետև հոդվածում ասվում էր, որ համաշխարհային իրադարձությունները ցույց են տալիս, որ ստեղծել այնպիսի ընդհանրական լիգա, որը բոլորի համար կլինի ընդունելի, գործնականորեն անհնար է: Այդ կազմակերպության ծրագիրը կնդունեն այն երկրները, որոնք սկզբունքորեն «ամեն ինչից գոհ» կլինեն: Հավանաբար նման «բավարարվածների» լիգա կմտնեն Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան կամ Ռուսաստանը: Գերմանիան ամենայն հավանականությամբ կհրաժարվի այդ լիգայի կազմի մեջ մտնելուց²⁷⁴: Այլ խոսքով ասած՝ հոդվածում արժարժվում էր նոր «համընդհանուր

²⁷² **R. Bartlett**, *The League to Enforce Peace*, p. 31-42, Տե՛ս նաև *Мир/Peace: Альтернативы войне от античности до конца второй мировой войны*, отв. ред., **Ч. Чэтфилд, Р. М. Илюхина**, Москва, "Наука", 1993, с. 198-199.

²⁷³ **S. Herman**, *Eleven Against War: Studies in American Internationalist Thought, 1898-1921*, Stanford, "Hoover Institution Press", 1969, p. 57-58.

²⁷⁴ "The New Republic", vol. 2, №20, (March 20, 1915), p., 168-169. <http://catalog.hathitrust.org/Record/000502176>

համաձայնության» հեռանկարի հարցը, որն ի վիճակի կլիներ միավորելու համաշխարհային հանրությունը:

Նախագահ Վիլսոնը, ծանոթանալով լիգային վերաբերող բազմաբնույթ առաջարկներին, դեռևս չէր շտապում արտահայտել իր ենթադրություններն այդ կապակցությամբ: Ի սկզբանե Վուդրո Վիլսոնին գրավել էր լիգայի գաղափարի տնտեսական մասը: Նա խոսում էր հիմնականում «ծովերի ազատության», «չեզոք երկրների առևտրի սահմանափակման անթույլատրելիության», «բաց դռների», լիգայի անդամների «առևտրի հավասար իրավունքների» և «laissez-faire»^{*} սկզբունքի վերականգնման և պաշտպանության մասին²⁷⁵: Այս գաղափարները միշտ էլ լայն աջակցություն են գտել ամերիկյան հասարակության մեջ: Օրինակ՝ այդ նույն «The New Republic» շաբաթաթերթը բազմաթիվ անգամ նշել էր բոլոր չեզոքներին «խաղաղության լիգայի» մեջ համախմբելու նպատակահարմարության մասին²⁷⁶: Սակայն Վուդրո Վիլսոնի համար ավելի գայթակղիչ եղավ Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Էդուարդ Գրեյի վերը նշված առաջարկը, որի ենթադրություններում լիգայի ստեղծման ծրագրերն ընդունեցին բացահայտ քաղաքական ենթատեքստ: Հատուկ միջազգային կառույցի միջոցով միջպետական վեճերի իրավական լուծման անհրաժեշտության հարցը բարձացնելով՝ բրիտանացի նախարարը գնդապետ Հաուզին ուղարկված նամակում նկատում էր. «Եթե դրան (Լիգայի ստեղծմանը-Կ.Գ.) հնարավոր լինի հասնել, ապա «ծովերի ազատության» և շատ այլ հարցեր հեշտությամբ կստանան իրենց լուծումը»²⁷⁷:

Այս միտքը շատ արագ շարժեց նախագահ Վիլսոնի հետաքրքրությունը, քանզի այն ամբողջությամբ համապատասխանում էր անգլո-ամերիկյան քաղաքական ավանդույթների նկատմամբ նրա ունեցած հակմանը: Այդ իսկ պատճառով հետագայում նախագահ Վիլսոնը սկսեց բավականին համառորեն խոսել այն մասին, որ, ի վերջո, Միացյալ Նահանգների համար անխուսափելի կդառնա ավանդական ազգային մեկուսացումից հրաժարումը: Նա նշում էր. «Ուզում ենք դա, թե ոչ, մենք մասնակիցն ենք դառնում համաշխարհային կյանքին, համայն մարդկության գործերը մեր գործերն են»: Գնահատելով ամերիկյան քաղաքականության հեռանկարները ձևավորված պայմաններում՝ Միացյալ Նահանգների նախագահը մերժում էր գերտերության վերածվելու եվրոպական պետությունների օրինակը, և այս ամենից դուրս գալու միակ

* "Laissez-faire". Ֆրանսերենից բառացի թարգմանվում է «թույլատրել անել», սկզբունք, որը պահանջում էր պետությունից չմիջամտել տնտեսական կյանքին և հնարավորություն տալ ազատ տնտեսվարողին կառավարելու իր տնտեսությունը: Այն հանդիսացել է ֆրիթերեյդերների կարգախոսը Մեծ Բրիտանիայում և Ֆրանսիայում 18-19-րդ դդ.:

²⁷⁵ **W. Diamond**, *The Economic Thought of Woodrow Wilson*. Baltimore, "The Johns Hopkins Press", 1943, p. 169:

²⁷⁶ "The New Republic", vol. 1, №9, (January 2, 1915), p., 7-9.

²⁷⁷ Архив полковника Хауза, т. 2, с. 71.

ելքը, ըստ նրա, «ազգերի ընդհանրական ընկերակցության» ստեղծումն էր, որը կապահովեր ծովային ճանապարհների անվտանգությունը, կպահպաներ խաղաղությունն աշխարհում և տարածքային ամբողջականության ու քաղաքական անկախության իրավունք կերաշխավորեր բոլոր ազգերին²⁷⁸: Նկատի առնելով Միացյալ Նահանգների չեզոքությունը բռնկված պատերազմում՝ խաղաղության համաձայնագիրը (ներառյալ նաև Ազգերի լիգայի ստեղծման դրույթը) նախագահ Վիլսոնի կողմից ի սկզբանե դիտարկվում էր որպես պատերազմող երկրների միջև ստորագրվելիք համաձայնագիր: Ըստ նրա՝ Միացյալ Նահանգներն այդ համաձայնագրի մաս կարող էր կազմել միայն ապագայում՝ պահպանելու համար միջազգային հավասարակշռությունը: Լավ գիտակցելով, որ նման քայլը նշանակում էր ամերիկյան դիվանագիտական ավանդույթների խախտում և Ջորջ Վաշինգտոնի «արտասահմանյան երկրների հետ «խճճող» դաշինքներին չմասնակցելու» նախազգուշացման անտեսում, Վուդրո Վիլսոնը, այնուամենայնիվ, փորձում էր համերկրացիներին համոզել, որ Ազգերի լիգայի վերաբերյալ հետպատերազմյան համաձայնագիրը կունենա միանգամայն այլ բնույթ. «Ես մտածում եմ, որ Միացյալ Նահանգների ժողովուրդը պատրաստ է դառնալ ազգերի ցանկացած դաշինքի գործընկեր, որն ի վիճակի է երաշխավորել համընդհանուր պաշտպանություն եսասիրական ագրեսիայից և նպաստել խաղաղության պահպանմանը՝ հիմնված իրավունքի և արդարության վրա»²⁷⁹: Հատկանշական է, որ որպես իր «համընդհանրական» ծրագրերի կարևորագույն հիմնավորում նա միշտ օգտագործում էր բարոյականությունը, իսկ ռազմավարական իրադրությունները, որոնց հիման վրա պետք է մշակվեին երկրի ազգային շահերը պաշտպանող համապատասխան մեխանիզմներ, նախագահի համար ունեին երկրորդական դերակատարում²⁸⁰:

Նոր աշխարհակարգի ուրվագծերի քննարկումն անմիջապես առաջացրեց ամերիկյան հասարակության ոչ միանշանակ արձագանքը: Միջազգայնացման (ինտերնացիոնալիզմի) կողմնակիցները ողջունեցին վիլսոնյան ելույթը: Օրինակ՝ հայտնի լրագրող Հենրի Հոլտը (Henry Holt) նախագահի խոսքը համեմատեց Միացյալ Նահանգների համար այնպիսի հիմնարար փաստաթղթերի հետ, ինչպիսիք են

²⁷⁸ The Address of the President of the United States Delivered at the First Annual Assemblage of the League to Enforce Peace, May 27, 1916, Washington, "Government Printing Office", 1916, p. 2.

²⁷⁹ The Address of the President of the United States Delivered at the First Annual Assemblage of the League to Enforce Peace, May 27, 1916, p. 4.

²⁸⁰ **R. Osgood**, *Ideals and Self-Interest in America's Foreign Relation*. Chicago, "University of Chicago Press", 1954, p. 189-190.

«Անկախության հռչակագիրը», կամ էլ «Մոնրոյի դոկտրինան»՝ պատկերավոր կերպով այն կոչելով «փոխկապվածության հռչակագիր»:²⁸¹

Սակայն եղան նաև քննադատական կարծիքներ և դատողություններ: Հիմնական անհանգստության պատճառը ենթադրվող լիգային Միացյալ Նահանգների վաղ թե ուշ անդամակցության հանգամանքն էր: Դեռևս 1915 թ. «World's Work» ամսագիրը, հավանության արժանացնելով խաղաղարար կազմակերպության բուն գաղափարը, մատնանշում էր, որ միջազգային հարաբերությունների նոր համակարգ Միացյալ Նահանգների մուտք գործելու ճանապարհին գլխավոր խոչընդոտը՝ Եվրոպայի գործերին չմիջամտելու ամերիկյան ավանդույթն է: Նյույորքյան «New York Tribune» օրաթերթը նույնպես նախագահ Վիլսոնի Ամերիկյան համաշխարհային կազմակերպության կազմի մեջ ընդգրկելու քայլը որակում էր որպես ամերիկյան արտաքին քաղաքական ուղեգծից Վուդրո Վիլսոնի հրաժարում, իսկ նախագահի ելույթը՝ որպես «անկայունության, զգայապաշտության և գեղեցիկ արտահայտությունների նկատմամբ հակման վառ դրսևորում»²⁸²:

Սակայն Վուդրո Վիլսոնի համար Ազգերի լիգայի ստեղծման գաղափարն ավելի ու ավելի դառնում էր Միացյալ Նահանգների արտաքին քաղաքականության կարևորագույն խնդիրներից մեկը: Դեռևս 1916 թ. հոկտեմբերի 5-ին Օմահայում ունեցած ելույթի ժամանակ նա ընդգծում էր. «Աշխարհը պետք է միավորվի ընդհանուր կյանքով և «ընդհանուր շահերով», հետևաբար Միացյալ Նահանգների կառավարության և ժողովրդի պարտքն է ազգի բարոյական և ֆիզիկական ողջ ուժերն ուղղել համաշխարհային կազմակերպության կազմավորման հարցի լուծման ուղղությամբ»:²⁸³ Նախագահ Վիլսոնը, տեսնելով Եվրոպայում իրադրության օր օրի թեժացումը, հստակ գիտակցում էր, որ նման փոխադարձ ատելության մթնոլորտում խաղաղության երաշխիք կարող է տալ միայն Միացյալ Նահանգները: 1917 թ. հունվարի 22-ի ուղերձում առաջ քաշելով իր հանրահայտ «խաղաղությունն առանց հաղթանակի» սկզբունքը՝ նախագահն ընդգծեց, որ ապագա խաղաղությունն առանց Միացյալ Նահանգների կլինի ոչ հաստատուն²⁸⁴: Ավելի ուշ՝ 1917 թ. ապրիլի 2-ին, կոչ անելով օրենսդիրներին ընդունել Գերմանիային պատերազմ հայտարարելու որոշումը՝ Վուդրո Վիլսոնը ևս մեկ անգամ ցույց տվեց, որ Միացյալ Նահանգները, մասնակցելով պատերազմին, կնպաստի

²⁸¹ **W. Kuehl**, Hamilton Holt: Journalist, Internationalist, Educator, Gainesville, "University of Florida Press", 1960, p. 226-227.

²⁸² "World's Work", vol., 30, №4, August 1915, p., 385-396, <http://catalog.hathitrust.org/Record/009676324>. Տե՛ս նաև "The Literary Digest", New York, "Funk & Wagnalls Company", vol. LII, (52), № 24, June 10, 1916, p. 1683-1686, <http://catalog.hathitrust.org/Record/000051914>:

²⁸³ Address of President Wilson in Omaha, October 5, 1916, Washington, "Government Printing Office", 1916, p. 2.

²⁸⁴ President Wilson's Address to the US Senate, on Essential Terms of Peace in Europe, Dilivered on January 22, 1917, President Wilson's State Papers and Addresses, ed. by **A. Shaw**, p. 352.

Նոր աշխարհակարգի հաստատմանը՝ հիմնված ազատ ազգերի հայեցակարգի վրա. «Մեր նպատակն է վերականգնել խաղաղության և արդարության սկզբունքը միջազգային կյանքում, ...հաստատել իրականում ազատ և ինքնիշխան ազգերի միջև նպատակների և գործողությունների այնպիսի համաձայնություն, որն ապագայում նույնպես կապահովի այդ սկզբունքի պահպանումը»²⁸⁵: Այլ կերպ ասած՝ Վուդրո Վիլսոնի արտաքին քաղաքական մտքի տրամաբանությունը հանգեցնում էր այն ենթադրության, որ Միացյալ Նահանգները պատասխանատվություն է կրում արդար խաղաղության համար: Սրա հետ մեկտեղ Ազգերի լիգայի ստեղծման որոշման ընդունումը որակվում էր որպես խաղաղության պայմանագրի անբաժանելի մաս, քանզի միջազգային հանրությունն «առանց խաղաղությունը պաշտպանող մեխանիզմի կհիմնվեր միայն օրենքից դուրս հայտարարված պետությունների հնազանդության վրա»²⁸⁶:

Այս ամենով հանդերձ միջազգային կառույցի ստեղծման գաղափարը երկար ժամանակ Վուդրո Վիլսոնի մոտ կրում էր զուտ դեկլարատիվ բնույթ: «Նրա համար,- գրում է ամերիկյան պատմաբան Թոմաս Նոքը (Thomas Knock),- Լիգայի հարցը «ավելի շուտ կողմնացույց էր, քան արդեն իսկ վերջնական որոշում»²⁸⁷: Նախագահ Վիլսոնն իր ելույթներում ընդգծում էր հանուն աշխարհում խաղաղության պահպանման ազգերի միավորման անհրաժեշտությունը: Հատկանշականն այն է, որ խաղաղության պահպանման և նոր աշխարհակարգի հաստատման վերաբերյալ Վուդրո Վիլսոնի դատողությունները եզրափակվում էին Ազգերի լիգայի ստեղծման դրույթով: «14 կետերից» վերջինը նույնպես ենթադրում էր ազգերի համընդհանուր ընկերակցության հիմնում՝ ինչպես մեծ, այնպես էլ փոքր պետություններին քաղաքական անկախության և տարածքային ամբողջականության փոխադարձ երաշխիքներ տրամադրելու նպատակով: Նոր կազմակերպության գործունեության սկզբունքների վերաբերյալ նախագահ Վիլսոնի կոնկրետ առաջարկների թվին, թերևս, կարելի է դասել միայն «ծովերի ազատությունը, ինչպես խաղաղ, այնպես էլ պատերազմական ժամանակ»: Տվյալ դրույթը ներկայացվել էր Միացյալ Նահանգների կողմից դեռևս 1914 թ. օգոստոսին: Ի սկզբանե դրա տակ ենթադրվում էր «չեզոքների առևտրի իրավունքը» պատերազմի ժամանակ: Սակայն ավելի ուշ՝ միջազգային կազմակերպության ձևավորման եզրափակիչ փուլում, Վուդրո Վիլսոնը մեկնաբանեց այդ դրույթը՝ որպես «ծովերի օգտագործման բոլոր ազգերի հավասար իրավունքների» ընդունում: 1918 թ.

²⁸⁵ The President's War Message, April Second Nineteen Sevebteen, San Francisco, "Paul Elder and Company", (հրատարակման տարեթիվը նշված չէ), p. 14-15.

²⁸⁶ An Address in the Metropolitan Opera House, September 27, 1918, "The New York Times", September 28, 1918.

²⁸⁷ T. Knock, To End All Wars, p. 127.

սեպտեմբերի 27-ին Սետրոպոլիտեն-Օպերայուն ունեցած իր ելույթում ամերիկյան նախագահն առանձնացրեց ևս մեկ առաջնային սկզբունք՝ Ազգերի լիզան պետք է բացառեր իր ներսում որևէ «առանձնահատուկ շահերի», դաշինքի կամ տնտեսական խմբավորման գոյությունը²⁸⁸։ Սրանով փաստորեն Վուդրո Վիլսոնն ընդգծեց ստեղծվող կազմակերպության համընդհանուր բնույթը և հասկացրեց, որ նոր աշխարհակարգի շրջանակներում մերժում է ավանդական բլոկային դիվանագիտությունը։ Այդ իսկ պատճառով նա բազմիցս ընդգծել է Լիգայի կազմում Գերմանիայի և նրա դաշնակիցների, ինչպես նաև Ռուսաստանի ընդգրկվելը։

Սակայն չի կարելի չնկատել, որ ենթադրվող կազմակերպության համընդհանրության սկզբունքը նախագահ Վիլսոնի կողմից տարբեր ելույթներում ոչ միանշանակ է մեկնաբանվել։ 1918 թ. փետրվարի 11-ին կոնգրեսում ունեցած ելույթում նա լիզան կոչեց «բոլոր ազգերի միավորված ուժ, որոնք սիրում են արդարությունն ու ցանկանում են այն պահպանել ամեն գնով»։ Այս կապակցությամբ առանձին դժվարություն էր ստեղծում Գերմանիայի անդամության հարցը։ Մի կողմից, նա վստահ էր, որ, հրաժարվելով կայսերապաշտությունից, Գերմանիան կդառնա «համաշխարհային միավորման» լիիրավ անդամ, բայց մյուս կողմից, ի՞նչ անել, եթե վերջինս չցանկանա հրաժարվել հին կարգերից կամ էլ փորձի կիրառել բուլշևիկների փորձը։ Նման այլընտրանքի հնարավորությունը նախագահ Վիլսոնին բերեց երկու կարևոր եզրահանգումների.

ա. Գերմանիայի ժողովրդավարացում ամերիկյան չափորոշիչներով,

բ. «ոչ ժողովրդավարական» երկրները չեն կարող ներգրավվել նոր աշխարհակարգի մեջ²⁸⁹։

Նման «ընտրողականության» դրսևորում նախագահ Վիլսոնի կողմից նկատվում է նաև Փարիզի համաժողովում, երբ Ազգերի լիգայի կանոնադրության մշակման հանձնաժողովի նիստերից մեկի ժամանակ նա առաջարկեց լիգային անդամակցելու իրավունք տալ միայն այն պետություններին, «որոնցում առկա է ժողովրդավարություն»²⁹⁰։ Այլ խոսքով ասած՝ իրապես համընդհանուր միջազգային կազմակերպության կազմավորումը, նախագահ Վիլսոնի կարծիքով, խստորեն զուգակցվում էր ամենուրեք ժողովրդավարական կարգերի հաստատման հետ։

²⁸⁸ An Address in the Metropolitan Opera House, September 27, 1918, **W. Wilson**, *Guarantees of Peace*, New York-London, "Harper & Brothers", 1919, p. 58-70.

²⁸⁹ Address to the Congress on the Addresses of the German Chancellor and the Austro-Hungarian Minister for Foreign Affairs, February 11, 1918, President Wilson's Foreign policy, p. 364-373.

²⁹⁰ **D. Miller**, *The Drafting of the Covenant*, vol. 1, New York, "Loud, Putnam", 1928, p. 164. Տե՛ս նաև **L. Ambrosius**, *Wilsonian Statecraft: Theory and Practice of Liberal Internationalism during the World War I*. Wilmington, "SR Books", 1991, p. 125:

Հատկանշական է, որ Լիգայի մասին իր դատողություններում Վուդրո Վիլսոնը երբևէ չի դիտարկել ենթադրվող միջազգային կազմակերպությունը և՛ Միացյալ Նահանգներում, և՛ Եվրոպայում հաճախ քննարկվող բաժանարար կամ խաղաղասիրական ռազմական ուժի կիրառման հայեցակետից: Բանն այն է, որ այդ տեսանկյունը, որպես կանոն, կիսում էին նրանք, ում նախագահն համարում էր «պահպանողական» գործիչներ: Միացյալ Նահանգներում լիգայի ռազմական գործառույթների մասին ակտիվ խոսում էին Թեոդոր Ռուզվելտը և նրա կողմնակիցները: Հատկապես 1914 թ. նոյեմբերին «The New Republic» շաբաթաթերթը, շոշափելով սեփական շահերը պաշտպանելու պետության դեռևս պատրաստ չլինելու թեման, հարց բարձրացրեց նաև միջազգային ինտեգրացիայի խաղաղասիրական ծրագրերի միանտության վերաբերյալ. «Կարելի՞ է արդյոք նախագծել աշխարհակարգի սկիզբը՝ առանց հաշվի առնելու ժամանակակից աշխարհի կարծիքը, որում խաղաղարարներն ու քվակերները փոքրամասնություն են կազմում: ...Չի կարելի մտածել, որ աշխարհը կառավարվում է գլխավորապես «համընդհանուր բարոյականության» օրենքներով, շատ հարցեր նրանում դեռևս լուծվում են ուժով»: Սրանից ելնելով՝ դրվում էր ոչ միայն երկրի պաշտպանունակության, այլև «միջազգային ոստիկանական ուժի» ստեղծման հարցը: «Միայն այդպես,- շարունակում էր հոդվածի հեղինակը,- կարելի է իրապես օգնել աշխարհում խաղաղության հաստատման գործին»²⁹¹: Ավելի ուշ մենք կտեսնենք, որ նմանատիպ ենթադրություններ կկատարվեն նաև լիգայի ֆրանսիական տարբերակում²⁹²:

Սակայն այս գաղափարները նախագահ Վիլսոնի կողմից ոչ մի աջակցություն չստացան, քանզի Ազգերի լիգայի նրա հայեցակարգը հիմնված էր ոչ թե ուժային քաղաքականության, այլ բարոյականության սկզբունքի վրա: Նրա պատկերացումները, ինչպես գրում է ամերիկյան պատմաբան Ուայթլ Ջոնսթոնը (Whittle Johnston), այդ առումով «ավելի հարուստ» էին, քան հավաքական անվտանգության ռազմաքաղաքական հայեցակարգը²⁹³: Բացի այդ նախագահ Վիլսոնը լավ ըմբռնում էր ամերիկյան սահմանադրական ավանդույթները և գիտակցում, որ Միացյալ Նահանգների Սենատը երբեք չի վավերացնի որևէ պայմանագիր, որով ամերիկյան զորքերը հսկողության տակ կառնվեն միջազգային որևէ կազմակերպության կողմից²⁹⁴:

²⁹¹ "The New Republic", vol. 1, №2, November 14, 1914, p. 8.

²⁹² Մանրամասն տե՛ս Minutes of a Conversation Held in M. Pichon's Room at the Quai d'Orsay, Paris, on Tuesday, 11 February, 1919, FRUS The Paris Peace Conference 1919, vol. 3, p. 957-969:

²⁹³ **W. Johnston**, Reflections on Wilson and the Problems of World Peace, St'u Woodrow Wilson and a Revolutionary World, 1913-1921, ed. by **A. Link**, Chapel Hill, "University of North Carolina Press", 1982, p., 194.

²⁹⁴ **R. Saunders**, In Search of Woodrow Wilson: Beliefs and Behavior, Connecticut, "Greenwood Press", 1998, p. 123.

Կարևոր է ընդգծել Ազգերի լիգայի վիլսոնյան հայեցակարգին վերաբերող ևս մեկ հանգամանք: Որպես ամերիկյան արտաքին քաղաքականության գերակայություն հայտարարելով միջազգային կազմակերպության ստեղծումը, որը վերահսկողություն էր սահմանելու ազատ ազգերի միավորված ուժերի նկատմամբ և կանխելու էր ցանկացած ոտնձգություն միջազգային իրավունքի հանդեպ, նախագահն ընդգծում էր, որ Միացյալ Նահանգների գործողություններն այդ ուղղությամբ իրականացվելու են «ի շահ և հանուն ողջ մարդկության»²⁹⁵:

Իհարկե հեղինակավոր միջազգային կազմակերպության ստեղծումը համաշխարհային մակարդակով բավականին երկար քննարկվում էր պետական և հասարակական գործիչների կողմից, սակայն միայն նախագահ Վիլսոնին հաջողվեց համատեղել այդ բնույթի բազմաթիվ առաջարկներ և հանդես գալ դրանց ակտիվ քարոզչի դերում: Ավելին, համընդհանուր գնահատականի համաձայն նախագահը դարձավ Միացյալ Նահանգների առաջին ղեկավարը, որն Ազգերի լիգայի գաղափարը դրեց ամերիկյան արտաքին քաղաքական հայեցակարգի հիմքում²⁹⁶: Միջազգային կազմակերպության վիլսոնյան հայեցակարգը դարձավ Միացյալ Նահանգների յուրատեսակ պատասխանը 20-րդ դարի սկզբի միջազգային հարաբերություններում ստեղծված իրավիճակին: Նախագահ Վիլսոնը դեռևս իր կառավարման սկզբում հայտարարեց միջազգային հարաբերությունների կարգավորման իր «դեղատոմսի» մասին: 1913 թ. դեկտեմբերի 2-ի ուղերձում, որը վերաբերում էր Միացյալ Նահանգների արտաքին և ներքին քաղաքական իրադրություններին, նա հիմք դրեց «վիլսոնականություն» կոչվող երևույթին, համաձայն որի միջազգային հարաբերությունների հիմքում պետք է դնել ոչ թե ազգային ինքնահաստատումը ցանկացած գնով, այլ ազգերի փոխվստահությունը, որը հանդիսանալով միջազգային հարաբերությունների հիմքը, պետք է դառնա համընդհանուր խաղաղության հաստատման և պահպանման գրավականը հետպատերազմյան աշխարհում²⁹⁷: Նպատակ ունենալով վերանայել միջազգային հարաբերությունների սկզբունքները՝ 1918 թ. դեկտեմբերի 28-ի լոնդոնյան իր ելույթում նախագահ Վիլսոնը հայտարարեց ուժերի հավասարակշռության սկզբունքը վերանայելու անհրաժեշտության մասին: Նա նշում էր. «...Նրանք կռվել են որպեսզի վերջ դնեն հին կարգերին և հաստատեն նորը: Ընդ որում, հինն բնորոշ էր մեկ անկայուն երևույթ, որը մենք անվանում ենք ուժերի հավասարակշռություն, որտեղ հավասարակշռությունը որոշվում է մեկ այս, մեկ այն նժարին դրվող սրով: Այդ հավասարակշռությունը որոշվում էր հակամարտող շահերի

²⁹⁵ Address Opening the Campaign in New York for the Second Red Cross Fund, May 18, 1918, The messages and papers of Woodrow Wilson, 1856-1924, p. 487-492.

²⁹⁶ Ю. Давидов, Норма против силы. Проблема мирорегулирования, Москва, "Наука", 2002, с. 103-104

²⁹⁷ Г. Киссинджер, Гэп с ашха., էջ 200:

անկայուն փոփոխարարությունը... Մարդիկ, որ մասնակցել են այս պատերազմին, պատկանում են ազատ ազգերին, որոնք լի են իրերի նման դասավորությանը մեկընդմիջտ վերջ դնելու վճռականությամբ»²⁹⁸: Շարունակելով իր միտքը դեկտեմբերի 30-ին՝ Մանչեսթրում ունեցած իր ելութում, նա հայտարարեց. «Մինչ օրս աշխարհը կառավարվում էր շահերի համաձայնեցման միջոցով, սակայն այն սպառել է իրեն: Շահերը չեն միավորում, այլ բաժանում են մարդկանց, իսկ դա հանգեցնում է առճակատման: Մարդկանց միակ միավորող գործոնը իրավունքի պահպանումն է, որի անքակտելի մասն է կազմում համընդհանուր պարտավորվածությունը: Միացյալ Նահանգները կմիանա միայն համընդհանուր պարտավորության վրա հիմնված դաշինքներին»²⁹⁹:

Եթե փորձենք մի ակնթարթ հայացք նետել Եվրոպայի դիվանագիտական անցյալին, ապա կտեսնենք, որ Ֆրանսիայի թագավոր Յենրի IV-ի (Henri IV, 1589-1610 թթ.) օգնական և նրա օրոք ֆրանսիական կառավարության ղեկավար, ականավոր քաղաքական գործիչ Մաքսիմիլիան դե Բետյունը (Maximilien de Béthune), առավել հայտնի որպես Սյուլլիի դուքս (duc de Sully), շահերի մեկտեղումով դաշնակցելու վերաբերյալ պնդում է ճիշտ հակառակը՝ նշելով. «Պետության հզորությունն ունի իր սահմանները. դրանք անցնելով՝ նա իր դեմ է հանում թշնամիների և կախյալների միավորված ուժերը: Ուստի յուրաքանչյուր թագավոր նման իրավիճակից խուսափելու համար պետք է մտածի դաշնակիցներ և բարեկամներ ձեռք բերելու մասին, որոնք կապված կլինեն ընդհանուր շահերով...»³⁰⁰: Հատկանշական է այն, որ Սյուլլիի դուքսը դեռևս 17-րդ դարի սկզբին առաջարկում էր Ազգերի լիգայի նախատիպ հանդիսացող մարմնի ստեղծում: Համաձայն այդ գաղափարի, որը կոչվում էր «Մեծ մտահղացում» («Le grand Dessein»), Եվրոպան պետք է բաժանվեր վեց ժառանգական, հինգ ընտրովի միապետությունների և հինգ հանրապետությունների միջև: Հատուկ խորհուրդը պետք է լուծեր վեճերը այդ պետությունների միջև և պահպաներ համընդհանուր խաղաղությունը: Խորհրդի նախագահ պետք է լիներ Յոնի պապը, առաջին նախարար՝ Ֆրանսիան³⁰¹: Սակայն Յենրի IV-ը ընդունեց Վեստֆալյան հաշտությամբ հաստատված «քաղաքական հավասարակշռության» սկզբունքը:

²⁹⁸ Adresse in Guild Hall, London, December 28, 1918, Addresses of President Wilson on First Trip to Europ, from December 3, 1918 to February 24, 1919, Washington, 1919, p. 12-14.

²⁹⁹ An Address in Free Trad Hall, December 30, 1918, Addresses of President Wilson on First Trip to Europ, from December 3, 1918 to February 24, 1919, p. 18-21.

³⁰⁰ См. u История дипломатии, сост. **А. Лактионов**, с. 244:

³⁰¹ Եւրոպայի տեղում, էջ 244:

Շահի գերակայության մասին արտահայտվել է նաև բրիտանական ակադավոր պետական գործիչ, Յենրի Փալմերսթոնը (Henry Palmerston)*: Վերջինս, խոսելով Մեծ Բրիտանիայի արտաքին քաղաքականության կառուցման մասին, նշել է. «...Մենք չունենք հավերժ դաշնակիցներ, ինչպես և չունենք մշտական թշնամիներ: Հավերժ ու մշտական են միայն մեր շահերը և մեր պարտքն է պաշտպանել դրանք...»³⁰²:

Ինչևէ, իմաստավորելով հետպատերազմյան աշխարհակարգի սկզբունքները՝ նախագահ Վիլսոնը ընդունեց Միացյալ Նահանգների արտաքին քաղաքականության համար նշանակալի շրջադարձ, ինչը ենթադրում էր սեփական և մեծ պետությունների պատմական փորձի ամբողջական վերանայում: Իր դատողություններում Վուդրո Վիլսոնը իրավացի էր, երբ նշում էր, որ «եվրոպական ազգերն ամբողջը խառնել են և շփոթել»: Սակայն դրա պատճառը ոչ թե ուժերի հավասարակշռությունն էր, ինչպես նշում էր Վուդրո Վիլսոնը, այլ այդ մեխանիզմի ոչ ճիշտ կիրառումը, ինչը և հանգեցրեց Առաջին աշխարհամարտին: Նա հրաժարվեց շահերի համաձայնեցմամբ ուժերի հավասարակշռման հայեցակարգից՝ հակադրելով դրան ազգերի համագործակցությամբ հավասարակշռության պահպանման հայեցակարգը: Այն հիմնված էր իրավական փոխհարաբերությունների վրա, որի նպատակն էր փոխադարձ պաշտպանություն ազրեսիայից և ընդհանրական համակեցության ձևավորումը, որը կդառնար նոր աշխարհակարգի պահպանման երաշխիքը³⁰³: Ըստ նախագահ Վիլսոնի՝ քաղաքական աշխարհը կանգնած էր երկընտրանքի առջև. ներկայիս պատերազմն արդյո՞ք պատերազմ է կայուն խաղաղության համար, թե՞ միայն պայքար է հանուն տերությունների միջև նոր հավասարակշռության հաստատման: Եթե դա պայքար է հանուն քաղաքական հավասարակշռության նոր համակարգի, ապա այդ դեպքում ո՞վ կարող է երաշխավորել համակարգի նոր հավասարակշռությունը: Եվրոպան կարող է կայուն լինել, եթե նա հանգիստ է: «Այդտեղ,- ասում է նախագահը,- պետք է ոչ թե հավասարակշռություն, այլ ուժերի ընդհանրություն, ոչ թե մրցակցություն, այլ համընդհանուր խաղաղություն»: Արդի աշխարհում, բացատրում էր նախագահը, «չպետք է լինի ուժերի հավասարակշռում՝ ազգերի մի հզոր խմբավորումը մյուսին հակադրելու միջոցով, այլ պետք է ձևավորվի ազգերի միասնական խումբ, որոնց ձեռքում պետք է լինի խնամակալությունն աշխարհի խաղաղության վրա»³⁰⁴: Ըստ նրա՝ միջազգային վեճերի լուծման մեթոդ պետք է դառնար պարտադիր միջնորդությունը, այլ

* Յենրի Ջոն Թեմփլ Փալմերսթոն (Henry John Temple Palmerston) (1784-1865 թթ.)՝ բրիտանացի պետական գործիչ և դիվանագետ: 1809-1828 թթ.՝ ռազմական նախարար, 1830-1834, 1835-1841, 1846-1851 թթ.՝ արտաքին գործերի նախարար, 1852-1855 թթ.՝ ներքին գործերի նախարար, 1855-1858, 1859-1865 թթ.՝ վարչապետ, 1859 թ.՝ Վիգերի ղեկավար:

³⁰² Տե՛ս **Ա. Կիրակոսյան**, Բրիտանական դիվանագիտությունը և արևմտահայության խնդիրը (19-րդ դարի 30-ական թթ.-1914 թ.), Երևան, «Գիտություն», 1999, էջ 200:

³⁰³ **Գ. Киссинджер**, Աշխարհի աշխարհը, էջ 200:

³⁰⁴ **Լ. Շիրինյան**, Արևմուտքի անկումը, էջ 5:

ոչ թե ուժի կիրառումը³⁰⁵: «Միացյալ Նահանգների ազդեցությունը թաքնված է նրա «չշահագրգռվածության» (ընդգծումը՝ Կ.Գ.) մեջ: Այն պետք է պահպանել, որպեսզի ի վերջո Միացյալ Նահանգները կարողանա հանդես գալ որպես միջնորդ դատավոր, որին կվստահեն պատերազմող կողմերը: Իսկ քանի որ Ամերիկյան հավատում է ավելի վեհ արժեքների, քան շահերի համաձայնեցմամբ ուժերի հավասարակշռությունն է, ապա եվրոպական պատերազմը ընձեռում է աննախադեպ հնարավորություն՝ քարոզելու միջպետական հարաբերությունների նոր և առավել արդյունավետ հարացույց»³⁰⁶:

Պատերազմի ավարտին Ազգերի լիգայի ստեղծումն արդեն ոչ թե «ուղղակի երազանք» էր, այլ բազմաթիվ հեղինակավոր քաղաքական գործիչների կողմից ընդունված և «լիարժեք իրատեսական» համարվող գաղափար³⁰⁷:

Ազգերի լիգան՝ որպես համընդհանուր խաղաղության հաստատման և ուժերի հավասարակշռության մեխանիզմի կիրառման երաշխավոր, իհարկե, ուներ իր գաղափարական նախադրյալները, որոնց վրա հիմնվելով՝ վերջինիս ստեղծողները փորձում էին միջազգային հարաբերությունների սույն սկզբունքները կիրառել նոր՝ իրավական նորմերով կարգավորվող մակարդակով: Եվրոպայում դեռևս 17-րդ դարից հաստատվել և կիրառվում են այդ մեխանիզմները, որոնք, ունենալով իրենց փուլային զարգացումները, գործում են մինչև օրս: Նախագահ Վիլսոնը ցանկանում էր ոչ թե արմատապես փոխել գոյություն ունեցող եվրոպական սկզբունքները, այլ փորձում էր ուժերի հավասարակշռության եվրոպական մեխանիզմները համադրել ուժերի միավորման սկզբունքին և հավաքական անվտանգության միջոցավ ապահովել համընդհանուր խաղաղության պահպանումը:

Բռնկված պատերազմը ապացույցն էր այն իրողության, որ նախագահ Վիլսոնի քայլը ժամանակին էր: Քանզի պատերազմը գալիս էր ապացուցելու այն, որ գոյություն ունեցող մեխանիզմներն այլևս հնացած էին և արդյունավետ չէին գործում: Ուստի համընդհանուր խաղաղության հաստատման և արդյունավետ պահպանման համար անհրաժեշտ էր դրանք վերանայել ժամանակի հրամայականին համահունչ:

³⁰⁵ The State of the Union Address Delivered at a Joint Session of the Two Houses of Congress, December 2, 1913, President Wilson's Addresses, ed. by **G. Harper**, (Էլ. գիրք, էլ. էջադրմամբ), p. 29-31.

³⁰⁶ Տե՛ս **Г. Киссинджер**, նշված աշխ., էջ 35:

³⁰⁷ "World's Work", vol., 37, №1, November 1918, p., 11.

3.2 ԱԶԳԵՐԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՈՐ ՁԵՎԱԶԱՓԻ՝ ԱԶԳԵՐԻ ԼԻԳԱՅԻ ՀԻՄՆՈՒՄԸ (ՓԱՐԻԶԻ ՀԱՄԱԺՈՂՈՎ)

1919 թ. հունվարի 18-ին Փարիզում հավաքվեց Առաջին աշխարհամարտում հաղթող տերությունների ներկայացուցիչներից կազմված հանձնաժողովը՝ պարտված պետությունների հետ կնքվելիք հաշտության պայմանագրերը մշակելու նպատակով: Քննարկումների ընթացքում հետպատերազմյան խաղաղության հաստատման վիճելի հիմնական հարցերը համաձայնեցնելու նպատակով կազմավորվեց «Տասի խորհուրդը»^{*} կազմված Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և ճապոնիայի վարչապետներից և արտգործնախարարներից, Միացյալ Նահանգների նախագահից և պետքարտուղարից: Այնուհետև խորհրդի կազմը կրճատվեց մինչև հինգ անդամների, իսկ ճապոնիայի ներկայացուցչի բացակայության պատճառով այն կոչվեց «Չորսի խորհուրդ» (Մեծ քառյակ՝ Վուդրո Վիլսոն, Դևիդ Լլոյդ Ջորջ, Ժորժ Կլեմանսո, Վիտտորիո Օռլանդո), որի նիստերն ու քննարկումները հիմնականում տեղի էին ունենում դռնփակ³⁰⁸:

Հանձնաժողովի հիմնական քննարկման թեմաներից մեկը դարձավ Ազգերի լիգայի ստեղծումը, մի կազմակերպություն, որը հանդիսանալու էր միջազգային հարաբերությունների նոր ձևաչափի հաստատման գրավականը և հետպատերազմյան խաղաղության պահպանման երաշխավորը: Նմանատիպ միջազգային կառույցի ստեղծման գաղափարը պատերազմի ընթացքում, որը պետք է կարողանար կանխել նախադեպը չունեցող աղետի կրկնումը, սկսում էր լայն տարածում ստանալ: Դեռևս 1917 թ. գարնանը Մեծ Բրիտանիայի կայսերական ռազմական կաբինետի առաջին իսկ նիստում հարց բարձրացվեց Ազգերի լիգայի ստեղծման վերաբերյալ, այնուհետև 1918 թ. կազմավորվեց Ֆիլիմորի հանձնաժողովը՝ լորդ Ֆիլիմորի^{*} գլխավորությամբ, որը պետք է զբաղվեր նման կառույցի ստեղծմամբ: Դեռևս 1917թ. հունիսի 5-ին (պատերազմի ավարտից ավելի քան մեկ տարի առաջ) ֆրանսիական պատգամավորների պալատում ընդունվեց բանաձև Ազգերի լիգայի վերաբերյալ, որը պետք է ապահովեր մեծ ու փոքր պետությունների անկախությունը և խաղաղությունը՝

^{*} «Տասի խորհուրդը» ներկայացնում էին. Մեծ Բրիտանիա՝ վարչապետ Դևիդ Լլոյդ Ջորջ և արտաքին գործերի նախարար Արթուր Ջեյմս Բալֆոր, Ֆրանսիա՝ վարչապետ Ժորժ Կլեմանսո և արտաքին գործերի նախարար Ստեֆան Պիչոն, Իտալիա՝ վարչապետ Վիտտորիո Օռլանդո և արտաքին գործերի նախարար Սիդեյ Սոննինո, ճապոնիա՝ նախկին արտգործնախարար Մակինո Նոբուակի և Լոնդոնում ճապոնիայի դեսպան Սուտեմի Չինդա, Միացյալ Նահանգներ՝ նախագահ Վուդրո Վիլսոն և պետքարտուղար Ռոբերտ Լանսինգ:

³⁰⁸ **В. Лан**, США: от Первой до Второй мировой войны. Москва, "Найка", 1947, с. 60.

^{*} Վուլթեր Ջորջ Ֆրանկ Ֆիլիմոր (Walter George Frank Phillimore, 1845-1929), առավել հայտնի է որպես սրբ Վուլթեր Ֆիլիմոր, կամ լորդ Ֆիլիմոր, Բրիտանացի հեղինակավոր իրավաբան, և դատավոր, Մեծ Բրիտանիայի գերագույն դատարանի անդամ (1897-1913), Վճռաբեկ դատարանի նախագահ (1913-1916), 1918 թ.ից գլխավորել է Ֆիլիմորի հանձնաժողովը և զբաղվել Ազգերի լիգայի կանոնադրության մշակման աշխատանքներով:

նրանց հավասարապես միավորելով այդ կազմակերպության մեջ: Արդյունքում Ֆրանսիայում ստեղծվեց հանձնաժողով՝ նախկին վարչապետ Լեոն Բուրժուայի (Léon Bourgeois) գլխավորությամբ³⁰⁹: Եվ այս ամենի առկայության պայմաններում, ըստ էության, դաշնակից երկրների ղեկավարները դեռևս չէին պատկերացնում, թե նմանատիպ նախագիծն ինչպես պետք է իրականանա³¹⁰:

1918թ. հունվարին, ներկայացնելով իր «14 կետերը», Վուդրո Վիլսոնը նշում էր, որ հատուկ համաձայնությամբ պետք է կազմավորվի ազգերի հանընդհանուր ընկերակցություն, ինչպես մեծ, այնպես էլ փոքր երկրներին քաղաքական անկախության և տարածքային ամբողջականության փոխադարձ և միակողմանի երաշխիքների տրամադրման նպատակով: Նախագահ Վիլսոնը համոզված էր, որ հաշտությունը պետք է լինի իր «14 կետերին» համահունչ, և որ Ազգերի լիգայի ստեղծումը պետք է դառնար այդ բանակցությունների հիմքը, որի շուրջ պետք է ընթանային հաշտության պայմանագրի նախապատրաստման քննարկումները³¹¹:

Այս հարցի կապակցությամբ համաժողովում ձևավորվեց քաղաքական բարդ իրավիճակ: Իհարկե ոչ ոք հրապարակավ չէր մերժում Լիգայի հայեցակարգի հաստատման և քննարկման հարցը: Օրինակ՝ Լլոյդ Ջորջը համաձայն էր Վուդրո Վիլսոնի առաջարկի հետ: Նա Ազգերի լիգայի կազմավորման հարցը դիտում էր որպես «լուծում»: Սակայն նկատում էր, որ եվրոպական քաղաքական գործիչներից և ոչ ոք՝ այդ թվում ժորժ Կլեմանսոն և Իտալիայի արտաքին գործերի նախարար Սիդնեյ Սոնինոն (Sidney Sonnino), «չեն ցուցադրել այդ գաղափարի նկատմամբ հատուկ հետաքրքրություն», քանզի գաղափարական բոլոր ծրագրերին վերաբերվում էին հայտնի ցինիզմով³¹²: Նման գնահատականի հաստատում կարելի է համարել ժորժ Կլեմանսոյի ելույթը պատգամավորների պալատում 1918թ. դեկտեմբերի 2-ին: Նա նկատեց, որ դեռևս լիովին վստահում է Ֆրանսիայի անվտանգության «Յին համակարգին»՝ հիմնված երկրի որոշակի ռազմական ներուժի, ուժերի հավասարակշռության և մյուս պետությունների հետ դաշնակցային հարաբերությունների վրա: Վարչապետը հայտարարեց, որ պատրաստ է ընդունելու Ֆրանսիայի համար ցանկացած այլ երաշխիք (այդ թվում նաև Լիգայի շրջանակներում փոխադարձ պարտավորությունների), բայց «կատակ» համարեց երաշխիքների մասին այն խոսակցությունները, որոնք ենթադրում էին «ռազմական պատրաստվածության

³⁰⁹ **Դ. Լլոյդ Ջորջ**, *Правда о мирных договорах*, т. 1, с. 517.

³¹⁰ Նույն տեղում, էջ 516:

³¹¹ *История Международных Отношений и Внешней Политики СССР, 1917-1967 гг.*, под ред. В. Трухановского, т. 1, 1917-1939 гг., Москва, "Международные отношения", 1967, с. 75.

³¹² **Դ. Լլոյդ Ջորջ**, *Правда о мирных договорах*, т. 1 с. 64, 131. Տե՛ս նաև **Կ. Վինոգրադով**, Дэвид Ллойд Джордж, Москва, "Мысль", 1970, с. 265-275:

զոհաբերություն»^{*}: Միացյալ Նահանգների նախագահի նման դիրքորոշումը ժորժ Կլեմանսոն բացատրեց նրանով, որ այդ երկիրը, ի տարբերություն Ֆրանսիայի, գտնվում էր շատ հեռու իր պոտենցիալ հակառակորդներից: Ընդհանուր առմամբ ժորժ Կլեմանսոն Վուդրո Վիլսոնի դիրքորոշումն անվանեց «բարյացակամ պարզություն» կամ «ազնիվ միանտություն»³¹³: Ինչ վերաբերում է Լիգային, ապա ժորժ Կլեմանսոն հայտարարեց, որ ինքը ողջունում է նմանատիպ կառույցի ստեղծումը, սակայն թերահավատորեն է վերաբերվում դրան³¹⁴:

Համաժողովի սկսելուն պես անմիջապես նկատվեցին առկա տարածայնությունները Միացյալ Նահանգների և Մեծ քառյակի մյուս անդամների միջև: Դա հիմնականում պայմանավորված էր պատերազմի արդյունքում իրենց համար հնարավորինս շոշափելի առավելությունների հասնելու՝ Անտանտի գլխավոր տերությունների ձգտումով: Ֆրանսիայի նախագահ Ռայմոն Պուանկարեն (Raymond Poincaré) իր բացման խոսքում պատերազմի միակ մեղավոր համարեց Գերմանիային և կոչ արեց սկսել վերջինիս ապառազմականացման և մասնատման գործընթացը³¹⁵: Այս հարցի շուրջ ամերիկյան վարչակազմն ուներ իր սեփական դիրքորոշումը. վերջինիս համար շահեկան էր Միացյալ Նահանգների ազդեցության ներքո գտնվող Գերմանիայի գոյությունը, որը հակակշիռ կհանդիսանար Եվրոպայում Մեծ Բրիտանիային և Ֆրանսիային³¹⁶:

Ամերիկյան կողմը՝ հանձին Վուդրո Վիլսոնի առանձնահատուկ նշանակություն էր տալիս ևս մի հարցի: 1918թ. նոյեմբերի 30-ին Անտանտի ղեկավարները համաձայնության եկան նախնական հաշտության համաժողովի հրավիրման հարցում, ուր պետք է քննարկվեին տարածքային հարցերն ու Գերմանիայի և նրա դաշնակիցների ապառազմականացման պայմանները: Վերջնական հաշտության պայմանագիրը պետք է մշակեր նոր համաժողովը մեծ տերությունների մասնակցությամբ: Սակայն Վուդրո Վիլսոնն այլ կարծիքի էր: Նա համոզված էր, որ եթե հետպատերազմյան խնդիրների լուծումը բաժանվի երկու փուլի, ապա կարող է վտանգվել իր նախատեսած ծրագրի իրականացումը՝ Ազգերի լիգայի ստեղծումը: Պետք է լինի միայն մեկ համաժողով,

* ժորժ Կլեմանսոն ի նկատի ունի Վիլսոնի «14 կետերի» 4-րդ կետը, որը նախատեսում էր երաշխիքների տրամադրում, որոնց ներքո ազգային սպառազինությունները պետք է հասցվեին պետական անվտանգությանը համապատասխանող նվազագույն մակարդակի:

³¹³ Տե՛ս **Դ. Փրիցկեր**, Жорж Клемансо, Москва, "Мысль", 1983, 316 с. 236-237. ժորժ Կլեմանսոյի դիրքորոշման մասին մանրամասն տե՛ս նաև **Ա. Mayer**, Politics and Diplomacy of Peacemaking. Containment and Counter-Revolution in Versailles. 1918-1919, New York, "Knopf", 1967, p. 170-187:

³¹⁴ Տե՛ս **Դ. Լլոյդ Ժորժ**, Правда о мирных договорах, т. 1, с. 244.

³¹⁵ Տե՛ս **Յ. Գերշով**, Вудро Вильсон, с. 213:

³¹⁶ **Н.Сивачев, Е. Язьков**, Новейшая история США 1917-1972 гг., Москва, "Изд. Московского университета", 1972, С. 6.

հայտարարում էր Վուդրո Վիլսոնը³¹⁷: Փարիզ ժամանելուն պես՝ նա հայտարարեց իր մտադրության մասին՝ Ազգերի լիգան պետք է դառնա ծրագրի հիմնական մասը: Մեկ համաժողովով բոլոր հարցերը լուծելու Վուդրո Վիլսոնի շահագրգռվածությունը պայմանավորված էր նրանով, որ երկուսի պարագայում նա ստիպված կլիներ Սենատի հաստատմանը ներկայացնել երկու փաստաթուղթ, որոնցից մեկը կվերաբերեր Ազգերի լիգային: Այս դեպքում մեծանուն էր այդ փաստաթուղթը չվավերացնելու հավանականությունը: Ձգտելով խուսափել դեպքերի նմանատիպ զարգացումից՝ Վուդրո Վիլսոնը ցանկանում էր, որ Ազգերի լիգայի կանոնադրությունն օրգանապես ընդգրկված լինի հաշտության պայմանագրի մեջ: Սակայն Լլոյդ Ջորջն ու ժորժ Կլեմանսոն, ի տարբերություն Վուդրո Վիլսոնի, գտնում էին, որ գործընթացը պետք է սկսել խաղաղ կարգավորման խնդիրների լուծումից: Միայն Գերմանիայում հեղափոխական շարժումների փաստը ստիպեց նրանց հրաժարվել այդ տեսակետից, որի արդյունքում հաղթանակեց Վուդրո Վիլսոնի գաղափարը:

Հունվարի 22-ին՝ «Տասի խորհրդի» նիստի ժամանակ Լլոյդ Ջորջն ընթերցեց Ազգերի լիգայի կանոնադրության վերաբերյալ բանաձևը, որում ասվում էր.

«Համընդհանուր խաղաղության պահպանման համար, որի նպատակով այժմ հավաքվել են միավորված պետությունները, անհրաժեշտ է ստեղծել Ազգերի լիգա, որը կնպաստի միջազգային համագործակցությանը և կապահովի ընդունված միջազգային պարտավորությունների կատարումը և կստեղծի երաշխիքներ ընդդեմ պատերազմների:

Այդ Լիգան պետք է դիտարկվի որպես համընդհանուր խաղաղության պայմանագրի անբաժան մաս և պետք է բաց լինի բոլոր քաղաքակիրթ ազգերի համար:

Լիգայի անդամները պետք է պարբերաբար միջազգային համաժողովներ գումարեն: Ինչպես նաև անհրաժեշտ է ստեղծել մշտական քարտուղարություն՝ համաժողովների միջև ընկած ժամանակահատվածում գործերը վարելու համար:

Լիգան պետք է դառնա Վերսալյան հաշտության բաղկացուցիչ մասը»³¹⁸:

Սույն բանաձևը կարելի է համարել Վուդրո Վիլսոնի առաջին հաջողությունը համաժողովում: Այն որոշակիորեն ուրվագծեց ապագա Լիգան՝ ցույց տալով, որ կազմակերպիչները ցանկանում են ստեղծել ոչ թե ինչ-որ ամորֆ և ձևական, այլ հստակ գործառույթներով և միջազգային հարաբերությունները գործնականում կարգավորելու ունակ և ապագա զինված ընդհարումները բացառող մի կառույց:

Անտանտի տերությունների ղեկավարների նման զիջողությունը սակայն չէր նշանակում թողտվություն Վուդրո Վիլսոնի որդեգրած քաղաքականության նկատմամբ: Ընդհակառակը, նրանց համոզմամբ, քանի դեռ Միացյալ Նահանգների նախագահը

³¹⁷ Տե՛ս Архив полковника Хайза, т. 4, с. 219:

³¹⁸ Սույն տեղում, էջ 233: Տե՛ս նաև FRUS 1919. The Paris Peace Conference, vol. 3, p. 178-181:

զբաղված է լինելու Ազգերի լիգայի կանոնադրության նախագծի մշակմամբ, իրենց կիսաջողվի լուծել տարածքային բաժանման հարցերը: Սակայն Վուդրո Վիլսոնը, կարծես կռահելով այդ մտադրությունը, ցանկանում էր յուրաքանչյուր հարց քննարկել Լիգայի ստեղծումից հետո դրա կանոնադրության շրջանակներում: Ըստ նրա՝ այն պետք է դառնար այն «հիմնաքարը», որի վրա պետք է հիմնվեր խաղաղ կարգավորման ողջ ծրագիրը³¹⁹:

Վուդրո Վիլսոնից մեծ ջանքեր պահանջվեցին Անտանտի ծրագրերի ձախողման համար. արդյունքում նա նույնիսկ ընդհարվեց Լլոյդ Ջորջի և Ժորժ Կլեմանսոյի հետ և, ինչպես նշում է գնդապետ Յաուզը, «դա առաջին անգամն էր, որ նախագահը կորցրեց ինքնատիրապետումը՝ վերջիններիս հետ բանակցությունների ժամանակ»³²⁰:

Հունվարի 25-ին կայացավ հաշտության համաժողովի 2-րդ լիագումար նիստը: Բացելով քննարկումը՝ Վուդրո Վիլսոնը հայտարարեց, որ իրենք հավաքվել են այստեղ հետևյալ նպատակով, այն է՝ հետպատերազմյան խաղաղ կարգավորումը և երկրագնդի վրա խաղաղության ապահովումն ու պահպանումը, և Ազգերի լիգան անհրաժեշտություն է հանդիսանում այս երկու նպատակների իրագործման ճանապարհին³²¹: Ամերիկյան պատվիրակության ղեկավարը ցանկանում էր հնարավորինս արագացնել կառույցի ստեղծման գործընթացը, քանզի Լլոյդ Ջորջն իր հերթին առաջարկում էր Ազգերի լիգայի ստեղծման հարցը հանձնել հատուկ հանձնաժողովի քննարկմանը՝ հուսալով, որ արդյունքում այդ նախագիծը հնարավոր կլինի անուշադրության մատնել, և իրենք կկարողանան անարգել կերպով զբաղվել հաշտության պայմանագրի վիճելի հարցերով³²²: Վուդրո Վիլսոնը սակայն հույս ուներ, որ հարցը կքննարկվի հենց խորհրդում, և որ Լիգայի սկզբունքները, եթե ոչ մանրամասները կմշակվեն պետությունների ղեկավարների կողմից որպես հիմք խաղաղության պայմանագրի³²³: Ինչևէ, Լլոյդ Ջորջի հանձնաժողով ստեղծելու առաջարկն աջակցություն գտավ համաժողովի մասնակիցների կողմից: Արդյունքում ստեղծվեց 19-ի հանձնաժողովը*, որի գրեթե բոլոր անդամները, ըստ Լլոյդ Ջորջի,

³¹⁹ FRUS 1919. The Paris Peace Conference, vol. 3, p. 178-181.

³²⁰ Архив полковника Хауза, т. 4, с. 233.

³²¹ Preliminary Peace Conference, Protocol N.2, Plenary Session of January 25, 1919, FRUS 1919. The Paris Peace Conference, vol. 3, p. 178.

³²² **З. Гершов**, Вудро Вильсон, с. 216.

³²³ **R. Baker**, Woodrow Wilson and World Settlement, New York, "Doubleday, Page & Company," 1923, vol. 1, p. 236.

* Հանձնաժողովի կազմը հետևյալն էր. Ամերիկայի միացյալ նահանգներ՝ նախագահ Վուդրո Վիլսոն, որը ղեկավարում էր հանձնաժողովը, և նրա խորհրդական, գնդապետ Էդուար Յաուզ, Բրիտանական կայսրություն՝ արտաքին գործերի նախարարի օգնական Ռոբերտ Սեսիլ և գեներալ Յան Սմեթս, Ֆրանսիա՝ Լեոն Բուրժուա և Ֆերդինանդ Լարնոդ, Իտալիա՝ վարչապետ Վիտտորիո Օռլանդո և սենատոր Վիտտորիո Շալոյա, Ճապոնիա՝ նախկին արտգործնախարար Մակիմո Նոբուայի և Լոնդոնում ճապոնիայի դեսպան Սուտեմի Չինդա, Բելգիա՝ արտաքին գործերի նախարար Փոլ Յիմանս, Բրազիլիա՝ սենատոր Էպիտասիու Պեսոա, Չինաստան՝ Վաշինգտոնում դեսպանորդ Վելինգտոն Կու, Պորտուգալիա՝ Պետրոգրադում նախկին դեսպանորդ Բաթալա Ռեյս, Սերբիա՝ Փարիզում դեսպանորդ Սիլենկո Վեսնիչ,

հանդիսանում էին Լիգայի ստեղծման մոլի ջատագովներ³²⁴: Վուդրո Վիլսոնը ոչ միայն ընդգրկվեց այդ հանձնաժողովի կազմում, այլև գլխավորեց այն:

Ընդունելով իր գործընկերների քայլը՝ Վուդրո Վիլսոնն իր առջև նպատակ դրեց արագացնել հանձնաժողովի աշխատանքները և ամեն գնով ավարտել նախագծի մշակումը: Նա նպատակադրվել էր հանձնաժողովի աշխատանքն ավարտել փետրվարի 13-ին, որպեսզի Լիգայի կանոնադրության նախագծի քննարկումից անմիջապես հետո կարողանա այն ներկայացնել Միացյալ Նահանգների Սենատի արտաքին գործերով հանձնաժողովի քննարկմանը³²⁵:

Այս հանձնաժողովի աշխատանքների ընթացքում ներկայացվեց միջազգային նոր կազմակերպության վիլսոնյան ծրագիրը: Վուդրո Վիլսոնի առաջարկները ստացան տարբեր գնահատականներ: Օրինակ՝ ամերիկյան պատվիրակության անդամ պետքարտուղար Ռոբերտ Լանսինգը Ազգերի լիգայի կանոնադրության վիլսոնյան ծրագիրը կոչեց «միանգամայն հուժ և չմտածված»³²⁶: Լլոյդ Ջորջը նշում էր, որ Փարիզի հանաժողովի որոշումը Ազգերի լիգայի մասին հիմնված էր ավելի շուտ եվրոպական, այլ ոչ թե վիլսոնյան գաղափարների վրա³²⁷: Իսկ բրիտանական պատվիրակության անդամ Ռոբերտ Սեսիլը (Robert Cecil) ավելացրեց, որ Լիգայի վիլսոնյան հայեցակարգում «չկար ոչ մի հիմնարար նորույթ»³²⁸: Ուսումնասիրելով նախագահի արխիվը՝ Ռեյ Բեյքերը գրում էր, որ Ազգերի լիգայի մասին ոչ մի միտք և ոչ մի դրույթ իրենց հիմքում իրականում չեն պատկանում նախագահին: Նա ավելի շուտ դրանց հրատարակողն է կամ բանաքաղը, ով մանրակրկիտ դիտարկեց այլ աղբյուրներից եկող նյութը, ընտրեց, խմբագրեց և մեկտեղեց³²⁹:

Փորձենք դիտարկել ոչ միայն վիլսոնյան հայեցակարգի աղբյուրները, այլև դրա զարգացումը Փարիզի հանաժողովի ընթացքում: Վուդրո Վիլսոնի տրամադրության տակ էր Միջազգային նոր կարգի կառուցվածքի կանոնադրային հիմքերի առաջին ամբողջական նախագիծը, որ մշակվել էր Խաղաղության պարտադրման ամերիկյան լիգայի և լորդ Ֆիլիմորի գլխավորությամբ գործող Խաղաղ կարգավորման պայմանների նախապատրաստման բրիտանական կոմիտեի կողմից: Ծրագրում անդրադարձ էր կատարվում պայմանագրի հայեցակարգին, որը նախատեսում էր միջոցներ՝

Հունաստան՝ նախագահ Էլեֆտերիոս Վենիզելոս, Լեհաստան՝ Լեհաստանի ազգային կոմիտեի նախագահ Ռոման Դնովսկի, Ռումինիա՝ լիազոր ներկայացուցիչ Կոնստանտին Դիամանդի, Չեխոսլովակիա՝ Մինիստրների խորհրդի նախագահ Կարել Կրամարժ: Տե՛ս **D. Miller**, նշված աշխ., հ. 1 էջ 84. 142:

³²⁴ **Դ. Լլոյդ Ջորջ**, *Правда о мирных договорах*, т. 1, с. 246.

³²⁵ **З. Гершов**, *Вудро Вильсон*, с. 216.

³²⁶ **R. Lansing**, *The Big Four and Other of Peace Conference*, Boston, "Hutchinson", 1921, p. 40.

³²⁷ **Դ. Լլոյդ Ջորջ**, *Правда о мирных договорах*, т. 1, с. 539-540.

³²⁸ **R. Cecil**, *A Greate Experiment*, London, "Cape", 1941, p. 48.

³²⁹ **Р. Бекер**, *Вудро Вильсон: Мирная война, Версальский мир*, Москва-Петербург, "Гос. Изд.", 1923, с. 238.

ազրեսորների վրա ազդելու և ստեղծելու հատուկ միջնորդային կառույցներ՝ միջպետական վեճերը հարթելու համար: Ֆիլիմորի ծրագրում նման կարգը ներկայացված էր դաշնակից տերությունների համաժողովի տեսքով, որը կհավաքվեր ամեն անգամ, երբ կպահանջվեր դրա միջամտությունը: Դրա որոշումները պետք է միաձայն լինեին, իսկ շահագրգիռ կողմերը քվեարկությանը չէին մասնակցելու³³⁰:

Ուսումնասիրելով դրանք՝ Վուդրո Վիլսոնը հանձնարարեց գնդապետ Յաուզին կազմել Ազգերի լիգայի իր նախագիծը: Էդուարդ Յաուզի՝ 23 հոդվածներից բաղկացած ծրագիրը կազմվեց 1918թ. հուլիսի 16-ին և մեկնաբանական գրությամբ ուղարկվեց նախագահին*:

Ծանոթանալով Էդուարդ Յաուզի ծրագրին՝ նախագահը մի շարք փոփոխություններ իրականացրեց. առաջին հերթին կանոնադրությունից հանվեց միջազգային դատական ատյանի կետը, վերականգնվեց ռազմական ուժի կիրառման հատվածը՝ որպես պատժիչ միջոց Լիգայի որոշումների չկատարման համար*: Էդուարդ Յաուզի ծրագրում տեղ էր գտել երաշխիքների տրամադրումը: Այդ գաղափարը, որն արդյունքում դարձավ Սենատում պայմանագրի վավերացման առանցքը, մտցվել էր Վուդրո Վիլսոնի նախաձեռնությամբ: Էդուարդ Յաուզի ծրագրով նախատեսվում էր միջնորդավորված և ճկուն երաշխիքային համակարգ: Նա այն կարծիքին էր, որ չի կարելի թույլ տալ, որ տարածքային երաշխիքները ճկուն չլինեն, քանզի ժամանակի ընթացքում պայմանները կարող են այնպես փոխվել, որ պետության որոշակի հատվածի համար հետագա գոյակցությունը տվյալ պետության կազմում ծայրաստիճան դժվար լինի: Սակայն Վուդրո Վիլսոնը պնդեց անմիջական երաշխիքների կիրառման վրա*: Միաժամանակ իր պնդումը նախագահը հիմնավորում էր Միացյալ Նահանգների

³³⁰ **D. Miller**, նշված աշխ., հ. 2, էջ 3-6:

* Հոդվածների և դրանց մեկնաբանությունների մասին մանրամասն տե՛ս Архив полковника Хауза, т. 4, с. 22-28, տե՛ս նաև **D. Miller**, նշված աշխ., հ. 2, էջ 7-11:

* Յաուզի ծրագրի X, XI, XII հոդվածները նախատեսում էին ստեղծել միջազգային դատական մարմին, որը պետք է օժտված լիներ ազգերի միջև ցանկացած բնույթի վեճերը հարթելու լիազորություններով: Իսկ XV հոդվածը նախատեսում էր բոլոր տեսակի հարաբերությունների խզում և շրջափակման կիրառում, եթե պայմանավորված կողմերից մեկը սկսի ռազմական գործողություններ մի ինչ-որ խնդրի կապակցությամբ: Այս հոդվածը դարձավ նախագահ Վիլսոնի ծրագրի VII հոդվածը: Նախագահը ավելացրեց ռազմական պատժամիջոցների գաղափարը. «...և կիրառել ցանկացած տեսակի ուժ, որը կարող է անհրաժեշտ լինել այդ նպատակին հասնելու համար»: Տե՛ս Архив полковника Хауза, т. 4, с. 24-25:

* Յաուզի ծրագրի XX հոդվածի համաձայն՝ *պայմանավորված տերությունները հատուկ համաձայնության են գալիս տարածքային ամբողջականության հարցում միմյանց փոխադարձ երաշխիքներ տրամադրելու կապակցությամբ*: (ընդձեռնը Կ.Գ.) Սակայն այդ երաշխիքները նախատեսում էին տարածքային այնպիսի վերափոխումներ, որոնց անհրաժեշտությունը կառաջանար ապագայում՝ ազգային պայմանների և պահանջների փոփոխման պարագայում: Այդ փոփոխությունները նախատեսվում էր իրականացնել պատվիրակների ձայների երեք քառորդի որոշմամբ՝ ի բարօրություն համապատասխան ազգի, քանզի ցանկացած տարածքային փոփոխություն ուղեկցվում էր արդար փոխհատուցմամբ, այն է՝ համընդհանուր խաղաղությունը կարևոր և նշանակալի է յուրաքանչյուր հարցից, այդ թվում և սահմանային:

Այս հոդվածի առաջին (ընդգծված) հատվածը որոշակի ոճական փոփոխմամբ դարձավ վերջնական ծրագրի հայտնի X հոդվածը. «հարգել և պահպանել ընդդեմ ցանկացած արտաքին հարձակման Լիգայի բոլոր անդամների տարածքային ամբողջականությունը և գոյություն ունեցող քաղաքական

սահմանադրության մեջ ամրագրված ամերիկյան պետական կարգի դրույթով, համաձայն որի՝ Միացյալ Նահանգներն «այս միավորման մեջ յուրաքանչյուր նահանգի կապահովի կառավարման հանրապետական ձև և պաշտպանություն արտաքին հարձակումից»³³¹:

Անմիջական երաշխիքների գաղափարը Վուդրո Վիլսոնն օգտագործում էր նաև Արևմտյան կիսագնդում խաղաղության պահպանման իր համաամերիկյան ծրագրում: Երաշխիքների հատվածը ենթադրում էր նաև Ազգերի լիգայի կայուն մեխանիզմ, որը պայմանգրի կնքմամբ կնպաստի ստատուս քվոյի փոփոխմանը: Դրա համար մի կողմից հաստատվում էր ազգերի ինքնորոշման իրավունքը, մյուս կողմից՝ Ազգերի լիգայի որոշումները պետք է ընդունվեին ձայների մեծամասնությամբ³³²:

Փարիզ ժամանելով՝ Վուդրո Վիլսոնը ծանոթացավ Լիգայի կանոնադրության մի շարք նոր ծրագրերի հետ: Ուշադրության արժանացավ գեներալ Յան Սմեթսի (Jan Smuts) առաջարկը, որը ներկայացնում էր Հարավաֆրիկյան միությունը: Նա ցանկանում էր Լիգան դնել նոր միջազգային հարաբերությունների հիմքում և ուզում էր, որ Լիգան իրավունք ունենար պարտավորեցնելու և պատասխանատվության ենթարկելու: Նրա դրույթները կանոնակարգված չէին, այլ շարադրված էին գրքույկում՝ «Ազգերի լիգայի գործնական առաջարկներ» վերնագրով: Վուդրո Վիլսոնը վերցրեց այդ դիտարկումները և իր կանոնադրության հոդվածներին ավելացրեց ևս մի քանի հավելում: Առավել կարևոր էին.

1. Լիգայի նոր կազմակերպչական կառուցվածքի ընդհանուր համաժողովին զուգահեռ նախատեսվում էր նաև նեղ խորհրդատվական մարմնի ստեղծում, որի կազմում կընդգրկվեին մեծ տերությունների և մի քանի փոքր պետությունների ներկայացուցիչներ:
2. Սպառազինության սահմանափակման դրույթին ավելանում էր զինապարտության վերացման դրույթը:
3. Մանդատային համակարգի ներդրումը՝ որպես սկզբունք գերմանական գաղութների կառավարման³³³:

Վուդրո Վիլսոնը մեծ ուշադրություն էր հատկացնում մանդատային համակարգին, որը նախատեսում էր Ազգերի լիգային տալ Գերմանիայի նախկին գաղութները և Թուրքական կայսրության տիրույթները կառավարելու մանդատը՝ «Առաջատար

անկախությունը», իսկ երկրորդ հատվածը չընդգրկվեց ծրագրի վերջնական տարբերակում: Տե՛ս Архив полковника Хауза, т. 4, с. 27-28:

³³¹ Ամերիկայի Միացյալ Նահանգների սահմանադրություն, հոդված 4, բաժին 4, <http://usconstitution.net>:

³³² D. Miller, նշված աշխ., հ. 2 էջ, 10-11:

³³³ Նույն տեղում, էջ 23-26:

ազգերին» (այսինքն՝ Անտանտի տերություններին) հատկացնելու իրավունք: Նախագահ Վիլսոնի կարծիքով այն տարածքները, որ վերցվել են Գերմանիայից և Թուրքիայից, պետք է հայտարարվեն Ազգերի լիգայի սեփականություն և դրանց ողջ հարստությունը բնականաբար պետք է հասանելի լինի Լիգայի անդամներին³³⁴:

Հանդես բերելով նման մոտեցում, և, պնդելով մանդատային համակարգի ձևավորման վրա՝ Վուդրո Վիլսոնը փորձում էր կանխարգելել Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Իտալիայի նպատակը՝ բռնազավթել նշված տարածքները: Վուդրո Վիլսոնը հայտարարում էր, որ Միացյալ Նահանգները հոգ է տանելու նախկինում Գերմանիայի և Թուրքիայի տիրապետության տակ գտնվող ազգերի բարեկեցության մասին:

Այս պարագայում ակնհայտ էր դառնում, որ խոսքը գնում է «բաց դռների» սկզբունքի տարածման մասին՝ Անտանտի բոլոր տերությունների գաղութային տարածքների հանդեպ: Գաղութային հարցի նման լուծումը ձեռնտու էր Միացյալ Նահանգների համար, նրա տնտեսական զավթողագործության (էքսպանսիա) տեսանկյունից, որն այդ ժամանակ հանդիսանում էր տնտեսապես ամենազարգացած տերությունը: Եվ մանդատային ծրագիրը փաստորեն բացում էր Ասիայի և Աֆրիկայի մինչ այդ փակ տարածքներն ամերիկյան առևտրի և կապիտալի համար³³⁵:

Կանոնադրության վիլսոնյան նախագծի համաձայն՝ Ազգերի լիգայի բոլոր անդամները ամեն տարի պետք է մասնակցեին ընդհանուր ժողովին (Ասամբլեային), և յուրաքանչյուր երկիր պետք է ունենար 1 ձայնի իրավունք: Լիգայի խորհրդի կազմում նախատեսվում էր ընդգրկել նրա 9 անդամներին, որոնցից մշտական տեղ էին ստանում միայն հաղթող տերությունները (Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Իտալիա և Ճապոնիա), իսկ մնացած 4 տեղերը տրվում էին մյուս պետություններին՝ փոփոխման սկզբունքով:

Փետրվարի 3-ին, քննարկելով Մեծ Բրիտանիայի ներկայացուցչի հետ կանոնադրության նախագծի վերջնական տարբերակը, Վուդրո Վիլսոնը համաձայնեց միավորել ամերիկյան նախագիծը բրիտանականի հետ և ներկայացնել հանձնաժողովին համաձայնեցված փաստաթուղթ, որը հիմք կհանդիսանար քննարկումների համար³³⁶:

Այն կետերը, որոնք համընկնում էին ամերիկյան և բրիտանական տարբերակներում, չէին քննարկվում, ուշադրությունը կենտրոնանում էր միայն այն հարցերի վրա, որոնց շուրջ կար տարաձայնություն: Նման հարցերի թվին էր պատկանում փոքր և չեզոք երկրներին հատկացված ներկայացուցչական տեղերի

³³⁴ Архив полковника Хауза, т. 4, с. 220.

³³⁵ **З. Гершов**, Вудро Вильсон, с. 217.

³³⁶ Архив полковника Хауза, т. 4, с. 235.

քանակի, սպառազինության կրճատման և Լիգայի ենթակայությամբ զինված ուժեր ստեղծելու, կրոնական և ռասայական հավասարության, ինչպես նաև մանդատների խնդիրները: Ի վերջո որոշվեց փոքր պետություններին տրամադրել չորս տեղ Խորհրդում, իսկ բրիտանական դոմինիոնների առնչությամբ բավարարվեց Մեծ Բրիտանիայի պահանջը 6 տեղ (Կանադա, Նյուֆաունդլենդ, Հարավային Աֆրիկա, Ավստրալիա, Նոր Զելանդիա և Հնդկաստան) հատկացնելու վերաբերյալ³³⁷:

Թեժ էր միջազգային բանակի ստեղծման քննարկումը: Այդ դրույթի վրա պնդում էին ֆրանսիական ներկայացուցիչները, այն հույսով, որ ունենալով ամենամեծ ցամաքային բանակը Եվրոպայում՝ Ֆրանսիան կուժեղացնի իր դիրքերը Ազգերի լիգայում՝ դրանով իսկ ձեռք բերելով ռեալ երաշխիք ընդդեմ Գերմանիայի: Ամերիկյան և բրիտանական կողմերը դեմ արտահայտվեցին, նշելով, որ միավորված ռազմական մեքենայի ստեղծումը կհանգեցնի համաշխարհային ռազմականության ծագմանը: Հաշվի առնելով նաև Գերմանիային Լիգայի կազմում ոչ մի պարագայում չտեսնելու Ֆրանսիայի ցանկությունը՝ այն կվերածվեր հակազերմանական հերթական ռազմական դաշինքի, ուստի Մեծ Բրիտանիայի և Միացյալ Նահանգների համառ դիմադրությամբ այն մերժվեց³³⁸:

Գնդապետ Հաուզը, ներկայացնելով այդ քննարկումը, գրում էր. «1919թ. փետրվարի 11-ին իմ բնակարանում կայացավ Լիգայի հարցերով հանձնաժողովի նիստը: Այն ձգվեց 10 ժամ 30 րոպե: Բուրժուան շատ ժամանակ խլեց, պահանջելով, որ մենք կազմավորենք միջազգային բանակ՝ չնայած նրան, որ նախագահը բազմիցս հայտարարել էր, որ Միացյալ Նահանգները չի կարող միանալ նման Լիգային»³³⁹:

Կրոնական և ռասայական հարցերը հանվեցին: Մանդատների հարցում ընդունվեց զեներալ Յան Սմեթսի առաջարկած տարբերակը, որը հաստատում էր մանդատների տարբեր տեսակներ^{340*}:

Ի վերջո գոյություն ունեցող տարածայնությունները հաղթահարվեցին, և նախագիծը կարելի էր արդեն ներկայացնել հաշտության համաժողովի քննարկմանը: Նախագծի մշակման համար անհրաժեշտ եղավ 10 նիստ, որի վրա ընդհանուր առմամբ ծախսվեց 30 ժամ³⁴¹:

³³⁷ D. Miller, նշված աշխ., հ. 2, էջ 134.

³³⁸ Նույն տեղում, էջ 294:

³³⁹ Архив полковника Хауза, т. 4, с. 238, 243.

³⁴⁰ Նույն տեղում, էջ 238:

* Գեներալ Յան Սմեթսի մանդատների մասին բանաձևի տեքստը մանրամասն տես նույն տեղում, էջ, 248:

³⁴¹ Г. Никольсон, Как делался мир в 1919 г., с. 459.

1919 թ. փետրվարի 13-ին Լիգայի հանձնաժողովին ներկայացվեց փոխզիջումային տարբերակ^{*}, որը մշակվել էր Դևիդ Միլլերի (David Miller, Միացյալ Նահանգներ) և Սեսիլ Հարսթի (Cecil Hurst, Մեծ Բրիտանիա) կողմից³⁴²:

Հաշտության համաժողովի փետրվարի 14-ի հերթական լիազումար նիստի ժամանակ Վուդրո Վիլսոնը ներկայացրեց իր գլխավորած հանձնաժողովի աշխատանքի արդյունքները: Նա մանրակրկիտ կերպով ներկայացրեց Ազգերի լիգայի կանոնադրության նախագիծը՝ տալով նրա հողվածների մեկնաբանությունները: Վուդրո Վիլսոնը նշեց, որ նախագծում ընդգրկված են միայն կառույցի գործունեության ընդհանուր դրույթները, սակայն այն ներկայացնում է նաև հատուկ երաշխիք ընդդեմ ագրեսիայի: Խոսելով երաշխիքների մասին՝ նախագահ Վիլսոնն ընդգծեց. «Ճիշտ է, ռազմական միջամտությունը մղված է ետին պլան, սակայն այն կա, և եթե խաղաղության բարոյական հեղինակությունը բավարար չլինի, ապա կկիրառվի ֆիզիկական ուժ: Բայց այն հանդիսանում է մեր վերջին միջոցը, քանզի այս միությունը պետք է դիտարկել որպես խաղաղության զենք, այլ ոչ թե որպես պատերազմի լիգա»³⁴³: Այնուհետև հանդես եկան հանձնաժողովի անդամները՝ Լորդ Ռոբերտ Սեսիլը (Մեծ Բրիտանիա), Լեոն Բուրժուան (Ֆրանսիա), Վիտտորիո Օռլանդոն (Իտալիա), ինչպես նաև այլ երկրների ներկայացուցիչներ: Նրանք բոլորը դրական արտահայտվեցին նախագծի մասին: Իր ելույթը Վուդրո Վիլսոնը եզրափակեց հետևյալ խոսքերով. «Այն ազգերը, որոնք իրար նկատմամբ անվստահություն էին տածում, այժմ կարող են ապրել որպես ընկերներ և բարեկամներ՝ կազմելով մեկ ընտանիք... Անվստահության և խարդավանքի շղարշն ընկավ: Մարդիկ նայում են իրար և ասում՝ մենք եղբայրներ ենք և մեր նպատակն ընդհանուր է: Մենք առաջ չէինք գիտակցում դա, բայց այժմ մեզ դա լիովին պարզ է, և ահա մեր եղբայրության և ընկերության պայմանագիրը»³⁴⁴: Ազգերի լիգայի կանոնադրությունը հավանության արժանացավ Փարիզի համաժողովում:

Այսպիսով՝ փետրվարի 14-ին լիազումար նիստում հաստատվեց այն փաստաթուղթը, որի հիման վրա պետք է կյանքի կոչվեր ապագա Ազգերի լիգան: Երկարատև պատերազմից հետո թվում էր, թե համաշխարհային հանրությանը նյութական վերականգնումներից և փոխհատուցումներից զատ այլևս ոչինչ չի հետաքրքրում, և մարդիկ կարծես անտարբեր էին ամենայն հոգևորի և բարոյականի նկատմամբ: Սակայն Վուդրո Վիլսոնը կարծես եկավ «հիշեցնելու» համամարդկային վեհ

^{*} Կանոնադրության տեքստի ամբողջական տարբերակը տե՛ս, **Д. Ллойд Джордж**, Правда о мирных договорах, т. 1, с. 541-545: Տե՛ս նաև **D. Miller**, նշված աշխ., հ. 2, էջ 658-667:

³⁴² **D. Miller**, նշված աշխ., հ. 2, էջ 658-667:

³⁴³ An Address to the Third Plenary Session of the Conference. Feb. 14. 1919, Addresses of President Wilson on First Trip to Europ, p. 57.

³⁴⁴ FRUS 1919. The Paris Peace Conference, vol. 3, p. 215.

արժեքների և բարոյականության մասին: Նա կարողացավ այդ միջավայրում հասնել հաջողության և ներկայացնել նոր միջազգային կարգի իր գաղափարները՝ հստակ կանոնակարգված կանոնադրության տեսքով, որը նաև ուրվագծում էր ավելի անվտանգ ապագայի տեսլականը: Եվ ինչպես Դանիել Սթիդն (Daniel Stid) է գրում. «համաժողովը համակված էր նորի արարման ոգով և արարիչները չէին վախենում իրենց ստեղծածից, այլ, հակառակը, միանգամայն գիտակցում էին քաղաքակիրթ մարդկության համար նոր խարտիա ստեղծելու իրենց փորձի քաջությունը և հպարտանում էին դրանով...»³⁴⁵:

Ազգերի լիգայի կանոնադրության նախագծին հավանություն տալու հաջորդ օրը՝ փետրվարի 15-ին, Վուդրո Վիլսոնը մեկնեց Միացյալ Նահանգներ՝ Սենատի արտաքին գործերով հանձնաժողովին փաստաթուղթը ներկայացնելու համար:

Սակայն մինչ նախագահի ժամանումը Վաշինգտոնում ձևավորվել էր ընդդիմադիր խումբ (Սենատի արտաքին գործերով հանձնաժողովի նախագահ Յենրի Լոջի գլխավորությամբ), որը միանգամայն այլ ձևաչափում էր պատկերացնում հետպատերազմյան աշխարհակարգում Միացյալ Նահանգների դերակատարման հանձնառումը և խաղաղության պահպանման գործում մասնակցության ու երաշխիքների տրամադրման չափաբաժինը*:

Վերը նշված հանդիպման ժամանակ ընդդիմադիրները սուր քննադատության ենթարկեցին Լիգայի կանոնադրության նախագիծը՝ առաջարկելով այն առանձնացնել բուն պայմանագրից և վերանայել հաշտության պայմանագրի ստորագրումից հետո³⁴⁶: Քննադատության առանցքը եղավ կանոնադրության տասներորդ հոդվածը*, որի արդյունքում ոտնահարվում էին «Մանրոյի դոկտրինայի» դրույթները և Միացյալ Նահանգները կարող էր ներքաշվել իր շահերին չառնչվող հակամարտությունների մեջ³⁴⁷: Ըստ Յենրի Լոջի՝ նման կանոնադրությամբ Լիգայի ստեղծման պարագայում

³⁴⁵ **D. Stid**, The President as Statesman: Woodrow Wilson and the Constitution, Lawrence, "University Press of Kansas", 1998, p. 115.

* Կոնգրեսականների տեսակետները մանրամասն տես Congressional Records Containing the Proceedings and Debates of the Third Session of the Sixty-Fifth Congress of The United States of America, vol LVII, part 1-4, Washington, "Government Printing Office", 1919. (այսուհետև Congressional Records):

³⁴⁶ **H. Lodge**, The Senate and the League of Nations, New York, "Scribner", 1925, p. 117-121. Տես նաև **В. Лан**, նշված աշխ., էջ 65:

* Յոդված 10, ԱՐՏԱՔԻՆ ԱԳՐԵՍԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ. Լիգայի անդամները պարտավորվում են հարգել և պաշտպանել արտաքին ագրեսիայից Լիգայի անդամ երկրների տարածքային անձեռնմխելիությունը և գոյություն ունեցող քաղաքական անկախությունը: Նմանատիպ ագրեսիայի կամ ագրեսիայի հասունացած վտանգի դեպքում խորհուրդը պետք է առաջարկի միջոցառումներ, որոնք թույլ կտան ի կատար ածելու վերոնշյալ պարտավորությունները: Տես An Address to the Third Plenary Session of the Conference. Feb. 14. 1919, Addresses of President Wilson on First Trip to Europe, p. 51: Տես նաև **Д. Ллойд Джордж**, Правда о мирных договорах, т. 1, с. 543:

³⁴⁷ **А. Уткин**, Дипломатия Вудро Вилсона, с. 65.

Միացյալ Նահանգները ստիպված կլինի զոհաբերել իր շահերը հանուն եվրոպական խաղաղության պահպանման³⁴⁸:

Այնուամենայնիվ ընդդիմադիրները չէին ցանկանում կասեցնել գործընթացը՝ ցանկանալով, որ Միացյալ Նահանգները նույնպես ներդրում ունենա խաղաղության կառուցման գործում: Նրանք չէին բացառում ապագայում նոր Լիգայի կազմավորումը, սակայն այդ պահին բավարար էր համարում Գերմանիայի հետ դաշինքը և եվրոպայի հաղթանակած տերությունների հետ պաշտպանական հարցերով միավորումը՝ քաղաքական պարտավորություններ չվերցնելու պայմանով³⁴⁹: Հանրապետական սենատոր Ֆիլանդեր Նոքսը (Philander Knox) համենատուն էր այս դիրքորոշումը «Մոնրոյի դոկտրինայի» հետ: Ըստ նրա՝ «Մոնրոյի դոկտրինան» չխանգարեց Միացյալ Նահանգներին միավորվել պաշտպանական խմբավորման մեջ պատերազմի տարիներին, ուստի նման պարագայում ևս Միացյալ Նահանգներին ոչինչ չէր խանգարի միավորվելու ընդդեմ «խաղաղության ապագա ոտնահարումների»³⁵⁰:

Սակայն դեպքերի նման ընթացքը չէր հիասթափեցնում Վուդրո Վիլսոնին: Նա հավատացած էր, որ Միացյալ Նահանգների ազգաբնակչության ճնշող մեծամասնությունը կողմ էր Ազգերի լիգային, քանի որ վերջինս էր միայն ի վիճակի ներշնչել հաստատուն և հարատև խաղաղության վստահությունը³⁵¹: Նա համոզված էր, որ իր խաղաղության ծրագիրը հիմնված էր Միացյալ Նահանգների համար ավանդական արտաքին քաղաքական սկզբունքի վրա և համարում էր, որ նոր կարգի հաստատումը կարող էր լինել ոչ այլ ինչ, քան «Մոնրոյի դոկտրինայի» դրական բովանդակության ընդհանրացում: Դեռևս 1917թ. հունվարի 22-ին նա հայտարարեց Սենատում. «Իմ առաջարկը դիտվում է որպես պահանջ, որ բոլոր ազգերը միաձայն ճանաչեն «Մոնրոյի դոկտրինան» որպես ողջ աշխարհի դոկտրինա»³⁵²: Այլ խոսքով ասած՝ նա ոչ թե հրաժարվում էր այդ Դոկտրինայից, այլ հանդես էր գալիս դրա ընդլայնման և զարգացման համար: Ազգերի լիգայի կանոնադրությամբ նախատեսվող երաշխիքների իմաստը նախագահի ընթերցմամբ հիմնվում էր մի սկզբունքի վրա, համաձայն որի՝ ուժեղը պատասխանատու էր թույլի բարօրության համար: Այսպիսով՝ «Մոնրոյի դոկտրինայի» կարևորագույն գաղափարն իր ողջ երաշխիքների հետ Վուդրո Վիլսոնը

³⁴⁸ Տե՛ս **A. Cranston**, *The killing of the Peace*, New York, "Viking Press", 1945, p. 45. Տե՛ս նաև **L. Ambrosius**, *Woodrow Wilson and the American Diplomatic Traditions*: p. 93-94:

³⁴⁹ Տե՛ս **R. Maddox**, *William E. Borah and American Foreign Policy*, Baton Rouge, "Louisiana State University Press", 1969, p. 50-72:

³⁵⁰ *Congressional Records*, part 1, p. 603-608.

³⁵¹ Տե՛ս *America and the League of Nations*, Woodrow Wilson's Addresses in Europe, comp. by **L. Powell** and **F. Hodgins**, Chicago, "Rand McNally & Company", 1919. p. 181, (այսուհետև *America and the League of Nations*): Տե՛ս նաև *Архив полковника Хауза*, т. 4, с. 272:

³⁵² *President Wilson's Address to the US Senate, on Essential Terms of Peace in Europe*, Delivered on January 22, 1917, *President Wilson's State Papers and Addresses*, ed. by **A. Shaw**, p. 355.

տարածում էր ազգերի համաշխարհային դաշինքի վրա: Միացյալ Նահանգների նախագահը համոզված էր, որ իր արտաքին քաղաքական հայեցակարգը նշանակում էր Միացյալ Նահանգների դիվանագիտության դասական սկզբունքների միայն խելացի կիրառում, այլ ոչ թե պարզեցում: Ամերիկյան պատմաբան Էդուարդ Բյուերիգի (Edward Buehrig) գնահատմամբ Վուդրո Վիլսոնի դատողություններում «Մոնրոյի դոկտրինան» հանդես էր գալիս որպես յուրատեսակ «կապող օղակ նոր և հին քաղաքականության միջև»³⁵³:

Դեմոկրատական գործիչները հավատացած էին, որ նոր Լիգան հիմնվելու էր գերազանցապես միայն բարոյական ազդակների վրա, իսկ հանրային կարծիքի իշխանությունը Միացյալ Նահանգներում և ողջ քաղաքակիրթ աշխարհում լինելու էր գերագույն իշխանություն, որն էլ կբերեր համաձայնություն և խաղաղություն: Նրանք հավաստում էին նաև, որ իրական ընտրությունը պատերազմի և խաղաղության, Ազգերի լիգայի և համընդհանուր անկառավարելի ռազմականացման միջև էր, և որ Լիգան ի վերջո վերջ կդնէր խճճված դաշինքներին, որոնք հանգեցնում էին ապակայունացման և համընդհանուր հակամարտությունների³⁵⁴:

Փորձելով ցույց տալ, որ իր գաղափարները պաշտպանում էին ոչ միայն դեմոկրատները, այլև հանրապետականները՝ 1919 թ. մարտին Փարիզ մեկնելու առթիվ կազմակերպված հավաքին նա հրավիրեց նաև Ուիլյամ Թաֆտին (William Taft): Վուդրո Վիլսոնն ընդունում էր, որ այդ քաղաքական գործիչն անկեղծորեն սատարում էր Լիգայի ստեղծմանը³⁵⁵: Նրանց համատեղ ելույթը կայացավ 1919թ. մարտի 4-ին՝ Նյու Յորքի Մետրոպոլիտեն օպերայում: Իր ելույթում Ուիլյամ Թաֆտը, մատնանշելով առաջարկվող շտկումների անհրաժեշտությունը, կարևորեց Լիգայի դերը հետպատերազմյան կարգավորումների և համընդհանուր խաղաղության պահպանման գործում: Ըստ նրա, Լիգան քաղաքակիրթ ձևով կբաժաներ համաշխարհային ազդեցության գոտիները, առաջատար պետությունները Լիգայի շրջանակներում պատասխանատվություն կկրեին հետամնաց պետությունների զարգացման համար, Միացյալ Նահանգները կշարունակեին հոգ տանել արևմտյան կիսագնդի մասին՝ իրագործելով «Մոնրոյի դոկտրինայի» առաքելությունը³⁵⁶:

³⁵³ E. Buehrig, Woodrow Wilson and the Balance of Power. Bloomington, "Indiana University Press", 1956, p. 225.

³⁵⁴ Congressional Records, part 3, p. 2656-2657.

³⁵⁵ America and the League of Nations, p. 181.

³⁵⁶ Մանրամասն տե՛ս Taft papers on League of nations, ed. by T. Marburg and H. Flack, New York, "Macnilan", 1920, տե՛ս նաև W. Taft, World Peace, Written Debate, New York, "Kraus reprint co.", 1970, Congressional Records, part 3, p. 2656-2657, D. Miller, նշված աշխ., հ. 1, էջ 374-377, L. Ambrosius, Woodrow Wilson and the American Diplomatic Traditions: p, 96-97:

Ինչևէ, ընդունելով նախկին նախագահ Ուիլյամ Թաֆտի և ընդդիմադիրների խորհուրդները՝ Վուդրո Վիլսոնը որոշեց շտկումներ կատարել Լիգայի կանոնադրության նախագծում, որոնք վերաբերում էին Լիգայի կազմից դուրս գալու իրավունքին, ինչպես նաև Միացյալ Նահանգների կողմից «Մոնրոյի դոկտրինայից» բխող իրավունքների և շահերի պահպանմանը³⁵⁷:

Մարտի 14-ին Վուդրո Վիլսոնը վերադարձավ Փարիզ, և ինչպես խոստացել էր, խնդրեց 19-ի հանձնաժողովի համաձայնությունը կանոնադրության մեջ մի շարք նոր հոդվածներ ընդգրկելու կապակցությամբ: Դրանք վերաբերում էին Ազգերի լիգայի կազմից դուրս գալու պայմանների հստակեցմանը, «Մոնրոյի դոկտրինայից» բխող Միացյալ Նահանգների իրավունքների և շահերի պահպանմանը, Լիգայի անդամ-պետությունների ներքաղաքական հարցերին Լիգայի չմիջամտելուն և մի շարք այլ հարցերի³⁵⁸:

Այսպիսով՝ Վուդրո Վիլսոնը լծվեց կանոնադրության ճշգրտման գործին: Որոշ վիճելի հարցերի* քննարկումից հետո ապրիլի 28-ին կայացավ ևս մեկ լիազուսար նիստ, որի հիմնական զեկուցողը Վուդրո Վիլսոնն էր: Նա ամփոփեց հանձնաժողովի քննարկումների արդյունքները և ներկայացրեց իր մշակած կանոնադրության վերջնական տարբերակը: Համաժողովը հավանության արժանացրեց կանոնադրության այս տարբերակը, և արդյունքում բոլոր որշումներն ընդունվեցին: Գնդապետ Հաուզն այդ կապակցությամբ նկատել էր. «Համաժողովը չհասցրեց շունչ քաշել, և բոլոր որոշումները արդեն կայացված էին»³⁵⁹: Կազմակերպության գլխավոր քարտուղար նշանակվեց բրիտանացի դիվանագետ Ջեյմս Դրամոնդը (James Drummond), ինչպես նաև որոշվեցին Խորհրդի առաջին չորս ոչ մշտական անդամները՝ Բելգիան, Հունաստանը, Իսպանիան և Բրազիլիան³⁶⁰:

1919թ. ապրիլի 28-ի դրությամբ Ազգերի լիգան այլևս իրողություն էր: Եվ այն, հիմնադիրների հանգամանք, որպես միջազգային մարմին պետք է ունենար գործնական ներդրում միջազգային հարաբերությունների կարգավորման գործում և նվազեցներ պատերազմի հավանականությունը՝ առաջնություն տալով հակամարտությունների լուծման խաղաղ ճանապարհներին: Սակայն Վուդրո Վիլսոնի կարծիքով միայն Լիգայի ստեղծումը չէր, որ պետք է կանխեր ապագայում հնարավոր պատերազմների բռնկումը: Վուդրո Վիլսոնը բազմիցս ասել էր. «Եթե մենք ուզում ենք, որ այս խաղաղությունը լինի

³⁵⁷ Տե՛ս **Р. Бекер**, Вудро Вильсон: с. 344-346, տե՛ս նաև **В. Лан**, նշված աշխ., էջ 65:

³⁵⁸ Տե՛ս Архив полковника Хауза, т. 4, с. 332:

* Վիճելի հարցերի մասին մանրամասն տե՛ս Архив полковника Хауза, т. 4, с. 333, տե՛ս նաև **З. Гершов**, Вудро Вильсон, с. 224-225:

³⁵⁹ Архив полковника Хауза, т. 4, с. 337.

³⁶⁰ **Р. Илюхина**, Лига Наций, 1919-1934, Москва, "Наука", 1982, с. 75.

տակաւ, ապա Գերմանիայի հետ կնքվող պայմանագիրը չպետք է լինի թաւանջիական», և եթէ Անտանտի երկրները չհամաձայնեն այդ դրույթի հետ, ապա նա կվերադառնա տուն և կպատրաստվի առանձին հաշտութեան կնքմանը³⁶¹։ Վուդրո Վիլսոնը, գնահատելով Ֆրանսիայի դիրքորոշումը, նկատեց, որ Ֆրանսիան կիրաւարկի մեզ հետ համագործակցելուց, եթէ չստանա այն, ինչ ուզում է և այս դեպքում չի ցանկանում արդոյք ժորժ Կլեմանսոն, որ ինքը վերադառնա տուն։ Ժորժ Կլեմանսոն պատասխանեց. «Ես չեմ ցանկանում որ Դուք վերադառնաք, բայց մտադրված եմ ինքս դա անել»³⁶²։ Ակնհայտ է, որ Ֆրանսիայի նման պահվածքը գալիս էր Գերմանիայի հանդէպ ունեցած ռևանշիստական տրամադրութիւնից։ Ֆրանսիան ամեն գնով ցանկանում էր հիմնովին ջախջախել Գերմանիային՝ այս կերպ լուծելով 1870-1871 թթ. ֆրանս-պրուսական պատերազմի «վրեժը»։ Միանգամայն այլ էր Մեծ Բրիտանիայի դիրքորոշումը, որը բխում էր վերջինիս «հավասարակշռութեան» քաղաքականութիւնից։ Մեծ Բրիտանիան որքան էլ որ ուզէնար պատժել Գերմանիային և վերցնել վերջինիս գաղութային տիրույթները, միևնույն ժամանակ չէր կարող թույլ տալ Ֆրանսիայի գերիշխանութեան հաստատումը Եվրոպայում, ուստի հանդէս էր գալիս չափավոր դիրքերից։ 1919 թ. մարտի 25-ին Լլոյդ Ջորջը հրապարակեց իր հուշագիրը, որը վերնագրված էր հետևյալ կերպ. «Մի քանի նկատառումներ խաղաղութեան համաժողովի համար նախքան խաղաղութեան վերջնական պայմանների հաստատումը»։ Այս փաստաթուղթը, որը հիմնականում հասցեագրված էր Վուդրո Վիլսոնին և Ժորժ Կլեմանսոյին, ստացավ «Յուշագիր Ֆոնտենբլոյից» անվանումը՝ կապված այն հանգամանքի հետ, որ Լլոյդ Ջորջն այդ ժամանակ գտնվում էր Ֆոնտենբլոյում։ Յուշագրում ասվում էր. «...Յամենատաբար ավելի հեշտ է կնքել խաղաղութիւն, որը կունենա մոտավորապէս երեսուն տարվա կյանք։ Անհամեմատ ավելի դժվար է կնքել այնպիսի խաղաղութիւն, որը նոր պատերազմ չծնի... Եթէ ժամանակի ընթացքում Գերմանիան տեսնի, որ 1919 թ. խաղաղութիւնը անարդար է իր նկատմամբ, կգտնի միջոցներ վրեժխնդիր լինելու... Եթէ մենք ցանկանում ենք վարվել խելամիտ, ապա մենք պետք է Գերմանիային առաջարկենք այնպիսի խաղաղութիւն, որը հիմնված լինի արդարութեան վրա...»³⁶³։

Խնդրահարույց էր նաև հետպատերազմյան ապառազմականացման հարցը։ Այդ գաղափարը ներկայացվել էր Վուդրո Վիլսոնի կողմից դեռևս «14 կետերում»։ Այդ փաստաթղթի չորրորդ կետով նախատեսվում էր կրճատել պատերազմի մասնակից

³⁶¹ Տե՛ս Архив полковника Хауза, т. 4, с. 260:

³⁶² Նույն տեղում, էջ 310:

³⁶³ Յուշագրի տեքստը մանրամասն տե՛ս **Д.Ллойд Джордж**, Правда о мирных договорах, т. 1, с. 348-354:

երկրների սպառազինությունը այնպիսի նվազագույն մակարդակի, որը կբավարարի միայն երկրի ներքաղաքական անվտանգությանը: Վուդրո Վիլսոնն այս ձևակերպումը վերցրեց գնդապետ Չաուզից, մշակեց այն, ավելացրեց «ներքին անվտանգություն» արտահայտությունը³⁶⁴: Սակայն իր նախագծում նա թույլատրեց երկրներին ունենալ զինուժ՝ նախատեսված միջազգային պարտավորությունները կատարելու համար:

Դաշնակիցները ցանկանում էին հիմնականում Գերմանիայի նկատմամբ կիրառել ապառազմականացման դրույթը, որպեսզի բացառեին վերջինիս կողմից ռազմական ագրեսիայի կիրառումը: Սպառազինության համընդհանուր կրճատումը նաև հանդիսանում էր այն կանխարգելիչ միջոցառումներից մեկը, որ նրանք ցանկանում էին կիրառել պատերազմները կանխելու համար: Եվ այդ քայլը առաջինը պետք է աներ Գերմանիան, քանզի վերջին տասնամյակում եվրոպական երկրների սպառազինության աճը պայմանավորված էր վերջինիս ռազմականապես հզորացմամբ: Եվրոպական երկրները ստիպված ավելացրեցին իրենց սպառազինությունների քանակը, որպեսզի չհայտնվեն անպաշտպան իրավիճակում զգալիորեն հզորացած Գերմանիայի առջև: «Այդ իսկ պատճառով,-մշում էր Լլոյդ Ջորջը,- արդար է և անհրաժեշտ, որ սպառազինության կրճատումը սկսի այն երկիրը, որը սկսել է դրա աճը: Այն բանից հետո միայն, երբ ագրեսորը օրինակ կծառայի, ագրեսիայի ենթարկված երկրներն արդեն առանց մտավախության կհետևեն նրան... Սակայն նախքան այդ ագրեսորը պետք է համոզված լինի, որ մենք պատրաստ ենք նման սահմանափակման, այլապես Գերմանիայի ապառազմականացման բոլոր ջանքերը ապարդյուն կանցնեն»³⁶⁵:

Այսպիսով՝ վիլսոնյան ապառազմականացման դրույթն ունեցավ իր արտահայտումը պայմանագրում: Միևնույն ժամանակ Գերմանիային թույլ տրվեց ողջամտության սահմաններում զորք պահել երկրի ներքին կարգի պահպանման համար³⁶⁶:

Պայմանագրի ստորագրման արարողությունը տեղի ունեցավ Սարաևոյում կատարված սպանության հինգերորդ տարեկիցի օրը՝ 1919 թ. հունիսի 28-ին: Այդ օրը կայացավ վերջին լիազուժար նիստը, որը տևեց 45 րոպե: Այն կայացավ Վերսալյան պալատի հայելապատ դահլիճում: Չենց այս դահլիճում 1871 թ. ֆրանս-պրուսական պատերազմի ավարտին Պրուսիայի թագավոր Վիլհելմ I-ը հայտարարվեց գերմանական կայսր: Սա հատուկ էր արված Գերմանիային նվաստացնելու համար:

³⁶⁴ **Р. Бекер**, Вудро Вильсон: с. 362.

³⁶⁵ **Д.Ллойд Джордж**, Правда о мирных договорах, т. 1, сс. 353, 514.

³⁶⁶ Версальский мирный договор, под ред. **Ю. Ключникова** и **А. Сабанина**, Москва, "Литиздат НКВД", 1925, с. 63-74.

«Այդ նշանավոր օրը,- գրում է գնդապետ Չաուզը իր օրագրում,- երբ գերմանացիները և Մեծ տերությունները ստորագրեցին պայմանագիրը, սկսեցին կրակել թնդանոթները: Ես համակրանք էի զգում գերմանացիների նկատմամբ, որոնք իրենց արժանապատիվ էին պահում: Դա հիշեցնում էր հին ժամանակները, երբ հաղթողը պարտվողին քարշ էր տալիս իր մարտակառքի ետևից: Ես կուզեի, որ դա արվեր ավելի համեստ և դրանում զգացվեր ասպետության տարրը, ինչը իրականում լրիվ բացակայում էր»³⁶⁷:

Համաժողովի մասնակիցները հեռացան որպես հետպատերազմյան կարգավորման համակարգի ստեղծողներ: Ֆրանսիան կարծես թե ստացել էր հնարավորություն Եվրոպայում գերիշխելու, Մեծ Բրիտանիան կարողացել էր պահպանել իր արտաքին քաղաքականության համար այդքան կարևոր ուժերի հավասարակշռությունը, իսկ Միացյալ Նահանգները Ազգերի լիգայի միջոցով աշխարհում իր արժեքները տարածելու հնարավորություն էր ստացել³⁶⁸: Պայմանագրի ստորագրումից հետո Վուդրո Վիլսոնը հայտարարեց, որ այն ստացվեց ավելի լավ, քան ինքը ենթադրում էր. «Ես չեմ ցանկանում ասել, որ այն լրիվ համապատասխանում է «14 կետերին», բայց իրականում այդ համապատասխանությունն ավելին է, քան ես կարող էի ակնկալել»³⁶⁹: Միացյալ Նահանգների նախագահը բավարարված էր, որ կազմվել էր Ազգերի լիգայի կանոնադրությունը, և այն հանդիսանում էր պայմանագրի բաղկացուցիչը: Նա մեծ հույսեր էր կապում այդ կառույցի հետ՝ դրանում տեսնելով համաշխարհային հանրության ապագա խորհրդարան³⁷⁰:

Ունեցա՞վ նախագահ Վիլսոնը հաջողություն համաժողովում, թե՛ ոչ: Այդ հարցին դժվար է միանշանակ պատասխանելը: Մի կողմից նա հասավ զգալի հաջողությունների. մեկնելով Փարիզ՝ Վուդրո Վիլսոնի հիմնական նպատակը հետպատերազմյան նոր աշխարհակարգը հաստատող և համընդհանուր խաղաղությունը պահպանող կառույցի հիմնումն էր, և վերջին հաշվով դա նրան հաջողվեց: Փարիզի համաժողովին մասնակից բրիտանացի տնտեսագետ Ջոն Բեյնսը նշում էր, որ միմյանց դեմ պայքարում էին միջազգային հարաբերությունների երկու միմյանց հակասող ծրագրեր՝ Վուդրո Վիլսոնի «14 կետերը» և ժորժ Կլեմանսոյի «Կարթագենյան հաշտությունը»³⁷¹: Եվ այս դժվարին պայքարում, ըստ մեկ այլ ականատես Ռեյ Բեյքերի, Վուդրո Վիլսոնը կարողացավ հասնել դրված նպատակներին. ստեղծվեց նոր աշխարհակարգի հաստատման եթե

³⁶⁷ Архив полковника Хауза, т. 4, с. 377.

³⁶⁸ **А. Уткин**, Дипломатия Вудро Вилсона, с. 297.

³⁶⁹ Տե՛ս Архив полковника Хауза, т. 4, с.377-378:

³⁷⁰ An Address to the Senate, July 10, 1919, **W. Wilson**, The Hope of the World, New York and London, "Harper & Brothers Publishers", 1920, p. 1-23.

³⁷¹ **J. Keynes**, The Economic Consequences of the Peace, New York, "Harcourt, Brace, and Howe", 1920, p. 56.

նույնիսկ ոչ կատարյալ, ապա բավարար մեխանիզմ³⁷² : Ուղղակի եվրոպական գործընկերների «կամակորուքունը» և Միացյալ Նահանգների օրենսդիրների ընդդիմությունը ստիպեցին նրան գնալու զգալի զիջումների՝ դրա հետ մեկտեղ պահպանելով իր քայլերի գաղափարական հենքը:

Վուդրո Վիլսոնի զիջումները կարելի է բացատրել մի շարք հանգամանքներով. նա չէր կարող հաշվի չառնել ստեղծված միջազգային իրավիճակը և դրա համար որոշ հարցերում զիջում էր եվրոպական քաղաքական գործիչների պահանջներին՝ ձգտելով պահպանել միասնականությունը մասնակիցների միջև: Վուդրո Վիլսոնը վախենում էր հետպատերազմյան խաղաղության կնքման ձգձգումից և գտնում էր, որ ավելի լավ է ստորագրել պայմանագիրը, որի մեջ անգամ լինեին մի շարք չբավարարող դրույթներ, և ստեղծել Լիգայի միջոցով դրանք վերանայելու հեռանկարային մեխանիզմ: Այդ նպատակով կանոնադրության մեջ մտցվեց հատուկ հոդված, համաձայն որի՝ Լիգան իրավունք ուներ վերանայել միջազգային պայմանագրերը, որոնց պահպանումը կարող էր վտանգել հանրնդհանուր խաղաղությանը³⁷³ : Վուդրո Վիլսոնի ունեցած դժվարություններում իրենց դերն ունեցան նաև վերջինիս հոգեբանական որոշ առանձնահատկություններ, որոնք ի հայտ էին գալիս վեճերի ժամանակ: Միջազգային համաժողովի մասնակիցները վկայում էին Վուդրո Վիլսոնի չափազանց կենտրոնացումը Ազգերի լիգայի հարցի վրա, որի համար նա զոհում էր շատ սկզբունքներ: Այդ ամիսներին ուժեղ ֆիզիկական հոգնածության ազդեցության տակ նրա մոտ հաճախ ի հայտ էր գալիս մտավոր ճկունության հերթական բացակայություն, քննադատությունը հաշվի առնելու և իր գործընկերների ռացիոնալ խորհուրդները ընդունելու անընդունակություն: Նման հոգեբանական վիճակը ամենից հաճախ խանգարում էր Վուդրո Վիլսոնին համարժեք ընդունել համաժողովի առանձին փոխզիջումային որոշումների իրական իմաստը³⁷⁴ : Եվ, ինչպես գրում է պետքարտուղար Ռոբերտ Լանսինգը, նախագահը երբեմն ցուցաբերում էր տարօրինակ խառնուրդ ինքնավստահության և անվճռականության³⁷⁵:

1919թ. հուլիսին նախագահ Վիլսոնը վերադառնում է Միացյալ Նահանգներ՝ իր ձեռքին ունենալով Ազգերի լիգայի հաստատված կանոնադրությունը և վստահ լինելով, որ ընդհանուր լեզու կգտնի իր օրենսդիրների հետ: Ողջ աշխարհի ուշադրությունը կենտրոնացած էր Ազգերի լիգայի վրա: Ինչպես Ռեյ Բեյքերն է նշում. «Սկսած 1918 թ.-ից

³⁷² **Р. Бекер**, Вудро Вильсон , с. 170.

³⁷³ Версальский мирный договор, с. 38.

³⁷⁴ **З. Фрейд, У. Буллит**, Томас Вудро Вильсон 28-ой президент США: Психологическое исследование. Москва, "Прогресс", 1992, с. 226-244.

³⁷⁵ **R. Lansing**, The Peace Negotiations, A Personal Narrative, Boston-New York, "Houghton Mifflin Company", 1921, p. 205.

մինչ այսօր (1923 թ-Կ.Գ.) ոչինչ այդքան շատ և հիմնավոր չի քննարկվել ինչպես Լիգան: Միացյալ Նահանգներում այն նույնիսկ դարձավ նախագահ Վիլսոնի նախընտրական կամպանիայի կարգախոսը»³⁷⁶:

Փարիզից հետո նախագահին ակտիվ ընդգրկվեց վերսալյան պայմանագրի վավերացման պայքարի մեջ: Հուլիսի 10-ին նախագահը ներկայացրեց Սենատին պայմանագրի տեքստը՝ այն ուղղորդելով հետևյալ ուղերձով. «Պայմանագրի դրույթները չեն հեռանում ամերիկյան ազգի ձգտումներից, իսկ Ազգերի լիգան հանդիսանում է ոչ միայն համերաշխության պայմանագրով հին չարիքը վերացնելու գործիք, այլ այն մարդկության միակ հույսն է»: Միջազգային հանրությանը միանալը Վուդրո Վիլսոնը կապում էր Միացյալ Նահանգների կենսական շահերի հետ. «Եթե մենք գտնվենք Լիգայից դուրս, դա կործանարար կլինի ամերիկյան ազդեցության համար, իսկ մուտքը մեզ թույլ կտա զբաղեցնել առաջատար դեր համաշխարհային գործերում»³⁷⁷:

Սակայն Վուդրո Վիլսոնի Փարիզում գտնվելու ժամանակ Լիգայի հակառակորդների դիրքերն ուժեղացան: Հենրի Լոջը ջանք չէր խնայել սենատորներին ընդդեմ Լիգայի տրամադրելու համար:

Պայմանագրի քննարկումը սկսվեց հուլիսի 31-ին, որը տևեց մինչև սեպտեմբերի 12-ը: Այս քննարկման ժամանակ նույնպես առանձնակի քննադատության ենթարկվեց տասներորդ հոդվածը, ըստ որի, ինչպես գիտենք, Ազգերի լիգայի անդամները պարտավորվում են հարգել և պահպանել Լիգայի բոլոր անդամների քաղաքական անկախությունը և տարածքային ամբողջականությունն ընդդեմ ցանկացած արտաքին հարձակման³⁷⁸:

Քննարկման ընթացքում ողջ նախաձեռնությունը գտնվում էր ընդդիմության ձեռքում: Սենատորները չէին կարող ընդունել պայմանագրի այդ տարբերակը, իսկ նախագահը ի վիճակի չէր և չէր ուզում այն փոխել: Ստեղծվում էր փակուղային իրավիճակ:

Եվ ահա նման բարդ իրադրությունում Վուդրո Վիլսոնը որոշում ընդունեց շրջագայել երկրով մեկ՝ պայմանագիրն ամերիկյան հասարակության դատին ներկայացնելու համար: Նախագահի այս որոշումը միանշանակ չընդունվեց. մի մասը գտնում էր, որ շրջագայելու փոխարեն պետք էր Սենատի հետ գալ ընդհանուր հայտարարի: Իսկ Վուդրո Վիլսոնն այս քայլով դրսևորեց բացահայտ առճակատում.

³⁷⁶ **Р. Бекер**, Вудро Вильсон , с. 297.

³⁷⁷ Տե՛ս **J. Tumulty**, նշված շխ. էջ. 452:

³⁷⁸ Версальский мирный договор, с. 10. Տե՛ս նաև **Д.Ллойд Джордж**, Правда о мирных договорах, т. 1, с. 543.

«Եթե նույնիսկ ուղևորությունն ինձ կործանի, ապա ես հաճույքով կգնամ նման զոհողության հանուն պայմանագրի փրկման»³⁷⁹: Սակայն սա խոսում էր Վուդրո Վիլսոնի քաղաքական անհեռատեսության մասին, քանզի այդ զոհողությունը կլիներ ի շահ իր քաղաքական հակառակորդների:

1919թ. սեպտեմբերի 3-ին Վուդրո Վիլսոնը սկսեց իր ճամփորդությունը: 22 օրվա ընթացքում նա այցելեց 16 նահանգ, ունեցավ ավելի քան 30 ելույթ* ի պաշտպանություն Վերսալյան պայմանագրի և Ազգերի լիգայի, վստահեցնելով, որ «Վերսալյան պայմանագիրը պատմության մեջ առաջին պայմանագիրն է, որ պաշտպանում է թույլերի, այլ ոչ թե ուժեղների իրավունքները»³⁸⁰: Սեպտեմբերի 25-ի Դենվերի ելույթում Վուդրո Վիլսոնը նույնիսկ հայտարարեց. «Խաղաղության հաստատումը այլընտրանք չունի, այլապես հաջորդ պատերազմը արմատապես կտարբերվի նոր ավարտվածից... Այն միջոցները, որ գերմանացիները կիրառեցին պատերազմի ժամանակ, խաղալիք են ի համեմատ նրանց, որոնք կկիրառվեն հաջորդ պատերազմում»³⁸¹: Սա, կարծում ենք, մեկնաբանության կարիք չունի, քանի որ հետագա պատմության ընթացքում Վուդրո Վիլսոնի մտավախությունը իրականություն դարձավ:

Սեպտեմբերի վերջին տեղի ունեցավ դեպքերի անսպասելի շրջադարձ. ամսի 25-ին Քոլորադո նահանգի Փուլբլո քաղաքում Ազգերի լիգայի պաշտպանությանն ուղղված ելույթից հետո նախագահ Վիլսոնի առողջական վիճակը կտրուկ վատացավ, իսկ հոկտեմբերի 2-ին նա ստացավ ուղեղի արյան զեղում: Չախ մասը կաթվածահար եղավ, խախտվեց խոսքը: Իրականացավ Վուդրո Վիլսոնի մտավախությունն այն մասին, որ ինքը կարող է դառնալ Լիգայի համար պայքարի զոհը: Սակայն այդ զոհողությունը ոչ մի դրական արդյունք չտվեց, այլ հակառակը, այն թուլացրեց նրա դիրքերը և ազդեցությունը հասարակության վրա:

Այդ ընթացքում Սենատի հանձնաժողովը շարունակում էր իր աշխատանքը: 1919 թ. սեպտեմբերի 12-ի դրությամբ քննարկումը վերջացավ, և հանձնաժողովը Սենատին ներկայացրեց 3 զեկույց: Առաջինը հանրապետական Յենրի Լոջի զեկույցն էր, որն ուներ պայմանագրին վերաբերող 44 ուղղում և 4 վերապահում: Երկրորդը՝ դեմոկրատ Գիլբերթ Յիչբորթի զեկույցն էր, որը պահանջում էր հաստատել պայմանագիրն առանց

³⁷⁹ Տե՛ս **J. Tumulty**, նշված աշխ., էջ 452: Տե՛ս նաև **L. Canfield**, *The Presidency of Woodrow Wilson: Prelude to a World in Crisis*, New Jersey, "Fairleigh Dickinson University Press", 1966, c. 434-435:

* Ճամփորդության ընթացքում Վիլսոնի ունեցած ելույթները մանրամասն տե՛ս *Addresses of President Wilson on His Western Tour, September 4 to September 25, 1919*, Washington, "Government Printing Office", 1919:

³⁸⁰ Address From Rear Platform, Richmond, Ind., September 4, 1919, *Addresses of President Wilson on His Western Tour*, p.17.

³⁸¹ An Address in Denver, Sept., 25 1919, *Addresses of President Wilson on His Western Tour*, p. 353.

վերապահումների: Երրորդը՝ հանրապետական սենատոր Փորթեր Մաքքամբերի (Porter McCumber) զեկույցն էր, որտեղ խոսվում էր պայմանագիրը պաշտպանելու մասին, սակայն առաջարկվում էին որոշ ուղղումներ³⁸²:

Սենատ, այնուամենայնիվ, որոշում ընդունեց շտկումներ չանել, քանի որ Միացյալ Նահանգները միակողմանի չէր կարող փոփոխություններ մտցնել պայմանագրի տեքստի մեջ: 1919 թ. նոյեմբերի 19-ին Սենատը կայացրեց իր որոշումը պայմանագրի վերաբերյալ: Վավերացմանը, առանց վերապահումների, կողմ քվեարկեց 38 սենատոր (հիմնականում դեմոկրատներ), դեմ՝ 53 : Վերսալյան պայմանագիրը, նրա հետ մեկտեղ Ազգերի լիգայի կանոնադրությունը հավանության չարժանացան, բայց չնայած դրան՝ Սենատը վերջնական որոշում չկայացրեց, այլ ստեղծեց երկկուսակցական հանձնաժողով՝ փոխզիջումային տարբերակ գտնելու համար³⁸³:

Ի պատասխան այս քայլի՝ 1919 թ. դեկտեմբերի 14-ին Սպիտակ տունը պաշտոնական հայտարարություն հրապարակեց: Տվյալ փաստաթղթում ընդգծվում էր, որ Վուդրո Վիլսոնը չի պատրաստվում գնալ փոխզիջման կամ էլ որևէ նշանակալի զիջման³⁸⁴ : Այնուամենայնիվ նա համաձայնեց Սենատի հատուկ հանձնաժողովի առաջարկած այն վերապահումներին, որոնք վերաբերում էին Լիգայի կազմից դուրս գալուն և «Մոնրոյի դոկտրինային»: Դրանք արմատական փոփոխություններ չէին մտցնում նախագահի դիրքորոշման մեջ: Բայց այլ զիջումների նա չգնաց³⁸⁵:

Եղավ նաև մեկ այլ հանգամանք: 1919 թ. Լոնդոնում լույս տեսավ բրիտանացի տնտեսագետ Ջոն Քեյնսի «Վերսալյան խաղաղության պայմանագրի տնտեսական հետևանքները» գիրքը: Նրանում հեղինակը կտրուկ քննադատության ենթարկեց ստորագրված պայմանագիրը տնտեսական տեսանկյունից: Ավելին, այն շարադրված էր այնպես, որ Փարիզը «սարսափ է և յուրաքանչյուրն այնտեղ իրեն զգում է սոսկալի... Նայելով Վիլսոնի և Կլեմանսոյի արտասովոր կերպարներին, նրանց անփոփոխ դեմքի գույնին, ականայից քեզ հարց ես տալիս՝ իրոք սրանք մարդկանց դեմքեր են, թե տրագիկոմիկ դիմակներ՝ դեռևս չտեսնված դրամայից կամ էլ տիկնիկային ներկայացումից»³⁸⁶: Հեղինակը նաև քննադատության է ենթարկում բանակցությունների մասնակիցներին տնտեսական խնդիրներին իրենց անուշադրության համար. «Զորսի խորհուրդը,-գրում էր նա,- զբաղված էր ուրիշ բանով: Կլեմանսոն մտածում էր՝ ինչպես խեղդի թշնամուն տնտեսապես, Լլոյդ Ջորջը՝ ինչպես կնքի հաջողակ գործարք, որը

³⁸² Մանրամասն տե՛ս **L. Canfield**, *Աշխարհի պատերազմը*, էջ 241-243:

³⁸³ **L. Ambrosius**, *Woodrow Wilson and the American Diplomatic Traditions*: p. 208.

³⁸⁴ **T. Bailey**, *Woodrow Wilson and the Great Betrayal*, New York, "Macmillan", 1945, p. 213.

³⁸⁵ **J. Daniels**, *The Wilson Era, Years of War and After, 1917-1923*, Chapel Hill, "The University of North Carolina Press", 1946, p. 473.

³⁸⁶ **J. Keynes**, *The Economic Consequences of the Peace*, p 6.

կկարողանա գոնե մեկ շաբաթ դիմանալ քննադատությանը Անգլիայում: Վիլսոնը՝ հանկարծ ինչ-որ բան չանի, որը չհամապատասխանի արդարությանը և իրավունքին: Բայց ամենից հրաշալիին այն էր, որ նրանց ուշադրությունը բացարձակ չէին գրավում հյուժոված և աչքի առաջ բարոյալքվող Եվրոպայի տնտեսական խնդիրները»³⁸⁷: Նա քննադատում էր Լիգայի ստեղծողների գաղափարապաշտությունը և Վուդրո Վիլսոնի հավատն այդ կառույցի արդյունավետությանը, բայց միևնույն ժամանակ նկատում էր, որ Վերսալյան պայմանագիրը ստեղծված պայմաններում պետք է կանոնակարգվի հենց Լիգայի միջոցով: «Մենք կարող ենք հուսալ, որ նոր կառավարությունները, որոնք ես համարում եմ անհրաժեշտ գլխավոր դաշնակից երկրներում, կգտնվեն ավելի իմաստուն և մեծահոգի, քան իրենց նախորդները»³⁸⁸: Սակայն առանձնապես ուժեղ ազդեցություն ունեցավ տնտեսագետի հաջորդ արտահայտությունը. «Եթե ես ունենայի որևէ ազդեցություն Միացյալ Նահանգների գանձատան վրա, ապա ոչ մի պե՛նս չէի տա վարկի տեսքով ոչ մի ներկա եվրոպական կառավարության առանձին վերցրած»³⁸⁹:

Սենատոր Ուիլյամ Բոռան լսումների ժամանակ ընթերցում էր առանձին հատվածներ այս գրքից բացահայտ քարոզչական նպատակներով: Եվ այնքան էլ կարևոր չէր այն, որ 2 տարուց Ջոն Քեյնսը իր նոր՝ «Խաղաղության պայմանագրի վերանայում» գրքում մեծամասամբ սրբագրեց իր տեսակետները. «Հայացք նետելով անցյալին, կարդալով այն, ինչը ես գրել եմ 2 տարի առաջ, տեսնում եմ՝ վտանգից, որ այն ժամանակ, թվում էր, կախված է նրանց (Եվրոպական երկրների-Կ.Գ.) վրա, այժմ հաջողվեց խուսափել: Եվրոպայի ժողովրդական զանգվածների համբերատարությունը, կայունությունը ինձ զարմացնում է, նրա կառույցները դիմացան ամենածանր հարվածների»³⁹⁰: Սակայն դա արդեն նշանակություն չուներ, նրա առաջին գիրքը հենց տեղին էր Վուդրո Վիլսոնի հակառակորդների համար: Այն թեժացրեց առանց այն էլ թեժ իրադրությունը Սենատի երկրորդ քվեարկության նախաշեմին: Դժվար է միանշանակ ասել, որ գիրքն ունեցավ ինչ-որ էական դերակատարում, քանի որ ոչ բոլոր սենատորները դրական արտահայտվեցին դրա բովանդակության վերաբերյալ: Սակայն հնարավոր է, որ այն դարձրեց փոխհամաձայնությունն անիրական: 1920թ. մարտի 19-ին վերապահումներով պայմանագրի օգտին կողմ քվեարկեցին 49 սենատորներ, իսկ դեմ՝ 35: Վավերացման համար չբավականացրեց ընդամենը 7 ձայն³⁹¹:

³⁸⁷ **J. Keynes**, *The Economic Consequences of the Peace*, p. 226

³⁸⁸ Նույն տեղում, էջ 234-238:

³⁸⁹ Նույն տեղում, էջ 284:

³⁹⁰ **Дж. Кейнс**, *Пересмотр мирного договора*, пер. с англ. Д. Кончаловского, Москва, "Государственное издательство", 1922, с. 104.

³⁹¹ **L. Canfield**, *Աշխարհի պայմանագիրը*, էջ 262:

Պայմանագիրը վերադարձվեց նախագահին նրա չվավերացման ժամուցմամբ: 1920 թ. մայիսի 15-ին Կոնգրեսը Գերմանիայի հետ պատերազմական իրավիճակը դադարեցնելու բանաձև ընդունեց, քանզի Վերսալյան պայմանագիրն այժմ չէր տարածվում Միացյալ Նահանգների վրա³⁹²:

Վուդրո Վիլսոնը, ի նշան բողոքի, այդ որոշման վրա վետո դրեց: Հաջորդ նախագահ հանրապետական Ուորեն Հարդինգի (Warren Harding) օրոք միայն բանաձևն ընդունվեց, իսկ 1921 թ. օգոստոսի 25-ին խաղաղության պայմանագիր կնքվեց Միացյալ Նահանգների և Գերմանիայի միջև³⁹³:

Սենատի կողմից պայմանգրի մերժման վերաբերյալ դիպուկ արտահայտվել է հայտնի ամերիկյան քաղաքական գործիչ Ջոն Հեյը: Նա նկատել էր, որ Սենատի քննարկմանը տրված պայմանագիրը նման է ցուլի, որը մտնում է մրցահրապարակ, և ոչ ոք չի կարող ասել, թե նա երբ կընկնի վերջին հարվածից, բայց պարզ է մի բան, նա երբեք կենդանի դուրս չի գա³⁹⁴:

Ամեն դեպքում հարց է առաջանում՝ արդյո՞ք ճիշտ էր գործում նախագահ Վուդրո Վիլսոնն այդ իրավիճակում: Դրան փորձել են պատասխանել շատերը, նույնիսկ նրա ժամանակակիցները: Օրինակ՝ Լլոյդ Ջորջը գրում էր իր հուշերում, որ Վուդրո Վիլսոնը պետք է գնար զիջումների և համաձայնեի Հենրի Լոջի շտկումների հետ, առավել ևս, որ դա չէր առաջացնի որևէ բարդացում դաշնակիցների հետ: «Ավելի շատ տակտ,- գրում էր նա,- և քիչ հպարտություն, և նա կհասներ իր նպատակին: Սենատ մտնելուց սիրալիք խոնարհում, և նա կհաղթեր: Բայց նա առաջվա պես մնում էր խստաբարո և աննկուն, ահա և բարավորին հարվածելով կոտրեց գլուխը, մնաց ուշագնաց վիճակում և լռեց հավիտյան»³⁹⁵: Ուիլսոնը Չերչիլը Վուդրո Վիլսոնի անհաջողությունները կապում էր նրա՝ չափազանց բազմաբնույթ կերպար լինելու հանգամանքի հետ. «Եթե Վիլսոնը լիներ միայն հասարակ գաղափարապաշտ կամ փորձված քաղաքական գործիչ, նրան երևի կհաջողվեր հասնել հաջողության, բայց նա փորձում էր զուգորդել և՛ մեկը, և՛ մյուսը, հենց դա էլ դարձավ նրա կործանման պատճառը»³⁹⁶:

Նման կարծիքի է նաև ամերիկյան ուսումնասիրող Դևիդ Ադամսը (David Adams): Նա նշում է, որ Վուդրո Վիլսոնը պահանջում էր ամեն ինչ և չստացավ ոչինչ: Նրա

³⁹² **L. Canfield**, նշված աշխ., էջ 269:

³⁹³ **А. Уткин**, Дипломатия Вудро Вилсона, с. 307.

³⁹⁴ Տե՛ս **K. Colegrove**, The American Senate and World Peace, New York, "The Vanguard Press", 1944, p 9:

³⁹⁵ **Д. Ллойд Джордж**, Правда о мирных договорах, т. 1, с. 210.

³⁹⁶ **У. Черчилль**, նշված աշխ. էջ 77:

անձնական անհաջողության արդյունքում Միացյալ Նահանգները մնաց Ազգերի լիգայից դուրս³⁹⁷:

Սակայն Վիսոնի պարտության պատճառը միայն նրա անհաջողությունը չէր: Հարցն այն էր, որ սրվել էր հակամարտությունն իշխանությունների միջև (Միացյալ Նահանգների պատմության մեջ ոչ առաջին և ոչ էլ վերջին անգամ): Երկրի արտաքին քաղաքականությունը որոշելու իրավունքի համար ուժեղացել էր պայքարը կառավարության և օրենսդիրների միջև: Չի կարելի նաև հաշվի չառնել անձնական հակասությունները: Ինքը՝ Վուդրո Վիլսոնը դա լավ հասկանում էր. «Չնայած այն ամենին՝ ինչ ես անում եմ իմ երկրի համար, նրանք կշարունակեն ինձ հարձակման ենթարկել»³⁹⁸:

Բավականին օբյեկտիվ էր դեմոկրատ կոնգրեսական Քորդել Հալի (Cordell Hull) կարծիքը: Նա համոզված էր, որ եթե Վուդրո Վիլսոնը համաձայներ ընդունել վերապահումներով տարբերակը, ապա հաջորդ օրը հանրապետականները Հենրի Լոջի գլխավորությամբ առաջ կքաշեին նոր պահանջներ: Նրանք վճռականորեն ձգտում էին Ազգերի լիգայի պարտությանը և դրանով իսկ Վուդրո Վիլսոնի պարտությանը³⁹⁹: Եվ ինչպես նշում է Ուիլյամ Ուայթը (William White). «Վիլսոնը իրականում իր ժամանակակիցներից առաջ էր իր քաղաքական հայացքներով, սակայն նա չկարողացավ նվաճել աշխարհը, քանի որ մարդկությունը դրան դեռևս պատրաստ չէր»⁴⁰⁰:

Համաձայնելով վերջինիս կարծիքին՝ նշենք, որ Վուդրո Վիլսոնի արտաքին քաղաքական ժառանգությունը մինչ օրս արդիական է: Դրա վառ ապացույցն է այն, որ ժամանակակից միջազգային կազմակերպությունների գործունեության սկզբունքներն իրենց հիմքում, կարելի է ասել, հենց վիլսոնյան են: Համաշխարհային քաղաքականության շատ խնդիրներ, որոնք փորձում էր համակարգել նախագահ Վիլսոնը, դեռևս անլուծելի են: Շատ պետությունների քաղաքական և հասարակական գործիչների մեծամասնությունը հստակ գիտակցում է, որ նոր դարաշրջանի ամենավտանգավոր մարտահրավերները (այդ թվում նաև ահաբեկչությունը) չեն կարող հաղթահարվել առանց համաշխարհային հանրության միասնական կամքի, որի անհրաժեշտության մասին էր խոսում Վուդրո Վիլսոնը:

³⁹⁷ **D. Adams**, *America in the 20th Century: A Study of the United States since 1917*, Massachusetts, "Cambridge University Press", 1967, p. 41.

³⁹⁸ Տե՛ս **R. Baker**, *Woodrow Wilson and World Settlement*, vol. 1, p. 321:

³⁹⁹ **C. Hull**, *The Memoirs of Cordell Hull*, v. 1, New York, "Macmillan Co.", 1948, p.103.

⁴⁰⁰ **W. White**, *Woodrow Wilson: The Man, His Time and His Task*, Boston-New York, "Mifflin", 1925, p. 436.

ԵՂՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համընդհանուր խաղաղության հղացքի ուսումնասիրումը հնարավորություն է ընձեռում հետևել գաղափարի զարգացմանը՝ քաղաքացիական խաղաղության արժևորումից մինչև հարատև և կայուն խաղաղության հաստատում, մարդասիրական սպասումներից մինչև քաղաքական հստակ ծրագրեր, խաղաղության տրամախոսություններից մինչև համակարգային կիրարկման տարբերակներ և միջազգային խաղաղարար կազմակերպություններ, խաղաղության իրականացման մեխանիզմների մշակումից մինչև հասարակական-տնտեսական հարաբերությունների փոփոխման ծրագրեր: Այսպիսով՝ խաղաղության գաղափարն անցնելով բազմափուլ զարգացման նախագծային և ծրագրային ճանապարհ խաղաղության գաղափարը թևակոխեց գործնական կիրառման, իրական քաղաքականության և իրավական կարգավորման փուլ:

Առաջին աշխարհամարտի ավարտից հետո աշխարհը կանգնեց հետպատերազմյան նոր աշխարհակարգ ձևավորելու և խաղաղության պահպանման նոր երաշխիքներ փնտրող մարտահրավերի առջև: Այս բարդ խնդիրն իրականացվեց վերսալյան կարգավորման շրջանակներում: Խաղաղ կարգավորման սույն գործընթացը նշանավորվում էր նրանով, որ դրա ստեղծողները փորձում էին նախապատերազմյան քաղաքական և հասարակական ճգնաժամը հաղթահարել ժամանակի համար նորարարական լուծումներով: Միջազգային հանրությունն առաջին անգամ փորձեց իրականացնել միջազգային հարաբերությունների նախադեպը չունեցող ինստիտուցիոնալիզացիա: Վուդրո Վիլսոնը դարձավ քաղաքական նոր փիլիսոփայության ձևավորողը, որում համընդհանուր խաղաղության հիմնահարցը դիտարկվում էր միջազգային հարաբերությունների «գլոբալ վերակառուցման» տեսությամբ՝ Ազգերի լիգայի գործունեության երաշխավորմամբ:

Հանրագումարի բերելով ատենախոսության հիմնական դրույթները՝ ամրագրվել են հետևյալ եզրահանգումները.

- համընդհանուր խաղաղության պահպանման կարևորագույն բաղադրիչ հանդիսացող հավաքական անվտանգության մեխանիզմները Եվրոպայում հաստատվել և կիրառվում են դեռևս 17-րդ դարից: Միջպետական հարաբերությունների համակարգային զարգացման շնորհիվ այդ մեխանիզմները փոխակերպվեցին միջազգային հարաբերությունների կարգավորման նորմերի և դրվեցին խաղաղ կարգավորման գործընթացների հիմքում: Վեստֆալյան համակարգը համընդհանուր խաղաղության պահպանումը դիտարկվում էր ազգային շահերի առաջնության, ուժերի

հավասարակշռության, ազգային պետությունների առաջնության, պետական ինքնիշխանության սկզբունքների կիրառման շրջանակներում:

▪ Վիեննայի համակարգը, ի տարբերություն նախորդի, համընդհանուր խաղաղության պահպանման հիմքում տեսնում էր «օրինականության» սկզբունքի կիրառումն ու միապետների օրինական իշխանության և փոխադարձ բարոյական պարտավորվածության պահպանումը: Համեմատության մեջ տեսնում ենք, որ միջազգային իրավունքի տեսակետից Վիեննայի համակարգն ավելի պահպանողական էր, քան Վեստֆալյանը: Սակայն Վիեննայի համակարգի ստեղծողներն իրենց քաղաքական մտածելակերպով մեկ քայլ առաջ են անցնում նախորդներից և հստակ գիտակցում, որ ուժերի հավասարակշռման մեխանիզմը լիարժեք աշխատում է այն դեպքում, երբ ամրագրված է համընդհանուր արժեքներին վերաբերող որևէ համաձայնությամբ, որը կկանխի միջազգային կարգի խախտման փորձերը: Նման նախաձեռնությամբ հանդես եկավ ցար Ալեքսանդր I-ը, որի արդյունքում ստեղծվեց Սրբազան դաշինքը: Այն եկավ փոխարինելու ուժի կիրառման սկզբունքը բարոյական փոխադարձ պատասխանատվության գործոնով: Սակայն 19-րդ դարի վերջին եվրոպական հավասարակշռության համակարգը կրկին վերադարձավ ուժային քաղաքականության սկզբունքին, որի արդյունքում և բռնկվեց Առաջին համաշխարհային պատերազմը: Գոյություն ունեցող մեխանիզմներն այլևս հնացած էին և արդյունավետ չէին գործում: Ուստի համընդհանուր խաղաղության հաստատման և արդյունավետ պահպանման համար անհրաժեշտ էր դրանք վերանայել ժամանակի հրամայականին համահունչ:

▪ Վերախնաստավորելով նախապատերազմյան աշխարհակարգի սկզբունքները՝ Միացյալ Նահանգների նախագահ Վուդրո Վիլսոնը որդեգրեց արտաքին քաղաքական նոր ուղեգիծ, ինչը ենթադրում էր սեփական և մեծ պետությունների պատմական փորձի ամբողջական վերանայում: Ըստ նախագահ Վիլսոնի՝ Միացյալ Նահանգների քաղաքական մեկուսացվածությունը համաշխարհային գործերից խոչընդոտում էր երկրի հետագա զարգացմանը: Միացյալ Նահանգները, համաձայն «իրեն ի վերուստ կանխորոշված առաքելության», ամերիկյան աշխարհամասից բացի պետք է ստանձներ նաև ողջ աշխարհում անվտանգության հաստատման ու պահպանման պատասխանատվությունը: Ահա այս ճանապարհին Առաջին աշխարհամարտը կարծես պատեհ առիթ հանդիսացավ: Միացյալ Նահանգները, ի դեմս նախագահ Վիլսոնի, դրսևորեց փայլուն դիվանագիտական գործունեություն՝ հայտարարելով չեզոքություն այդ առաջին հայացքից ոչ ամերիկյան հակամարտության նկատմամբ: Սա նախագահ Վիլսոնի առաջին գործնական քայլն էր խաղաղության ամերիկյան ձևաչափի հաստատման ճանապարհին: Նա զգալի ուշադրություն էր հատկացնում Միացյալ

Նահանգների դերակատարությանն ապագա միջազգային համակարգում և, հայտարարելով չեզոքություն, փաստացի հրաժարվեց մեկուսացվածության քաղաքականությունից և ակտիվորեն սկսեց մասնակցել նոր աշխարհակարգի ձևավորման և «արդարացի» խաղաղության հաստատման գործին:

- Սակայն և՛ նախագահ Վիլսոնը, և՛ Միացյալ Նահանգների կառավարող շրջանակները լավ գիտակցում էին, որ առանց անմիջական միջամտության հնարավոր չէր ապագա խաղաղության հաստատման գործում ունենալ վճռական դերակատարում: 1917 թ. ապրիլի 6-ին Միացյալ Նահանգներն ընդգրկվեց պատերազմի մեջ ընդդեմ Գերմանիայի և նրա դաշնակիցների: Կարևոր էր նաև այն հանգամանքը, որ պատերազմն առիթ ընձեռեց Միացյալ Նահանգներին եվրոպական խնդիրների լուծման նպատակով գործնականում կիրառել ամերիկյան սկզբունքների տարածման քաղաքականությունը: Սա, փաստորեն, նախագահ Վիլսոնի վերը նշված ճանապարհին թվով երկրորդ գործնական քայլն էր:

- Միացյալ Նահանգները դարձավ այն երկիրը, որի հետ կապվեց խաղաղության հաստատման հույսը: Ահա այստեղ նախագահ Վիլսոնը կատարեց իր թվով երրորդ գործնական քայլը՝ հանդես գալով խաղաղության հաստատման իրատեսական «14 կետերի» ծրագրով, որն, ըստ Վուդրո Վիլսոնի, «միակ հնարավոր» ծրագիրն էր:

«14 կետերը» նախատեսում էին միջազգային հարաբերությունների գլոբալ վերանայում և համընդհանուր խաղաղության պահպանման իրավական կարգավորում: Ըստ վերջին՝ տասնչորսերորդ կետի՝ հատուկ համաձայնագրով ինչպես մեծ, այնպես էլ փոքր պետություններին քաղաքական անկախության և տարածքային ամբողջականության փոխադարձ երաշխիքներ տրամադրելու նպատակով պետք է ստեղծվեր ազգերի համընդհանուր ընկերակցություն՝ «Ազգերի լիգա»: Ազգերի լիգա ստեղծելու նախագահ Վիլսոնի առաջարկը հանդիսանում էր շատ կարևոր ներդրում նոր աշխարհակարգի ստեղծման գործում: Այն կոչված էր արմատապես փոխել պետությունների փոխհարաբերությունները և ստեղծել ազգերի հավասարության ու իրավական հարթության վրա հիմնված միջպետական փոխհարաբերությունների կարգավորման համակարգ: Այն պետք է հիմնվեր բոլոր ազգերի ընդհանուր հզորության վրա և կախված լիներ ոչ թե մեկի գերակայությունից, այլ անվտանգության հանդեպ պատասխանատվության հավաքական գիտակցումից:

- Նախագահ Վիլսոնը Վերսալյան համակարգի շրջանակներում առաջարկեց ճգնաժամից դուրս գալու և միջազգային հարաբերությունները կարգավորելու իր «դեղատոմսը»: Նա ցանկանում էր ոչ թե արմատապես փոխել գոյություն ունեցող եվրոպական սկզբունքները, այլև փորձում էր ստեղծել իրավական հարթության վրա

գործող միջպետական փոխհարաբերությունների կարգավորման համակարգ, որտեղ ազգերի միջև իրավահավասարությունը (որի առկայության դեպքում է միայն հնարավոր կառուցել կայուն խաղաղություն) պետք է արտահայտվեր անվտանգության հանդեպ պատասխանատվության զգացումի հավաքական գիտակցումամբ: Ուժերի հավասարակշռության եվրոպական մեխանիզմները Վիլսոնը փորձում էր համադրել ուժերի միավորման սկզբունքին և հավաքական անվտանգության մեխանիզմի իրավական կիրառմամբ՝ ի դեմս Ազգերի լիգայի, ապահովել համընդհանուր խաղաղության պահպանումը:

- Ազգերի լիգայի ստեղծման գաղափարը Վիլսոնն աստիճանաբար դարձրեց ամերիկյան արտաքին քաղաքական հայեցակարգի հիմքը, նրա կվինտ-եսենցիան: Սակայն Միացյալ Նահանգները չվավերացրեց Ազգերի լիգայի կանոնադրությունը, որի հետևանքով այն դադարեց զուտ ամերիկյան սկզբունքների տարածման և «Մոնրոյի դոկտրինայի» համաշխարհայնացման միջոց լինելուց:

Լիգան իրենից ներկայացնում էր լավագույն դեպքում միջազգային հարաբերությունների կարգավորման հիմնակմախք, այն դեռևս չէր կարողանում տալ ուղղակի պատասխաններ այն հարցերին, որոնք երկու համաշխարհային պատերազմների միջև ընկած ժամանակահատվածում կանգնել էին բոլոր տերությունների առաջ: Այն չէր պատասխանում հիմնական հարցերից մեկին, թե ինչպես է անհրաժեշտ պահպանել խաղաղությունը՝ հավաքական պատժամիջոցների, թե խաղաղեցման քաղաքականության միջոցով: Դա բերեց լուրջ հակասությունների և կազմակերպության աշխատանքի արդյունավետության նվազեցմանը: Աշխարհը դեռևս պատրաստ չէր ընդունել նոր իրականությունը, ուստի Լիգան դատապարտված էր վերածվելու կիսակատար և անավարտ մի կառույցի, իսկ Միացյալ Նահանգները՝ շարունակելու համաշխարհային քաղաքական թատերաբեմում իր տեղի և դերի փնտրտուքը:

- Վուդրո Վիլսոնի «ինտերնացիոնալիզմի» կարիքը նորից զգացվեց Երկրորդ աշխարհամարտի ժամանակ: Եվ պատահական չէր, որ համաշխարհային տերությունների առաջնորդները, հատկապես Միացյալ Նահանգների նախագահ Ֆրանկլին Ռուզվելտը և նրա հաջորդ Դարրի Թրումենը շարունակեցին իրենց «քաղաքական նախորդի» քաղաքականությունը՝ համատեղելով գաղափարապաշտությունն (իդեալիզմ) ու իրատեսությունը (պրագմատիզմ): Նրանք ընդունեցին Վուդրո Վիլսոնի քաղաքական ժառանգությունը (խաղաղության հաստատման առաջնայնություն, տենտեսական և քաղաքական հարաբերությունների ազատականացում և թափանցիկություն, միջազգային հարաբերությունների իրավական

ինտիտուցիոնալ կարգավորում) որպես իրենց երկրների արտաքին քաղաքական դոկտրինայի գաղափարական հիմք:

Վուդրո Վիլսոնի քաղաքական ժառանգության մեջ անհրաժեշտ է նշել նաև Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև սահմանը որոշող Իրավարար վճռի* կարևորությունը՝ որպես Հայկական հարցի արդարացի լուծման առհավատջա:

Եզրահանգումային սույն դաշտում հարց է առաջանում, թե ինչո՞ւ մարդկությունը չկարողացավ 1919 թ օգտվել իր կյանքն արմատապես փոխելու ընձեռված հնարավորությունից, և ինչո՞ւ Վուդրո Վիլսոնը չկարողացավ իրականացնել իր ծրագրերը: Իհարկե, Վուդրո Վիլսոնի անձնական որակներն այս հարցում բավականին կարևոր էին, և իրավացի են այն հեղինակները, որոնք պարտության պատճառները տեսնում են նրա անձնական անհաջողության մեջ: Սակայն, մեր կարծիքով, սա պատասխանի միայն մի կողմն է: Վուդրո Վիլսոնի պարտության պատճառը միայն նրա անհաջողությունը չէր: Խնդիրն այն էր, որ Միացյալ Նահանգների կառավարության և օրենսդիրների միջև իշխանության և երկրի արտաքին քաղաքականությունը որոշելու իրավունքի համար մղվող պայքարն աննախադեպ սրվել էր: Հանրապետականները քննարկման ընթացքում սատարում էին իրենց տվյալ պահի շահերը և պաշտպանում կուսակցական հավակնությունները: Դրա հետ մեկտեղ նրանք մշտապես մեղադրում էին նախագահ Վուդրո Վիլսոնին, որ նա իբր «տանուլ է տվել» խաղաղությունը բրիտանացիներին, որ Լիգայի հիմքում փաստացի ընկած է ոչ թե ամերիկյան, այլ բրիտանական ծրագիրը: Այդ իսկ պատճառով Միացյալ Նահանգների չմասնակցելու պատճառը ոչ միայն մեկուսացման տրամադրությունների և Վուդրո Վիլսոնի անձնական որակների մեջ էր, այլև ուժերի դասավորվածության հետևանքով Միացյալ Նահանգները

* Անտանտի տերությունների՝ Սան Ռեմոյի խորհրդաժողովի (1920 թ., ապրիլի 19–26) որոշմամբ և Սևրի հաշտության պայմանագրի (1920, օգոստոսի 10) պայմաններով ԱՄՆ-ի հայեցողությանն էր թողնվում Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանների որոշումը՝ Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի նահանգների տարածքում, ինչպես նաև Հայաստանին դեպի ծով ելք տրամադրելու ԱՄՆ-ի առաջարկի իրագործումը: Այդ կապակցությամբ Նախագահ Վիլսոնը 1920 թ. նոյեմբերի 22-ին հաստատեց իր իրավարար որոշումը: Համաձայն այդ փաստաթղթի՝ հայ-թուրքական սահմանն սկսվում էր Իրանին սահմանամերձ Կոտուր քաղաքից, անցնում Վանա լճի հարավարևմտյան մասով և Բիթլիս ու Մուշ քաղաքների հարավարևմտյան մասով (սահմանագծից դուրս էին մնում Վանի նահանգի մոտ կեսը և Սղերդի գավառը՝ գրեթե ամբողջությամբ): Այնուհետև սահմանը ձգվում էր դեպի հյուսիս, անցնում Երզնկայից ոչ հեռու, որոշվում ըստ բնական աշխարհագրական պատմեշի: Հայաստանին դեպի Սև ծով հարմար ելք ապահովելու համար սահմանն անցնում էր Դերսիմից հյուսիս: Արևմտյան Հայաստանի տարածքը կազմելու էր 40 հազար քառակուսի մղոն: Վիլսոնի իրավարար որոշումն այդպես էլ չիրագործվեց, քանի որ քեմալական Թուրքիան, հենվելով Խորհրդային Ռուսաստանի ռազմաքաղաքական աջակցության վրա և օգտվելով արևմտյան տերությունների հակասություններից և թողտվությունից, համառ պայքար ծավալեց և կարողացավ ձախողել Սևրի պայմանագրի դրույթների կատարումը: Մանրամասն տե՛ս **Ա. Կիրակոսյան**, Վուդրո Վիլսոնը և Հայկական հարցը, էջ 62-76: Տե՛ս նաև **A. Papiian**, *Arbitral Award of the President of the United States of America Woodrow Wilson: Full Report of the Committee upon the Arbitration of the Boundary between Turkey and Armenia*, Washington, November 22nd, 1920, Yerevan, "Asoghik", 2011:

դեռևս չունենի Լիգայում առաջատար դիրք զբաղեցնելու և այդ կառույցը վերահսկելու հնարավորություն:

Այսպիսով՝ Վուդրո Վիլսոնի պարտության պատճառը կարելի է փնտրել նաև Փարիզում, որտեղ իր գաղափարներն անցկացնելու համար նախագահը ստիպված էր գնալ որոշակի փոխզիջումների, ինչը բնականաբար, դուր չեկավ ընդդիմադիրներին և վերջիններս շահարկեցին այդ հանգամանքը դեմոկրատ նախագահի դեմ: Ինքնին հասկանալի է, որ Ազգերի Լիգան չէր կարող անմիջապես և ամբողջովին բավարարել Միացյալ Նահանգների արտաքին քաղաքական պահանջները: Սակայն, Վուդրո Վիլսոնը համոզված էր, որ միջազգային հարաբերությունների նոր ժողովրդավարական համակարգի ստեղծումը և ամերիկյան արժեքների ու գաղափարների աստիճանական տարածումը կապահովեր Միացյալ Նահանգների համար համաշխարհային առաջատարություն, իսկ աշխարհին՝ անվտանգություն: Հանրապետականները թերահավատորեն էին վերաբերվում այս ամենին՝ առաջնություն տալով անմիջական արդյունքին:

Իհարկե, Ազգերի Լիգան իր թերություններով և առավելություններով հանդերձ կայացավ և որպես քաղաքական կառույց գործեց, ավելին՝ այն ունեցավ իր քաղաքականապես արդիականացված իրավահաջորդը՝ Միավորված ազգերի կազմակերպության տեսքով: Եվ այժմ արդեն ողջ քաղաքակիրթ աշխարհը, այդ թվում և Միացյալ Նահանգները, ընդունում է վիլսոնյան հայեցակարգի ճշմարտացիությունը: Միանգամայն իրավացի է Լևոյդ Ամբրոզիուսը, որը նշում է. «Ինչպես նախագահ Վիլսոնն ի վիճակի չեղավ հաղթահարելու ամերիկյան դիվանագիտական ավանդույթների սահմանափակումները, այնպես էլ հետագա քաղաքական առաջնորդները չկարողացան հաղթահարել նրա թողած ժառանգությունը»:

Վուդրո Վիլսոնի արտաքին քաղաքական ժառանգությունը մինչ օրս արդիական է: Դրա վառ ապացույցն է այն, որ ժամանակակից միջազգային կազմակերպությունների գործունեության սկզբունքներն իրենց հիմքում, կարելի է ասել, հենց վիլսոնյան են: Համաշխարհային քաղաքականության շատ խնդիրներ, որոնք փորձում էր համակարգել նախագահ Վիլսոնը, դեռևս անլուծելի են: Անժխտելի է այն, որ համընդհանուր խաղաղության հաստատման խոչընդոտները և նոր դարաշրջանի ամենավտանգավոր մարտահրավերները (այդ թվում նաև ահաբեկչությունը) չեն կարող հաղթահարվել առանց համաշխարհային հանրության միասնական կամքի, որի անհրաժեշտության մասին էլ խոսում էր Վուդրո Վիլսոնը:

ՍԿԶԲՆԱԴԲՅՈՒՐՆԵՐ

1. Архив полковника Хауза, т. 1, Москва, "Государственное социально-экономическое издательство", 1937, 220 с.
2. Архив полковника Хауза, т. 2, Москва, "Государственное социально-экономическое издательство", 1937, 358 с.
3. Архив полковника Хауза, т. 3, Москва, "Государственное издательство политической литературы", 1944, 332 с.
4. Архив полковника Хауза, т. 4, Москва, "Государственное издательство политической литературы", 1944, 400 с.
5. Версальский мирный договор, под ред. **Ю. Ключникова** и **А. Сабанина**, Москва, "Литиздат НКВД", 1925, XXXI, 197 с.
6. **Г. Гроциус**, О праве войны и мира, Три книги в которых обнисятся естественное право и право народов, а также принципы публичного права, пер. с лат. А.Л. Саккетти, под ред. С.Б. Крылов, Москва, "Государственное издательство юридической литературы", 1956, 868 с.
7. **Д. Алигьери**, Монархия, пер. с итал. В. Зубова, Москва, "КАНОН-пресс-Ц"- "Кучково поле", 1999, 192 с.
8. **Д. Ллойд Джордж**, Правда о мирних договорах, т. 1, пер. с англ. А. Никонова, Москва, "Изд. Иностран. Лит.", 1957, 655 с.
9. **Д. Ллойд Джордж**, Военные Мемуары, тт. 1-2, пер. с англ. И. Звавича, Москва, "Соцэкгиз", 1934, 678 с.
10. **Д. Ллойд Джордж**, Военные Мемуары, т. 3, пер. с англ. И. Звавича, Москва, "Соцэкгиз", 1935, 444 с.
11. **Д. Ллойд Джордж**, Военные Мемуары, т. 4, пер. с англ. Л. Борового, Москва, "Соцэкгиз", 1935, 443 с.
12. **Д. Ллойд Джордж**, Военные Мемуары, т. 6, пер. с англ. И. Звавича, Москва, "Соцэкгиз", 1937, 251 с.
13. **Дж. Кейнс**, Пересмотр мирного договора, пер. с англ. Д. Кончаловского, Москва, "Государственное издательство", 1922, 104 с.

14. **Дж. Локк**, Два трактата о правлении. Джон Локк, Сочинения, в 3 томах, т. 3, сост. ред., авт. примеч. А.Л. Субботин: пер. с англ. и лат., Москва, "Мысль", 1988, 668 с.
15. **И. Кант**, Сочинения в шести томах, т. 6, под ред. Т. И. Ойзермана, Москва, "Мысль", 1966, 743 с.,
16. **Н. Макиавелли**, Государь, Минск, "Харвест", 2004, 704 с.
17. **Р. Бекер**, Вудро Вильсон: Мировая война, Версальский мир, Москва-Петербург, "Гос. Изд.", 1923, 451 с.
18. Россия и США: Дипломатические отношения 1900-1917, под ред. **Н. Яковлева**, Москва, "МФД", 1999, 856 с.
19. **Сен-Симон**, Избранные сочинения, в 2 томах, пер. с фр., под ред. Л.С. Цетлина, Москва-Ленинград, "Изд. Академии Наук СССР", МСМХLVIII (1948) т. 1, 467 с., т. 2, 485 с.
20. Собрание трактатов и конвенций, заключенных Россией с иностранными державами, сост. **Ф. Мартенс**, т. 3, трактаты с Австриею 1808-1815, Петербург, "А. Бенке", 1876, 550с.
21. **Т. Гоббс**, Левиафан, или Материя, форма и власть государства церковного и гражданского. Томас Гоббс, сочинения, в 2 томах, т. 2, сост. ред., авт. примеч. В.В. Соколов: пер. с лат. и англ., Москва, "Мысль", 1991, 731 с.
22. Талейран: Мемуары, под ред. **Е. Тарле**, Москва, 1959, с. 305. Москва, "Институт международных отношений", 1959, 437 с.
23. **У. Черчилль**, Мировой кризис, пер. с англ., с предисл. И. Минца, Москва-Ленинград, "Государственное военное издательство", 1932, 328 с.
24. **Э. де Ваттель**, Права народов или принципы естественного права, применяемые к поведению и делам наций и суверенов, пер В.Н. Дурденовский, Ф.А. Кублицкий, Э.М. Фабриков, Москва, "Государственное издательство юридической литературы", 1960, 719 с.
25. **Э. Людендорф**, Мои воспоминания о войне 1914—1918 гг., пер. с 5-го немецкого издания, под ред А. Свечина, т. 1, Москва, "Гос. Изд.", 1923, 439 эл. с.
26. **Э. Людендорф**, Мои воспоминания о войне 1914—1918 гг., пер. с 5-го немецкого издания, под ред А. Свечина, т. 2, Москва, "Гос. Изд.", 1924, 351 эл. с.

27. **Э. Роттердамский**, Жалоба миру, пер. Ф.Л.Мендельсон, Москва, "Советская Россия", 1991, 49 эл.с
28. **A. Rapian**, Arbitral Award of the President of the United States of America Woodrow Wilson: Full Report of the Committee upon the Arbitration of the Boundary between Turkey and Armenia, Washington, November 22nd, 1920, Yerevan, "Asoghik", 2011, xii, 327 p.
29. Addresses of President Wilson at Detroit, Mich. and Toledo, Ohio, July 10, 1916, Washington, 1916, "Government Printing Office", 16 p.
30. Addresses of President Wilson on First Trip to Europe, December 3, 1918 to February 24, 1919, Washington, 1919, 60 p.
31. Addresses of President Wilson on His Western Tour, September 4 to September 25, 1919, Washington, "Government Printing Office", 1919, 370 p.
32. Address of President Wilson in Omaha, October 5, 1916, Washington, "Government Printing Office", 1916, 6 p.
33. America and the League of Nations, Woodrow Wilson's Addresses in Europe, comp. by **L. Powell** and **F. Hodgins**, Chicago, "Rand McNally & Company", 1919, VIII, 208 p.
34. An Address in the Metropolitan Opera House, September 27, 1918, The New York Times September 28, 1918.
35. **B. Hendrick**, The Life and Letters of Walter H. Page, Containing the Letters to Woodrow Wilson, vol. 1, Garden City-New York, "Doubleday, Page & Company", 1924, X, 436 p.
36. **B. Hendrick**, The Life and Letters of Walter H. Page, Containing the Letters to Woodrow Wilson, vol. 3, Garden City-New York, "Doubleday, Page & Company", 1926, VIII, 440 p.
37. Congressional Records Containig the Proceedings and Debates of the Third Session of the Sixty-Fifth Congress of The United States of America, vol LVII, part 1-4, Washington, "Government Printing Office", 1919, 4200 p.
38. **C. Hull**, The Memoirs of Cordell Hull, v. 1, New York, "Macmillan Co.", 1948, 929 p.
39. **D. Miller**, The Drafting of the Covenant, vol. 1, New York, "Loud, Putnam", 1928, VIII, 555 p.
40. **D. Miller**, The Drafting of the Covenant, vol. 2, New York, "Loud, Putnam", 1928, IV, 857 p.

41. **E. Cruce**, *The New Cyneas*, ed. and transl. from the original French text of 1623 by Thomas Willing Balch, Philadelphia, "Allen Lane and Scott", 1909, xxxi, 364 p.
42. *Enforced Peace*. Proceeding of the First Annual National Assemblage of the League to Enforce Peace, Published by The League to Enforce Peace, New York, (հրատարակիչը նշված չէ) 1916, 204 p.
43. **H. Lodge**, *The Senate and the League of Nations*, New York, "Scribner", 1925, 424 p.
44. **J. Bernsdorff**, *My Three Years in America*, New York, "Charles Scribner's Sons", 1920, 279 p.
45. **J. Comenius**, *The Angel of Peace*, ed. by Milos Safranek, New York, "Pantheon Books", 1944, 126 p..
46. **J. Keynes**, *The Economic Consequences of the Peace*, New York, "Harcourt, Brace, and Howe", 1920, 298, p.
47. **J. Pershing**, *My Experiences in the World War*, v. 1, New York, "Frederick A. Stokes Co", 1931, v. 1, 400 p.
48. **J. Tumulty**, *Woodrow Wilson: As I Know Him*, Garden City- New York, "Doubleday, Page & Company,, 1921, XVI, 553 p.
49. **O. GALE** *Americanism, Woodrow Wilson's Speeches on the War, Why He Made Them and What They Have Done*, Chicago, "The Baldwin Syndicate Publishers", 1918, 136 p.
50. *Papers Relating to the Foreign Relations of The United States 1914, Supplement, The World War*, Washington, "Government Printing Office", 1928, CCCIX, 862 p.
51. *Papers Relating to the Foreign Relations of The United States 1915, Supplement, The World War*, Washington, "Government Printing Office", 1928, CCLIV, 1080 p.
52. *Papers Relating to the Foreign Relations of The United States 1916, Supplement, The World War*, Washington, "Government Printing Office", 1929, CCLXXXII, 1000 p.
53. *Papers Relating to the Foreign Relations of The United States 1918, Supplement 1, The World War, vol.1*, Washington, "Government Printing Office", 1933, LXXXVIII, 914 p.
54. *Papers Relating to the Foreign Relations of the United States 1919. The Paris Peace Conference, vol. 3*, Washington, "Government Printing Office", 1943, IV, 1062 p.
55. *Papers Relating to the Foreign Relations of the United States 1920, vol. 3*, Washington, "Government Printing Office", 1936, XCVI, 809 p.

56. Papers Relating to the Foreign Relations of The United States, The Lansing Papers 1914-1920, vol. 1, Washington, "Government Printing Office", 1939, LXII, 801 p.
57. President Wilson's Great Speeches and other History Making Documents, Chicago, "Station & Van Vliet Co.", 1917, 323 p.
58. President Wilson's Addresses, ed. by **G. Harper**, (ԷԼ. գիրք, ԷԼ. էջադրմամբ, 178 էջ):
59. President Wilson's Foreign Policy: Massages, Addresses, Papers, ed. by **J. Scott**, New York, "Oxford University Press", 1918, 424 p.
60. President Wilson's State Papers and Addresses, ed. by **A. Shaw**, New York, "George H. Dorn Company", 1917, XI, 484 p.
61. Princeton for the Nation's Service, An Address Delivered on The Occasion of His Inaguration as President of Princeton University on Oct. 25, 1902, Princeton, "Princetone University Press", 1903, 41 p.
62. Public Papers of the Presidents of The United States: Harry S. Truman, Containing the Public Messages, Speeches, and Statements of the President, April 12 to December 31, 1945, Washington, "Government Printing Office", 1961, XXXIII, 668 p.
63. **R. Baker**, Woodrow Wilson: Life and Letters, vol. 6, Facing war, 1915-1917, New York, "Doubleday, Page & Company," 1927, VIII, 544 p.
64. **R. Baker**, Woodrow Wilson: Life and Letters, vol. 7, War Leader, 1917-1918, New York, "Doubleday, Page & Company", 1939, XVI, 604 p.
65. **R. Baker**, Woodrow Wilson and World Settlemant, New York, "Doubleday, Page & Company," 1923, vol. 1, XXXV, 432 p.
66. **R. Cecil**, A Great Experiment, London, "Cape", 1941, 390 p.
67. **R. Lansing**, The Peace Negotiations, A Personal Narrative, Boston-New York, "Houghton Mifflin Company", 1921, VIII, 328 p.
68. **R. Lansing**, War Memoirs, Indianapolis-New York, "Bobs-Merrill Co.", 1935, 383 p.
69. **R. Lansing**, The Big Four and Other of Peace Conference, Boston, "Hutchinson", 1921, 213 p.
70. **S. Axson**, "Brother Woodrow": A Memoir of Woodrow Wilson, Princton, "Princeton University Press", 1993, 296 p.
71. Taft Papers on League of Nations, ed. by, **T. Marburg** and **H. Flack**, New York, "Macnilan", 1920, XX, 340 p.

72. The Address of the President of the United States Delivered at the First Annual Assemblage of the League to Enforce Peace, May 27, 1916, Washington, "Government Printing Office", 1916, 6 p.
73. The League of Nations, Addresses Delivered by The President of The United States at Boston, on February 24, 1919 on The Plan for The League of Nations, Pres. by **Mr. Pittman**, Washington, "Government Printing Office", 1919, 8 p.
74. The Messages and Papers of Woodrow Wilson, 1856-1924, (Էլ. գիրք, բնագիր էջադրմամբ, 613 էջ):
75. The Political Writings of Jean Jacques Rousseau, ed. from the original manuscripts and authentic editions, with introductions and notes by C.E. Vaughan. Vol. 1, Cambridge, "University Press", 1915, xxi, 516p.
76. The President's War Message, April Second Nineteen Seventeen, San Francisco, "Paul Elder and Company", (հրատարակման տարեթիվը նշված չէ) 26 p.
77. The universal peace organization of King George of Bohemia: a fifteenth century plan for world peace, 1462-1464, trans. from the orig. Latin, ed. by F. G. Heymann. New York, "Garland Pub.", 1972, 133 p.
78. The Works of Jeremy Bentham, published under the superintendence of his executor John Bowring, vol. 2, Edinburgh, "William Tait", London, "Simpkin, Marshal & Co.", MDCCCXLIII (1843), 600 p.
79. **W. Penn**, An Essay Towards the Present and Future Peace of Europe, First Published in 1693-94, Washington, D.C., "The American Peace Society", 1912, 21 p.
80. **W. Taft**, World Peace, Written Debate, New York, "Kraus reprint co.", 1970, 197 p.
81. **W. Wilson**, The Hope of the World, New York and London, "Harper & Brothers Publishers", 1920, VIII, 208 p.
82. **W. Wilson**, Guarantees of Peace, New York-London, "Harper & Brothers", 1919, III, 149 p.
83. **W. Wilson**, In Our First Year of War, New York-London, "Harper & Brothers", 1918, XII, 185 p.
84. War Addresses of Woodrow Wilson, Cop. by **A. Leonard**, Boston-New York..., "Ginn & Company", 1918, XXXII, 129 p.
85. Wilson and World Settlement, New York, "Doubleday, Page & Company", 1923, vol. 1, XXXV, 432 p.

86. Woodrow Wilson and a Revolutionary World, 1913-1921, ed. by **A. Link**, Chapel Hill, "University of North Carolina Press", 1982, VIII, 241 p.
87. **Ch. Debbasch, J. Pontier**, Les Constitutions de la France. Paris, "Daloz", 1996, 469 p.
88. **E. Cruce**, The New Cyneas, ed. and transl. from the original French text of 1623 by Thomas Willing Balch, Philadelphia, "Allen Lane and Scott", 1909, xxxi, 364 p.
89. **L'abbé de S.Pierre**, Abrege du Projet de Paix perpetuelle, Rotterdam, "Jean Daniel Beman", M.DCC.XXIX (1729), 227 p.
90. **P. Dubois**, De recuperatione Terre Sancte, Paris, "Alphonse Picard, Éditeur" 1891, xxiv, 144 p.

ԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

91. **Ա. Կիրակոսյան**, Բրիտանական դիվանագիտությունը և արևմտահայության խնդիրը (19-րդ դարի 30-ական թթ.-1914 թ.), Երևան, "Գիտություն", 1999, 509 էջ:
92. **Լ. Շիրինյան**, Արևմուտքի անկումը, Վուդրո Վիլսոնը և արդարացի աշխարհակարգի հաստատման ամերիկյան փորձի ձախողումը, Երևան, «Ամարաս», 2010, 31 էջ:
93. **Է. Իվանյան**, Սպիտակ տուն. Պրեզիդենտներ և քաղաքականություն, Երևան, «Հայաստան», 1979, 548 էջ:
94. **А. Богатуров, Н. Косолапов, М. Хрусталеv**, Очерки теории и методологии политического анализа международных отношений. Москва, 2002, "Московский рабочий", 390 с.
95. **А. Дебидур**, Дипломатическая история Европы, от Венского до Берлинского конгресса (1814-1878) т-1, Священный Союз, Москва, "Гос. Изд. Иностранной литературы", 1947, 473 с.
96. **А. Дикс**, Война и народное хозяйство по опыту Германии в мировую войну, 1914 - 1919 гг., пер. с нем. М. Заммеля, Москва, "Воениздат", 1926, 128 с.
97. **А. Торкунов**, Современные международные отношения, Москва, "Российская политическая энциклопедия", 1999, 584 с.
98. **А. Уткин**, Дипломатия Вудро Вилсона, Москва, "Международные отношения", 1989, 320 с.
99. **А. Уткин**, Американская империя, Москва, "ЭКМО", 2003, 736.

100. **А. Уткин**, Унжение России: Брест, Версаль, Мюнхен. Москва, "ЭКСМО", 2004, 624 с.
101. **А. Чубарьян**, Европейская идея в истории. Проблемы войны и мира, Москва, "Международные отношения", 1987, 352 с.
102. **А. Шлезингер**, Циклы американской истории, пер. с англ. П. Развина и Е. Бухаровой, Москва, "Прогресс", 1992, 688 с.
103. **Б. Поршневу**, Франция, Английская революция и Европейская политика в середине XVII в., Москва, "Наука", 1970, 385 с.
104. **В. Веджвуд**, Тридцатилетняя война, пер. с англ. И.В. Лобанов, Москва, "Астрел Полиграфиздат", 2012, 571 с.
105. **В. Горохов**, История международных отношений 1918-1939, Москва, "Изд. МГУ", 2004, 288 с.
106. **В. Лан**, США: от Первой до Второй мировой войны, Москва, "Наука", 1947, 493 с.
107. **В. Ранцов**, Ришелье: его жизнь и политическая деятельность, Санкт-Петербург, "Общественная Польза", 1893, 78 с.
108. **В. Шаццлло**, Расчет и безрассудство. Германо-Американские отношения в 1898-1917гг., Москва, "ИВИ РАН", 1998, 386 с.
109. Всеобщая история дипломатии, под ред. **М. Приз**, Москва, "Эксмо", 2010, 672 с.
110. **Г. Киссинджер**, Дипломатия, Москва, "Ладомир", 1997, 848 с.
111. **Г. Никольсон**, Как делался мир в 1919 г. Москва, "Госполитиздат", 1945, 268 с.
112. **Д. Прицкер**, Жорж Клемансо, Москва, "Мысль", 1983, 316 с.
113. Европейская дипломатия и международные процессы эпохи наполеоновских войн. Под ред. А.В. **Торкунова**, **М.М. Наринского**, Москва, "Аспект Пресс", 2012, 256 с.
114. **З. Бжезинский**, Великая шахматная доска. Господство Америки и его геостратегические императивы, Москва, "Международные отношения", 2006, 256 с.
115. **З. Бжезинский**, Выбор: Глобальное господство или глобальное лидерство. Москва, "Международные отношения", 2005, 288 с.
116. **З. Гершов**, Вудро Вильсон, Москва, "Мысль", 1983, 335 с.
117. **З. Гершов**, "Нейтралитет" США в годы Первой Мировой войны, Москва, "Соцэкгиз", 1962, 244 с.

118. **З. Фрейд, У. Буллит**, Томас Вудро Вильсон 28-ой президент США: Психологическое исследование. Москва, "Прогресс", 1992, 288 с.
119. **И. Валлерстайн**, После либерализма. Москва, "Едиториал УРСС", 2003, 256 с.
120. История внешней политики России: Первая половина XIX века, отв. ред. **О. Орлик**, Москва, "Международные отношения", 1999, 447 с.
121. История дипломатии, сост. **А. Лактионов**, Москва, "АСТ Москва", 2009, 943 с.
122. История дипломатии, под ред. **В. Зорина** и др., том 1, Москва, "Гос. изд. Политической литературы", 1959, 896 с.
123. История Франции, отв. ред. **А. Манфред**, т. 1, Москва, "Наука", 1972, 357 с.
124. История Международных Отношений и Внешней Политики СССР, 1917-1967 гг., под ред. **В. Трухановского**, т. 1, 1917-1939 гг., Москва, "Международные отношения", 1967, 439 с.
125. **К. Виноградов**, Дэвид Ллойд Джордж, Москва, "Мысль", 1970, 412 с.
126. **К. Гаджиев**, Введение в геополитику, Москва, "Логос", 2000, 432 с.
127. **Л. Зак**, Монархи против народа, дипломатическая борьба на развалинах наполеоновской империи, Москва, "Международные отношения", 1966, 376 с.
128. **Л. Зубок**, Новейшая история США (1917-1968), Москва, "Просвещение", 1972, 367 с.
129. Мир/Peace: Альтернативы войне от античности до конца второй мировой войны, отв. ред., **Ч. Чэтфилд, Р. М. Илюхина**, Москва, "Наука", 1993, 348, с.
130. **Н. Болховитинов**, Доктрина Монро (происхождение и характер), Москва, "ИМО", 1959, 336с.
131. **Н. Дэвис**, История Европы, Москва, "Хранитель", 2006, 943 с.
132. **Н. Сивачев, Е. Язьков**, Новейшая история США 1917-1972 гг., Москва, "Изд. Московского университета", 1972, 334 с.
133. **Н. Яковлев**, Преступившие грань, Москва, "Международные отношения", 1970, 352 с.
134. **О. Быков**, Международные отношения: трансформация глобальной структуры. Москва, "Наука", 2003, 260 с.
135. **П. Черкасов**, Кардинал Ришелье, Москва, "Международные отношения", 1990, 379 с.
136. **Р. Арон**, Мир и война между народами, пер. с франц., под ред. В.И. Даниленко, Москва, "Nota Bene", 2000, 880 с.

137. **Р. Гибсон, М. Прендергаст**, Германская подводная война 1914-1918 гг., Москва, "Воениздат", 1938, 432 с.
138. **Р. Илюхина**, Лига Наций, 1919-1934, Москва, "Наука", 1982, 357 с.
139. **Р. Хофстедтер**, Американская политическая традиция и ее создатели, пер. с англ. Р. Хофстедтер, Москва, "Наука", 1992, 432 с.
140. **С. Хантингтон** Столкновение цивилизаций. Москва, "Издательство АСТ", 2003, 603 с.
141. Системная история международных отношений, 1918-2003, под ред. **А. Д. Богатуров**, т. 1, Москва, "Московский рабочий", 2000, 520 с.
142. Трактаты о вечном мире, предисл. Ф. В. Константинова, вводная статья в прим. И. С. Андреевой, сост. сб. И. С. Андреева и А. В. Гулыга, Москва, "Соцэкгиз", 1963. 279 с.
143. **Ф. Фукуяма**, Конец истории и последний человек. Москва, "Полиграфиздат", 2010, 588 с.
144. **Э. Поздняков**, Геополитика, Москва, "Прогресс", 1995, 96 с.
145. **Ю. Давидов**, Норма против силы. Проблема мирорегулирования, Москва, "Наука", 2002, 287 с.
146. **A. Brinkley**, American History: A Survey, vol. 2, New York, "McGraw-Hill", 1995, xix, 413-922 p.
147. **A. Cranston**, The killing of the Peace, New York, "Viking Press", 1945, 304 p.
148. **A. Kirakossian**, The Armenian Massacres, 1894-1896: US Media Testimony, Detroit, "Wayne State Univ. Press", 2004, 317 p.
149. **A. Link**, Wilson, vol. 3, The Struggle for Neutrality, 1914-1915. Princeton, "Princeton University Press", 1960, X, 736 p.
150. **A. Link**, Wilson, vol. 5, Campaigns for Progressivism and Peace, 1916-1917. Princeton, "Princeton University Press", 1965, X, 464 p.
151. **A. Link**, Woodrow Wilson and the Progressive Era. 1910-1917. New York, "Harper Collins Pub.", 1954, XX, 331 p.
152. **A. Link**, Woodrow Wilson: Revolution, War, and Peace, Arlington Heights, "AHM Cor.", 1979, VIII, 138 p.
153. **A. Mayer**, Politics and Diplomacy of Peacemaking. Containment and Counter-Revolution in Versailles. 1918-1919, New York, "Knopf", 1967, X, 918 p.

154. **A. Perlmutter**, *Making the World Safe for Democracy: A Century of Wilsonianism and Its Totalitarian Challengers*. The University of North Carolina Press, Chapel Hill, 1997, XVIII, 198 p.
155. **A. Walworth**, *Wilson and His Peacemakers. American Diplomacy at the Paris Peace Conference 1919*, New York, "Norton & Company", 1986, XIII, 618 p.
156. *American Foreign Relations Reconsidered, 1890-1993*, ed. by **G. Martel**, London and New York, "Routledge", 1994, 267 p.
157. **B. Bailin, D. Davis, D. Donald, J. Thomas, R. Wiebe, G. Wood**. *A History of the American People, The Great Republic*, Boston-Toronto, «Little, Brown and Company», 1977, xlix, 1267 p.
158. **C. Kendrick**, *Woodrow Wilson: World Statesman*, Boston, "Twayne Publishers", 1987, xiii, 272 p.
159. **Ch. Seymour**, *American Diplomacy during the World War*. Baltimore, "The Johns Hopkins Press", 1934, XII, 417 p.
160. **D. Adams**, *America in the 20th Century: A Study of the United States since 1917*, Massachusetts, "Cambridge University Press", 1967, vii, 264 p.
161. **D. Henneth**, *Don't Know Much About History, Everything You Need to Know About American History But Never Learned*, New York, "Avon Books" 1990, 462 p.
162. **D. Perkins**, *A History of the Monroe Doctrine*, Boston, "Little Brown and Co.", 1941, xii, 455 p.
163. **D. Smith**, *Robert Lansing and American Neutrality 1914-1917*, Los Angeles, "University of California Press", 1958, IV, 242 p.
164. **D. Stid**, *The President as Statesman: Woodrow Wilson and the Constitution*, Lawrence, "University Press of Kansas", 1998, xi, 231 p.
165. **E. May**, *The World War and American Isolation 1917-1917*. Cambridge, "Harvard University Press", 1956, X, 484 p.
166. **E. Buehrig**, *Woodrow Wilson and the Balance of Power*. Bloomington, "Indiana University Press", 1956, X, 325 p.
167. **F. Hinsley**, *Power and the Pursuit of Peace*, Cambridge, "Cambridge University Press", 1963, 416 p.
168. **F. Ninkovich**, *The Wilsonian Century: US Foreign Policy Since 1900*. Chicago, "The University of Chicago Press", 1999, 327 p.

169. **G. Tindall, D. Shi**, *America a Narrative History*, New York, "Norton and Company", 1992, xvii, 1488, A-152 p.
170. **H. Melville**, *White Jacket*, (The Project Gutenberg EBook, 303 e-p).
171. **J. Cooper**, *The Warrior and the Priest: Woodrow Wilson and Theodore Roosevelt*. Cambridge, "Benlap Press of Harvard University", 1983, 442 p.
172. **J. Daniels**, *The Wilson Era, Years of Peace 1910-1917*, Chapel Hill, "The University of North Carolina Press", 1944, p. xvi, 615 p.
173. **J. Daniels**, *The Wilson Era, Years of War and After, 1917-1923*, Chapel Hill, "The University of North Carolina Press", 1946, p. xviii, 654 p.
174. **J. Daniels**, *The life of Woodrow Wilson 1856-1924*, Chicago, "The John C. Winston Company", 1924, 381 p.
175. **J. Garraty**, *A short history of the American Nation*, San Francisco, "Harper Collins College Publisher", 1992, xvi, 553, p.
176. **K. Colegrove**, *The American Senate and World Peace*, New York, "The Vanguard Press", 1944, 210 p.
177. **L. Canfield**, *The Presidency of Woodrow Wilson: Prelude to a World in Crisis*, New Jersey, "Fairleigh Dickinson University Press", 1966, XV, 299 p.
178. **L. Ambrosius**, *Woodrow Wilson and the American Diplomatic Traditions: The Treaty Fight in Perspective*. Cambridge, "Cambridge University Press", 1987, XVII, 323 p.
179. **R. Bartlett**, *The League to Enforce Peace*, Chapel Hill, "The University of North Carolina Press", 1944, viii, 252 p.
180. **R. Billington**, *American history after 1865*, New Jersey, "Adams and Co.", 1974, ix, 311 p.
181. **R. Divine**, *Second chance; the Triumph of Internationalism in America During World War II*, New York, "Atheneum", 1967, IX, 371 p.
182. **R. Maddox**, *William E. Borah and American Foreign Policy*, Baton Rouge, "Luisiana State University Press", 1969, XX, 272 p.
183. **R. Ferrell**, *Woodrow Wilson and World War I, 1917-1921*, New York, "Harper and Row", 1985, XII, 346 p.
184. **R. Osgood**, *Ideals and Self-Interest in America's Foreign Relation*. Chicago, "University of Chicago Press", 1954, 203 p.

185. **R. Osgood**, *Woodrow Wilson, Collective Security, and the Lessons of History: The Philosophy and Policies of Woodrow Wilson*, Chicago, "University of Chicago Press", 1957, 350 p.
186. **R. Saunders**, *In Search of Woodrow Wilson: Beliefs and Behavior*, Connecticut, "Greenwood Press", 1998. viii, 273 p.
187. **S. Kerneck**, *Distractions of Peace During the War and Peace: The Lloyd George Government's Reaction to Woodrow Wilson (December, 1916-November, 1918)*, Philadelphia, "The American Philos. Soc.", 1975, 117 p.
188. **S. Herman**, *Eleven Against War: Studies in American Internationalist Thought, 1898-1921*, Stanford, "Hoover Institution Press", 1969 XIV, 264 p.
189. **T. Paterson**, *American Foreign Policy: A History 1900 to Present*, Toronto, "Heath and Company, 1991, vii, 723, xxx p.
190. **T. Knock**, *To End All Wars: Woodrow Wilson and the Quest for a New World Order*. New York-Oxford, "Oxford University Press", 1992, XVI, 381 p.
191. **T. Bailey**, *Woodrow Wilson and the Great Betrayal*, New York, "Macmillan", 1945, XIV, 429 p.
192. **T. Bailey**, *Woodrow Wilson and The Lost Peace*, New York, "Macmillan", 1944, XIII, 381 p.
193. *The Diplomacy of World Power: The United States, 1889-1920*, by **A. Link** and **W. Lesry**, New York, "St. Martin's Press", 1970, VII, 181 p.
194. *The Great Events of The Great War*, editor in chief **Ch.Horne**, vol. VI, New York, "The National Alumni", 1920, xxxix, 412 p.
195. *The Greatness of Woodrow Wilson 1856-1956*, ed. by **E. Alsop**, New York-Toronto, "Rinehart & Company", 1956, XVIII, 270 p.
196. **W. Diamond**, *The Economic Thought of Woodrow Wilson*. Baltimore, "The Johns Hopkins Press", 1943, 210 p.
197. **W. Fowler**, *British-American Relations, 1917-1918, The Role of Sir William Wiseman*, Princeton, "Princeton University Press", 1969, 334 p.
198. **W. Kuehl**, *Hamilton Holt: Journalist, Internationalist, Educator*, Gainesville, "University of Florida Press", 1960, XI, 303 p.
199. **W. LaFeber**, *The American Age: US Foreign Policy at Home and Abroad, Since 1750*, New York, "Norton", 1989, XX, 759 p.

200. **W. White**, Woodrow Wilson: The Man, His Time and His Task, Boston-New York, "Mifflin", 1925, XVIII, 531 p.
201. **W. Williams**, Some Presidents. From Wilson to Nixon, New York, "New York Review", 1972, 122 p.
202. **M. Dunan**, Napoléon et l'Europe, Paris, "Éditions Brepols", 1961, 179 p.

ԳԻՏԱԿԱՆ ՀՈՂՎԱՃՆԵՐ

203. **Ա. Կիրակոսյան**, Վուդրո Վիլսոնը և Հայկական հարցը, ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 1-2 (83-84), Երևան, «Լիմուշ», 2015, էջ 62-76:
204. **Կ. Գասպարյան**, Սրբազան դաշինքը և Ազգերի լիգան (համեմատական վերլուծություն), «Հանրապետական երիտասարդական գիտաժողովի նյութեր», Վանաձոր, «ՍԻՍ տպագրատուն», 2009թ, էջ 89-97:
205. **Б. Шацкий**, Президент-профессор, "Русская мысль", Москва-Петербургъ, "Русская Мысль", 1913.№ 10, с. 114-126.
206. **М. Лебедева**, Что угрожает Вестфалю? "Международные процессы". Январь-апрель 2008, том 6, №1(16), с. 117-121, <http://www.mgimo.ru/users/document1793.phtml>, <http://www.intertrends.ru/archiv.htm>
207. **Р. Мардалиев**, Правовые предпосылки Версальского мира, (էջադրումը քաղաքացիական է), www.yurclub.ru/docs/international/article6.html
208. **Т. Зонова**, Вестфальская Система, "Вестник МГИМО", 2008 г., №1, с. 78-80, <http://www.mgimo.ru/zonova/>
209. **К. Kaiser**, Zeitenwende, "Internationale Politik", №5, Mai 2003, s. 1-8, <https://zeitschrift-ip.dgap.org/de/ip-die-zeitschrift/archiv/jahrgang-2003/mai/zeitenwende>
210. **М. Gilderhus**, Pan-American Initiatives: The Wilson Presidency and "Regional Integration", 1914-1917, "Diplomatic History", vol. 4, №4 October 1980, p. 409-423. [http://onlinelibrary.wiley.com/journal/10.1111/\(ISSN\)1467-7709/issues](http://onlinelibrary.wiley.com/journal/10.1111/(ISSN)1467-7709/issues)

ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍՆԵՐ և ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒԼ

211. ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 1-2 (83-84), Երևան, «Լիմուշ», 2015:
212. «Հանրապետական երիտասարդական գիտաժողովի նյութեր», Վանաձոր, «ՄԻՄ տպագրատուն», 2009:
213. "Вестник МГИМО", 2008, №1, <http://www.vestnik.mgimo.ru/>
214. "Международные процессы", Январь-апрель 2008, том 6, №1(16), <http://www.intertrends.ru/archiv.htm>
215. "Русская мысль", Москва-Петербург, "Русская Мысль", 1913, № 10.
216. "Diplomatic History", vol. 4, №4, October 1980, [http://onlinelibrary.wiley.com/journal/10.1111/\(ISSN\)1467-7709/issues](http://onlinelibrary.wiley.com/journal/10.1111/(ISSN)1467-7709/issues)
217. "Internationale Politik", №5, Mai 2003, <https://ip-journal.dgap.org/de>
218. "The Literary Digest", New York, "Funk & Wagnalls Company", vol. L, (50), № 20, May 15, 1915, 1138-1196 p., vol. LII, (52), № 24, June 10, 1916, 1683-1760 p., <http://catalog.hathitrust.org/Record/000051914>
219. "The New Republic", vol. 1, №2, November 14, 1914, №9, January 2, 1915, vol. 2, №20, March 20, 1915, <http://catalog.hathitrust.org/Record/000502176>
220. "The New York Times", October 4, 1914, January 23, 1917, September 28, 1918, January 9, 1920, <http://spiderbites.nytimes.com/>
221. "World's Work", vol. 30, №4, August 1915, vol. 37, №1, November 1918, <http://catalog.hathitrust.org/Record/009676324>

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

222. **Ա. Մարգարյան, Ա. Հայրապետյան**, Օտար բառերի բացատրական բառարան, Երևան, «Երևանի Համալսարանի Հրատարակչություն», 2004, 504 էջ:
223. Ամերիկայի Միացյալ Նահանգների սահմանադրություն, հոդված 4, բաժին 4, <http://usconstitution.net>
224. Եզոպոսի առակները, թարգ. Վարդգես Բաբայանի, Երևան, «Հայստան», 1972, 504 էջ:
225. **В. Даниленко**, Современный политологический словарь, М., "Nota Bene", 2000, 1024 с.

226. Всемирная история войн, авт.-сост. **А. Мерников, А. Спектор**, Минск, "Харвест", 2004, 640 с.
227. Дипломатический словарь, под ред. **А. Громыко**, т. 1, Москва, "Наука", 1984, 422 с.
228. Дипломатический словарь, под ред. **А. Громыко**, т. 2, Москва, "Наука", 1985, 503 с.
229. Дипломатический словарь, под ред. **А. Громыко**, т. 3, Москва, "Наука", 1986, 750 с.
230. Становление и развитие системности в международных отношениях, программа специального курса, проф. **А. Манькин**, лекция 1-14, <http://www.hist.msu.ru/Departments/ModernHist/node/47>
231. The Enciclopedia Americana, New York, "Americana Corporation", 1967, vol. 17, 894 p., vol. 29, 827 p.
232. The Presidency A to Z, ed. by **M. Nelson**, Washington, "Congressional Quarterly Inc.", 1998, 603 p.
233. 100 Key Documents in American Democracy, ed. by **P. Levy**, London, "Greenwood Press", 1994, 502 p.

ጸሐፊዎች

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ՎՈՒՂՐՈ ՎԻԼՍՈՆԻ ՀԱԿԻՐՃ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆԸ

Թոմաս Վուդրո Վիլսոն (Thomas Woodrow Wilson, 1856-1924) Ամերիկայի Միացյալ Նահանգների 28-րդ նախագահ (1913-1921):

Վուդրո Վիլսոնը ծնվել է 1856 թ. դեկտեմբերի 28-ին Ամերիկայի Միացյալ Նահանգների Վիրջինիա նահանգի Սթենթոն (Staunton) քաղաքում, պրեսբիտերական քահանա Ջոզեֆ Ռազլես Վիլսոնի (Joseph Ruggles Wilson) և Ջեսի Ջենրթ Վուդրոյի (Jessie Janet Woodrow) ընտանիքում:

Ջոզեֆ Վիլսոնը նախքան Ջեսի Վուդրոյի հետ ամուսնանալը հռետորիկա էր դասավանդում Ջեֆերսոնի քոլեջում (նահանգ Փենսիլվանիա): Ամուսնանալուց հետո նրանք բնակություն են հաստատում Սթենթոնում, որտեղ և ծնվում է Վուդրո Վիլսոնը: Վիլսոնի 1 տարին դեռևս չէր լրացել, երբ նրանց ընտանիքը տեղափոխվեց Ջորջիա նահանգի Օգաստա քաղաք, որտեղ Ջոզեֆ Վիլսոնը քարոզում էր տեղի պրեսբիտերական եկեղեցում: Սակայն, ինչպես նշում է Ուիլյամ Բուլիտը. «Միայն ամբիոնից քարոզելը նրան բավարար չէր, նա անդադրում քարոզում էր իր ընտանիքում և իր ընկերների ու մտերիմների շրջապատում... Նրա կյանքում կային երկու խանդավառություն՝ բառերը և նրա որդին, որին նա անվանում էր Թոմի»¹:

Այսպիսով՝ մեծանալով կրոնասեր ընտանիքում՝ Վիլսոնը նույնպես անսահման բարեպաշտ էր: Նա անվերապահորեն հավատում էր Աստծուն և դժվարին պահերին, ինչպես ինքն էր նշում, «հավատում էր աստվածային ուղղորդմանը»²:

Թույլ առողջության պատճառով Վուդրո Վիլսոնը նախնական կրթությունը ստացել է տանը: Հայրը մեծ նշանակություն էր տալիս երեխայի խոսքի զարգացմանը: Նա հաճախեց դպրոց 13 տարեկանից: 2 տարի անց Վիլսոնի հայրը գործուղվեց Կոլումբիայի թեմական դպրոց պրոֆեսորական աշխատանքի, և նրա ընտանիքը տեղափոխվեց Հարավային Կարոլինա: 1873 թ. Վիլսոնը ընդունվեց Հյուսիսային Կարոլինայի Դևիդսոն քաղաքի նույնանուն քոլեջը, որտեղ ուսանում էին պրեսբիտերական եկեղեցու ծառայողները: Սակայն առողջական խնդիրների պատճառով 1 տարի անց նա ստիպված էր թողնել ուսումը և վերադառնալ արդեն Ուիլմինգթոնում (նահանգ Հյուսիսային Կարոլինա) ապրող իր ընտանիքի մոտ: 1875 թ. Վիլսոնը ընդունվեց Փրինսթոնի համալսարան (համալսարանն այդ ժամանակ դեռևս

¹ **З. Фрейд, У. Буллит**, Томас Вудро Вильсон 28-ой президент США: Психологическое исследование. Москва, "Прогресс", 1992, с. 28.

² Address at Luncheon, Palace Hotel, San Francisco, California, September 18, 1919, Addresses of President Wilson on His Western Tour, September 4 to September 25, 1919, Washington, "Government Printing Office", 1919, p. 252.

կոչվում էր Նյու-Ջերսիի քոլեջ: Այն համալսարանի կարգավիճակ է ստացել միայն 1896 թ. և վերանվանվել է Փրինսթոնի համալսարան՝ ի պատիվ քաղաքի, որում տեղակայված է): Փրինսթոնում ուսանելու տարիներին Վիլսոնը հետաքրքրություն դրսևորեց քաղաքական փիլիսոփայության և պատմության նկատմամբ: 1879 թ. Վիլսոնը ավարտեց կրթությունը Պրինսթոնում և նույն տարում ընդունվեց Վիրջինիայի համալսարանի իրավաբանական դպրոցը: Սակայն 1880թ. կրկին առողջության վատթարացման պատճառով նա ստիպված էր թողնել ուսումը և նորից վերադառնալ Ուիլմինգթոն: 1882 թ. Վիլսոնն իր համակուրսեցի Էդվարդ Ռենիկի հետ սկսեց զբաղվել իրավաբանական գործունեությամբ: Նրանք 1882 թ. Ատլանտայում (նահանգ Ջորջիա) հիմնեցին «Ռենիկ Վիլսոն փաստաբաններ» գրասենյակը: Սակայն կարճ ժամանակ անց Վիլսոնը որոշեց թողնել փաստաբանական գործունեությունը և 1883 թ. դիմեց Ջոն Յոփքինսի համալսարան (քաղաք Բալթիմոր, նահանգ Մերիլենդ) փիլիսոփայության և քաղաքագիտության պատմության դոկտորի գիտական կոչում ստանալու համար:

Ջոն Յոփքինսի համալսարանում ուսանելու տարիներին Վիլսոնը ամուսնանում է Էլեն Էքսոնի հետ: 1885 թ. լույս է տեսնում նրա «Կոնգրեսային կառավարում. ամերիկյան քաղաքականության հետազոտություն» աշխատությունը: Այն լուրջ հետաքրքրություն առաջացրեց ամերիկյան կառավարական շրջանակներում, որի համար Վիլսոնը արժանացավ Ջոն Յոփքինսի համալսարանի հատուկ մրցանակի: Դոկտորի գիտական աստիճան ստանալուց հետո 1886 թ. Վիլսոնը դասախոսական աշխատանքի է անցնում Բրին Մոր քաղաքի (նահանգ Փենսիլվանիա) համաճում կանացի քոլեջում, այնուհետև 1888 թ. տեղափոխվում է Ուեսլիանյան համալսարան (քաղաք Միդլթաուն, նահանգ Քոնեքթիկուտ): Ուեսլիանյան համալսարանում աշխատելու տարիներին հրատարակվում է նրա ուսումնասիրություններից գլխավորը՝ «Պետություն. կառավարական իշխանության համեմատական վերլուծություն» (1899): 1890 թ. Վիլսոնը դասավանդման հրավեր է ստանում Փրինսթոնի համալսարանից, որով և սկսվում է նրա փրինսթոնյան գործունեությունը: 1902 թ. նա ստանձնում է համալսարանի ռեկտորի պաշտոնը և զբաղեցնում այն մինչև 1910 թ.: Այս տարիներին՝ 1908 թ., լույս է տեսնում «Սահմանդրական պետություն» աշխատությունը, որը զգալիորեն բարձրացնում է նրա քաղաքական հեղինակությունը Դեմոկրատական կուսակցության շարքերում, և նա առաջադրվում է Նյու Ջերսիի նահանգապետի թեկնածու: 1910 թ. հոկտեմբերի 20-ին Վիլսոնը հեռանում է Փրինսթոնի համալսարանի ռեկտորի պաշտոնից և նոյեմբերի 8-ին ըտրվում է Նյու Ջերսիի նահանգապետ:

1912 թ Վիլսոնը Դեմոկրատական կուսակցության կողմից առաջադրվում է Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահի թեկնածու: Նրա հակառակորդներն էին

Միացյալ Նահանգների 27-րդ նախագահ, Հանրապետական կուսակցության ներկայացուցիչ Ուիլյամ Թաֆթը, Միացյալ Նահանգների 26-րդ նախագահ, Հանրապետական կուսակցության նախկին ներկայացուցիչ Թեոդոր Ռուզվելտը, որն առաջադրվել էր իր իսկ հիմնած Առաջադիմական կուսակցության կողմից և Միացյալ Նահանգների Սոցիալիստական կուսակցության թեկնածու Յուջին Դեբսը (Eugene Debs): Սակայն հիմնական մրցակցությունը ընթանում էր Վուդրո Վիլսոնի, Ուիլյամ Թաֆթի և Թեոդոր Ռուզվելտի միջև: Ընտրությունների արդյունքում Վուդրո Վիլսոնը ստանում է քվեների 41.8 %, Թեոդոր Ռուզվելտը՝ 27.4 %, Ուիլյամ Թաֆթը՝ 23.2 %: Վուդրո Վիլսոնը, ստանալով 531 ընտրաքվեներից 435-ը, 1913 թ. մարտի 4-ին ստանձնեց Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահի պաշտոնը:

Վուդրո Վիլսոնի վարած ներքին քաղաքականությունը պատմության մեջ մտավ «նոր ժողովրդավարություն» կամ «նոր ազատություն» անվամբ: «Նոր ժողովրդավարության» կառուցման շրջանակներում նա կատարեց մի շարք վերափոխումներ մաքսային (1913 թ. ընդունվեց «Սակագների մասին օրենքը»), հարկային (1913 թ. ընդունվեց «Աճող եկամուտների մասին օրենքը»), բանկային (1913 թ. ընդունվեց «Դաշնային պահուստային ֆոնդի ստեղծման մասին օրենքը»), սոցիալական (1913 թ. ստեղծվեց Աշխատանքի նախարարությունը) և այլ բնագավառներում:

1914-ին մահացավ էլեն էքսոնը: Վիլսոնը երկրորդ անգամ ամուսնացավ 1915թ.՝ Էդիթ Գոլտի հետ:

1916 թ. նոյեմբերին Միացյալ Նահանգներում տեղի ունեցան նախագահական ընտրություններ: Վուդրո Վիլսոնը Դեմոկրատական կուսակցության կողմից երկրորդ անգամ առաջադրվեց նախագահի թեկնածու: Նախագահ Վիլսոնի մրցակիցը Հանրապետական կուսակցության թեկնածու, գերագույն դատարանի անդամ Չարլզ Յյուզն էր: 1916 թ. նախագահական ընտրություններն անցան Եվրոպայում մոլեգնող Առաջին աշխարհամարտի ֆոնի և «Վիլսոնը ամերիկյան ազգին հեռու պահեց պատերազմից»^{*} կարգախոսի ներքո: Վիլսոնն այս ընտրություններում հաղթանակ տարավ ձայների քիչ առավելությամբ՝ 277 ընտրական միավոր 254-ի դեմ³:

* Թամսթիի հավաստմամբ Վիլսոնը իր նախընտրական ճառերում երբեք չի օգտագործել այս կարգախոսը. **J. Tumulty**, Woodrow Wilson: As I Know Him, Garden City- New York, "Doubleday, Page & Company", 1921, p. 185.:

³ **Է. Իվանյան**, Սպիտակ տուն. Պրեզիդենտներ և քաղաքականություն, Երևան, «Հայաստան», 1979, էջ, 106-107: Տե՛ս նաև **G. Tindall, D. Shi**, America a Narrative History, New York, "Norton and Company", 1992, p. 989:

Կառավարման երկրորդ շրջանում (1917-1921) Վուդրո Վիլսոնը իր ջանքերը հիմնականում կենտրոնացրեց Առաջին աշխարհամարտի և հետպատերազմյան խաղաղ կարգավորման ուղղությամբ:*

1919 թ հոկտեմբերի 2-ին նա ստացավ ուղեղի արյան զեղում, որի հետևանքով նրա մարմնի ձախ մասը կաթվածահար եղավ: Սակայն Վուդրո Վիլսոնը շարունակեց պաշտոնավարել մինչև ժամկետի ավարտը՝ 1921 թ. մարտի 4-ը, երբ իր լիազորությունները հանձնեց նորընտիր Չանրապետական նախագահ Ուորեն Դարդինգին:

Վուդրո Վիլսոնը մահացավ 1924 թ. փետրվարի 3-ին, 68 տարեկան հասկում: Նրա աճյունը ամփոփված է Վաշինգտոնի Մայր տաճարում:

Վուդրո Վիլսոնը 1919 թ. արժանացել է Խաղաղության նոբելյան մրցանակի Վերսալյան հաշտության պայմանագրի ստորագրման և Ազգերի լիգայի ստեղծման գործում ունեցած հիմնարար ներդրման համար: Մրցանակն ընդունել է Նորվեգիայում Միացյալ Նահանգների դեսպան Ալբերտ Շմեդեմանը (Albert Schmedeman), որը փոխանցել է նաև նախագահ Վիլսոնի շնորհակալական խոսքը, որում ասվում էր. «...Մարդկությունը դեռ չի ազատվել պատերազմի անասելի դաժանությունից... Ես համոզված եմ, որ մեր սերունդը, չնայած իր զրկանքներին, գրանցել է զգալի առաջընթաց: Բայց խելամիտ կլինի համարել, որ աշխատանքը դեռևս նոր է սկսվում, և այն լինելու է շարունակական... Ինչ էլ որ արվել է անցյալում, աննշան է ի համեմատ խոստումնալից և փառավոր ապագայի»⁴:

* Այս ամենի, ինչպես նաև Վուդրո Վիլսոնի արտաքին քաղաքականության վերաբերյալ մանրամասն տե՛ս աշխատանքում՝ գլուխ երկրորդ և երրորդ:

⁴ Վուդրո Վիլսոնի խոսքը մանրամասն տե՛ս http://www.nobelprize.org/nobel_prizes/peace/laureates/1919/ կայքում:

ՅԱՎԵԼՎԱԾ 2

«ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ և ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ» ԾՐԱԳԻՐԸ (ՎՈՒԴՐՈ ՎԻՍՈՆԻ «14 ԿԵՏԵՐԸ»)

1918 թ. հունվարի 3-ին Սիդնեյ Մեգսը և Վոլթեր Լիփմանը նախագահ Վիլսոնին ներկայացրին «Առաջարկներ խաղաղ նպատակների վերաբերյալ» վերնագրով հուշագիրը, որի հիման վրա վերջինս պետք է պատրաստեր իր հայտարարության տեքստը: 1918 թ. հունվարի 8-ին նախագահ Վիլսոնը ուղերձով դիմեց Միացյալ Նահանգների Կոնգրեսին: Կոնգրեսին ուղղված իր ուղերձում նախագահ Վիլսոնը ներկայացրեց «Պատերազմի նպատակները և հաշտության պայմանները» ծրագիրը⁵: 14 սկզբունքներից բաղկացած այս «խաղաղության ծրագիրը» առավել հայտնի դարձավ «Վուդրո Վիլսոնի 14 կետեր» անվանմամբ: Ուղերձում ասվում էր.

«Մենք ներգրավվեցինք այս պատերազմի մեջ, քանզի եղան մի շարք իրավախախտումներ, որոնք կարող են անդրադառնալ նաև մեզ վրա, եթե մեկընդմիջտ չվերացնենք դրանց հնարավոր կրկնվելու վտանգը և չդարձնենք աշխարհն անվտանգ: Այսպիսով՝ այն ամենը, ինչին որ մենք ձգտում ենք այս պատերազմին մասնակցելով՝ մեզ համար արտասովոր երևույթ չէ: Դա ապրելու համար աշխարհն անվտանգ դարձնելն է, հատկապես բոլոր այն խաղաղասեր պետությունների համար, ինչպիսին մերն է, որոնք ցանկանում են իրենց անձնական կյանքով կազմավորել սեփական քաղաքական ինստիտուտները, ունենալ աշխարհի մյուս ազգերի կողմից արդարացի ու ազնիվ վերաբերմունքի արժանանալու երաշխիքներ, ինչպես նաև՝ հակակշիռ ընդդեմ նվաճողական ուժի և շահադիտական հարձակողականության: Աշխարհի բոլոր ազգերը հանդիսանում են գործընկերներ այս նպատակներին հասնելու ճանապարհին: Մեր կողմից մենք հստակ գիտակցում ենք՝ եթե մենք արդարացի չլինենք մյուսների հանդեպ, արդարություն չի կիրառվի նաև մեր նկատմամբ: Հետևաբար մեր ներկայացրած ծրագիրը, մեր կարծիքով, հանդիսանում է համաշխարհային խաղաղության միակ, հնարավոր ծրագիրը և այն հետևյալն է.

1. Կնքել խաղաղության բաց պայմանագրեր, միանգամայն թափանցիկ պայմաններում, որոնք կբացառեն ցանկացած տեսակի գաղտնի միջազգային համաձայնության ստորագրում, իսկ դիվանագիտությունը մշտապես վարել անաչառ և հանրամատչելի:

⁵ **W. Wilson**, In Our First Year of War, New York-London, "Harper & Brothers", 1918, p. 156-160. Տե՛ս նաև The Program of Peace, Address to Congress, January 8, 1918, War Addresses of Woodrow Wilson, Cop. by **A. Leonard**, Boston-New York..., "Ginn & Company", 1918, p. 92-102.

2. Ծովերում՝ տարածքային ջրերից դուրս, նավագնացության բացարձակ ազատություն ինչպես խաղաղ, այնպես էլ պատերազմական ժամանակ, բացառությամբ այն դեպքերի, երբ միջազգային համաձայնագրերը պահպանելու նպատակով ծովերը կարող են փակվել ամբողջությամբ կամ մասնակի:

3. Վերացնել բոլոր տնտեսական արգելքները, որքանով դա հնարավոր է, և հաստատել առևտրի հավասար պայմաններ բոլոր այն երկրների միջև, որոնք աջակցում են խաղաղությանը և նպաստում են դրա պահպանմանը:

4. Տրամադրել փոխադարձ երաշխիքներ և ստանձնել համապատասխան պարտավորություններ ազգային անվտանգության պահանջներին համապատասխան՝ պետական սպառազինությունը մինչև նվազագույն մակարդակը կրճատելու առնչությամբ:

5. Կարգավորել բոլոր գաղութային հարցերն ազատ, արդարացի և միանգամայն անաչառ՝ հիմք ընդունելով ինքնավարության հարցերում որոշիչ սկզբունքների պահպանումը: Ազգաբնակչության շահերը՝ նախատեսվող իշխանության արդարացի պահանջների հետ միասին, դիտարկել հավասար հարթության վրա:

6. Ազատագրել ամբողջ ռուսական տարածքը: Ռուսաստանին վերեբերող բոլոր հարցերը կարգավորել այնպես, որ ապահովվի ամենաարդյունավետ և ամենաազատ համագործակցությունն աշխարհի մյուս պետությունների հետ՝ վերջինիս տալով ազատ և անխոչընդոտ հնարավորություն ինքնուրույն որոշելու իր ազգային քաղաքականության և քաղաքական զարգացման ուղղվածությունը: Ինչպես նաև ապահովել նրա անկեղծ ընդունելությունը ազատ ազգերի կազմակերպություն՝ իր իսկ քաղաքական համակարգով և տրամադրել անհրաժշտ օգնություն...

7. Անհրաժեշտ է ազատագրել և վերականգնել Բելգիան՝ առանց վերջինիս ինքնուրույնությունը սահմանափակելու որևէ փորձի, որից նա օգտվում է բոլոր ազատ ազգերին հավասար: Ոչ մի այլ գործողություն, ավելի լավ քան սա, չի կարող ազգերի մեջ վերականգնել վստահությունն օրենքների հանդեպ, որոնք իրենք են սահմանել և հաստատել՝ կարգավորելու համար միմյանց միջև իրենց հարաբերությունները: Առանց այս վերականգնող գործողության՝ միջազգային իրավունքի ողջ կառուցվածքը և օրինականությունը մեկընդմիջտ կխախտվի:

8. Ազատագրել ամբողջ ֆրանսիական տարածքը և վերականգնել գրավյալ հատվածները: Համընդհանուր շահերից բխող խաղաղությունը մեկընդմիջտ ապահովելու համար շտկել անարդարությունը, որ թույլ է տվել Պրուսիան Ֆրանսիայի հանդեպ 1871 թ. Էլզաս-Լոթարինգիայի կապակցությամբ, և որը խախտել է համաշխարհային խաղաղությունը գրեթե 50 տարի:

9. Իտալիայի սահմանները պետք է շտկել համապատասխան ազգային պատկանելության հստակ որոշված սահմանների:

10. Ավստրո-Յուգոսլավիայի ժողովրդին, որի տեղը պետությունների շարքում մենք ցանկանում ենք տեսնել երաշխավորված և ապահովված, տալ ինքնիշխան զարգացման ազատ հնարավորություն:

11. Ազատագրել Ռումինիան, Սերբիան և Չեռնոգորիան, վերադարձնել բռնագրավված տարածքները: Սերբիային տրամադրել ազատ և ապահով ելք դեպի ծով: Բալկանյան որոշ երկրների միջև փոխհարաբերությունները կարգավորել բարեկամական քննարկումների միջոցով՝ համաձայն պատմականորեն հաստատված հավատարմության և ազգային պատկանելության նորմերի: Որոշ բալկանյան երկրների տրամադրել քաղաքական, տնտեսական անկախության և տարածքային ամբողջականության միջազգային երաշխիքներ:

12. Ներկայիս Օսմանյան կայսրության թուրքական հատվածներին պետք է տալ անվտանգ ինքնիշխանություն, իսկ մյուս ազգություններին, որոնք այժմ Թուրքիայի տիրապետության տակ են, պետք է տրամադրել կյանքի լիարժեք անվտանգություն և ինքնիշխան զարգացման բացարձակ հնարավորություն: Միջազգային երաշխիքների ներքո Դարդանելը մշտապես պետք է բաց լինի անարգել նավարկման և բոլոր պետությունների միջև առևտրի համար*:

13. Պետք է կազմավորել լեհ ազգաբնակչությամբ բնակեցված տարածքներով լեհական պետություն: Այդ պետությանը պետք է տալ ազատ և ապահով ելք դեպի ծով: Միջազգային համաձայնագրով պետք է երաշխավորել վերջինիս քաղաքական և տնտեսական անկախությունն ու տարածքային ամբողջականությունը:

14. Հատուկ համաձայնագրով պետք է ստեղծել ազգերի համընդհանուր ընկերակցություն, ինչպես մեծ, այնպես էլ փոքր պետություններին քաղաքական անկախության և տարածքային ամբողջականության փոխադարձ երաշխիքներ տրամադրելու նպատակով:

Ինչ վերաբերում է տեղ գտած անարդարությունների հիմնական շտկումներին և օրինականության հաստատմանը, ապա մենք մեզ համարում ենք մտերիմ գործընկեր

* Սույն հոդվածն անմիջականորեն վերաբերում էր նաև հայ ժողովրդի ապագային և ստեղծվելիք Հայաստանի Հանրապետությանը: Այն միանշանակորեն շեշտում էր Օսմանյան կայսրության ոչ թուրք ազգերի, մասնավորապես հայության, ազատորեն ապրելու և սեփական ճակատագիրը տնօրինելու իրավունքը: Թեև Վիլսոնի ուղերձում առանձնացված չէ որևէ երկիր, սակայն 14 կետերի ամերիկյան պաշտոնական մեկնաբանման մեջ (1918 թ. հոկտեմբեր) 12-րդ կետի վերաբերյալ հստակ նշվում է. «Հայաստանին պետք է հատկացվի նավահանգիստ Միջերկրական ծովում, որևէ տերության հովանավորության ներքո: Ֆրանսիան կարող է հավակնել դրան, սակայն հայերը կնախընտրեն Մեծ Բրիտանիային»: *Steu Papers Relating to the Foreign Relations of The Unaited States (այսուհետև FRUS), 1918, Supplement 1, The World War, vol. 1, Washington, "Government Printing Office", 1933, p. 405-413.*

բոլոր այն իշխանությունների և ժողովուրդների, որոնք միավորվել են ընդդեմ կայսերապաշտների...

Նման պայմանավորվածությունների և համաձայնագրերի համար մենք պատրաստ ենք պայքարել և կշարունակենք պայքարել մինչև դրանց իրականացումը, սակայն միայն այն նպատակով, որ մենք ուզում ենք իրավական հաղթանակ և ցանկանում ենք արդար և հաստատուն խաղաղություն, ինչը հնարավոր է ապահովել միայն վերացնելով պատերազմի գլխավոր դրդապատճառները...

Մենք չենք նախանձում Գերմանիայի հզորությանը, և այս ծրագրում չկա ոչինչ դրան սպառնացող: Մենք դժգոհ ենք, որ նա չունի որևէ ձեռքբերում, օրինակելի առանձնահատկություն կամ խաղաղասիրական դրսևորում, ինչը կբարձացներ վերջինիս վարկանիշը: Մենք չենք ցանկանում վնասել նրան կամ որևէ կերպ խոչընդոտել նրա ազդեցության ոլորտի օրինական տարածմանը, կամ հզորացմանը: Մենք չենք ցանկանում պայքարել նրա դեմ ո՛չ զենքով, ո՛չ թշնամական վերաբերմունքով, եթե նա կամենա համագործակցել մեզ հետ և աշխարհի մյուս խաղաղասեր ազգերի հետ արդարության, օրենքի և արդարադատության համաձայնագրերով: Մենք ցանկանում ենք, որ նա, գերակա տեղի փոխարեն, ընդունի իր տեղն աշխարհի ժողովուրդների հետ համահավասար, նոր աշխարհում, որում մենք այժմ ապրում ենք:

Մենք չենք առաջարկում նրան իր քաղաքական կառույցները ենթարկել որևէ փոփոխման կամ ձևափոխման: Սակայն մենք պետք է անկեղծորեն ասենք, որ անհրաժեշտ է նրա հետ մեր կողմից կնքվող յուրաքանչյուր գործարքից առաջ իմանալ, թե ո՞ւմ են ներկայացնում նրա ղեկավարները, երբ խոսում են մեզ հետ՝ Ռայխստագի մեծամասնությանը թե ռազմական կուսակցությանը և մարդկանց, ում հավատամքը կայսերական իշխանությունն է:

Այսպիսով՝ մենք արտահայտեցինք մեր տեսակետը չափազանց հստակ՝ ապագայում բացառելու համար որևէ կասկած և հարց: Իմ առաջարկած ծրագիրը հիմնված է բացահայտ սկզբունքի վրա, որն է՝ արդարություն բոլոր ժողովուրդների և ազգությունների նկատմամբ, ազատության և անվտանգության հավասար պայմաններով ապրելու իրավունք՝ անկախ նրանց ուժեղ կամ թուլ լինելու հանգամանքից:

Միջազգային արդարադատության կառուցվածքի ոչ մի տարր չի կարող երկարակյաց լինել, քանի դեռ այս սկզբունքը ընկած չէ դրա հիմքում: Միացյալ Նահանգների ժողովուրդը հավատարիմ է միայն այս սկզբունքին, և դրա հաստատման համար նրանք պատրաստ են զոհաբերելու իրենց կյանքը, բարի համբավը և այն

ամենը, ինչ ունեն: Քաղաքարական տեսանկյունից մարդկության ազատության համար մղվող այս վերջին պատերազմն իր գագաթնակետում է, և ամերիկյան ազգը պատրաստ է իր ուժը, իր գերագույն նպատակը, իր ազնվությունն ու նվիրվածությունը ենթարկել փորձության»⁶:

⁶Address to Congress, Stating the War Aims and Peace Terms of the United States, Delivered in Joint Session, January 8, 1918, President Wilson's State Papers and Addresses, ed. by **A. Shaw**, New York, "George H. Dorn Company", 1917, p. 464-472.

ՀԱՎԵԼՎԱԾ 3

ԴԵՎԻԴ ԼԼՈՅԴ ՋՈՐՋԻ, ԺՈՐԺ ԿԼԵՄԱՆՍՈՅԻ և ՎԻՏՏՈՐԻՈ ՕՈՒԱՆԴՈՅԻ ԼՈՆԴՈՆՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

1916 թ. դեկտեմբերին Անտանտի երկրների առաջնորդները (Մեծ Բրիտանիայի վարչապետ Դևիդ Լլոյդ Ջորջ, Ֆրանսիայի վարչապետ Ժորժ Կլեմանսո և Իտալիայի վարչապետ Վիտտորիո Օռլանդո) հավաքվեցին Լոնդոնում քննարկելու համար պատերազմը դադարեցնելու հնարավոր պայմանները: 1917 թ. հունվարին դրանք հրապարակվեցին և տրամադրվեցին ինչպես հակառակորդին, այնպես էլ ամերիկյան կողմին: Այդ փաստաթուղթը նախատեսում էր.

1. Բելգիայի, Սերբիայի և Չեռնոգորիայի վերականգնում և թշնամական ներխուժումից պատճառված վնասների փոխհատուցում:

2. Ֆրանսիայի, Ռումինիայի և Ռուսաստանի զբաղեցրած տարածքների ազատում և համապատասխան փոխհատուցումների տրամադրում:

3. Եվրոպայի վերակազմավորում՝ ապահովված ամուր համաձայնագրով, որը հավասարապես հիմնված կլինի ազգային սկզբունքի, յուրաքանչյուր ժողովրդի՝ մեծ թե փոքր, տնտեսական զարգացման լիարժեք անվտանգությունից և ազատությունից օգտվելու իրավունքի, ինչպես նաև՝ տարածքային և միջազգային պայմանագրերի վրա, կազմված այնպես, որ երաշխավորվի ցամաքային և ծովային սահմանների անվտանգությունն անարդար հարձակումներից:

4. Դաշնակիցներից նախապես բռնագրավված տարածքների վերադարձ:

5. Իտալացիների, սլավոնների, ռումինների, չեխերի և սլովակների ազատում օտարերկրյա տիրապետությունից:

6. Թուրքական արյունալի բռնապետության տակ գտնվող ոչ թուրքական ազգությունների ազատում, ինչպես նաև արևմտյան քաղաքակրթության համար միանգամայն անընդունելի Օսմանյան կայսրության վտարում Եվրոպայից:

7. Լեհաստանի կարգավիճակի վերաբերյալ ցարական հրովարտակի կենսագործում:

8. Եվրոպայի բոլոր երկրների ազատում պրուսական ռազմամոլությունից⁷:

⁷ Տե՛ս՝ **Դ.Լլոյդ Ջորջ**, *Правда о мирных договорах*, т. 1, пер. с англ. А. Никонова, Москва, "Изд. Иностран. Лит.", 1957, с. 58-59:

ՀԱՎԵԼՎԱԾ 4

«ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ և ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ» ԾՐԱԳՐԻ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Վուդրո Վիլսոնի 1918 թ. հունվարի 8-ի «Պատերազմի նպատակները և հաշտության պայմանները» ծրագրին Գերմանիան հանդես եկավ պատասխանով, որն ընդգրկվեց կանցլեր Գեորգ ֆոն Զերթլինգի Ռայխստագի հունվարի 24-ի ելույթում: Այն հանդիսանում էր «14 կետերի» գերմանական մեկնաբանումը: Ելույթում ասվում էր.

1. Բրեստ-Լիտովսկի բանակցությունները վկայում են, որ մենք միանգամայն պատրաստ ենք ընդունելու նախագահ Վիլսոնի առաջարկը բացահայտ միջազգային պայմանագրերը և հրապարակային բանակցությունները որպես հիմնական քաղաքական սկզբունքներ ընդունելու վերաբերյալ:

2. «Ծովերի ազատության» սկզբունքի հետ նույնպես համամիտ ենք: Սակայն սա իրականացնելիս լավ կլինի, որ ամրաշինությունները վերացվեն Ջիբրալթարից, Մալթայից, Ադենից, Հոնկոնգից և այլ վայրերից:

3. Կենրոնական տերությունները միանգամայն համաձայն են տնտեսական արգելքների վերացմանը, որոնք ավելորդ անգամ խանգարում են առևտրին և հանգեցնում են տնտեսական պատերազմի:

4. Սպառազինության կրճատման գաղափարն ամբողջապես քննարկելի է:

5. Գաղութների վերաբերյալ նախագահ Վիլսոնի առաջարկած սկզբունքներն իրագործման մեջ կհանդիպեն որոշակի դժվարությունների, իսկ համաշխարհային գաղութային տիրապետության վերակազմավորումը պետք է քննարկել երբ կգա դրա ժամանակը:

6. Ինչ վերաբերում է Ռուսաստանի տարածքներից դուրս գալուն, դրանք հարցեր են, որոնք վերաբերում են բացառապես միայն Ռուսաստանին և չորս դաշնակից (կենտրոնական) երկրներին:

7. Բելգիայի հարցը պատկանում է այն հարցերի խմբին, որի մանրամասները պետք է քննարկել բանակցությունների ընթացքում:

8. Մեր տարածքի ամբողջականությունը (ներառյալ Էլզասը) խաղաղ բանակցություններ սկսելու միակ հիմքն է: Ուժային բռնազավթման միջոցները պաշտոնական Գերմանիայի քաղաքականության մասը չեն, իսկ Ֆրանսիայի բռնազավթված տարածքներն արժեքավոր գրավ են մեր ձեռքին:

9. Նախագահ Վիլսոնի 9-12 կետերը վերաբերում են բացառապես Թուրքիային և Ավստրիային:

13. Լեհաստանի ապագա կազմավորման առնչությամբ հնարավոր է, որ Գերմանիան, Ավստրո-Յունգարիան և Լեհաստանը գան համաձայնության:

14. Գերմանական կառավարությունն ուրախ է, որ բոլոր չլուծված հարցերը կկարգավորվեն՝ քննարկվելով ազգային պատկանելության հիմքով⁸:

⁸ The Great Events of The Great War, editor in chief **Ch.Horne**, vol. VI, New York, "The National Alumni", 1920, p. 6-7.